

Հարգելի՛ ընթերցող,

Արցախի Երիտասարդ Գիտնականների և Մասնագետների Միավորման (ԱԵԳՄՄ) նախագիծ հանդիսացող **Արցախի Էլեկտրոնային Գրադարանի** կայքում տեղադրվում են Արցախի վերաբերյալ գիտավերլուծական, ճանաչողական և գեղարվեստական նյութեր՝ հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով: Նյութերը կարող եք ներբեռնել ԱՆՎՃԱՐ:

Էլեկտրոնային գրադարանի նյութերն այլ կայքերում տեղադրելու համար պետք է ստանալ ԱԵԳՄՄ-ի թույլտվությունը և նշել անհրաժեշտ տվյալները:

Շնորհակալություն ենք հայտնում բոլոր հեղինակներին և հրատարակիչներին՝ աշխատանքների էլեկտրոնային տարբերակները կայքում տեղադրելու թույլտվության համար:



Уважаемый читатель!

На сайте **Электронной библиотеки Арцаха**, являющейся проектом **Объединения Молодых Учёных и Специалистов Арцаха (ОМУСА)**, размещаются научно-аналитические, познавательные и художественные материалы об Арцахе на армянском, русском и английском языках. Материалы можете скачать БЕСПЛАТНО.

Для того, чтобы размещать любой материал Электронной библиотеки на другом сайте, вы должны сначала получить разрешение ОМУСА и указать необходимые данные.

Мы благодарим всех авторов и издателей за разрешение размещать электронные версии своих работ на этом сайте.

Dear reader,

The Union of Young Scientists and Specialists of Artsakh (UYSSA) presents its project - **Artsakh E-Library** website, where you can find and download for FREE scientific and research, cognitive and literary materials on Artsakh in Armenian, Russian and English languages.

If re-using any material from our site you have first to get the UYSSA approval and specify the required data.

We thank all the authors and publishers for giving permission to place the electronic versions of their works on this website.

Մեր տվյալները – Наши контакты - Our contacts

Site: <http://artsakhib.am/>

E-mail: info@artsakhib.am

Facebook: <https://www.facebook.com/www.artsakhib.am/>

ВКонтакте: <https://vk.com/artsakhiblibrary>

Twitter: <https://twitter.com/ArtsakhELibrary>

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ԱՎԱՆԵՍՅԱՆ ԻՍԿՈՒՀԻ ՆԻԿՈԼԱՅԻ

**ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻՆ
(1988-1994 ԹԹ.)**

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

**Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական
գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար**

**Գիտական ղեկավար՝ պատմական գիտությունների
դոկտոր, պրոֆեսոր Հ. Բ. Աբրահամյան**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	3
ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ	
ԿԱՆԱՅՔ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՍԿԶԲՆԱՓՈՒԼՈՒՄ (1988-1991 ԹԹ.)	
1.1 Կանանց գործունեությունը «վերակառուցման» ժամանակահատվածում	16
1.2 Կանանց ներգրավվածությունը արցախյան շարժման սկզբնավորմանը(1988թ. փետրվար -դեկտեմբեր).....	30
1.3 Կանայք ժողովրդական պայքարի վերելքի շրջանում (1989թ. հունվար - 1991թ. դեկտեմբեր)	60
ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ	
ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (1991թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ – 1994 Թ. ՄԱՅԻՍ)	
2.1 Արցախի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան շրջանների պաշտպանական մարտերում	105
2.2 Ստեփանակերտի ինքնապաշտպանական և Շուշիի ու Քաշաթաղի ազատագրական մարտերում	132
2.3 Հարավ-արևելյան շրջանների մարտական գործողություններին.....	146
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	163
ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ	166

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թեման նվիրված է հայ ժողովրդի պատմության կարևոր շրջափուլերից մեկի՝ 1988-1994 թթ. Արցախի գոյապայքարին կանանց մասնակցությանը:

1918-1920 թթ. սկիզբ առած Արցախյան գոյապայքարին բաժին հասավ Ռուսաստանի կոմունիստական (բոլշևիկների) կուսակցության ԿԿ-ի Կովկասյան բյուրոյի 1921թ. հուլիսի 5-ի որոշումը, որով Ղարաբաղը բռնակցվեց Խորհրդային Ադրբեջանին: 1923թ. Ադրբեջանական Սոցիալիստական Խորհրդային Հանրապետության կազմում ձևավորվեց Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզը՝ այդ կերպ սառեցնելով ղարաբաղյան հիմնախնդրի լուծումը:

Այսպիսով, Լեռնային Ղարաբաղը բռնակցվեց Ադրբեջանին՝ սկիզբ դնելով Ղարաբաղյան գոյապայքարի նոր տևական փուլին:

1988թ. Արցախյան շարժումն ազգային զարթոնք էր, որը, նոր էջ բացելով հայ ժողովրդի պատմության մեջ, հանգեց ազգային ինքնագիտակցության դրսևորման գաղափարական և հոգևոր վերելքի: Արցախյան գոյապայքարի նոր փուլը համընկնում է գորբաչովյան «վերակառուցման» տարիների հետ՝ սկսած 1985 թվականից: Հռչակված «վերակառուցման» ընթացքում ազգային հարցին յուրահատուկ արժեք տրվեց և այն առաջին պլան մղվեց Արցախում, որտեղ պայքարը, ընդհանուր առմամբ, չէր դադարել: Պայքարը համաժողովրդական բնույթ ստացավ 1988թ., երբ ԼՂԻՄ 20-րդ գումարման մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշում Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու համար Ադրբեջանական ԽՍՀ Գերագույն խորհրդի և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի առջև միջնորդելու մասին: Այս պատմական իրողությունը հանգեցրեց նրան, որ Հայաստանի և Ղարաբաղի քաղաքների հրապարակներում ծայր առան բազմահազարանոց հանրահավաքներ:

Ղարաբաղյան շարժման առաջին և ամենահիմնական հատկանիշը, անշուշտ, նրա համաժողովրդական բնույթն էր: Խորհրդային բռնապետական համակարգում նախադեպը չունեցող համազգային շարժման միջոցով միայն կարելի էր ակնկալել սեփական շահերի ու ձգտումների եթե ոչ ամբողջական, ապա գոնե մասնակի

իրականացում: Շարժման երկրորդ կարևոր հատկանիշը նրա ինքնակազմակերպվածությունն ու համակարգվածությունն էր: Չունենալով ընդօրինակման որևէ նախատիպ, արցախցիներին հաջողվեց բոլոր քայլերը կատարել օրինականության ու ողջախոհության շրջանակներում՝ այդ պահին գործող օրենսդրության և միջազգային իրավունքի ու նորմերի սահմաններում:

Երրորդ առանձնահատկությունն այն էր, որ Ղարաբաղյան շարժումը հուսալի և ամուր հիմքեր ստեղծեց հետագա բոլոր գործողությունների համար:

Շարժումը հասունացավ և աստիճանաբար նպաստեց ինքնիշխան պետականության կայացմանը, ինչը հնարավորություն տվեց գտնել կենսական և սկզբունքային խնդիրների լուծումներ:

Ղարաբաղյան շարժումը յուրահատուկ էր կանանց մեծաթիվ և բուռն մասնակցությամբ: Այս իրողությունը նկատվել է գրեթե բոլոր ուսումնասիրողների և դիտարկողների կողմից, սակայն, դրանով հանդերձ, չկա թեմային վերաբերվող պատմագիտական որևէ ուսումնասիրություն:

Ատենախոսությունն ունի գիտական նշանակություն և արդիականություն: Դրա շնորհիվ հնարավորություն է ընձեռնվում պարբերացման ենթարկել կանանց նախաձեռնություններն ազգային-ազատագրական պայքարի ժամանակ և արձանագրել նրանց մասնակցությամբ իրականացած ձեռքբերումները:

Թեման հրատապ է, որովհետև հակառակորդ պետության՝ Ադրբեջանի հակաքարոզչության, ինչպես նաև հակամարտության դեռևս չլուծված պայմաններում ժամանակի հրամայականն է հայ ժողովրդի պատմագրության մեջ լրացնել բաց էջերը:

Հենվելով գիտականորեն լուսաբանված հիմնահարցերի ներկայացված շարադրանքի վրա՝ կարող ենք արձանագրել, որ սույն հետազոտության գլխավոր նպատակն է նորահայտ արխիվային փաստերի, հրատարակված սկզբնաղբյուրների, պարբերական մամուլի և թեմային առնչվող՝ հրապարակված առկա գիտական գրականության հետազոտման հիմքի վրա անկողմնակալ դիրքից ներկայացնել խնդրո առարկան:

Հարկ է նշել, որ կանանց մասնակցությունը գոյապայքարին գիտական շրջանակներին քիչ հայտնի թեմաներից է: Նախ գրեթե չկան պատմագիտական

բնույթի աշխատանքներ, եղած նյութերը հաճախ կրում են ընդհանրական բնույթ և համակարգված չեն:

Ատենախոսության խնդիրն է համակողմանիորեն ուսումնասիրել կանանց ունեցած դերը Արցախյան գոյապայքարում (1988-1994թթ.):

Այդ առումով նպատակ է դրվել լուծել կոնկրետ հետևյալ խնդիրները.

ա) դիտարկել ստեղծված իրավիճակում կանանց նախաձեռնությունները.

բ) վերլուծել համաժողովրդական պայքարում նրանց գործունեությունը և դերակատարությունը.

գ) բացահայտել կանանց կրած զրկանքները գոյապայքարի տարիներին, մանավանդ՝ Սումգայիթյան սպանդի, Բաքվի և Ադրբեջանի մնացած քաղաքներում կազմակերպված ջարդերի, ինչպես նաև Մարաղայի կոտորածի ժամանակ.

դ) հատկանշել միջազգային ասպարեզում հայկական կողմին սատարող կին քաղաքական գործիչների ու մտավորականների դերը.

ե) վեր հանել կանանց հասարակական-քաղաքական գործունեությունն ազգային-ազատագրական պայքարի ժամանակ.

զ) բացահայտել ԼՂՀ կազմավորման գործընթացում կանանց ցուցաբերած ակտիվ և վճռական քայլերը.

է) ստույգ փաստերի համադրման եղանակով լուսաբանել ազատամարտում կին կամավորականների անցած մարտական ուղին:

Ուսումնասիրության մեջ առաջին անգամ փորձ է արվել՝ հենվելով ՀՀ և ԼՂՀ արխիվային նյութերի ու մի շարք այլ փաստաթղթերի և ուսումնասիրությունների վրա, ներկայացնել կնոջ դերակատարությունն ազգային-ազատագրական պայքարում, միևնույն ժամանակ քննության առնել քաղաքական ներքին և արտաքին ոլորտում հիմնահարցի վերաբերյալ կանանց նախաձեռնությունները:

Օգտագործված արխիվային նյութերի, պատմագիտական աշխատությունների, ուսումնասիրությունների, մենագրությունների, ականատեսների վկայությունների և պարբերական մամուլում տեղ գտած նյութերի նկատմամբ ցուցաբերվել են քննական մոտեցում, համեմատվել, վերլուծության ենթարկվել բազմաբնույթ իրարամերժ փաստեր և տեսակետներ:

Ժամանակագրական առումով ուսումնասիրությունն ընդգրկում է 1988-1994թթ.՝ արցախահայության ազգային-ազատագրական պայքարը, մինչև հրադադարի հաստատումը:

Ժամանակաշրջանի նյութերի ուսումնասիրությունն ու վերլուծությունը պարբերացման անհրաժեշտություն է առաջադրել:

ա) Կանանց դերակատարությունը շարժման նախապատրաստական փուլում (1985-1987թթ.) և մասնակցությունը 1988-1989թթ. բազմամարդ հանրահավաքներին, ցույցերին, երթերին, ինչը հիմնականում ամփոփված է արխիվային փաստաթղթերում, մամուլում, ինչպես նաև գրականության մեջ:

Ժողովրդավարական պայքարի սկզբնափուլն ընդգրկող ժամանակաշրջանում կանայք հիմնականում մասնակցում էին ԼՂԻՄ ճնշող մեծամասնություն կազմող հայ բնակչության շրջանում տարվող լայն բացատրական աշխատանքներին, որոնք խնդիր ունեին վերականգնելու պատմական արդարությունը՝ ԼՂԻՄ-ը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին: Այս ժամանակաշրջանում, անկախ ադրբեջանական ԽՍՀ-ի և կենտրոնի կողմից ճնշմանը, շարժումը մտավ պայքարի նոր փուլ և ընդգրկեց ժողովրդական զանգվածների ավելի լայն շրջան:

բ) 1989-1991թթ. ընդգրկվող փուլը վերաբերում է Արցախի շրջափակմանը, հայ բնակչության բռնատեղահանումներին, Ադրբեջանի օմոնականների և խորհրդային զորքերի կողմից իրականացված «Օղակ» գործողության ժամանակ կանանց վճռական քայլերին, կրած զրկանքներին, որոնք տեղ են գտել մամուլում և գրականության մեջ՝ հիմնականում ականատեսների վկայությունների տեսքով:

Նշված ժամանակաշրջանում կանայք ոչ միայն նպաստեցին համազգային պայքարի վերելքին, այլ նաև ներդրում ունեցան շարժման շրջադարձային փուլ հանդիսացող սեփական պետականության ստեղծմանը՝ որպես բնակչության, բնակության տարածքի անվտանգության ապահովման միջոց, ինչը իրականացվեց Ադրբեջանի կողմից սադրանքների և բռնությունների պայմաններում:

գ) 1992-1994թթ. փուլը բնութագրվում է Ադրբեջանի զավթողական պատերազմով, որը ոչ միայն վտանգեց ԼՂՀ գոյությունը, այլև դրվեց արցախահայության լինել-չլինելու հարցը: Ի մի բերելով իր ներուժը, հայկական կողմը գնաց

իրեն պարտադրված պատերազմին, որին միացած կանայք կամավոր ստանձնեցին պատերազմի ծանր բեռի իրենց բաժինը:

Ատենախոսությունը կարևորվում է գիտագործնական առումով: Այն ունի աղբյուրագիտական հարուստ հենք և հայոց պատմության համապատասխան ժամանակաշրջանի ուսումնասիրության գործում որոշակի ավանդ ներդնելու փորձ է: Ատենախոսության արդյունքում կատարված ուսումնասիրությունները հնարավորություն են տալիս ըմբռնել կանանց դերի առանձնահատկությունները:

Աշխատանքում զետեղված նյութը և դրա հիման վրա արված եզրակացությունները կարող են օգտագործվել Արցախի պատմությանը նվիրված հատուկ դասընթացներում, ուսումնական ձեռնարկներում և հայ ժողովրդի պատմությամբ զբաղվող մասնագետների կողմից: Կանանց անձնվիրվածության վերհանումը օրինակելի դաս կհանդիսանա երիտասարդ սերնդի հայրենասիրական դաստիարակության համար:

Ուսումնասիրությունը հիմնականում կատարված է պատմահամեմատական, վերլուծական մեթոդով:

Թեմայի գիտական լուսաբանման համար օգտագործված արխիվային նյութերը նոր լույս են սփռում հիմնահարցի բազմաթիվ հարցերի վրա: Աշխատության մեջ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվում խնդրին վերաբերվող ՀՀ Ազգային, ԼՂՀ պետական և շրջանային արխիվների բազմաթիվ նյութեր:

Ուսումնասիրության պատմաքննական վերլուծության համար աղբյուրագիտական հիմք են ծառայել Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ) առկա փաստական նյութերը: Բավականին հարուստ տեղեկություններով աչքի են ընկնում թիվ 1 ֆոնդում զետեղված նյութերը՝ Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի կանանց խորհրդի, Ղարաբաղի մետաքսի կոմբինատի աշխատավոր կանանց, Շահումյանի կուսըջկոմի 3-րդ քարտուղար Էլմիրա Դանիելյանի դիմումները՝ Խորհրդային Միության իշխանություններին, ինչպես նաև մի շարք կին-ակտիվիստների հեռագրեր, նամակներ՝ ԼՂԻՄ-ի հարցը արդարացի լուծելու խնդրանք-պահանջով: Ուշագրավ է թիվ 207 ֆոնդում պահպանված «Հայ կանանց միաբանության» 1989թ մայիսի 16-ի դիմումը՝ ուղղված ՀԽՍՀ Գերագույն խորհրդի

նախագահությանը՝ կոնկրետ միջոցառումներ իրականացնելու պահանջով: Իրենց աղբյուրագիտական արժեքով կարևորվում են նաև ՀԱԱ թիվ 1678 ֆոնդում պահպանված նյութերը:

Կարևոր աղբյուրագիտական նշանակություն ունեն նաև ԼՂՀ պետական և շրջանային արխիվներում պահպանված բազմաթիվ արժեքավոր փաստական նյութեր, վավերագրեր, այդ թվում՝ շրջանային ու մարզային ատյաններին, Ադրբեջական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ բարձրագույն ղեկավար մարմիններին և ԽՍՀՄ բարձրագույն ղեկավարությանն ուղղված հանրագրեր՝ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու խնդրանք-պահանջով, որոնցում առկա են հարյուրավոր կանանց ստորագրություններ: 1988-1990թթ. իրադարձությունների վերաբերյալ մեծարժեք նյութեր կան պահված ԼՂՀ պետական արխիվի թիվ 1, 2 ֆոնդերում, որոնք հիմնականում վերաբերվում են բազմամարդ ցույցերում կազմված նամակներին, հեռագրերին, խնդրագրերին, տարբեր հասարակական կազմակերպությունների, կոլեկտիվների, ժողովրդական պատգամավորների դիմումներին: Հատկապես, թիվ 254 ֆոնդում պահպանված նյութերում մեծ թիվ են կազմում ԼՂԻՄ-ի տարբեր շրջաններից, Ստեփանակերտից, Շուշիից ուղարկված, ինչպես նաև Երևանում հանրահավաքների մասնակից կանանց հանրագրեր՝ ուղղված ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ 1988թ. հուլիսի 18-ի որոշումը դատապարտելու մասին:

Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել ԼՂՀ շրջանային արխիվների բազմաթիվ կարևոր փաստաթղթեր, որոնք վկայում են շրջանների կանանց դերը համաժողովրդական պայքարում:

Իրենց աղբյուրագիտական արժեքով կարևորվում են Ասկերանի շրջանային արխիվի նյութերը: Հատկապես թիվ 1 ֆոնդի գործերից առանձնանում է 1988թ. փետրվարի 18-ին շրջանային խորհրդի մի խումբ պատգամավորների, այդ թվում՝ 15 կին-պատգամավորների մասնակցությամբ կազմված դիմումը, որն ուղղված էր շրջխորհրդի գործկոմին՝ շրջանային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու խնդրանքով: Նույն ֆոնդում պահպանվել են շրջանի գյուղերի կանանց ստորագրությամբ մի շարք դիմումներ, հեռագրեր՝ ուղղված բարձրագույն ատյաններին:

Սկզբնաղբյուրների շարքում կարևոր արժեք ունեն նաև համազգային շարժման վերաբերյալ Հադրութի շրջանային արխիվի թիվ 1 ֆոնդում պահպանվող մի շարք փաստաթղթեր, հադրութցի կանանց նախաձեռնությամբ կազմված հանրագրեր՝ ԼՂԻՄ-ն Հայաստանին վերամիավորելու պահանջով:

Աղբյուրագիտական նշանակություն ունեն նաև Մարտունու շրջանային արխիվի նյութերը, հատկապես թիվ 1 ֆոնդում պահպանված փաստաթղթերը, որոնց մեջ ուշադրության է արժանի 1988թ. փետրվարին ժողովրդական պատգամավորների Մարտունու շրջանային խորհրդի մի շարք պատգամավորների, այդ թվում՝ կին-պատգամավորների նախաձեռնությամբ կազմված դիմումը՝ արտահերթ նստաշրջան հրավիրելու պահանջով, ինչպես նաև կանանց մի շարք նամակներ, դիմումներ:

Թեմայի ուսումնասիրության համար աղբյուրագիտական հիմք են հանդիսացել նաև ԼՂՀ Պաշտպանության նախարարության, ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվներում պահվող, ինչպես նաև ԼՂՀ ԱԳՆ մամլո ծառայության նյութերը:

Ուսումնասիրության մեջ, մասնավորապես, օգտագործվել են վավերագրական ֆիլմեր, որոնցում նկարագրված են հանրահավաքներ և հարցազրույցներ շարժման կազմակերպիչների, ազատամարտիկների հետ¹: Դրանք կարևոր սկզբնաղբյուր են 1988-1994թթ. Արցախի պատմության համար:

Արցախյան գոյապայքարում կանանց մասնակցության վերաբերյալ հարուստ նյութեր են պարունակում հայ և ռուսալեզու մամուլում տպագրված բազմաթիվ հոդվածներ ու հրապարակումներ, ականատեսների վկայություններ, ընդհանրացումներ ու գնահատականներ: «Ազատ Արցախ», «Արցախ», «Արցախի համալսարան», «Ամարաս», «Բերդ», «Դիզակ», «Երկիր», «ԼՂ Հանրապետություն», «Խորհրդային Ղարաբաղ», «Խորհրդային Հայաստան», «Հայաստան», «Հայաստանի Հանրապետություն», «Հայ զինվոր», «Հայրենյաց պաշտպան», «Մարտիկ», «Մոռվի դղանջներ», «Շարժում-88», «Ուրբաթ», «Բակինսկիյ րաբոչիի», «Գոլոս Արմենիի», «Զով Արցախա», «Իզվեստիա», «Ինֆորմկուրանտ», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Կոմերսանտ», «Կրասնայա զվեզդա», «Պրավդա» և այլ թերթերում

¹ Արցախի հանրային հեռուստաընկերության արխիվ, փաստավավերագրական ֆիլմեր՝ «Թերթելով պատմության էջերը», «88-ի արձագանքները», սկավառակ (ռեժիսոր՝ Ավետիսյան Հ., հեղինակ՝ Բաղդյան Վ.):

տպագրված բազմաթիվ հողվածներ վկայում են համազգային պայքարին կանանց մեծաթիվ մասնակցության մասին: Ռուսական մամուլը հատկապես մանրամասն բացառիկ տեղեկություններ է հաղորդել «Օղակ» ռազմագործողության ժամանակ, 1991թ. օգոստոսին Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում կատարված իարադարձությունների մասին, որին մասնակցել է նաև «Փառանձեմ» ջոկատ: Չնայած այդ նյութերում անկողմնակալությունը հիմնականում բացակայում է, սակայն որոշ վկայություններ լսելի են միայն այս աղբյուրներից: Հարկ է նշել, որ խորհրդային մամուլի անդրադարձների նկատմամբ ցուցաբերվել է քննադատական մոտեցում:

Հիմնահարցի մասին աղբյուրագիտական կարևոր նյութեր են պարունակում նաև փաստաթղթերի մի շարք ժողովածուներ¹ :

Հետազոտության համար կարևոր նշանակություն են ունեցել նաև մի շարք հեղինակների հուշագրություններ, օրագրություններ ու փաստագրություններ, որոնց շնորհիվ բացահայտվել են հիշյալ ժամանակահատվածում կանանց գործունեության առանձին, նույնպես էական դրվագներ ու ճշտվել որոշ հարցադրումների պատասխաններ: Օգտագործված սկզբնաղբյուրների շնորհիվ հնարավորինս հանգամանալի վերստեղծվել է ծավալված իրադարձություններում կանանց կատարած նախաձեռնությունների, կրած զրկանքների և մարտական ուղու պատմությունը:

Ուսումնասիրվող թեմայի լուսաբանման համար առաջնահերթ բացառիկ կարևորություն ունեն Հ. Վարդումյանի աշխատանքները², որոնցում բացառապես առաջին անգամ ներկայացված են կին-ազատամարտիկները, ովքեր որպես կապավորներ, բուժքույրներ ու զինվորներ մասնակցել են մարտական

¹ Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն (1991-1992թթ), փաստաթղթեր, (կազմող՝ Աբրահամյան Հ.), Երևան, 2011: Հայության պայքարը ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ միավորելու համար, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, (կազմողներ՝ Խաչատրյան Կ., Աբրահամյան Հ.), Երևան, 2011: Պատմական նստաշրջան, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանի 1988թ. փետրվարի 20-ի նիստի արձանագրություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Բալայան Վ., Հակոբյան Տ.) Ստեփանակերտ, 2008:

Итоги всесоюзной переписи населения 1989г. Численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2, Москва, 1989. Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах (сост. Товмсян В., Атаджанян В., Нерсисян Ю., Балаян В.) Степанакерт, 1991.

² Վարդումյան Հ., Կին ազատամարտիկները, Երևան, 2003, Ճանապարհ անմահության, Երևան, 2002, Աստվածների կանչը, Երևան, 2004:

գործողություններին: Հեղինակն իր ուսումնասիրությունների մեջ փորձել է ներկայացնել նաև նրանց կենսագրությունները:

Հետազոտության հիմնական սկզբնաղբյուրներից է «Կինը և զինված հակամարտությունը: Պատերազմ Ղարաբաղում» ուսումնասիրությունը¹, որտեղ պատումների տեսքով արժևորված է Արցախյան ազատամարտին մասնակից մի շարք կանանց գործունեությունը: Աշխատանքում փորձ է արվել ներկայացնել շարժման սկիզբն ու զարգացումը՝ այն կանանց կյանքի ու պատմությունների միջոցով, որոնք կամ անմիջականորեն մասնակցություն են ցուցաբերել ռազմագործողություններին, կամ պարզապես պատերազմի ժամանակ ապրել են Արցախում:

Աղբյուրագիտական մեծ արժեք ունի «Հայուհիներ» հանրագիտարանը², որում տրված է կին գործիչների կենսագրությունը, նրանց գործունեությունը հասարակական-քաղաքական, տնտեսական և մշակութային ոլորտներում: Ներկայացված են նաև կին-ազատամարտիկների գործունեություն, նրանց մարտական ուղին: Չնայած համազգային պայքարին մասնակից քիչ թվով կանայք են ներկայացված, այնուամենայնիվ, այն լուրջ ներդրում է պատմագիտության ասպարեզում:

Արժեքավոր ու ամփոփ ուսումնասիրություն է «Ղարաբաղի ազատագրական պատերազմ 1988-1994 թթ.» հանրագիտարանը³, որտեղ ոչ միայն տրված են Արցախյան հերոսամարտի մասնակիցների կենսագրականներ, այլև ռազմական գործողությունների ընդհանուր նկարագիրը, ինչպես նաև Արցախյան շարժման սկզբնավորման պատմությունը: Առանձին ներկայացված է նաև կին գործիչների մասնակցությունը ազատամարտին: Աշխատությունն առաջին փորձն է և կարող է օգտակար լինել հետագա ուսումնասիրությունների համար, սակայն այն զերծ չէ թերություններից՝ մարդկանց, գործողությունների ամբողջական ընթացքի նկարագրության, շատ մասնակիցների անունների բացակայության տեսակետից:

¹ Կինը և զինված հակամարտությունը: Պատերազմ Ղարաբաղում (խմբագիրներ՝ Մխիթարյան Ա., Օհանյան Մ.), Երևան, 2000:

² Հայուհիներ, հանրագիտարան, հատոր 1, Երևան, 2011:

³ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994, հանրագիտարան, Երևան, 2004:

Հարկ է նշել, որ ատենախոսության մեջ մի շարք կին-ազատամարտիկների ներկայացրել ենք պարբերական մամուլում՝ վկաների հրապարակած տվյալներով, որոնց չեն անդրադարձել թեմային առնչվող աշխատանքների հեղինակները:

Խնդրո թեմայի լուսաբանման համար կարևոր են հրապարակված մի շարք պատմագիտական աշխատություններ, որոնցում հակիրճ տեղեկություններ կան ազատագրական պայքարի տարիներին կանանց գործունեության վերաբերյալ: Այդ առումով հատկանշական է Բ. Ուլուբաբյանի աշխատությունը¹: Այն խիստ արժեքավոր ուսումնասիրություն է, որ պարունակում է ականատեսի վկայություններ, դեպքերի և իրադարձությունների վերլուծություններ: Ղարաբաղյան շարժման տարեգիրը հանրահավաքներին մասնակից կանանց մասին իր տպավորություններն է կիսում, վեր հանում հայ ժողովրդին սատարող օտարազգի կին գործիչների նախաձեռնությունները, նրանց կատարած քայլերը:

Աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունեն Արցախի հիմնահարցի ակունքների բացահայտմանն ու վերլուծությանը նվիրված Հ. Աբրահամյանի մի շարք աշխատություններ²: Հեղինակը, հենվելով հիմնականում նորահայտ փաստաթղթերի, վիճակագրական տվյալների և այլ պատմագիտական նյութերի վրա, ուսումնասիրել և գիտականորեն ընդհանրացրել է Արցախի ազատագրական պայքարի նախադրյալները, դրա սկզբնավորումը, պայքարի շուրջ հայության համախմբմանն ու տարած հաղթանակների արդյունքները և համառոտ անդրադարձել նաև այն կանանց, որոնք մասնակցել են ընդհատակյա աշխատանքներին, ընդգրկվել Մոսկվա մեկնող պատվիրակությունների կազմում, ելույթ ունեցել հանրահավաքներում, մասնակցել ազատամարտին:

Հյուսիսային Արցախի գոյապայքարի պատմությանը նվիրված Կ. Ղահրամանյանի մենագրություններում³ անդրադարձ կա ԼՂԻՄ մարզային խորհրդի 1988թ. փետրվարի 20-ի պատմական որոշումից հետո Լեռնային Ղարաբաղում ծավալված իրադարձություններին, որոնք լայն արձագանք գտան Շահումյանի շրջանում և

¹ Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրություն, Երևան, 1997:

² Աբրահամյան Հ., Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, 1997, Մարտնչող Արցախը, հատոր Գ. Երևան, 2007, Մարտ կրակագծի մատուցներում, Երևան, 2008, Կռունկ, Ստեփանակերտ, 2013:

³ Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Բ, Երևան, 1993, Օջախի գիրք. Հողը կանչում է, գիրք Բ, Երևան, 2005:

Գետաշենի ենթաշրջանում: Հեղինակը հիմնականում սահմանափակվել է Արցախյան շարժման հետ սերտորեն կապված Հյուսիսային Արցախում տեղի ունեցած իրադարձությունների լուսաբանմանը, թռուցիկ անդրադարձել դեպքերի մասնակից կանանց, հատկապես բուժաշխատողներին:

Աղբյուրագիտական կարևոր նշանակություն ունի Բ. Սիսյանի և Ռ. Չիլինգարյանի համատեղ աշխատությունը¹, որտեղ լուսաբանված են նաև Գետաշենի 1988-1991թթ. դեպքերը, ու համառոտ տվյալներ կան կանանց վերաբերյալ: Աշխատանքում ոչ միայն ներկայացված են կանանց վկայությունները, այլև տեղեկություններ կան «Գետաշեն» հայրենակցական-բարեգործական միության մեջ ընդգրկված կանանց և Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության ժամանակ նրանց գործունեություն մասին:

Ականատեսի վկայություններ են Վ. Բաղդյանի աշխատանքները², որոնցում իրական փաստերի հիման վրա ներկայացված է Արցախյան ազատամարտը՝ խաղաղ ցույցերից մինչև զինադադար: Հեղինակը անդրադարձ է կատարել հանրահավաքներում հնչած կին ակտիվիստների ելույթներին, առանձին ներկայացրել ռազմական գործողություններին միացած կանանց հետ ունեցած հարցազրույցները, անդրադարձել միջազգային ասպարեզում հայկական կողմին համակրող ու սատարող կանանց:

Աղբյուրագիտական արժեք ունեն փաստերով հարուստ նյութեր պարունակող մի շարք ծավալուն աշխատություններ: Նման աշխատանքների թվում են Վ. Խոջաբեկյանի³, Կ. Դանիելյանի⁴, Գ. Առստամյանի⁵, Ա. Արշակյանի⁶, Ս. Կապուտիկյանի⁷, Հ. Բեգլարյանի⁸, Թ. Հակոբյանի⁹, Զ. Բալայանի¹, Ռ. Ազիզբեկյանի², Ռ.

¹ Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ., Գետաշեն, Երևան, 2007:

² Բաղդյան Վ., Ֆենոմեն, Ստեփանակերտ, 1998, Տեսադաշտ 1988-1994, Ստեփանակերտ, 2013:

³ Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, 1991:

⁴ Դանիելյան Կ., Արցախ չսանձված նժույգ, Երևան, 2001:

⁵ Առստամյան Գ., Սպասում, Ստեփանակերտ, 1996, Իմ պատիվ, իմ ցավ Ղարմետաքսկոմբինատ, Ստեփանակերտ, 2010, Իմ սերը ձեզ հետ է ողջեր և նահատակներ, Երևան, 1998:

⁶ Արշակյան Ա., Արցախյան գոյապայքար (1985-1992 թթ.), Երևան, 2004:

⁷ Կապուտիկյան Ս., Էջեր փակ գգրոցներից, Երևան, 1997:

⁸ Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ղարաբաղյան շարժում, գիրք Գ., Ստեփանակերտ, 2006:

⁹ Հակոբյան Թ., Կանաչ ու սև. Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, 2008:

Պետրոսյանի³, Մ. Աղաջանյանի⁴ աշխատանքները: Նշված հեղինակները, քննության առնելով Արցախի ազգային-ազատագրական պայքարը, թռուցիկ անդրադարձել են այն կանանց, ովքեր ակտիվ մասնակցություն են ցուցաբերել գոյապայքարին:

Փաստերով հագեցած նյութեր են պարունակում մի շարք օտարազգի հեղինակների՝ հատկապես Ա. Սախարովի⁵, Ի. Բուրկովայի⁶, Թ. դե Վաալի⁷ և այլոց աշխատանքները: Հատկապես Վ. Կրիվոպուսկովն իր աշխատանքում⁸ փաստավա՛վերագրական ճշգրտությամբ ներկայացնում է «Օղակ» ռազմական գործողության ժամանակ հայերի նկատմամբ կատարված բռնությունները, այնուհետև համառոտ տվյալներ հաղորդում ինքնապաշտպանությանը մասնակից կանանց մասին:

Հայության նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների իրագործած բռնություններին, ջարդերին, հատկապես կանանց հանդեպ ցուցաբերված կոպտություններին՝ փաստերով, վկայությունների տեսքով անդրադարձել են մի շարք հեղինակներ: Այս տեսակետից կարևոր են Ի. Մոսեսովայի և Ա. Հովնանյանի⁹, Ս. Շահմուրադյանի¹⁰, Ք. Քոքսի ու Զ. Այբերի¹¹ և այլոց աշխատանքները: Ք. Քոքսը, լինելով դարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման կողմնակից, բազմիցս հատուկ զեկույցներով հանդես է եկել աշխարհի տարբեր ամբիոններից: Ք. Քոքսը և Զ. Այբերը արցախյան հիմնախնդիրը, ադրբեջանա-դարաբաղյան հակամարտությունը և նրա պատերազմական փուլը դիտարկել են Թուրքիայի, Իրանի և Ռուսաստանի հակասական շահերի համատեքստում, «էթնիկ զտում» անվանել ԽՍՀՄ-ի և Ադրբեջանի կողմից իրականացված «Օղակ» ռազմագործողությունը:

¹ Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Երևան, 1995:

² Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, 1992:

³ Պետրոսյան Ռ., Արցախ, Պատերազմ, Զինադադար, Երևան, 2001, Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, 1997:

⁴ Աղաջանյան Մ., Հաթերք, Ստեփանակերտ, 2012:

⁵ Сахаров А., О Нагорном Карабахе, Ереван, 1996.

⁶ Буркова И., Геноцид карабахских армян, Рязань, 1995.

⁷ Де Ваал Томас, Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, Москва, 2014.

⁸ Кривописков В., Мятежный Карабах, Москва, 2007.

⁹ Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, 1992:

¹⁰ Шахмурадян С., Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев, Ереван, 1989.

¹¹ Кокс К., Айбер Д., Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, 1998.

Ատենախոսության հիմնախնդրի լուսաբանման առումով որոշակի հետաքրքրություն են ներկայացնում նաև մի շարք այլ ուսումնասիրություններ¹:

Ատենախոսության մեջ ազատագրական պայքարին մասնակցած ոչ բոլոր կանայք են ներկայացվել՝ նրանց մասին տեղեկությունների բացակայության պատճառով:

Վերը ներկայացված աղբյուրագիտական և պատմագիտական աղբյուրների առկայությունը հնարավորություն է տվել լուսաբանելու քննության առարկա խնդիրը, որը համալրել է պատմագրության մեջ որոշակիորեն բաց մնացած էջերը:

¹ Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, 2012: Գևորգյան Ռ., Հավաքական ուժ, Երևան, 2005: Գրիգորյան Ա., Հաղորտին գոյամարտի բովում, Ստեփանակերտ, 2012: Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Ա., Հայաստանը 1945-1990-ական թթ., Երևան 1994: Ջանիկյան Գ., Մահապարտներ, Երևան, 2002: Մկրտչյան Ա., Մաճկալաշենի քառուղիներով. Հուշապատում, Ստեփանակերտ, 2002: Արցախապատում, գիրք 3, Քարինտակի հերոսամարտը, (խմբագիրներ՝ Հովհաննիսյան Մ., Բաղդյան Վ.), Ստեփանակերտ, 2013: Զորավարը (խմբագիր՝ Հակոբյան Հ.), Երևան, 2006: Կյանքի էջեր (կազմողներ՝ Գրիգորյան Պ., Գրիգորյան Գ., խմբագիր՝ Աբրահամյան Հ.), Երևան, 2011: Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX- XX դարեր, Երևան, 2012: Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Պետականության կայացումը դարերի սահմանազձում (կազմողներ՝ Ավետիսյան Հ., Աղաջանյան Մ., Անդրիասյան Լ., Արշակյան Ա., Ասրյան Հ., Բոյախյան Գ., Եղիազարյան Ա., Սարգսյան Վ., Իսազուլյան Գ., Մելքոնյան Ա., Մինասյան Ս., Փանոսյան Ն., Սաֆրաստյան Ռ.), Երևան, 2009: Հավերժական ջրբաժան (խմբագիր և կազմող՝ Պետրոսյան Մ.), Երևան, 2003: Арцах-Карабах, Энциклопедия, А-Е, Санкт-Петербург, 2007. Нагорный Карабах: Историческая справка, Ереван, 1988. Агаджанян М., Нагорно- Карабахский конфликт в свете заищты прав человека: политические и правовые аспекты, Ереван, 2009. Барсегов Ю., Нагорный Карабах в международном праве и мировой политике. Документы и комментарии, том 1, Москва, 2008. О некоторых политико-прововых аспектах проблемы, сборник статей, Ереван, 1994. Нагорно-Карабахская республика: путь к вершинам. Степанакерт, "МИД НКР", 2001.

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ. ԿԱՆԱՅՔ ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՅԱՊԱՅՔԱՐԻ ՍԿՁԲՆԱՓՈՒԼՈՒՄ
(1988-1991թթ.)

1.1 Կանանց գործունեությունը «վերակառուցման» ժամանակահատվածում

1980-ական թվականներին ԽՍՀՄ-ը հայտնվեց տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամի մեջ: Արտադրանքի քանակական աճի միջոցով զարգացող խորհրդային տնտեսությունն աստիճանաբար սպառում էր իր առաջընթացի հնարավորությունները: Տնտեսության ոլորտում նվազում էին աշխատանքի արտադրողականության տեմպերը: Կառավարության վարչահրամայական ուռճացած համակարգը, փաստորեն, սպառել էր իրեն: Այն չկարողանալով խթանել արտադրողական ուժերի զարգացումը, խոչընդոտում էր գիտատեխնիկական առաջընթացին: Բնակչության սոցիալական ապահովության ոլորտում ևս լուրջ դժվարություններ էին ստեղծվել, ինչը հանգեցնում էր նրա կենսամակարդակի անկմանը: Դրա հետ մեկտեղ՝ ընդլայնվում էին կուսակցական, պետական, տնտեսական ղեկավար մարմինների, պաշտոնյաների արտոնությունները: Այս ամենի հետևանքով ԽՍՀՄ ազգաբնակչության շրջանում խորանում էր անվստահությունը երկրի ղեկավարության նկատմամբ, նկատվում համընդհանուր անտարբերություն: Դրան զուգահեռ՝ ներքին հիմնախնդիրներին ավելանում էին «սառը պատերազմի» թելադրանքով իրականացվող արտաքին քաղաքականության սխալները¹:

Այսպես, 1985թ. մարտին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրված Միխայիլ Գորբաչովը, հաշվի առնելով երկրում առկա լուրջ տնտեսական և քաղաքական խնդիրները, ձեռնամուխ եղավ տնտեսության վերափոխմանը և կառավարման ձևերի կատարելագործմանը:

ԽՄԿԿ Կենտկոմի 1985թ. ապրիլյան պլենումն ընդունեց հասարակության արմատական «վերակառուցման» քաղաքականություն, որն ամրապնդվեց ԽՍՀՄ 27-րդ համագումարի (1986թ.) որոշումներով²: Փաստորեն «վերակառուցումը» առկա քաղաքական համակարգի գեղահարդարման, արտաքուստ նորացման փորձ էր:

¹ Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, էջ 8:

² Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ., Հայաստանը 1945-1990-ական թթ., էջ 86:

Ձեռնարկված միջոցները ոչ միայն չնպաստեցին ԽՍՀՄ տնտեսական վիճակի բարելավմանը, այլև 1980-ական թվականների վերջերին երկրի սոցիալ-տնտեսական կացությունը ավելի վատթարացավ: Ստեղծված իրավիճակից դուրս գալու նպատակով 1988թ. առաջ քաշվեց քաղաքական բարեփոխումների՝ թվացյալ ժողովրդավարացման ծրագիրը: Քանի որ ժողովրդավարությունն անհամատեղելի էր ամբողջատիրության հետ, ուստի շրջանառվեցին «հրապարակայնություն», «ժողովրդավարություն» կարգախոսները, որոնց ոգուն համապատասխան էլ որոշ քայլեր կատարվեցին: Հատկապես դադարեցվեցին այլախոհների հետապնդումները, կալանավայրերից ազատ արձակվեցին մեծ թվով քաղաքանտարկյալներ, որոշ ազատություններ տրվեցին զանգվածային լրատվամիջոցներին: Սակայն կիսատ-պռատ բարենորոգումները ոչ միայն չնպաստեցին ԽՍՀՄ տնտեսական կայունացմանը, այլև հանգեցրին միության փլուզման գործընթացի ծավալմանը: Կենտրոնական իշխանությունների անկարողությունը՝ լուծելու սոցիալ-տնտեսական, քաղաքական, ազգամիջյան հարաբերությունների ոլորտներում կուտակված հիմնախնդիրները, խորացրեց Խորհրդային Միության ժողովուրդների անվստահությունը նրանց հանդեպ: ԽՍՀՄ-ում գրեթե համատարած բնույթ ընդունեց անկախության ձգտումը, որն էլ ավելի սրեց ազգամիջյան հարաբերությունները:

Հռչակված «վերակառուցման» ընթացքում յուրահատուկ արժեք տրվեց ազգային հարցին և այն առաջին պլան մղվեց Արցախում, որտեղ ազգային-ազատագրական պայքարն իր տարբեր դրսևորումներով ու ծավալներով, ընդհանուր առմամբ, չէր դադարել: Արցախի հայությունը, ոգեշնչված արմատական փոփոխություններ ենթադրող «վերակառուցման» քաղաքականության հռչակմամբ, կրկին բարձրացրեց դեռևս 1920-ական թվականներից սառեցված Ղարաբաղյան հիմնահարցը¹:

Տարիներ շարունակ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում (ԼՂԻՄ) Ադրբեջանի իշխանությունները կանխամտածված իրականցնում էին հակահայկական քաղաքականություն, որը նպատակաուղղված էր Նախիջևանի Ինքնավար Հանրապետության օրինակով մարզի լրիվ հայաթափմանն ու ադրբեջանցիներով վերաբնակեցմանը: Ուստի պատահական չէր, որ Լեռնային Ղարաբաղում տևականորեն

¹ Нагорный Карабах: Историческая справка, стр. 8.

նոտնահարվում էին հայ բնակչության մարդկային իրավունքներն ու ազգային արժանապատվությունը, ինչը հանգեցնում էր պատմական հայրենիքից հայերի արտագաղթին:

Շարունակ ձգձգվում էին արտադրական ձեռնարկությունների և բնակելի շենքերի շինարարությունները: ԼՂԻՄ-ում կապիտալ շինարարության տարեկան միջին տեմպերը գրեթե 2,5 անգամ ցածր էին Ադրբեջանի ընդհանուր ցուցանիշից¹: Այդ ամենի հետևանքով մարզում տասնյակ տարիների ընթացքում կուտակվել էին բազմաթիվ չլուծված խնդիրներ, որոնք կարող էին լուծվել միայն Հայկական ԽՍՀ-ի հետ սոցիալ-տնտեսական լայն ու խոր ինտեգրացմամբ:

Ամենացավալին մարզի հայերի ժողովրդագրական վիճակն էր: Հատկանշական է այն փաստը, որ Ղարաբաղյան շարժմանը նախորդող և հաջորդող տարիներին պետական մակարդակով օգտագործելով բոլոր հնարավոր տարբերակները, Ադրբեջանը հանրապետության հոծ հայաբնակ տարածաշրջաններում և ԼՂԻՄ-ում իրականացնում էր բնակչության էթնիկ զտման հակահայ քաղաքականություն, ինչն էլ նպաստում էր երկրամասի հայաթափմանը և ժողովրդագրական պատկերի փոփոխմանը: Եվ եթե անդրադարձ կատարենք ԼՂԻՄ-ի ժողովրդագրական գործընթացների պատմությանը, ապա կտեսնենք, որ Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանական ԽՍՀ-ին բռնակցելուց անմիջապես հետո սկիզբ է առնում հայ բնակչության արտագաղթը, ինչը հանգեցնում էր մարզի բնակչության տեսակարար կշռի անընդհատ նվազեցման²: Մարզում ադրբեջանական իշխանությունների կողմից տարվող քաղաքականության հետևանքով մի կողմից աճում էր ադրբեջանական էթնիկ տարրը, իսկ մյուս կողմից՝ հայաթափվում էր մարզը:

ԼՂԻՄ-ում կուտակված սոցիալ-տնտեսական հիմնախնդիրները բացառապես լուծվում էին Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականության

¹ Нагорно-Карабахская республика, путь к вершинам, стр. 73.

² Итоги всесоюзной переписи населения 1989г. Численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2, стр. 3-23. 1989г. Հունվարի 12-ին ԼՂԻՄ-ում անցկացված բնակչության մարդահամարի տվյալներով մարզի բնակչությունը կազմել է 189.1 հազար մարդ, որից 145.5 հազարը կամ 79.9 տոկոսը հայեր էին, իսկ 40.7 հազարը կամ 21.5 տոկոսը՝ ադրբեջանցիներ, 1.9 հազարը կամ 1.0 տոկոսը՝ ռուսներ և 1.0 հազարը կամ 0.5 տոկոսը այլազգի քաղաքացիներ:

նպատակների իրականացման դիրքերից¹: Դրա հետևանքով մարզի տնտեսության ճյուղային և միջճյուղային կառուցվածքը, տարածքային միավորների տնտեսական ծանրաբեռնվածությունը չէին համապատասխանում բնատնտեսական պայմաններին: Այս ամենը բացասաբար էր անդրադառնում ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման վրա, խոչընդոտում բնակչության լիարժեք զբաղվածության ապահովմանը և հանգեցնում նրա արտագաղթին: Վերջինս մեծապես պայմանավորված էր նաև հայ բնակչության ազգային-մշակութային ու հոգևոր պահանջմունքների բավարարման ոլորտների ծայրահեղ անմխիթար վիճակով: Ադրբեջանի իշխանությունները ԼՂԻՄ-ում փակում էին հայկական դպրոցները, ուսումնական ծրագրերում Հայոց պատմություն առարկայի փոխարեն մտցնում Ադրբեջանի պատմություն և սահմանափակում հայոց լեզվով դասագրքերի ու գրականության տարածումը: Արգելված էր Երևանից ռադիո-հեռուստատեսային հաղորդումների ընդունումը: Ամեն կերպ խոչընդոտներ էին հարուցվում Հայաստանի հետ մշակութային կապերի հաստատման խնդրում²: Նման իրավիճակում, վստահելով գորբաչովյան ժողովրդավարությանը՝ հայ ժողովուրդը փորձեց իրականացնել իր ազգային ձգտումները և «վերակառուցման» տարիները շրջադարձային եղան հայ ժողովրդի պատմության մեջ:

Արցախահայության ազգային-ազատագրական շարժումը երբեք էլ հանկարծակի չի սկսվել, այն հասունացել էր տասնամյակների ընթացքում: Հետևաբար, խաղաղ ցույցերում ու հանրահավաքներում առաջ քաշված խնդիրները նորություն չէին: Սակայն խորհրդային կայսերապետության պայմաններում՝ միութենական կենտրոնի հանցավոր թողտվությամբ ու քաջալերմամբ, Ադրբեջանի իշխանությունների կողմից այն հակազդվեց ուժային ճնշումներով: Ադրբեջանն ուներ հստակ նպատակ՝ ունենալ ադրբեջանական (թուրքացված) Արցախ: Ահա թե ինչու սկիզբ առավ Ղարաբաղյան շարժումը, որը նոր էջ բացեց հայոց պատմության մեջ: Խնդիր դրվեց վերականգնել

¹ Агаджанян М., Ногорно-Карабахский конфликт в свете защиты прав человека: политические и правовые аспекты, стр.129.

² Վ. Խոջաբեկյանի «Արցախը փորձության ժամին» գրքում (էջ 44) նշվում է. «1970թ. համեմատությամբ մարզում 1988թ. դպրոցականների թիվը նվազել է 13 հազարով (որպես աղբյուր ցույց է տրված «Խորհրդային Ղարաբաղ», 1988, 25 մայիսի, 19 հունիսի)»:

պատմական արդարությունն ու Արցախը վերամիավորել Մայր հայրենիքին՝ Խորհրդային Հայաստանին:

1985-1987թթ. Արցախում մեծացավ բնակչության դժգոհությունը, ինչը հանգեցրեց լայն բացատրական աշխատանքերի ծավալմանը ԼՂԻՄ ճնշող մեծամասնություն կազմող բնիկ հայ բնակչության շրջանում: ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելուն նվիրված քարոզչական աշխատանքներն ակտիվացան, մանավանդ՝ 1986թ. ամռանը:

Արցախի ազգային-ազատագրական պայքարի ուշագրավ ու կարևոր առանձնահատկություններից էր կանանց զանգվածային մասնակցությունը: Այս անժխտելի իրողությունը քանիցս արձանագրվել է ժամանակաշրջանի տարեգիրների և ուսումնասիրողների կողմից. «Կանա՛յք, հատկապես կանայք և աղջիկնե՛րը,- գրում է Ղարաբաղյան շարժման տարեգիր Բագրատ Ուլուբաբյանը 1988-ի փետրվարյան հանրահավաքներից ստացած իր տպավորություններում: -Որքան խելոք, արդար ու վարակիչ են նրանց խոսքերը: Նրանք ինչպիսի՛ տրամաբանական հյուսվածքի մեջ են առնում իրենց կյանքի ցավն ու հոգսը, պայքարի կամքն ու վճռականությունը, հաղթանակի հույսն ու հավատը»¹: Իսկ ակադեմիկոս Վլադիմիր Խոջաբեկյանն արձանագրել է. «Նորից հայ կինը հանդես եկավ ոչ միայն որպես արդարության վերահաստատման համար մղվող պայքարի ոգեշնչման աղբյուր, այլև նրա ակտիվ մասնակից: Ի դեմս միտինգների մասնակցող հայ կնոջ հպարտ, անձնուրաց, շեշտադրված կեցվածքի ու պահելաձևի, մենք նորից հանդիպեցինք Մամիկոնեից մեծ տիկնոջ ֆենոմենը մարմնավորող խրոխտ ու հողեղեն կերպարին»² :

Այսպես, երբ խնդիր դրվեց վերականգնել պատմական արդարությունը և Արցախը վերամիավորել Մայր հայրենիքին, հայ կինը հանդես եկավ ոչ միայն պայքարի գաղափարախոս ու կազմակերպիչ, հասարակական-քաղաքական գործիչ, այլև հայրենիքի պաշտպան:

1985թ. հունիսից մինչև 1986թ. մայիսն ընկած ժամանակահատվածում ժամանակակիցների վկայությամբ Ղարաբաղյան շարժումը դրսևորվում էր ոչ մեծ հավաքներով, որոնց շատ քիչ մարդ էր մասնակցում: Շարժման ղեկավարներից Իգոր

¹ Ուլուբաբյան Բ., նշվ.աշխ., էջ 10:

² Խոջաբեկյան Վ., նշվ.աշխ., էջ 25:

Մուրադյանի վկայությամբ 1986-1987թթ. Ստեփանակերտում ստորագրահավաքը հիմնականում իրականացվում էր քաղաքի պոլիկլինիկայի գրանցման բաժնի աշխատողների օգնությամբ¹: Կանանց մասնակցությամբ իրականացվող «կիսաբացահայտ» գործունեությունը համակարգվում էր շարժման կազմակերպիչների կողմից: Ստեփանակերտում ստեղծվեցին շարժումը խթանող փոքր խմբեր, որոնք հրավիրում էին գաղտնի ժողովներ, հանգանակում դրամական միջոցներ, պատրաստում թռուցիկներ և կատարում մի շարք այլ աշխատանքներ: Նախաձեռնվում էին գումարել գյուղական, շրջանային ու քաղաքային տեղական մարմինների նիստեր՝ «Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» օրակարգային հարցով: Այդ աշխատանքներին միացած կանայք խորհրդային երկրում ծավալված վերակառուցման և ժողովրդավարության գործընթացներն ընկալում էին որպես պատմական առիթ, որը վերջապես կարող էր ուղղել նախկինում թույլ տրված սխալը:

Համալրելով շարժման կազմակերպիչների շարքերը, կանայք սկզբում բնակչության հետ իրականացնում էին գաղափարախոսական աշխատանքներ՝ գաղտնի թռուցիկների պատրաստում և տարածում: Թռուցիկների տարածմանը մասնակցում էին հիմնարկ-ձեռնարկությունների աշխատողները:

1986-1987թթ. իրականացվեց ստորագրահավաքները, ապա՝ հեռագրերի և հանրագրերի ձևակերպումը: Գործող խմբերը ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու խնդրանք-պահանջով, ինչպես նաև շրջանի բնակչությանը հուզող այլ խնդիրների վերաբերյալ հանրագրեր էին ուղարկում շրջանային ու մարզային ատյաններ, Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ բարձրագույն ղեկավար մարմիններ և միութենական կենտրոն: Եթե կազմակերպիչների մի մասն աշխատանքներ էր տանում հանրագրերի պատրաստման ուղղությամբ՝ Մոսկվա մեկնող պատվիրակություններին հանձնելու նպատակով, ապա մեկ այլ խումբ նախապատրաստում էր կոլտնտեսություններում անցկացվող հաշվետու ժողովներում ներկայացնել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին հարցը:

¹ Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ 1917-2000, հատոր Գ., էջ18:

Մարզի համարյա բոլոր հաստատություններում էլ ընդհատակյա գործունեություն էր ծավալվում: Ստեփանակերտում այդ աշխատանքներից անմասն չմնացին Արաքսյա Հայրապետյանը (խոհարարուհի), Վայա Մեիրաբյանը (Ղարմետաքսկոմբինատի աշխատակից)¹: Նրանք մի շարք կին-ակտիվիստների նման կանգնած էին շարժման ակունքներում և, անտեսելով սպառնացող վտանգն ու հանդիպող դժվարությունները, մտան պայքարի մեջ:

Այդ օրերին տիրող բարոյահոգեբանական մթնոլորտի մասին Արցախի պետական համալսարանի (ԱրՊՀ) պրոֆեսոր, Ղարաբաղյան շարժման ակտիվ մասնակից Լենա Գրիգորյանը հետագայում գրում է. «Հիմա, երբ ամեն ինչ վաղուց հետևում է մնացել, շատ դյուրին կարող է թվալ այդ ամենը, սակայն այն ժամանակ միանգամայն այլ էր մթնոլորտը: Աշխատում էինք ադրբեջանական բաժնի հետ՝ կողք-կողքի: Նախընտրեցի դիմել առավել վստահություն ներշնչող գործընկերներիս: Զգուշորեն բացատրեցի, թե ինչն ինչոց է: Եվ ի զարմանս ինձ, ոմանք կտրականապես հրաժարվեցին, ոմանք քաղաքավարությամբ մերժեցին՝ մտերմաբար խորհուրդ տալով, որ հեռու մնամ նման բաներից, որոնց վերջը բանտախուցն է »² :

Ասենք նաև, որ «վերակառուցման» տարիներին ժողովրդի մի մասի մոտ առկա էին անտարբերությունն ու վախի զգացողությունը, ինչը կոտրելու նպատակով հայրենասեր ուժերը սկսեցին քարոզչական առավել ծավալուն գործ կատարել: Արցախը Հայաստանին վերամիավորմանն ուղղված քարոզչական աշխատանքներ էր կատարում նաև 1986թ. Ստեփանակերտում հիմնված «Արցախյան միություն» ընդհատակյա կազմակերպությունը³: Այն ղեկավարվում էր 11 հոգուց բաղկացած կոմիտեի կողմից և ուներ ծրագիր ու կանոնադրություն: Կազմակերպության բաժանմունքներ հիմնվեցին մարզի շրջաններում: Դրանցում կանայք ներգրավված էին նաև ղեկավար կազմում: ԼՂԻՄ Մարտունու շրջանի բաժանմունքի ղեկավարներից էր շրջխորհրդի գործկոմի պլանային հանձնաժողովի նախագահ Անգելինա Հովսեփյանը: Գաղտնի ստորագրահավաքներ իրականացնելուց բացի, նրան հանձնարարված էր նաև տեղեկություններ պատրաստել վերջին տասը տարիներին շրջանի սոցիալ-

¹ «Շարժում 88», 20 փետրվարի, 2008, թիվ 2:

² «Հայրենյաց պաշտպան», Ստեփանակերտ, 2003, 18 մարտի:

³ «ԼՂ Հանրապետություն», Ստեփանակերտ, 1998, 22 հունվարի: 1986թ. հուլիսին Ստեփանակերտում հիմնված ընդհատակյա կազմակերպությունը 1987թ. ստացավ «Արցախյան միություն» անունը:

տնտեսական վիճակի մասին՝ ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացնելու նպատակով: Անգելինա Հովսեփյանի վկայությամբ ամեն ինչ կազմակերպվում էր նախատեսված ծրագրի համաձայն, բոլորը գիտակցում էին սկսած գործի կարևորությունը և աշխատում էին մեծ նվիրումով:

Միությունը 1987թ. ամռանը և աշնանն իրագործեց իր նվազագույն ծրագիրը՝ հավաքելով ավելի քան 80 հազար ստորագրություն, որը նոյեմբերի վերջին ներկայացվեց ԽՄԿԿ Կենտկոմ²: Անկասկած, գաղտնի գործունեություն էր ծավալվել ԼՂԻՄ բոլոր շրջաններում, որին կանայք մասնակցում էին մեծ ակտիվությամբ:

Ընդհատակյա աշխատանքների շնորհիվ մարզի ողջ հայ բնակչությունը միանգամից խանդավառ եռուզեռ ապրեց՝ հուսալով իրականացած տեսնել տասնամյակների իր երազանքը:

1987թ. Մարտունու շրջանի տեղական կազմակերպիչների և ակտիվիստների շարքերը համալրած կանայք (այդ թվում Մարտունու կենտրոնական գրադարանի տնօրեն Ռիտա Գևորգյանը, Մարտունու կոմերիտշրջկոմի քարտուղար Սիլվա Բալայանը, լրագրող Սիլվա Խաչատրյանը), նախաձեռնում և իրականացնում էին, մասնավորապես, գաղտնի ստորագրահավաքներ, կատարում գաղափարախոսական աշխատանք, կազմակերպում գաղտնի ժողովներ³: Նույն աշխատանքները կատարվում էին նաև Մարտակերտի շրջանում, որտեղ ընդհատակյա կազմակերպության առավել ակտիվ գործիչներից էր Ժաննա Խուրշուդյանը⁴: Նա մասնակցում էր մարզի գաղտնի խմբերի հավաքներին, թուցիկների տարածմանը և ստորագրահավաքին: Իհարկե, շրջանի գյուղերում դա իրականացվում էր համակիրների օգնությամբ, որոնց շարքերում մեծ թիվ էին կազմում շրջկենտրոնի և գյուղերի բնակչուհիները, իսկ նրանց հիմնական մասը մտավորականներ էին:

Հարկ է նկատել, որ իրականացվող աշխատանքները նպաստեցին Հայաստանի հետ Արցախի վերամիավորման պահանջի բարձրացմանը: Դրան հակառակ՝

¹ «Ամարաս», Մարտունի, 2008, 15 փետրվարի:

² «ԼՂ Հանրապետություն», 1988, 21 հունվարի:

³ «Ամարաս», Մարտունի, 2008, 15 փետրվարի:

⁴ Բեգլարյան Հ., նշվ.աշխ., էջ 89:

բոլորովին այլ ծրագրեր ուներ Ադրբեջանի կառավարողները: 1987թ. բացահայտ դարձան հայերին բռնի տեղահանելու նրանց ձգտումները, հատկապես Հյուսիսային Արցախում: Այդ ուղղությամբ առաջին քայլերն իրականացվեցին Շամխորի շրջանի հզոր արմատներ ունեցող Չարդախլու հայկական գյուղում, որի համախմբումը վստահություն էր ներշնչում շրջակա հայկական ամբողջ գյուղախմբին¹:

Պատմական հայրենիքի ազգային գոյատևման և Մայր Հայաստանի հետ նրա վերամիավորման համար, Հյուսիսային Արցախի հայերը 1987թ. միացան ստորագրահավաքին և սկսեցին համագործակցել ԼՂԻՄ-ում գործող ընդհատակյա խմբերի հետ: Տեղի կանայք ևս մասնակցում էին իրականացվող նախաձեռնություններին և այդ փուլում ի շահ այդ նպատակի կատարում մի շարք աշխատանքներ:

Արցախահայությունը չէր կարող հանդուրժել ու հաշտվել ադրբեջանական իշխանությունների կողմից մարզում ստեղծված ստրկական վիճակի հետ, ուստի, որպես միացող ծուխ, նա պիտի մի օր բռնկվեր:

Թե՛ Ստեփանակերտում և թե՛ մարզի շրջկենտրոններում շարունակվում էին գաղտնի ժողովները, որոնցում որոշումներ էին ընդունվում Լեռնային Ղարաբաղը Հայաստանի հետ վերամիավորման մասին: Գաղտնի խմբերի առաջնահերթ խնդիրներից էր նախաձեռնող խմբերի ստեղծումը, ինչն իրականացվեց 1987թ.: Արդեն սեպտեմբերին Ասկերանի շրջանի գրեթե բոլոր գյուղերում գործում էին նման խմբեր, որոնք ակտիվ համագործակցության մեջ էին շրջկենտրոնի իրենց համախոհների հետ: 1987թ. Ասկերանում գործում էին մի խումբ տեղական կազմակերպիչներ և ակտիվիստներ, այդ թվում Ժենյա Մովսիսյանը, ով մի շարք աշխատանքներ էր տանում պայքարի ընդհատակյա փուլում: Ասկերանում առաջին նախաձեռնող խմբերից էր շրջանային «Կարմիր դրոշ» թերթի խմբագրակազմը: Շարժման սկզբում գրված համարձակ հոդվածները, որոնք չէին տպագրվում «Խորհրդային Ղարաբաղ» թերթում, անպայման տեղ էին գտնում շրջանային թերթում: Այս աշխատանքներին

¹ “Сельская жизнь”, Москва, 1987, 24 декабря. Մի քանի ամիս շարունակված բռնությունները հասցրին նրան, որ ոստիկանության կազմակերպած ուժերով շուրջ 200 ադրբեջանցիներ զինված հարձակում գործեցին Չարդախլուի վրա: Հանրապետական և կենտրոնական իշխանության մարմիններն ամեն կերպ քողարկեցին այդ իրողությունը: Միայն «Սելսկայա ժիզն» կենտրոնական թերթում, այն էլ շատ ուշացումով, հաջողվեց նկարագրել, թե ինչպիսի ահավոր բռնություններ ու ապօրինություններ են թույլ տրվել Չարդախլու գյուղի հայ բնակիչների նկատմամբ:

մասնակցում էր նաև լրագրող Ծովինար Գրիգորյանը¹: Կային նաև մարդիկ, ովքեր թեպետ ներառված չէին նախաձեռնող խմբերի մեջ, բայց և մասնակցում էին նախապատրաստական աշխատանքներին: Այստեղ գործող նախաձեռնող խմբերում ընդգրկված կանայք (Միրա Ավանեսյան, Նորա Առուշանյան, Մելանյա Առուշանյան, Գրետա (Ջեմմա) Թամրազյան) շրջկենտրոնում թռուցիկներ տարածելուց, ստորագրահավաքներ կազմակերպելուց բացի, բացատրական աշխատանքներ էին տանում նաև գյուղերում: Ստորագրություն վերցնում էին նրանցից, ովքեր համակված էին նույն այդ գաղափարով՝ ԼՂԻՄ-ի վերամիավորում Մայր հայրենիքին: Ստորագրահավաքի ձևաթղթերը, որոնցում պետք է նշվեին ստորագրողի անձնագրի համարն ու հասցեն, կին ակտիվիստները բաժանում էին և, ինչպես նրանք են վկայում, օրվա մեջ երկու անգամ այցելում էին «Կարմիր դրոշ» թերթի խմբագրատուն՝ հավաքած ստորագրությունները հանձնելու համար: Այդ աշխատանքները կատարվում էին խիստ գաղտնի: Միաժամանակ կանայք մասնակցում էին գաղտնի հավաքներին, ինչն էլ 1986-1987թթ.-ից վերածվեց ընդհատակյա քաղաքական կազմակերպության²:

Նամակների, դիմումների, հանրագրերի հոսքը Հաղրութի շրջանում սկսվեց դեռևս 1986 թվականից: Ընդհատակյա աշխատանքների մասնակից կանայք ամենուրեք ստորագրահավաքներ էին կազմակերպում՝ Մոսկվա ուղարկելու համար: Հավատ կար, որ գորբաչովյան վերակառուցումը, նոր մտածողությունը հնարավոր կդարձնեն հեշտությամբ լուծելու բարձրացված հիմնահարցերը: Մասնավորապես, խմբի նախաձեռնությամբ կազմված և Հաղրութի շրջգործկոմին ուղղված հանրագրում, հաղրութցիները պահանջում էին լուծել շրջանում հայկական հեռուստաալիք ունենալու հարցը: 1987թ. հաղրութցիները հանրագրով (այդ թվում՝ նաև Էլզա Աբրահամյանի, Անիկ Հայրապետյանի, Սիլվա Պողոսյանի ստորագրությամբ) դիմում են ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին՝ խնդրելով լուծել ազգային պահանջատիրության հարցը՝ ԼՂԻՄ-ը վերամիավորել Մայր Հայաստանին³: Հայկական հեռուստաալիքի հարցը չլուծվեց, միևնույն ժամանակ Հաղրութում սկսվեցին ճնշումները նախաձեռնող

¹ Ծովինար Գրիգորյանը այժմ աշխատում է Արցախի հանրային ռադիոյում, որպես առաջատար խմբագիր:

² ԼՂՀ Ասկերանի շրջանային արխիվ (ԱՇԱ), ֆ.1, ց.1, գ.46, թ.4:

³ ԼՂՀ Հաղրութի շրջանային արխիվ(ՀՇԱ), ֆ.1, ց.3, գ. 24, թ.5:

խմբի անդամների հանդեպ: Չնայած ճնշումներին, շարժումը հետզհետե ավելի ու ավելի էր ծավալվում՝ մասնակից դարձնելով շրջանի բոլոր գյուղերը:

Ընդհատակյա խմբերը մեկը մյուսի հետ համագործակցելուց բացի, ունեին առանձին տեղական խմբեր, որոնց միջոցով իրականացվում էին մի շարք ներքին կազմակերպչական աշխատանքներ: Ստեփանակերտում տեղական կազմակերպիչների շարքերում էին Անահիտ Եղիազարյանը, Աղավնի Դանիելյանը, Քինա Հովհաննիսյանը¹:

1988-ի սկզբներին շարժումը նոր, հուժկու թափ առավ: Անհրաժեշտ էր ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ հետ վերամիավորելու մասին Հռչակագիրը² համաժողովրդական քննարկման դնել ու համապատասխան որոշում կայացնել:

Շարժման նախաձեռնող խմբերը կազմեցին ժողովների անցկացման ժամանակացույց, որը հիմնականում համապատասխանեցվեց ԼՂԻՄ-ում ավանդաբար փետրվարին անցկացվող տնտեսությունների ղեկավարների հաշվետու-ընտրական ժողովների ժամանակացույցի հետ: Այդ ժողովներում ներկայացվեց Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ հետ վերամիավորելու մասին Հռչակագիրը, որն ամենուրեք հավանության արժանացավ: Այդ գործընթացը նոր հույսեր արթնացրեց մարդկանց մեջ և հավատ կար, որ Արցախի հարցը կարող է լուծվել խաղաղ ճանապարհով: Կարճ ժամանակահատվածում շրջանների կոլեկտիվներում անցկացվեցին ժողովներ, որտեղ կանայք նույնպես հանդես եկան ելույթներով՝ առաջարկելով դիմել կենտրոնին՝ հիմնահարցին արդար լուծում տալու խնդրանք-պահանջով:

Միաժամանակ շարունակվում էր ստորագրությունների փաթեթների հոսքը Մոսկվա: Հաղորդից ստորագրությունների փաթեթը Մոսկվա ուղարկվեց 1988թ. հունվարին: Ստորագրահավաքի կազմակերպմանը մասնակցում էր 66 մարդ, որոնցից 20-ը՝ կանայք: Այնուհետև վերջիններիս մասնակցությամբ Հաղորդում տարածվում են «Ղարաբաղը բռնությամբ Ադրբեջանի մաս չի կազմի», «Ղարաբաղը կազատագրվի ամեն գնով, ինչ էլ որ լինի», «Սահմանադրությունը ժողովրդի համար է, ոչ թե

¹ Բեգլարյան Հ., նշվ. աշխ., էջ 87:

² «Լուսարար», Ստեփանակերտ, 2013, 11 փետրվարի, թիվ 2-3: Շարժման ակտիվիստներից Սլավա Առուշանյանի վկայությամբ ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ի վերամիավորելու մասին նախագիծը ընդունվել է 1988թ. փետրվարի 1-ին Նորագյուղի (Ասկերանի շրջան) գաղտնի ժողովում:

ժողովուրդը՝ Սահմանադրության», «Նախիջևանն օրինակ է Ադրբեջանի վարած քաղաքականության մասին» բովանդակությամբ կարգախոսներ¹:

Շարժումը խեղդելու նպատակով, 1988թ. փետրվարին Ադրբեջանի ԿԿ կենտկոմի ներկայացուցիչները ժամանեցին Լեռնային Ղարաբաղ: Փետրվարի 11-12-ին մարզի շրջաններում կուսակցական ակտիվի նիստեր գումարվեցին, որտեղ Ադրբեջանի ԿԿ կենտկոմի ներկայացուցիչները պահանջեցին ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին միավորելու պահանջը դատապարտող որոշումներ կայացնել²:

Պետք է նշել, որ նրանց այդ նախաձեռնությունն արդյունք չտվեց, ավելին, նպաստեց, որպեսզի շարժումը համաժողովրդական բնույթ ընդունի: Ակտիվի մասնակիցները դատապարտեցին Ադրբեջանի վարած գաղութային քաղաքականությունը և վճռականորեն հայտարարեցին պայքարը շարունակելու մասին:

Փետրվարի 12-ին Ասկերան ժամանած Ադրբեջանի ԿԿ կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Կոնավալովը որոշ քայլեր ձեռնարկեց, սակայն նրա առաքելությունը տապալվեց³: Նույն օրը Ասկերանում հանրահավաք կազմակերպվեց, որտեղ ելույթ ունեցող կանայք մերկացրին Ադրբեջանի իշխանությունների հակահայ քաղաքականությունը: Այստեղ հանրահավաքն անցկացվեց ցուցապաստառով՝ «Կեցցե Լեռնային Ղարաբաղի վերամիավորումը Հայկական ԽՍՀ-ին»⁴:

Փետրվարի 12-ին Հադրութ և Մարտունի շրջկենտրոններում տեղի ունեցան Արցախում հայ բնակչության առաջին զանգվածային ցույցերը, որոնցում առաջ էր քաշվում մարզը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու պահանջը:

Հադրութում ևս տապալվեց կուսակցական ակտիվի ժողովը, որին հաջորդեց առաջին հանրահավաքը և ընթերցվեց Հռչակագիրը⁵: Այս ամենը կազմակերպվում էր նախաձեռնող խմբի ջանքերով, որի ղեկավարներից էր Նելլի Կասպարովան (ռուսաց լեզվի ուսուցչուհի): Նա մեկն էր այն գլխավոր գործող անձանցից, ովքեր կազմակերպում էին նամակների, հանրագրերի հոսքը Մոսկվա, իսկ փետրվարի 12-ին ակտիվ աշխատանք տանում կուսշրջկոմի պլենումում Հռչակագրի ընդունման, ապա և հաջորդ

¹ ԼՂՀ ՀՇԱ, ֆ.1, ց.3, գ. 24, թ.6:

² «Բերդ», Ասկերան, 2008, 10 փետրվարի:

³ Նույն տեղում, 2010, 18 փետրվարի:

⁴ Նույն տեղում:

⁵ «Լուսարար», Ստեփանակերտ, 2013, 11 փետրվարի, թիվ 2-3:

օրը մարզային իշխանությունների կողմից այդ փաստաթղթի օրինականացման ուղղությամբ: Նրա համախոհների շարքերում մեծ թիվ էին կազմում հաղորդօրհան կանայք¹:

Փետրվարի 12-ին Մարտունու շրջանում կայացած առաջին զանգվածային հանրահավաքում ելույթ ունեցան Ռիտա Գևորգյանը և Սիլվա Խաչատրյանը, ովքեր, արտահայտելով արցախցիների կամքը, պահանջեցին շարունակել պայքարը հանուն վերջնական պատակի: Այնուհետև Իրինա Մանասյանը ԼՂԻՄ-ը Հայաստանին վերամիավորելու մասին Հռչակագրի ռուսերեն օրինակը ներկայացրեց հանրահավաքի մասնակիցներին²:

Հետագայում Ռիտա Գևորգյանը, անդրադառնալով այդ օրերի դեպքերին, վկայում է. «Այդ տարիներին ես աշխատում էի շրջանային կենտրոնական գրադարանում... Ակտիվորեն սկսեցինք թռուցիկներ տարածել, որոնք մեզ էր տալիս Վոլոդյա Խաչատրյանը: ...Թռուցիկներն ընդունվում էին մեծ ոգևորությամբ և դրանք մեծ նշանակություն ունեցան զանգվածներին համախմբելու, շարժման մեջ ընդգրկելու համար: Այնուհետև սկսվեցին ստորագրահավաքները, հեռագրերի տեքստերի ձևակերպումը: Այդ գործում կարևոր դերակատարություն ունեին Անգելինա Հովսեփյանը և Սիլվա Բալայանը... Հաճախակի էինք հանդիպում Հաղորդի մեր համախոհների հետ... Մինչև փետրվարի 12-ը գործում էինք անլեգալ, խիստ գաղտնի պահելով մեր գործունեությունը, սակայն իրադարձությունները շատ արագ էին զարգանում, և որոշվեց 1988թ. փետրվարի 12-ին, երկուսն էլ՝ ժամը 5-ին, ցույց կազմակերպել... Նշված ժամին աշխատավորական կոլեկտիվները շարժվեցին դեպի հրապարակ... Մեզ արդեն ոչինչ արգելակել չէր կարող, շարժվում էինք առաջ: Հայտնի էր միայն, որ ժողովրդին այլևս կանգնեցնել հնարավոր չէ»³:

Վերջինիս վկայություններից հայտնի է դառնում, որ 1988թ. սկզբներին շարժումը հետզհետե համաժողովրդական բնույթ էր ստանում, իսկ նրա ակունքներում կանգնած կանայք անում էին հնարավոր, անգամ անհնարին թվացող ամեն ինչ:

¹ «Դիզակ», Հաղորդ, 2007, 12 փետրվարի:

² ԼՂՀ Մարտունու շրջանային արխիվ (ՄՇԱ) Ֆ.1, ց.1, գ.10, թ. 11:

³ «Ամարաս», Մարտունի, 2006, 15-31 հունվարի:

Նկատենք, որ այդ օրերին կանանց անմիջական մասնակցությամբ կազմակերպված աշխատանքներ էին իրականացվում նաև Մարտակերտում: Այստեղ աշխատանքներն ավելի ծավալուն բնույթ ունեին: Լինելով մարզի ամենամեծ շրջանը, Մարտակերտի ակտիվիստները ստիպված էին հիմնական աշխատանքները տանել գյուղերում, որտեղ հաճախակի էին տեղի ունենում գաղտնի ժողովներ:

Ադրբեջանի իշխանությունների նպատակներն ու բոլոր նախաձեռնությունները ձախողվեցին, և փետրվարի 12-ից մարզի հայ բնակչության պայքարը դարձավ զանգվածային:

Այսպիսով, պահպանելով բոլոր գործող իրավական նորմերն ու ազատ կամքի արտահայտման բացառապես ժողովրդավարական ձևերը, Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը միակամ ու միահամուռ Հայաստանի հետ վերամիավորում պահանջեց: Այդ իրադարձությունը շրջադարձային եղավ ոչ միայն արցախցիների համար. փաստորեն, այն կանխորոշեց հայ ժողովրդի հետագա ուղին:

Հարկ է նշել, որ շարժման ընդհատակյա փուլում ազգային-ազատագրական գործընթացի մեջ ներառնված կանայք մեծապես նպաստեցին, որպեսզի շարժումը վերածվի համաժողովրդական պայքարի:

Քննության առնելով 1985 թվականից մինչև 1988 թվականի սկիզբն ընկած ժամանակահատվածում կանանց դերը, միանշանակ կարելի է ասել, որ նրանք առանձնակի եռանդ ու մասնակցություն ցուցաբերեցին և մեծ դերակատարություն ունեցան համազգային շարժման գործում: Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ այն պահից սկսած, երբ ԽՍՀՄ-ում «վերակառուցման» քաղաքականությամբ պայմանավորված փոփոխությունների հետևանքով սկիզբ առավ արցախահայության ազգային-ազատագրական պայքարի նոր փուլը, կանայք, մասնակից դառնալով այդ ամենին, դեռևս ընդհատակյա փուլում ընդգրկվեցին նախաձեռնող խմբերի կազմում և նպաստեցին, որպեսզի շարժումը վերածվի համընդհանուր պայքարի: Դա նախ և առաջ իրականացվեց լայն բացատրական աշխատանքով: Այնուհետև դրան հաջորդեց հանրագրերի հոսքը Մոսկվա՝ խորհրդային ղեկավարությանը, ապա հաջորդեցին 1988-ի փետրվարյան առաջին բազմամարդ հանրահավաքները, ցույցերը, երթերը: Այդ ամենին միացած կանայք՝

առաջ մղելով Արցախի հիմնահարցը, խորհրդային կայսրապետության վերադաս մարմիններից պահանջեցին այն լուծել ժողովրդավարական պահանջներին ու ազգերի ինքնորոշման սկզբունքներին համապատասխան: Հիշյալ շրջանում նրանց գործունեությունը հիմնականում դրսևորվեց քարոզչական աշխատանքներում, որի շնորհիվ ընդհատակյա շարժումը վերածվեց համաժողովրդականի:

1.2 Կանանց ներգրավվածությունը արցախյան շարժման սկզբնավորմանը (1988թ. փետրվար-դեկտեմբեր)

Լեռնային Ղարաբաղը Խորհրդային Ադրբեջանին բռնակցվելուց հետո, խորհրդային ամբողջատիրության պայմաններում, արցախահայությունը, հաղթահարելով առաջ եկած դժվարությունները, անընդհատ պայքարել է իր ազատության համար: Պատահական չէ, որ վերելքներով և վայրէջքներով ընթացող պայքարը հենք է հանդիսացել 1988թ. փետրվարին սկիզբ առած համաժողովրդական ազատագրական շարժման համար:

Ադրբեջանի ԿԿ կենտկոմի ներկայացուցիչների պլանների ձախողումից հետո, հերթական քայլը եղավ փետրվարի 13-ին կուսշրջկոմների բյուրոների նիստերի գումարումը: Իսկ մարզի նախաձեռնող խմբերն իրենց հերթին՝ այդ կասեցնելու համար, նույն օրը հանրահավաք անցկացրին Ստեփանակերտում¹:

Շարժման ակտիվիստներին հաջողվեց փետրվարի 13-ին Ստեփանակերտում անցկացնել համաժողովրդական հանրահավաք, որին մասնակցում էին ուսանողներ, ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվներ՝ իրենց ցուցապաստառներով: Այդ օրը թերևս դարձավ Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման ժամանակակից փուլի ելակետը: Բազմահազարանոց հանրահավաքին մասնակցում էին շրջաններից մայրաքաղաք եկած մեծ թվով կին-ակտիվիստներ: Այդ հանրահավաքը վերջնականապես տապալեց շարժումը դատապարտող որոշման ընդունումը, որի նախագիծը նախօրոք պատրաստ էր: Հանրահավաքում ելույթ ունեցողների թվում էր Արաքսյա Հայրապետյանը: Դատապարտելով Ադրբեջանի իշխանությունների հակահայ քաղաքականությունը, նա կոչ արեց հասնել հարցի

¹ «ԼՂ Հանրապետություն», 1998, 12 փետրվարի:

արդարացի լուծման՝ մարզը դուրս բերել Ադրբեջանի կազմից, որն էլ հանդիսանում էր արցախցիների կամքը¹: Ելույթ ունեցողների խոսքը մասնակիցների համար ոգևորիչ էր, էր, և հավատ կար, որ արցախահայության նպատակը մոտ է իրականացմանը: Չնայած երկրի ղեկավար կազմն ամեն ինչ անում էր այն կասեցնելու համար: Հասմիկ Միքայելյանը, որն այն ժամանակ Ստեփանակերտի քաղկոմի քարտուղարն էր, վկայում է. «Առաջին ցույցից հետո, որը ղեկավարների մեծ մասին հանկարծակիի բերեց, սկսվեց կրիտիկական վիճակից ելքի որոնումը: Ամբողջ օրը շշպոանքներ ու քարոզներ էին տեղում, իսկ ուշ երեկոյան Կևորկովի և այլ անձանց շուրթերից անսքող սպառնալիքներ լսվեցին...»²:

Չնայած Լարվաժ իրավիճակին՝ ուժային կառույցների սպառնալիքների, առկա խոչընդոտների պայմաններում հազարավոր արցախցիներ, անտեսելով վտանգը, դուրս եկան հանրահավաքի և ԼՂԻՄ-ի ղեկավարությունից պահանջեցին Մայր Հայաստանի հետ վերամիավորելու մասին որոշում ընդունել:

Հակառակ կենտրոնի կոշտ դիրքորոշմանը, շարունակվում էին հայ պատվիրակությունների այցելությունները Մոսկվա՝ խնդրի դրական լուծմանը հասնելու համար: Այդ նպատակով 1988թ. փետրվարի 8-ին Արցախից Մոսկվա մեկնեց ԼՂԻՄ մտավորականության պատվիրակությունը, որի կազմում էին նաև շարժման ակտիվ մասնակիցներ Ժաննա Գալստյանը (Ստեփանակերտի Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի) և Գոհար Սարինյանը (սոցիալիստական աշխատանքի հերոս): Համաձայն Հայկական ԽՍՀ պետական անվտանգության կոմիտեի նախագահի մի զեկուցագրի, Արցախի պատվիրակությանը Մոսկվայում «հուշել են, որ պետք է, նախ, դիմել մարզային խորհրդին ու կարողանալ որոշում ընդունել տալ ԼՂԻՄ-ը Հայաստանին միավորելու մասին և այն ուղարկել ըստ առայանների»³:

Պատվիրակության անդամները Ստեփանակերտ վերադարձան փետրվարի 17-ին և Ստեփանակերտի բազմահազարանոց հանրահավաքի մասնակիցներին հաշվե-

¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 25:

² Ադրբեջանի կոմկուսի ԿԿ վարչական մարմինների բաժնի վարիչ Մ. Ասադովը սպառնալիքներ հնչեցրեց կուսմարզկոմի բյուրոյի փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը կայացած նիստում:

³ ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 83:

տվություն ներկայացրին Մոսկվայում կատարած աշխատանքի մասին՝ կոչ անելով լինել անհողողող ու ոչ մի թույլ չնահանջել պայքարից¹: Պատվիրակության անդամ Ժաննա Գալստյանը վկայում է. «Մեր՝ մտավորականներիս, Մոսկվա կատարած առաքելությունը ես որակում եմ որպես ուժանակ մեծ պայթյունի համար, որ տեղի ունեցավ նրան հաջորդող տարիներին»²:

Առաջին զանգվածային ցույցից անմիջապես հետո՝ փետրվարի 14-ին, Ստեփանակերտ տեղափոխվեց 12 միավոր տեխնիկայից բաղկացած տանկային շարասյուն³: Հաջորդ երկու-երեք օրերին ավելի մեծ թվով զինվորներ հայտնվեցին քաղաքում⁴: Չնայած նրան, որ քաղաքի փողոցները լեփլեցուն էին խորհրդային զորքերով, Ստեփանակերտ էր եկել մարզի բնակչության զգալի մասը: Բազմա-հազարանոց քաղաքը հավաքվել էր կենտրոնական հրապարակում, ներկա էին նույնիսկ կանայք՝ փոքրիկ երեխաների հետ: Այդ օրերին արդեն իսկ մեծ թիվ էին կազմում շարժման ակտիվիստ կանայք, որոնց աշխատանքների համակարգմանը մասնակցում էր նաև Վայա Մեհրաբյանը⁵: Առաջին իսկ օրերից նա մասնակցում էր ստորագրահավաքներին, թռուցիկներ տարածում, շրջաններից պատգամավորների ներկայությունն նստաշրջանում ապահովելու համար կազմակերպչական աշխատանքներ տանում, ակտիվորեն մասնակցում հանրահավաքներին: Երբ Ադրբեջանի իշխանավորները պարետային ժամի պատրվակի տակ փորձ կատարեցին ԼՂԻՄ-ի ներքին գործերի բաժնի զենքերը բռնագրավել, արցախցի 30 կանայք, այդ թվում՝ Վայա Մեհրաբյանը համառ դիմադրություն ցույց տվեցին, որի արդյունքում զենքի բռնագրավման ծրագիրը ձախողվեց⁶:

Փետրվարի 14-ին և 15-ին Լենինի անվան (ներկայիս՝ Վերածննդի) հրապարակում շարունակվող հանրահավաքներում կազմվում էին հարյուրավոր հեռագրեր, դիմումներ և ուղարկվում Մոսկվա, Երևան, որոնցում առաջ էին քաշվում տարբեր

¹ «ԼՂ Հանրապետություն», 1996, 23 հունիսի:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 11, թ. 25: Փետրվարի 10-ին պատվիրակության անդամներին ընդունեց ԽՄԿԿ Կենտկոմի ազգամիջյան հարաբերությունների բաժնի վարիչ Վ. Միխայլովը, որը հուսադրեց նրանց:

³ Բալայան Վ., նշվ. աշխ., էջ 282:

⁴ Արշակյան Ա., նշվ. աշխ., էջ 19:

⁵ «Մարտիկ», Ստեփանակերտ, 2001, 20 փետրվարի, թիվ 10:

⁶ Նույն տեղում:

պահանջներ ու խնդիրներ¹: Լենա Գրիգորյանի հավաստմամբ՝ Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի կողմից 13 դասախոսների, նաև իր, Արզիկ Մխիթարյանի, Ռոնա Բալայանի, Սեդա Ղազարյանի, Աննա Հարությունյանի, Ալվինա Բադալյանի ստորագրությամբ Մ. Գորբաչովին ուղարկվեց հեռագիր, որում պահանջվում էր կարգավորել ստեղծված իրավիճակը և հիմնահարցին տալ արդարացի լուծում²: Միաժամանակ մարզի շրջաններում տեղի էին ունենում խորհրդակցություններ, հավաքներ, որոնցում հիմնականում քննարկվում էին ղարաբաղյան հիմնախնդրին առնչվող հարցեր:

Ասկերանում փետրվարի 15-ի կայացած հերթական հանրահավաքում պատվիրակները, այդ թվում՝ Ռեբեկա Եղյանը, կոչով դիմում են ժողպատգամավորների շրջխորհրդի նստաշրջանի մասնակիցներին. «Մենք՝ Ասկերան ավանի և Ասկերանի շրջանի հայաբնակ գյուղերի հասարակության ներկայացուցիչների հանրահավաքի մասնակիցներս, կոչ ենք անում ժողովրդական պատգամավորների շրջխորհրդի բոլոր պատգամավորներին պաշտպանել շրջանի հասարակության պահանջը և քվեարկել հոգուտ Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու արդարացի պահանջի»³: Ապա հանրահավաքի կազմակերպիչները, նամակ պատրաստելով, 12 հոգուց բաղկացած պատվիրակությանն ուղարկում են Հայաստան: Կազմի մեջ ընդգրկված կին-ակտիվիստներ Նորա Առուշանյանը և Ասյա Հայրապետյանը ևս մասնակից են դառնում փետրվարի 21-ին Երևանի թատերական հրապարակում կայացած բազմահազարանոց հանրահավաքին: Նրանց տեղեկատվությամբ, պատվիրակությունն այդ օրերին ցույցերին մասնակցելուց բացի, Երևանում մի շարք հանդիպումներ է ունենում, այդ թվում՝ հայկոմկուսի Կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հետ և քննարկում հիմնախնդիրը⁴: Իհարկե, պատվիրակության նպատակն էր հարցի կարգավորման համար օգտվել բոլոր հնարավոր միջոցներից:

¹ ՀԱԱ ֆ.207, ց.44, գ. 48, թ. 24:

² «Արցախի համալսարան», Ստեփանակերտ, 2008, 10 փետրվարի թիվ 2:

³ ԼՂՀ ԱՇԱ, ֆ. 1, ց. 1, գ. 53, թ. 5:

⁴ Հեղինակի անձնական արխիվ, Նորա Առուշանյանի և Ասյա Հայրապետյանի պատմածից:

Հերթական նամակը՝ ուղղված ԽՄԿԿ ԿԿ գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին՝ ղարաբաղյան հիմնախնդրի խաղաղ կարգավորման առաջարկով, կազմվում է փետրվարի 15-ին՝ արհմիությունների Հաղորդի շրջանային կառույցի նիստում, որտեղ 24 ելույթ ունեցողներից 10-ը կանայք էին¹: Վերջիններս, արտահայտելով արցախցիների կամքը, առաջարկում են առանց վարանելու շարունակել համաժողովրդական պայքարը: Չնայած Ադրբեջանի իշխանությունների կողմից տարբեր շրջաններում կիրառվող բռնության դեպքերին, այնուամենայնիվ, արցախահայությունը ոչ միայն չնահանջեց, այլև նոր թափով շարունակեց շարժումը:

Ստեղծված իրավիճակը թելադրում էր իրագործել կոնկրետ քայլեր: Այսպես՝ սկսվեց ԼՂԻՄ շրջանների ժողովրդական պատգամավորների, այդ թվում կին-պատգամավորների դիմումների հոսքը շրջանային խորհուրդներ: Ժողովրդական պատգամավորները իրենց դիմումներում շրջխորհրդներից պահանջում էին հրավիրել շրջանային արտահերթ նստաշրջան՝ ԼՂԻՄ-ի հարցը քննարկելու նպատակով: Մարտունու շրջանային խորհուրդ են դիմում մի շարք պատգամավորներ, այդ թվում՝ Էլեոնորա Բալայանը (թիվ 5 ընտրատարածք), Սեդա Օհանյանը (թիվ 46 ընտրատարածք), Լյուբա Գրիգորյանը (թիվ 52 ընտրատարածք), Սիրուշ Դադայանը (թիվ 74 ընտրատարածք), Լիլյա Ավանեսյանը (թիվ 53 ընտրատարածք), պահանջելով պաշտպանել Մարտունու շրջանի բնակչության պահանջը և Հայաստանի հետ մարզի վերամիավորման հարցը քննարկելու համար հրավիրել ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի արտահերթ նստաշրջան²:

Այնուհետև Ասկերանի շրջանային խորհրդի մի խումբ պատգամավորներ, այդ թվում՝ 15 կին պատգամավորներ, փետրվարի 18-ին դիմում են շրջխորհրդի գործկոմ, խնդրելով «Ադրբեջանական ԽՍՀ ժողովրդական պատգամավորների շրջանային խորհրդի մասին» Ադրբեջանի ԽՍՀ օրենքի 31-րդ և 35-րդ հոդվածների պահանջներին համապատասխան հրավիրել շրջանային խորհրդի արտահերթ նստաշրջան և ընդունել որոշում: Դիմումում, մասնավորապես, ասվում է. «Մենք՝ ներքոստորագրյալ պատգամավորներս, պահանջում ենք հրավիրել շրջխորհրդի արտահերթ նստաշրջան

¹ ԼՂՀ ՀՇԱ, ֆ. 1, ց. 1, գ. 39, թ. 33:

² ԼՂՀ ՄՇԱ, ֆ. 1, ց. 1, գ. 59, թ. 14:

և քննարկել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին շրջանի հասարակության կողմից քննարկված ու ջերմ պաշտպանություն գտած Հռչակագիրը և ընդունել համապատասխան որոշում»¹: Այդ կին պատգամավորների շարքերում էին Ալինա Ասրյանը, Անիկ Ասատրյանը, Սուսաննա Գաբրիելյանը, Սվետլանա Խաչատրյանը, Անահիտ Պետրոսյանը, Վեներա Գրիգորյանը, Էմմա Դանիելյանը, Էվելինա Ստեփանյանը, Ելիզավետա Սարգսյանը, Գրետա Մարտիրոսյանը, Երմոնյա Սարգսյանը, Ստելլա Բալասյանը, Անուշ Անդրյանը, Նազիկ Դադայանը և Ասյա Պետրոսյանը²:

Հարկ է նկատել նաև գյուղական խորհուրդների ուղարկած նամակները շրջխորհուրդների գործկոմներին՝ նստաշրջան հրավիրելու առաջարկով, որոնցում առկա էին նաև կանանց ստորագրությունները: Նյութերը վկայում են այն իրողությունը, որ կանայք մասնակցում էին համազգային գործի բոլոր նախաձեռնություններին: Նրանք պատասխանատվություն էին կրում համազգային խնդրի համար: Կանանց մասնակցությամբ փետրվարի 18-ին Ասկերանի շրջխորհրդի գործկոմ են դիմում Նորագյուղի, Նախիջևանիկի, Խնապատի, Պատարայի գյուղական խորհուրդների գործկոմները՝ առաջարկելով հրավիրել շրջխորհրդի նստաշրջան և քննարկել հիմնահարցը³:

Հարկ է նշել, որ որոշ շրջանների արխիվային նյութերի բացակայության պատճառով, որոնք ոչնչացվել են հակառակորդի կողմից, հնարավորություն չի եղել առավել մանրամասն անդրադառնալ մեզ հետաքրքրող ժամանակաշրջանին: Օրինակ՝ Մարտակերտի շրջանային արխիվը չի պահպանվել, որի համար տեղեկությունները ձեռք են բերվել կազմակերպիչներից, մասնակիցներից, վկաներից: Վերջիններիս հավաստմամբ, ինչպես նաև առկա նյութերից տեղեկանում ենք, որ մեկը մյուսի ետևից տեղի են ունեցել շրջխորհուրդների արտահերթ նստաշրջաններ:

1988թ. փետրվարի 19-ին հրավիրված ժողպատգամավորների Մարտունու 20-րդ գումարման շրջխորհրդի 3-րդ արտահերթ նստաշրջանին մասնակցում էին 24 կին-պատգամավորներ: Ելույթ ունեցան Կարինե Բաբայանը, Էլենորա Բալասյանը, Լիլյա

¹ ԼՂՀ ԱՇԱ, ֆ. 1, ց. 1, գ. 57, թ. 5:

² Նույն տեղում, գ.58, թ.11:

³ Նույն տեղում, գ. 55, թ. 5:

Ավանեսյանը: Վերջինս հատկապես կարևորեց, որ Խորհրդային Հայաստանի հետ Լեռնային Ղարաբաղի վերամիավորման հարցը միշտ էլ քննարկման առարկա է եղել: Հարցը բարձրացվել է նաև 1966թ և արդարացի լուծում չի գտել ու մոտեցել է պահը, որպեսզի վերջապես դրականորեն լուծվի ժողովրդի պահանջը: Իր ու ընտրողների անունից առաջարկեց խնդիրը ներկայացնել վերադաս մարմինների քննարկմանը՝ օբյեկտիվ լուծում տալու նպատակով¹: Ելույթ ունեցող բոլոր կին-պատգամավորները միահամուռ առաջարկեցին դիմել ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզխորհրդի գործկոմին՝ խնդրելով ԼՂԻՄ-ն Հայկական ԽՍՀ-ը միավորելու մասին հարցը ներկայացնել մարզխորհրդի նստաշրջանի քննարկմանը²:

Փետրվարի 20-ին ժողպատգամավորների Ասկերանի 20-րդ գումարման շրջխորհրդի 5-րդ արտահերթ նստաշրջանին 78 պատգամավորներից ներկա էր 60-ը, այդ թվում՝ 10-ը կին-պատգամավոր: Նրանցից ելույթներով հանդես եկան Անիկ Ասատրյանը, Երմոնյա Սարգսյանը, Թամարա Փարամազյանը, ովքեր, առաջարկեցին նստաշրջանի անունից հռչակագիր ներկայացնել ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու մասին: Պատգամավոր Անիկ Ասատրյանն իր ելույթում արտահայտելով իր ընտրատարածքի ընտրողների կամքը, կարևորեց, որ միայն ժողովուրդը կարող է որոշել իր բախտը, իսկ հայ ժողովուրդն ունի միայն մեկ ցանկություն՝ մարզի միավորում Խորհրդային Հայաստանին³:

Պետք է ասել, որ այդ օրերին մարզի շրջաններում և Ստեփանակերտում ամեն ինչ արվում էր մարզխորհրդի արտահերթ նստաշրջանի կայացման համար և կանայք նախապատրաստական աշխատանքներում օգտագործում էին բոլոր հնարավոր միջոցները: Հավատ կար, որ նստաշրջանի ճիշտ որոշումը կտանի հարցի դրական լուծման:

¹ ԼՂՀ ՄՇԱ, ֆ.1, ց.1, գ. 3, թ.7:

² Նույն տեղում: Կին-պատգամավորներն էին՝ Կարինե Բաբայան, Մարիետա Սարգսյան, Նինա Գասպարյան, Էլեոնորա Բալայան, Նելլի Հովսեփյան, Վարդուշ Օհանյան, Լիլյա Ավանեսյան, Անգելինա Հովսեփյան, Սիրանուշ Դադայան, Արևիկ Սվարյան, Լարիսա Զիվանջիրյան, Ռայա Հարությունյան, Թամարա Քամայան, Ռայա Բաղդասարյան, Բելա Գրիգորյան, Սվետլաննա Գրիգորյան, Անժելա Շամամյան, Սեդա Օհանյան, Լյուբա Գրիգորյան, Անժելա Խաչատրյան, Մագուրա Հովսեփյան, Էմմա Ավետիսյան, Սվետլանա Բաղդասարյան, Անժելա Բալայան:

³ ԼՂՀ ԱՇԱ, ֆ.1, ց. 1, գ. 43, թ. 5:

Նույն օրը ժողպատգամավորների Հաղորթի 20-րդ գումարման շրջխորհրդի 4-րդ նստաշրջանում քննարկվեց «ԼՂԻՄ-ի և Նախիջևանի միացումը Հայկական ԽՍՀ-ին և այդ հարցի վերաբերյալ Շահումյանի, Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի շրջաններում հանրաքվե անցկացնելու ու դրանք ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը ներկայացնելու մասին» հարցը: Այստեղ ևս կին պատգամավորներն իրենց ելույթներում արտահայտեցին շրջանի հայ բնակչության կամքը: Ընդունվեց որոշում. «Խնդրել մարզխորհրդի գործկոմին՝ նստաշրջանի քննարկմանը ներկայացնել «ԼՂԻՄ-ի և Նախիջևանի միացումը Հայկական ԽՍՀ-ին և Շահումյանի, Շամխորի, Դաշքեսանի, Խանլարի շրջաններում անցկացնել հանրաքվե»¹ :

Նշենք, որ բացի Շուշիի շրջանից, մարզի բոլոր շրջաններում հրավիրվել են շրջխորհուրդների արտահերթ նստաշրջաններ:

Մարզխորհրդի նստաշրջանի անցկացման համար ստեղծվեց նախաձեռնող խումբ, որի կազմում ընդգրկվեցին շարժման մի շարք նվիրյալներ, այդ թվում ժաննա Գալստյանը: Կազմակերպիչների ուսերին էր ծանրացած նստաշրջանի անցկացման և ակնկալվող պատմական փաստաթղթի ապահովման պատասխանատվությունը:

Այդ օրը Ստեփանակերտում գտնվող Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բագիրովի հրահանգով ամենուրեք խոչընդոտներ էին ստեղծվում, որպեսզի պատգամավորները շրջաններից չկարողանան հասնել մարզկենտրոն²: Նույն օրը ժամը 11-ին Ստեփանակերտում հրավիրվեց մարզխորհրդի գործկոմի նիստ, որտեղ ելույթ ունեցող կանայք առաջարկեցին ընդառաջել պատգամավորների պահանջին և հրավիրել մարզխորհրդի արտահերթ նստաշրջան³: Նույն օրը ԼՂԻՄ մտավորականությունը, այդ թվում՝ ժաննա Գալստյանը և Գոհար Սարինյանը, նամակով դիմելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ ներկայացրին մարզում առկա իրավիճակը և խնդրեցին նպաստել դրա կարգավորմանը⁴: Ցավով պետք է նշել, որ ինչպես փետրվարի 20-ի մտավորականության նամակը, այնպես և նախորդ և հաջորդ

¹ ԼՂՀ, ՀՇԱ, ֆ. 1, ց. 1, գ. 40, թ. 145:

² Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ17:

³ «Հայաստանի Հանրապետություն», 1998, 20 փետրվարի, թիվ 33: Նիստին մասնակցում էին մարզգործկոմի նախագահի տեղակալ Արաքսյա Տոնոյանը և մարզգործկոմի քարտուղար Ռիմա Խաչիյանը:

⁴ ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 3, թ. 52:

մի շարք նամակ-դիմումներ մնացին անհետևանք: Կենտրոնի անտարբերությունը չհուսալքեց շարժման կազմակերպիչներին: Փետրվարի 20-ին, Ստեփանակերտում հրավիրված ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման քաղաքային խորհրդի 4-րդ արտահերթ նստաշրջանում ելույթ ունեցող կանայք՝ Մարգո Բալասանյանը (մարզկենտրոնի Մ. Գորկու անվան պետական դրամատիկական թատրոնի դերասանուհի, ժողովրդական արտիստ), Լաուրա Ղարամյանը (մարզի մշակույթի բնագավառի արհմիության կոմիտեի նախագահ), Իրինա Գևորգյանը (Ստեփանակերտի կոնդենսատորների գործարանի բանվորուհի) և Հասմիկ Միքայելյանը (Ստեփանակերտի քաղկոմի քարտուղար) ոչ միայն իրենց մտահոգությունները հայտնեցին մարզում ստեղծված իրավիճակի կապակցությամբ, այլ նաև պահանջեցին մարզխորհրդի նստաշրջանում ընդունել որոշում, որը պետք է արտահայտեր արցախահայության կամքը: Քննարկման թեման «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու մասին աշխատավորության պահանջի կապակցությամբ Ստեփանակերտ քաղաքում ստեղծված իրավիճակի մասին» հարցն էր¹: Քաղխորհրդի պատգամավոր Մարգո Բալասանյանը հատկապես նշեց. «Աշխատանքի բնույթով ես հաճախակի եմ լինում Ղարաբաղի ամենաձայրամասային բնակավայրերում և իրազեկ եմ այն տխուր փաստին, որ սոցիալ-տնտեսական ծանր վիճակի հետևանքով մեր լեռնային գյուղերը դատարկվում են: Դա այն պատճառներից մեկն է, որը արցախցիներին ստիպում է իրենց երկրամասը վերամիավորել Հայաստանի Հանրապետության հետ: Ղարաբաղից հեռացած հայերին փոխարինելու են գալիս ադրբեջանցիները, որոնց թիվը գնալով ավելի է շատանում: Հարգելի պատգամավորներ, մեր թատրոնի կոլեկտիվն ինձ հանձնարարել է հայտնել իրենց ցանկությունը՝ Լեռնային Ղարաբաղը վերամիավորելու Հայաստանի հետ»²:

Նախքան խնդիրը ներկայացնելը, յուրաքայուր ոք փորձում էր ներկայացնել անցյալի սխալը ու դրա վերականգնման մեջ տեսնում արդարության հաստատումը: Պատահական չէ, որ Լաուրա Ղարամյանը սկզբում անդրադարձավ 1920-ական թվականների սկզբին կատարված պատմական կոպիտ սխալին և պահանջեց այն

¹ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 186, թ. 7:

² ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 186, թ. 22-23:

ուղղել, որը մարզի ամբողջ բնակչության ցանկությունն է: Ապա նշեց, որ մարզը զրկված է բազմաթիվ հնարավորություններից, նույնիսկ չունի հրատարակելու իրավունք, չունի հայերեն լեզվով կնիք, մշակույթի պալատ, անչափ թույլ է մարզի մշակութալուսավորչական հիմնարկների նյութական բազան¹:

Քաղաքային խորհրդի 4-րդ արտահերթ նստաշրջանում Ի. Գրիգորյանը և Հ. Միքայելյանը ևս պաշտպանեցին հնչած առաջարկությունը՝ Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու անհրաժեշտության վերաբերյալ:

Ընդունվեց որոշում, որտեղ, մասնավորապես, ասվում է. «Խնդրել Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների նախագահություններին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը՝ քննարկել և դրականորեն լուծել Լեռնային Ղարաբաղն Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու մասին հարցը»²: Ընդունված որոշումն անմիջապես հանձնվեց մարզկոմ և մարզխորհրդի գործկոմ:

Այսպիսով, ԼՂԻՄ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու և մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու հարցի քննարկումը դարձավ հրամայական պահանջ և բոլորն անհամբեր սպասում էին որոշման ընդունմանը:

Ուժերի մեծ լարումով 1988թ փետրվարի 20-ի երեկոյան ժամը 20-ն անց 20 րոպեին ԼՂԻՄ պատգամավորների 20-րդ գումարման մարզային խորհրդի արտահերթ նստաշրջանն սկսեց աշխատանքները, որին մասնակցած 111 պատգամավորներից 49-ը կին-պատգամավորներ էին³: Պատմական նիստը քննարկեց «Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի մարզային խորհրդի միջնորդությունը՝ մարզը Ադրբեջանական ԽՍՀ կազմից հանելու և Հայկական ԽՍՀ կազմի մեջ մտցնելու հարցը»: Ելույթ ունեցած 45 պատգամավորից, 27-ը՝ կին-պատգամավորներ էին:

¹ Նույն տեղում, թ. 18:

² Նույն տեղում, թ. 24-26:

³ Պատմական նստաշրջան, փաստաթղթերի և նյութերի ժողովածու, Ստեփանակերտ 2008, էջ 27: Մասնակցում էին կին-պատգամավորներ՝ Արմիդա Գաբրիելյանը, Սուրայա Գրիգորյանը, Ռաիսա Գրիգորյանը, Ռիտա Մնացականյանը, Գոհար Գրիգորյանը, Ժաննա Մելքումյանը, Լիդիա Սարգսյանը, Էսմիրա Առաքելյանը, Լիդա Պետրոսյանը, Անժելա Հակոբյանը, Նարինե Ավանեսյանը, Լուսիկ Հակոբյանը, Ժաննա Մովսիսյանը, Ռիտա Նալբանդյանը, Լաուրա Համբարձումյանը, Այա Ղազարյանը, Ամալյա Հակոբյանը, Անիկ Սուքիասյանը, Ամալյա Աբրահամյանը, Ժուլիետա Լալայանը, Ռազմելա Անանյանը, Լենա Ղահրամանյանը, Ալվարդ Սարգսյանը, Նվարդ Պետրոսյանը, Թամարա Գալստյանը, Սիլվա Արզումանյանը, Զինա Բաբայանը:

Նրանք իրենց ելույթներում համոզիչ փաստերով մատնանշում էին ԼՂԻՄ-ի 65 տարվա անցած դառնագին ուղին, ադրբեջանական ԽՍՀ կազմում գտնվելու պատճառով այդ ճանապարհին հայտնված ու երբեք էլ չլուծված հարցերը, որոնք խանգարել են մարզի տնտեսական և մշակութային կյանքի զարգացման բնականոն ընթացքին, Ղարաբաղի հայությանը ետ պահել սոցիալական, ազգային և հոգևոր վերելքի այն մակարդակից, որը ձեռք է բերվել Հայկական ԽՍՀ-ում: Այդ նպատակով նրանք առաջարկում էին ընդառաջել Լեռնային Ղարաբաղի հայ ժողովրդի ցանկությանն ու ինքնորոշման անկապտելի իրավունքին՝ լուծել մարզը Հայաստանին միավորելու հարցը, միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ նույն հարցի լուծմանն աջակցելու և վերջնական որոշում ընդունելու համար: Նրանցից յուրաքանչյուրը ելույթի կարճ և բովանդակալից հաղորդմանն ավելացնում էր նոր փաստեր, սեփական դիտարկումներ, որոնք ցույց էին տալիս, որ մարզն իր ինքնավարության ամբողջ ընթացքում ազգային զարգացման տեսակետից պարզապես գտնվել է փակուղու առաջ: Իրական պատճառներին միշտ էլ գումարվել է հանրապետության պետական և կուսակցական ղեկավարների գաղափարախոսական քաղաքականությունը՝ մարզի հայության ազգային առանձնահատկությունների, հոգևոր զարգացման օրինական պահանջների նկատմամբ: Կին պատգամավորներն այդ փաստերը, օրինակները նշում, քննում, դատապարտում էին, միաժամանակ համոզված հաստատում, որ այդ վիճակից դուրս գալու միակ ճանապարհը Ղարաբաղի վերամիավորումն է Մայր հայրենիքին:

Պատգամավոր Արմիդա Գաբրիելյանը, իր ելույթում ներկայացնելով հայ ազգի բարիդրացիական հարաբերությունները տարբեր ազգերի, ժողովուրդների հետ, հավաստեց. «Մի բան պարզ է. ուրիշ ազգերին սիրել կարողանալու համար պետք է սիրել նախ իր ազգին, պաշտպանել իր ազգի արժանապատվությունը: Մի՞թե արժանապատվության կոխկրտում չէ, երբ հայ մանուկն օրորոցից սկսած անհաղորդ է հայ երգին, հայ մշակույթին: Մեզանից ո՞վ է Կոմիտաս լսում, ո՞վ է քաջաճանոթ մեր պատմությանը: Մեր երեխաները դպրոցում չորս լեզու են սովորում, սակայն չգիտեն հայ ժողովրդի պատմությունը: Այսօր վերակառուցման և ժողովրդավարության պայմաններում վերջապես հասել է խոսելու, արդարորեն պահանջելու հարցը... Մեր

պահանջը հոգևոր սնունդն է, մենք հայ մնալ ենք ուզում, ազգության ապագան ենք ուզում: Մեր սկսածն արդար, ազնիվ գործ է, արդարացի պահանջ: Ուրեմն ոչ մի նահանջ՝ հանուն Ղարաբաղի միացման Սովետական Հայաստանին...»¹:

Սուրայա Գրիգորյանը, անդրադարձ կատարելով փետրվարին տեղի ունեցած հանրահավաքներին, ժողովներին և այնտեղ քննարկվող հարցին, նշեց, որ Լեռնային Ղարաբաղը Հայաստանի մի մասնիկն է, ինչպես գրված է պատմության մեջ: Նա հայտարարեց, որ միանում է բոլոր ղարաբաղցիների արդար պահանջին՝ չմոռանալով այն հանգամանքը, որ ԼՂԻՄ-ը միակն է ամբողջ Խորհրդային Միությունում, որը, ունենալով ՀԽՍՀ-ի հետ նույն լեզուն, չի մտնում այդ հանրապետության կազմի մեջ և առաջարկեց ուղղել այդ սխալը²:

Եվ այսպես, իրար ետևից ամբիոն բարձրանալով, կին պատգամավորները պահանջում էին իրավացի լուծում տալ հիմնախնդրին:

Արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշում, որտեղ, մասնավորապես, ասվում է. «...միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցին դրական լուծում տալու մասին»³:

Փաստորեն նստաշրջանի որոշումը հիմնվել է ԽՍՀՄ գործող Սահմանադրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և հոծ ապրող ազգային խմբերին ԽՍՀՄ-ից կամ միութենական հանրապետությունից դուրս գալու և իրենց ճակատագիրը տնօրինելու հնարավորություն են ընձեռում:

Ցավոք, կենտրոնն արցախահայության նկատմամբ անհանդուրժողական դիրք գրավեց: Ուստի և պատահական չէր, որ արդեն իսկ փետրվարի 21-ին ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն իրականությունից հեռու մի որոշում ընդունեց, որով ղարաբաղյան հիմնահարցի արդարացի լուծմանը ձգտող ժողովրդական շարժումը որակեց «ծայրահեղական» և «նացիոնալիստական», որն իբր հակասում է Ադրբեջանական ԽՍՀ և Հայկական ԽՍՀ աշխատավորների շահերին: Փորձելով

¹ Նույն տեղում, էջ 41:

² Նույն տեղում, էջ 43:

³ «Սովետական Ղարաբաղ», 1988, 21 փետրվարի թիվ 5:

ղարաբաղյան հիմնախնդրի լուծումն իրավաքաղաքականից փոխադրել սոսկ սոցիալտնտեսական ու մշակութային հուն, կենտրոնը որոշում ընդունեց մարզի համապատասխան ոլորտների զարգացմանը նպաստող միջոցառումներ ձեռնարկել¹: Արցախահայությունը պնդելով հիմնախնդրի իրավաքաղաքական լուծումը, կտրականապես մերժեց կենտրոնի նման ապակողմնորոշիչ մոտեցումը: Միևնույն ժամանակ, Բաքուն որդեգրեց բիրտ ուժի և բռնության քաղաքականությունը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սահմանադրական պահանջների չեզոքացմանը, նպատակ ունենալով այդ ճանապարհով կասեցնել համաժողովրդական պայքարը²: Այդ մասին են վկայում 1988թ. փետրվարյան դեպքերը, երբ մարզխորհրդի արտահերթ նստաշրջանից ընդամենը երկու օր անց՝ փետրվարի 22-ին, «կարգ ու կանոն հաստատելու» նպատակով Ադդամի (ներկայումս՝ Ակնա) շրջանից դեպի Ստեփանակերտ շարժվեց ադրբեջանական խառնամբոխը՝ ճանապարհին ավերելով հայկական ամեն ինչ, սակայն Ասկերանի մատույցներում կանգնեցվեց և հետ շարժվեց³: Իսկ հաջորդ օրը՝ փետրվարի 23-ին, լուր տարածվեց, թե Քելբաջարի (ներկայումս՝ Քարվաճառ) կողմից հարձակում է սպասվում Մարտակերտի ուղղությամբ: Ադրբեջանական հրոսակախմբին դիմակայելու համար շրջկենտրոնի բնակչությունը՝ տղամարդիկ թե կանայք, բեռնատարներով շարժվեցին դեպի Քելբաջար: Այդտեղ կանանց մասնակցությունը կազմակերպում էր Վալյա Պետրոսյանը⁴: Նրանց հաջողվեց պատասխան տալ հակառակորդին, որի նպատակն էր խոչընդոտել Մարտակերտում տեղի ունեցող հանրահավաքը⁵:

Դեպքերը հաջորդում էին մեկը մյուսին, ինչն արցախահայությանն ստիպում էր վճռական քայլերի դիմել:

¹ "Правда", 1988, 24 февраля.

² «88-ի արձագանքները», սկավառակ, (ռեժիսոր՝ Ավետիսյան Հ., հեղինակ՝ Բաղդյան Վ.):

³ Հավերժական ջրբաժան, էջ 27:

⁴ Վալյա Պետրոսյանը շարժման առաջին օրերից մասնակցում էր ցույցերի, հանրահավաքների կազմակերպմանը, իսկ հետագայում՝ ամուսնու հետ՝ ուղղաթիռով Հայաստանից Արցախ զենք ու զինամթերքի տեղափոխմանը: Երբ սկսվեցին ինքնապաշտպանական մարտերը, նա միացավ կամավորական ջոկատներին և մինչև 1994-ի մայիսը մասնակցեց Արցախի ազատամարտին:

⁵ «Ազատ Արցախ», 2001, 23 փետրվարի:

Փետրվարի 25-ին Մարտակերտի շրջանի մի խումբ մտավորականներ, այդ թվում՝ Ալվինա Սարգսյանը, Զարիկ Դավթյանը, Նինա Օհանյանը, Ժաննա Մելքումյանը, Կարինա Աբրահամյանը, Արմիդա Մինասյանը, դիմում են ԼՂԻՄ մարզխորհրդի գործկոմին և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը: Նրանք իրենց դժգոհությունն են արտահայտում փետրվարի 21-ին ԽՄԿԿ Կենտկոմի քաղաքային ընդունած որոշման կապակցությամբ և խնդրում աջակցել¹:

Ղարաբաղյան շարժմանը սատար կանգնելու համար 1988թ. փետրվարի 21-ին Հայկական ԽՍՀ-ում զանգվածային ելույթների մեծ ալիք սկիզբ առավ: Ազատագրական շարժումը համակարգելու նպատակով Իգոր Մուրադյանի նախաձեռնությամբ փետրվարի 22-ին ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն²: Հանրապետության գրեթե բոլոր հիմնարկ-ձեռնարկություններում, շրջաններում և քաղաքներում կազմակերպվեցին «Ղարաբաղ» կոմիտեի բաժանմունքներ, որոնք շարժմանը տվեցին կազմակերպչական նոր ձև³:

Ղարաբաղյան շարժման մեջ առանցքային էր մտավորականության մասնակցությունը: Նրանց առաջնաշարքում էր բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, ում գործակցությամբ փետրվարի 15-ին Հայաստանի Գրողների միության անունից բողոքի հեռագիր ուղարկվեց ԽՄԿԿ ԿԿ Գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին: Հետագայում բանաստեղծուհին վկայում է. «Հարկավոր էր 2-3 էջում շարադրել ԼՂԻՄ-ի առաջացման ողջ պատմությունը, նրա անտրամաբանական վիճակը, յոթանասունամյա թնջուկի լուծման անհրաժեշտությունը: Կազմեցինք, ուղարկեցինք»⁴:

ԽՄԿԿ Գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովը, փետրվարի 26-ին Կրեմլում ընդունելով Սիլվա Կապուտիկյանին և Զորի Բալայանին, փորձում էր նրանց միջոցով հայ ժողովրդին ետ պահել գործադուլներից և հանրահավաքներից: Զրույցից միանշանակ ակնհայտ էր, որ Մ. Գորբաչովը տեղյակ էր Հայաստանում և Ղարաբաղում տեղի ունեցող իրադարձություններին: Նա վստահեցնում էր, որ առաջիկայում

¹ ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 3, թ. 50:

² Նույն տեղում, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 18-19:

³ 1988-ի փետրվարի 21-ին Երևանի Ա. Սպենդարյանի անվան օպերայի և բալետի պետական թատրոնի շենքում ձևավորվեց «Ղարաբաղի պաշտպանության կոմիտե», կարճ՝ «Ղարաբաղ» կոմիտե:

⁴ Կապուտիկյան Ա., նշվ. աշխ., էջ 250:

ԽՄԿԿ Կենտրոնի ազգային հարցին նվիրված պլենումն անպայման կանդորադառնա Ղարաբաղի հարցին: Նաև զգուշացրեց, թե պետք է մտածել Բաքվում ապրող ավելի քան 200 հազար հայերի մասին¹: Հայ մտավորականության ներկայացուցիչներն իրենց հերթին փորձում էին երկրի ղեկավարին բացատրել, որ արցախահայությունը, տասնամյակներ շարունակ գտնվելով Ադրբեջանի տիրապետության տակ, փաստորեն արժանանում է Նախիջևանի հայության ճակատագրին: Հետագայում հրապարակած իր գրքում բանաստեղծուհին ամենայն մանրամասնությամբ տեղեկություններ է հաղորդում փետրվարյան այդ հանդիպման մասին: Սիլվա Կապուտիկյանը և Ջորի Բալայանը Երևան վերադարձան փետրվարի 27-ին, որտեղ նրանց սպասում էին հանրահավաքի մասնակիցները: Անհրաժեշտ էր հանդես գալ բազմահազարանոց հանրահավաքում, ինչպես նաև հեռուստաէկրանների առջև հավաքված՝ լուրերին սպասող ողջ ժողովրդի առջև: Եվ, չնայած հաջորդ օրվանից գործադուլն ու ցույցերը դադարեցին, սակայն նորից վեր բարձրացան՝ արդեն սոււմգայիթյան ջարդերից հետո:

Պետական ահաբեկչության քայլը՝ Սոււմգայիթում հայերի ցեղասպանությունը, սկիզբ դրեց Ադրբեջանի հայության բռնագաղթի առաջին փուլին: Երեք օր ջարդարարների խմբերը ներխուժում էին հայերի բնակարանները և կոտորում անպաշտպան մարդկանց: Առավել դաժան գործողություններ իրականացվեցին հայ կանանց և աղջիկների նկատմամբ, ինչի մասին վկայում են դեպքերի ականատեսները²: Ջոհերի թվում էին Էմմա Գրիգորյանը (Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղից), Ռազմելա Առուշանյանը, Լյուլա Ավագյանը (Մարտակերտի շրջանի Չլդրան գյուղից), Իրինա Մելքումյանը (Հադրութի շրջանից), Ելենա Բաբայանը, Սեդա Դանիելյանը, Ռախսա Մելքումյանը, Փիրուզա Մելքումյանը, Թամարա Մեհտիկան, Հերսիլիա Մովսեսովան, Արուսյակ Սահյանը, Նատալյա Վարդանյանը³:

¹ Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 72:

² Ականատեսներից Ռիմա Խալափյանը պատմում է, որ իր հարևան Էմմա Գրիգորյանին մերկ հանել են բակ, ապա սպանել: Վլադիմիր և Մարինա Պետրոսյանները պատմում են, որ հարևան Ավանեսյանների աղջիկներին մերկացրել են, հանել բակ ու դաժանորեն ծեծել: Բազմաթիվ են նման վկայությունները (տես՝ Шахмурадян С., Сумгайтская трагедия в свидетельствах очевидцев. Кн. 1, стр.13):

³ Шахмурадян С., Сумгайтская трагедия в свидетельствах очевидцев. Кн. 1, стр. 14.

Միայն փետրվարի 29-ի գիշերը, երեք օր ուշացումով, միութենական կենտրոնական իշխանությունները զորք մտցրին Սումգայիթ: Մեծ դժվարությամբ հաջողվեց դադարեցնել արյունահեղությունը և քաղաքից դուրս բերել ողջ մնացած հայերին:

Սումգայիթում առավել սադիստական գործողություններ կիրառվեցին հատկապես կանանց նկատմամբ: Հայ ժողովրդի նկատմամբ իրականացված այս սպանդի նպատակն էր հայերին ահաբեկել նոր արյունահեղ գործողությունների հնարավոր հեռանկարով և խեղդել արցախահայության ազգային-ազատագրական պայքարը: Սումգայիթը վճռական ազդեցություն ունեցավ շարժման հետագա ընթացքի վրա: Ոճրագործությունը ոչ միայն չընկճեց հայ ժողովրդին, այլև, ընդհակառակը, նրան էլ ավելի համախմբեց իր ազգային նպատակների իրագործման գաղափարի շուրջ:

Այլևս ակնհայտ էր որ ղարաբաղյան հիմնախնդիրը լուծվելու է ոչ քաղաքակիրթ, ժողովրդավարական ճանապարհով:

1988թ. մարտի 6-ին և մարտի 8-ին Ստեփանակերտի հուշահամալիրում Սումգայիթի նահատակների հիշատակին նվիրված սգո հանրահավաքներում, իրենց բողոքի ձայնը բարձրացրեցին Ժաննա Գալստյանը, Ռոզա Սարգսյանը, Արզիկ Մխիթարյանը, Նադյա Բաղդասարյանը, Սվետլանա Պետրոսյանը: Նրանք իրենց խոսքում անարգանքի սյունին գամեցին սումգայիթյան սպանդի կազմակերպիչներին ու պահանջեցին, նրանց և անմիջական հանցագործներին դատական պատասխանատվության ենթարկել: Իր ելույթում Ժաննա Գալստյանը հատկապես նշեց. «Այսօր երջանկությունը պիտի ծփար մեր հոգիներում, մեր տներում, գարնանամուտի մեր աշխարհում, սակայն համատարած սուգ է ամենուրեք, որովհետև Բաքվի չարագործ մեծերի հրահանգով ու ղեկավարությամբ մեր հարազատներին կոտորել, հոշոտել, հրեշավոր տառապանքների են ենթարկել Սումգայիթում: Մենք միայն մեր ցավի մասին խոսք էինք ասել աշխարհին և սպասում էինք, որ կբուժեն այդ ցավը: ... Մենք այսօր կերդվենք մեր նահատակների սուրբ հիշատակի առաջ, որ կգնանք առաջ, կքայլենք աննահանջ, որպեսզի բացվի մեր փրկության դուռը, և մենք

տերը դառնանք մեր ազատ անկախության և հարազատ լեռնաստանի»¹: Այս հանրահավաքների հիմնական կազմակերպիչները կանայք էին, որոնք էլ իրենց ելույթներում միահամուռ դատապարտում էին սումգայիթյան սպանողը:

Նման պայմաններում կենտրոնը շարունակում էր մնալ անդրդվելի: Նա ոչ միայն բացահայտ հակահայկական դիրք էր գրավել, այլև ձգտում էր ամեն կերպ հավասարության նշան դնել Ադրբեջանում և Հայաստանում տեղի ունեցող իրադարձությունների միջև: Հանրահավաքների և ցույցերի կազմակերպումը խոչընդոտելու նպատակով 1988թ. մարտին խորհրդային բանակը մտցվեց Երևան²:

1988թ. մարտի սկզբներին Հայաստանում գործող «Ղարաբաղ» կոմիտեին համանման հասարակական-քաղաքական կառույց ստեղծվեց նաև Արցախում՝ «Կռունկ»-ը³: Այս մարմիններն էլ դարձան ապագայում ստեղծվելիք հայկական ազգային երկու պետությունների իշխանությունների նախաշաղկիղը: Մարտի 1-ի ուշ երեկոյան՝ Ստեփանակերտի կենտրոնական հրապարակում տեղի ունեցած հանրահավաքում, միանգամայն ժողովրդավարական կարգով, ընտրվեցին նախատեսված կազմակերպության անդամները՝ թվով 66 հոգի: Հանրահավաքից անմիջապես հետո տեղի ունեցավ նիստ, որտեղ ընտրվեց խորհուրդ՝ բաղկացած 11 հոգուց: Կառույցն անվանվեց «Կռունկ» հասարակական-քաղաքական կազմակերպություն կամ կոմիտե, որը կոչված էր ղեկավարելու շարժումը⁴: «Կռունկ»-ի խորհրդի անդամ էր նաև Ժաննա Գալստյանը, ով կատարում էր հանրահավաքների կազմակերպման հանձնաժողովի նախագահի պարտականությունները: Մարզի բոլոր շրջաններում կոմիտեն ուներ մասնաճյուղեր, որոնք աշխատանքներ էին տանում նաև գյուղերում: Շրջաններում և գյուղերում այդ աշխատանքներին մասնակից կանայք աչքի էին ընկնում կազմակերպչական գործերում: Նրանք հանրագրերի, նամակ-դիմումների պատրաստման աշխատանքներից բացի, նաև հրավիրում էին ժողովներ, քննարկում հրատապ հարցեր՝ մարզում տիրող իրադրության, սպասվող վտանգներին դիմակայելու

¹ «Թերթելով պատմության էջերը», սկավառակ (ռեժիսոր՝ Ավետիսյան Հ., հեղինակ՝ Բաղդյան Վ.):

² Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах, ст.81.

³ Աբրահամյան Հ., Կռունկ, էջ 40:

⁴ Կազմակերպության անդամների վկայությամբ՝ «Կռունկ» անվանումը առաջարկել է քանդակագործ Արմեն Հակոբյանը՝ հիմնավորելով, որ կռունկը խորհրդանշում է կարոտն առ հայրենիք:

նախապատրաստական աշխատանքների, Ստեփանակերտի հանրահավաքի մասնակիցներին օգնություն ցույց տալու, մարզում անդորրը ապահովելու մասին և մի շարք այլ հարցեր: Այսպես, 1988թ. մարտին Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում հրավիրված ժողովին մասնակցում էին Ջոյա Իսկանդարյանը, Գոհար Այվազյանը, Էմմա Աղաջանյանը, Դոնարա Գրիգորյանը: Նրանց կողմից հնչեցված առաջարկությունները վերաբերվում էին մարզի ներքին դրությանը, հիմնախնդրի կարգավորմանը¹: Գյուղում հաճախակի էր կազմակերպվում հավաքներ, որին մասնակցում էին մեծ թվով կանայք (այդ թվում ուսուցչուհիներ Թամարա Պետրոսյանը, Քնարիկ Սիմոնյանը): Հաթերքի, ինչպես նաև հարևան գյուղերի կանայք, երկար ճանապարհ անցնելով, մասնակցում էին Ստեփանակերտում տեղի ունեցող հանրահավաքներին և նրանց համար բերում պարենամթերք, վառելափայտ, տաք հագուստ: Նման մասնակցություն էին ցուցաբերում մարզի համարյա բոլոր շրջանների գյուղերը:

Հարկ է նշել, որ մարզում տեղի ունեցող զանգվածային շարժումը հանրապետական թերթերում, ռադիոյով և հեռուստատեսությամբ որակվում էր որպես «ձայրահեղականների», «ազգայնականների», «անջատողականների» հրահրած գործ: Դա առիթ էր հանդիսանում հայ մտավորականությանը հանդես գալ հողվածներով, նպատակ ունենալով վերջ դնել կեղծ հայտարարություններին: «Սովետական Ղարաբաղ» թերթի մարտի 18-ի համարում տպագրվում է մանկավարժական ինստիտուտի ավագ դասախոսներ Լենա Գրիգորյանի, Արզիկ Մխիթարյանի և Համլետ Գրիգորյանի համահեղինակությամբ հողված, որտեղ նրանք հորդորում են հատկապես տեղի լրատվամիջոցներին խոսել ճշմարտության մասին՝ «անմեղ» նյութերի փոխարեն: Մասնավորապես, ասվում է. «Սովետական Ղարաբաղ» թերթի մարտի 11-ի համարում լույս տեսած «Բոլշևիկյան սկզբունքայնության դիրքերից» հողվածը գրավեց ընթերցողների ուշադրությունը, որովհետև մարդիկ ծարավ են ճշմարիտ խոսքի... Ուղղակի անտանելի է դարձել սուտը, ժողովրդի խոսքի անտեսումը մամուլի կողմից:

¹ Աղաջանյան Մ., նշվ. աշխ., էջ 391:

Մեր ժողովուրդը հոգևոր, բարոյական ծարավ ունի: Նա պահանջում է Լեռնային Ղարաբաղը վերամիավորել Հայկական ԽՍՀ-ին»¹:

1988թ. մարտի 9-ին Մոսկվա մեկնեց Արցախի հերթական պատվիրակությունը՝ ղարմետաքսկոմբինատի կուսկազմակերպության քարտուղար Ռոբերտ Քոչարյանի գլխավորությամբ: Պատվիրակության կազմում էին կուսմարզկոմի բյուրոյի անդամ, ջուլհակուհի Սահդա Օրբեյանը, նույնպես ջուլհակուհի, սոցիալիստական աշխատանքի հերոս Քնարիկ Առաքեյանը, մարզխորհրդի պատգամավոր, բանվորուհի Տատյանա Սոբոլևան²: Պատվիրակությունը տարել էր ստորագրությունների նոր կապոց և բազմաթիվ բողոք-նամակներ ու Մոսկվայում ջանում էր անպայման հանդիպել Մ. Գորբաչովի հետ և նրան հասցնել Արցախի ժողովրդի ձայնը: Հանդիպումների ընթացքում պատվիրակության անդամների արած գրառումները ցույց են տալիս, որ նրանք այդ հանդիպումների ժամանակ տրամաբանական հյուսվածքով ներկայացրել են ղարաբաղյան խնդիրը, երկրում տիրող առկա վիճակը, մանավանդ հիմնախնդիրը վերջնականապես և արդար լուծելու անհետաձգելիությունը:

Պատվիրակությանը չհաջողվեց հանդիպել երկրի ղեկավարի հետ՝ վերջինիս արտասահմանում գտնվելու պատճառով, փոխարենը հանդիպումը կայացավ կոմկուսի Կենտկոմի երկրորդ քարտուղար Ե. Լիզաչովի հետ: Վերջինս փորձում էր ապացուցել, թե արցախցիների ընդվզումը ծնունդ է առել սոցիալ-տնտեսական հողի վրա: Իրենց հերթին պատվիրակության անդամները հակադրվելով, ընդգծում էին, որ շարժումը ուղղված չէ ո՛չ կուսակցության, ո՛չ կառավարության և ո՛չ էլ Ադրբեյջանի ժողովրդի դեմ, այլ պայքարը մայր ժողովրդի հետ նույն հարկի տակ ապրելու իրավունքի համար է ու իրենց ոչ մի սոցիալ-տնտեսական հարց չի մտահոգում³: Չնայած նրան, որ Ե. Լիզաչովը խոստացավ մշակել հիմնահարցի վճռման տարբերակները, այնուամենայնիվ, պատվիրակության կազմը Ղարաբաղ վերադարձավ ձեռնունայն: Ամեն ինչ ակնհայտ էր. կենտրոնը բացահայտորեն մերժում էր հայ ժողովրդի բարձրացրած՝ Լեռնային Ղարաբաղի խնդրի լուծման պահանջը:

¹ Կյանքի էջեր, էջ 11:

² «Սովետական Ղարաբաղ», 1988, 2 մարտի:

³ «ԼՂ Հանրապետություն», 1996, 17 օգոստոսի:

1988թ. մարտի 24-ին Ադրբեջանի Գերագույն խորհրդի նիստը օրենքից դուրս ճանաչեց «Կռունկ» կոմիտեն ու նրա անդամների նկատմամբ քրեական հետապնդումներ սկսեց: Ուստի այն անցավ ընդհատակ՝ միավորվելով «Տնօրենների խորհուրդ» կազմակերպությանը և գործելով նրա անվան տակ¹: «Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկ»-ի արգելումը լայն բողոք առաջ բերեց ոչ միայն Հայաստանում և Արցախում, այլև Խորհրդային Միության այլ վայրերում և սփյուռքահայության շրջանում: Հրապարակախոս Հ. Բորովիկի հետ 1988թ. մարտի 28-ին Երևանում ունեցած հանդիպման ժամանակ Սիլվա Կապուտիկյանը հայ ժողովրդի անունից խիստ անհանգստություն հայտնեց «Ղարաբաղ» կոմիտեի և «Կռունկի» գործունեությունն արգելելու առթիվ²:

Շարժման ղեկավարները առաջ մղելով Արցախի հիմնախնդիրը, խորհրդային վերադաս մարմիններից պահանջում էին այն լուծել ժողովրդավարության պահանջներին համապատասխան: Այդ նպատակներով միտված, հերթական անգամ, 1988թ. մայիսի 3-ին արցախահայության նոր պատվիրակություն մեկնեց Մոսկվա: Այն ղեկավարում էր Ստեփանակերտի պետական մանկավարժական ինստիտուտի դասախոս Հ. Գրիգորյանը: Պատվիրակության կազմում էր Արզիկ Մխիթարյանը: Հարկ է նկատել, որ Մոսկվայում մի շարք հանդիպումներ ունենալով, պատվիրակությունն այդպես էլ չհասավ որևէ շոշափելի արդյունքի: Նրանք ևս եկան այն եզրահանգման, որ պետք է ամրապնդել սեփական ուժերը և հույսեր չկապել Մոսկվայի հետ: Փաստորեն, հերթական անգամ ակնհայտ դարձավ, որ կենտրոնը հակահայկական դիրք է գրավել և մնում էր նոր թափով շարունակել պայքարը: Մայիսի 25-ին պատվիրակությունը մասնակից դարձավ Երևանի Թատերական հրապարակում կայացած բազմա-հազարանոց հանրահավաքին և հաշվետվություն ներկայացրեց Մոսկվայում ունեցած հանդիպումների մասին³:

Երևանում տեղի ունեցող բազմահազարանոց հանրահավաքներում հաճախակի դարձան Արցախից ժամանած կին-ակտիվիստների ելույթները: Նույն հանրահավաքում

¹ «Սովետական Ղարաբաղ», 1988, 25 մարտի:

² Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 61:

³ «Հայրենյաց պաշտպան», 2008, 3 մայիսի, թիվ 78:

Արցախից ժամանած ժաննա Գալստյանը, հանգամանորեն ներկայացնելով մարզում տիրող իրավիճակը, Ադրբեջանի կոմկուսի Կենտկոմի պլենումում Ե. Լիգաչովի ունեցած ելույթը, տեղի ունեցող գործադուլները, հայտարարեց, որ արցախահայությունը շարունակում է մնալ վճռական, և այն էլ՝ Ստեփանակերտ բերված մեծաթիվ զինվորականության սանձարձակ գործողությունների մթնոլորտում. «Եվ այդ ամենը,-իր խոսքի ավարտին ասաց նա,- Լեռնային Ղարաբաղի բնակչությանը ստիպում է դիմել ծայրահեղ քայլի՝ գործադուլի, որը, ինչպես պարզվում է, չի անհանգստացնում ոչ կենտրոնական, ոչ էլ Հայաստանի իշխանություններին»¹:

Արցախի ճակատագիրը մտահոգում էր շատ-շատերին: Հայկական կողմին սատարող օտարազգի կին քաղաքական գործիչներից էր Գալինա Ստարովոյտովան, ով 1988թ. մայիսի 11-ին Մատենադարանի մոտ տեղի ունեցած հանրահավաքում հայտարարեց, որ այս պայքարում հայ ժողովուրդը մենակ չէ, երկրի լավագույն և ազնիվ մարդիկ արձագանքում են նրանց պահանջին²: Գ. Ստարովոյտովան, 1988թ. իր մի նամակում արտահայտվելով հոգուտ Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման, արժանացավ արցախահայության վստահությանը: Նա միշտ սկզբունքայնություն էր դրսևորում, պաշտպանում մարդու իրավունքներն ու ժողովրդավարական սկզբունքները՝ լինի դա «Ղարաբաղ» կոմիտեի անդամների, Ադրբեջանից հայ փախստականների, Ադրբեջանի բանտերում գերեվարված և դատապարտված հայերի հարցում³:

1988թ. մայիսին ազգամիջյան հարաբերությունները սրվեցին մանավանդ Շուշի քաղաքում: Այդտեղ ադրբեջանցիները սպառնում էին հաշվեհարդար տեսնել քաղաքի հայ բնակչության հետ, ինչպես դա արվել է 1920թ. մարտ ամսին:

ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը ուղղված, Շուշիի բնակիչների կողմից նամակ-բողոքներում մանրամասն տեղեկություններ էին հաղորդվում մայիսի 16-ին ադրբեջանցիների կողմից իրագործված վայրագությունների մասին: Նման վարվելակերպով, նրանք նպատակ ունեին ստորացնել հայերին և նրանց դուրս քշել քաղաքից: Գյուլչորա Հարությունյանի և Արմիդա Ալթունյանի նամակում,

¹ Նույն տեղում:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 39, թ. 17:

³ “Известия”, 2005, 1 июня.

մասնավորապես, ասվում է. «Թուրքերը, զինված երկաթի կտորներով, կացիններով, քարերով, հարձակվեցին հայերի բնակարանների վրա, ջարդ ու փշուր արեցին դուռ ու լուսամուտներ և պահանջեցին հեռանալ քաղաքից՝ բոլորին կոտորելու և ոչնչացնելու սպառնալիքով: Ստիպված էինք հեռանալ քաղաքից...»¹:

1988թ. սեպտեմբերի վերջին քաղաքում հայ չէր մնացել: Ակներև է, որ Շուշիի հայերի բռնագաղթեցումն Ադրբեջանի ղեկավարների կազմակերպած «անհետաձգելի միջոցառումներից» է եղել: Այդ առնչությամբ Երևանում և Ստեփանակերտում տեղի ունեցան հանրահավաքներ, որի մասնակիցները ևս բողոքի նամակ-հեռագրեր ուղարկվեցին Մոսկվա՝ ղեկավար մարմիններից պահանջելով արդարություն և ճշմարտություն:

Հունիսի 1-ին տեղի ունեցած հանրահավաքում Մարգո Բալասանյանը, Տամարա Շվեդովան և Ժաննա Գալստյանը նույնպես դատապարտեցին Շուշիում կատարվածը և կարևորեցին այն հանգամանքը, որ արցախահայությունն այլևս ոչ մի վայրկյան չի կարող մնալ Ադրբեջանի կազմում:

Ասենք, որ համաժողովրդական պայքարում ամենուրեք էր կանանց գործունեությունը և պատահական չէր, որ հաճախ հանրահավաքներում լսվում էին նրանց ելույթները, ինչն իր գործուն ազդեցությունն էր ունենում ժողովրդի վրա: Մարգո Բալասանյանի ելույթը ոչ միայն բողոքի ձայն էր, այլև չհուսահատվելու կոչ: Ելույթում ասվում էր. «Արցախցիների ձայնը, որն արձագանք է գտել ամբողջ աշխարհում, ուշ է հասնում Մոսկվային: Բայց եկեք չհուսահատվենք, որովհետև մեր սրտում պահած երկար տարիների իղձն այսօր պոռթկացել է վարար գետի պես և անպայման կստանա իր լուծումը»: Իր հերթին Տամարա Շվեդովան վստահեցրեց, որ ռուսական հոգին չի կարող անտարբեր մնալ Արցախի ժողովրդի արդար պահանջի հանդեպ²:

Արժե անդրադառնալ հունիսի 13-ին Երևանի մաթեմատիկական մեքենաների գիտահետազոտական ինստիտուտի կանանց խորհրդի դիմումին՝ հղված ՀԿԿ կոմկուսի Կենտկոմ և ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, որտեղ հատկապես նշվում է. «Արդեն երեք-չորս ամիս է, ինչ մեր ժողովուրդը՝ մեծ թե փոքր,

¹ ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 3, թ. 7:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 87, գ. 19, թ. 75:

հրապարակ է ելել իր բուռն համերաշխությունն արտահայտելու Լեռնային Ղարաբաղի մեր հայ եղբայրների և քույրերի հետ՝ մայր հանրապետությանը վերամիավորելու նրանց արդար, մաքուր և բնական իղձի առիթով: Վերջին տասնօրյակում, սակայն, իրողությունը շատ ավելի լուրջ բնույթ է կրում: Մեր երիտասարդությունը գիշեր-ցերեկ փողոցներում ու հրապարակներում ցույցեր և միտինգներ է անում: Այս ամենը, անշուշտ, կատարվում է օրենքի սահմաններում, և մեր ժողովուրդը համոզված է իր պահանջի արդարության և ճշմարտության մեջ... Մենք գտնում ենք, որ հարցի քննարկման ձգձգումը կամ բացասական լուծումը կարող է հուսախաբ անել մեր ժողովրդին, հատկապես՝ երիտասարդությանը, որն իր ուսերի վրա պետք է կրի վերակառուցման դժվարությունները... Մեր կոլեկտիվի կանայք կազմում են հանրապետության կին մտավորականների զգալի մասը, նրանցից շատ-շատերը պետական այրեր են և մեծ պատասխանատվությամբ են համակված մեր երիտասարդների ապագայի հանդեպ: Ուստի՝ թախանձագին խնդրում ենք ձեզ, ընդառաջելով մեր ժողովրդի բուռն ցանկությանը, ՀՍՀ Գերագույն խորհրդի առաջիկա՝ հունիսի 15-ի նստաշրջանի օրակարգում մտցնել Լեռնային Ղարաբաղի ժողովրդական պատգամավորների մարզային խորհրդի ս.թ. փետրվարի 20-ի նստաշրջանի որոշումը քննարկելու և ԼՂԻՄ-ը Հայկական ՍՍՀ-ին վերամիավորելու խնդրին դրական պատասխան տալու հարցը»¹:

Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988թ. հունիսի 15-ի նստաշրջանում քննարկվեց և համաձայնություն տրվեց ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու վերաբերյալ մարզային խորհրդի որոշմանը: Միաժամանակ, հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին՝ խնդրելով քննարկել և դրականորեն լուծել այդ հարցը²: Նման գործելակերպն անակնկալ էր կենտրոնի համար և, շատ չանցած, 1988թ. հուլիսի 18-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում ընդունվեց որոշում, որի համաձայն, մերժվեց Լեռնային Ղարաբաղի մարզային և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների խնդրանքը³: Այդ

¹ Նույն տեղում, ց. 127, գ. 678, թ. 48-49:

² «Սովետական Հայաստան», 1988, 16 հունիսի:

³ "Правда", 1988, 20 августа.

որոշման դեմ, որն ավելի բարդացրեց Ղարաբաղյան հիմնախնդիրը, ոտքի ելավ ողջ հայությունը, և առաջին շարքերում կանգնած կանայք ու նրանց մասնակցությամբ բազմաթիվ կազմակերպություններ հանդես եկան իրենց ելույթներով ու հայտարարություններով:

Այդ օրերին «Ղարաբաղ» կոմիտեի հետ համագործակցող կանայք, դիմում հղելով ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը, դատապարտեցին, նշելով, որ «մենք հայ մայրերս և կանայք մեր վրդովմունքն ենք հայտնում ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության հուլիսի 18-ի նիստի որոշման առթիվ, որով մերժվեց Ղարաբաղի վերամիավորումը Հայաստանին»¹:

Հուլիսի 18-ի որոշումը դատապարտվեց նաև 1988թ. սեպտեմբերի 9-ին Երևանի Թատերական հրապարակում տեղի ունեցած բազմահազարանոց հանրահավաքում: Արաքսյա Հայրապետյանը, քննադատելով երկրի ղեկավարությանը, դրվատեց նրանց, ովքեր նպաստում, աջակցում են շարժմանը և կոչ արեց հասնել խնդրի կարգավորմանը: Բացի այն, որ անմիջական մասնակցություն, ակտիվություն էին ցուցաբերում հանրահավաքներում, ցույցերում, կանայք շարունակում էին կազմել Մոսկվային հղված դիմումներ: Սեպտեմբերի 28-ին հանրահավաքների մասնակից Հայաստանի կանանց՝ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահությանը ուղարկած նամակում ևս դատապարտվում է հուլիսի 18-ի որոշումը: Նամակի հեղինակները մտահոգությունն են հայտնում նաև Հայաստանում և Արցախում առկա լարված դրության համար, ներկայացնում հայության պահանջը և խնդրում սանձահարել ադրբեջանցիներին²: Այդ օրերին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Մ. Գորբաչովին նոր բողոք-նամակ է ուղարկվում նաև ԼՂԻՄ կանանց կողմից, որում խնդրվում է լուծել հիմնախնդիրը, միաժամանակ պատժել Սումգայիթի ոճրագործներին³: Նման պահանջով բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը մեկնում է Մոսկվա՝ ներկա գտնվելու 1988թ. հոկտեմբերի 18-ին սկսված սումգայիթյան դատավարությանը⁴: Նույն

¹ ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 46, թ. 1:

² ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 678, թ. 23-24:

³ Նույն տեղում, ֆ. 284, ց. 5, գ. 2, թ. 23:

⁴ Մասնակիցների թվում էին Զ. Բալայանը, Գ. Էմինը, «Ղարաբաղ» կոմիտեի անդամներ և ուրիշներ:

նպատակով Մոսկվա է մեկնում նաև բանաստեղծուհի Մարո Մարգարյանը¹։ Դատավարությանը ներկա հայ մտավորականները պահանջում են արժանի պատիժ տալ ոճրագործներին։

Կանանց կողմից հիմնահարցը քննարկվում էր տարբեր հավաքներում և հանդիպումների ժամանակ։

1988թ. սեպտեմբերին Մոսկվայից Ստեփանակերտ ժամանած ԽՍՀՄ ԳԽ Ազգությունների խորհրդի հանձնաժողովը հանդիպում է ունենում ԼՂԻՄ մտավորականության հետ, որի ժամանակ ելույթի խոսքով հանդես են գալիս նաև Լյուդմիլա Սարգսյանը (դպրոցի տնօրեն), Ռուզաննա Ավագյանը (Սումգայիթի սպանդից փրկված, որը Երևանում հացադուլ էր հայտարարել), Թամարա Պետրոսյանը (ուսուցչուհի), Ավետլանա Պետրոսյանը (ուսուցչուհի)։ Նրանցից ոմանք մարզի շրջաններից, գյուղերից էին ժամանել Ստեփանակերտ։ Ներկայացնելով մարզի դրությունը, կանայք դատապարտում են Ադրբեջանի հակահայկական քաղաքականությունը և պահանջում կատարել հանրության կամքը²։

1988թ. նոյեմբերին Երևանում ձևավորված «Արցախ» հայրենակցական միության գործադիր մարմնի քարտուղար ընտրվեց շարժման մասնակից, ծնունդով արցախցի Լարիսա Ալավերդյանը։ Այդ և հաջորդ տարիներին տարբեր տեղերում բացվեցին բարեգործական ներկայացուցչություններ, որոնցում ընդգրկվում էին մեծ թվով կանայք³։ Հետագայում Ստեփանակերտում ևս բացվեց միության բարեգործական ներկայացուցչություն, որը ղեկավարում էր միության լիազոր, շարժման ակտիվ մասնակից Աղավնի Դանիելյանը⁴։ «Արցախ» հայրենակցական միությունը համագործակցում էր մի շարք կազմակերպությունների հետ, տեղեկատվական նյութեր տարածում հիմնահարցի վերաբերյալ։ Միության կանայք ակտիվ էին, մանավանդ, հանրահավաքների ժամանակ և կոոպերատիվների կազմակերպման գործում⁵։

¹ Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ 1917-2000, հատոր Գ., էջ138:

² ՀԱԱ, ֆ. 1678, ց. 1, գ. 9, թ. 7:

³ Աբրահամյան Հ., Մարտ կրակագծի մատույցներում, էջ 31:

⁴ Ստեփանակերտում միության գրասենյակը գործում էր սկսած 1990թ. փետրվարից:

⁵ “Зов Арцаха”, 1993, 3 марта, N 1.

Արցախում և Հայաստանում հանրահավաքները, ցույցերը, գործադուլները, դասադուլները շարունակվեցին 1988թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, չնայած, որ Մոսկվան և Ադրբեջանը սաստկացնում էին բռնությունները շարժման կազմակերպիչների և, առհասարակ հայ ժողովրդի նկատմամբ: Այդ օրերին Ադրբեջանում ամենուրեք հայ ազգաբնակչության նկատմամբ իրագործվում էին բռնարարքներ՝ ստիպելով տեղահանվել, հեռանալ իրենց բնակության վայրերից: Ամեն օր Ղարաբաղ և Հայաստան էին ժամանում Ադրբեջանի տարբեր բնակավայրերից բռնագաղթած հարյուրավոր հայ ընտանիքներ՝ ծեծված, թալանված: Հայաստանի և Արցախի հասարակական կազմակերպություններում ընդգրկված և առհասարակ, առանձին կանայք մի շարք աշխատանքներ էին տանում բռնագաղթած հայ ընտանիքներին օգնելու համար: Ստեղծված իրավիճակից ելնելով՝ արցախահայությունը նոյեմբերի 14-ից դիմեց համընդհանուր գործադուլի, որը շարունակվեց մինչև դեկտեմբերի 7-ը: Շարժման մասնակից Գայյա Առստամյանն այդ օրերի մասին վկայում է. «Գործադուլ էինք հայտարարել, դուրս եկել ցույցի ...մոմերը վառած շարժվում էինք եղբայրական հուշահամալիր և վանկարկում՝ «Միացում», «Հայաստան», իսկ զինվորները մեզ մահակներով ցրել էին ուզում»¹:

Հայության համար մեծագույն ողբերգություն էր 1988թ. դեկտեմբերի 7-ի Սպիտակի երկրաշարժը, որն ընդգրկեց Հայաստանի տարածքի գրեթե 40 տոկոսը: Զոհվեց ավելի քան 25 հազար մարդ, հազարավոր մարդիկ անօթևան մնացին²: Երկրաշարժի հաջորդ օրն Արցախում անմիջապես դադարեցվեցին գործադուլները: Ստեփանակերտի քաղաքային պոլիկլինիկայում և մարզային հիվանդանոցում՝ արյան փոխներարկման կենտրոնում, մեծ հերթեր էին գոյացել: Հավաքվածների շարքերը համալրած կանայք արյուն էին տալիս երկրաշարժից տուժածների համար: Նրանք միաժամանակ սննդամթերք, դեղորայք, առաջին անհրաժեշտության իրեր էին հավաքում աղետի գոտի ուղարկելու համար: Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժը, հանրապետությունում ապաստան գտած հազարավոր փախստա-

¹ Առստամյան Գ., Իմ պատիվ, իմ ցավ Ղարաբաղում 1988, էջ 41:

² Мелик-Шахназарян А., նշվ. աշխ., էջ 611:

կանների առկայությունը, Երևանում շարունակվող պարետային ժամը, «Ղարաբաղ» կոմիտեի ձերբակալությունը և սկսված շրջափակումը ստեղծել էին ծանր իրավիճակ: Չնայած այդ ամենին, պայքարը չէր դադարում:

ԽՄԿԿ Կենտկոմ ուղարկված մի նամակ-զեկուցագրից տեղեկանում ենք, որ Երևանի դրամատիկական թատրոնի մոտ կայացած հանրահավաքին մասնակցում էին 500 մարդ, այդ թվում 200 կին: Հանրահավաքի մասնակիցները պահանջում էին ազատել «Ղարաբաղ» կոմիտեի անդամներին, վերացնել պարետային ժամը, խորհրդային բանակը դուրս բերել Երևանից, փախստականներին ապահովել բնակարաններով¹:

Այդ ճակատագրական օրերին հայ ժողովրդի արդարացի ընդվզմանը պաշտպան կանգնեցին ռուս առաջավոր մտավորականության նաև կին ներկայացուցիչներ:

1988թ. դեկտեմբերին Արցախ ժամանեց ԽՍՀՄ ԳԱ ակադեմիկոս և քաղաքական գործիչ Անդրեյ Սախարովը, իր կնոջ՝ ծագումով արցախցի, իրավապաշտպան և հրապարակախոս Ելենա Բոներ-Քոչարյանի² և Գալինա Ստարովոյտովայի հետ³: Մինչև Լեռնային Ղարաբաղ ժամանելը, նրանք Բաքվում հանդիպել էին Ադրբեջանի ԿԿ կենտկոմի առաջին քարտուղար Ա. Վեզիրովի հետ: Վերջինս հիմնախնդրի լուծման հնարավոր պայմանների մասին խոսելու փոխարեն, հիշեցրել էր, որ «եղբայր ժողովուրդները պետք է իրենց անհաշտությունը մոռանան դժբախտության օրերին, իսկ այդպիսի ողբերգություն է Հայաստանում տեղի ունեցած երկրաշարժը...»⁴:

Արցախում նրանք հանդիպումներ ունեցան մարզկոմի առաջին քարտուղար Հ. Պողոսյանի, այնուհետև շարժման ակտիվիստների հետ: Վերջիններս մանրամասն ներկայացնելով շարժման նպատակը, ակունքները, արմատները և ստեղծված իրավիճակը, ժողովրդի վրդովմունքը, առաջարկեցին ճգնաժամից դուրս գալու հնարավորությունների տարբերակը: Իրենց զրույցներում Ելենա Բոները և Գալինա

¹ ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 735, թ.1-2:

² <https://hy.wikipedia.org/wiki/>. Հաճախ ոչ ճիշտ, որպես Ելենա Բոների կենսաբանական հայր (Լևոն Քոչարյան) ներկայացվում է Գևորգ Ալիխանյանը (խորթ հայրը):

³ Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ 1917-2000, հատոր Գ., էջ143-144:

⁴ Сахаров А., նշվ. աշխ., стр.18.

Ստարովոյտովան քննադատություններ հնչեցրին մարզի նկատմամբ Ադրբեջանի իշխանությունների վարած քաղաքականության դեմ և խոստացան ամեն ինչ հաղորդել Մ. Ս. Գորբաչովին: Հերթական հանդիպումը տեղի ունեցավ Ստեփանակերտի աշխատավորության ներկայացուցիչների հետ: Նրանք երկար ու հանգամանալի գրույց ունեցան Բաքվից, Սունգայիթից և Ադրբեջանի այլ վայրերից փախստական դարձած հայերի հետ: Գալինա Ստարովոյտովայի այցելություններն Արցախի գյուղեր (Սղնախ, Քարին տակ), հնարավորություն տվեց նրան տեղեկանալու գյուղերի գաղտնի ինքնապաշտպանական ջոկատների առկայության մասին, որոնց հետ հանդիպումների ժամանակ նա հորդորեց. «Դուք այսօր պիտի պատրաստ լինեք ինքնապաշտպանության»¹: Հատկանշական է, որ 1988թ. խորհրդային ամբողջատիրության ժամանակաշրջանում գաղտնի կամավորական ուժերի առկայությունը խորհրդային իրավապաշտպանի համար ոչ թե անընդունելի էր, այլ անհրաժեշտություն: Դա վկայում է այն մասին, որ նա շատ լավ էր գիտակցում առկա օրհասական վիճակը, հատկապես, որ արցախցիների կյանքը վտանգի էր ենթարկված Ադրբեջանի իշխանությունների կողմից: Հետագայում Ե. Բոները և Գ. Ստարովոյտովան հիմնախնդիրը տարբեր ամբիոններից ներկայացնելուց բացի, օգնություններ կազմակերպեցին Արցախի համար:

ԼՂԻՄ մարզխորհրդի 1988թ. փետրվարի 20-ի պատմական որոշումից հետո, Արցախում ծավալված իրադարձությունները, բնականաբար, լայն արձագանք գտան նաև Հյուսիսային Արցախում: Ստեղծված իրավիճակը պատճառ դարձավ, որպեսզի վերականգնվի «Գետաշեն» հայրենակցական միությունը, որը կազմակերպվել է դեռևս 1967 թվականից²:

1988թ. մայիսի 14-ին Գետաշենում գումարվեց միության առաջին նիստը, որին մասնակցում էին երևանաբնակ մի խումբ գետաշենցիներ և Գետաշենի ղեկավարներ: Նիստում հաստատվեց միության վարչության կազմը, որի մեջ կանանցից ընդգրկված էին Ռիտա Չիլինգարյանը (վարչության քարտուղար-տեղեկատվական-լրատվական հանձնախմբի անդամ), Դոնարա Նալբանդյանը (տեղեկատվական-լրատվական

¹ Պետրոսյան Ռ., Արցախ. Պատերազմ. Չինադար, էջ 104:

² Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ., նշվ. աշխ., էջ 306:

հանձնախմբի անդամ), Լիլիթ Նալբանդյանը (բուժսպասարկման հանձնախմբի պատասխանատու), Արևիկ Սիսյանը (բուժսպասարկման հանձնախմբի անդամ) և Սուսաննա Սիսյանը (տեղեկատվական-լրատվական հանձնախմբի անդամ): Ռիտա Չիլինգարյանը 1988թ. մայիսից զբաղեցնում էր նաև «Գետաշեն» ՀԲՄ վարչության քարտուղարի պաշտոնը, հանրահավաքներում հանդես գալիս հրատապ ելույթներով, մամուլում՝ հոդվածներով: Տեղեկատվական-լրատվական հանձնախմբի անդամ Դոնարա Նալբանդյանը, որպես վարչության անդամ, մասնակցություն էր ունենում Գետաշենի ենթաշրջանի բնակչությանը օգնության կազմակերպման աշխատանքներին: 1988թ. սկսած բուժսպասարկման հանձնախմբի պատասխանատու Լիլիթ Նալբանդյանն օդային միակ կապի միջոցով՝ ուղղաթիռով, բազմիցս այցելություններ էր կատարում հայրենի գյուղ՝ Գետաշեն, տանելով դեղորայք և սննդամթերք, ինչի անհրաժեշտությունն ուներ Հյուսիսային Արցախը¹: Միության նախաձեռնությամբ կազմակերպվեց նաև Գետաշենի և հարակից Ազատ, Կամո, Մարտունաշեն, Կուշի-Արմավիր հայկական գյուղերի ազգաբնակչության գաղտնի ստորագրահավաքը՝ Խանլարի շրջանի վարչատարածքային ենթակայությունից դուրս գալու և Շահումյանի շրջանին միանալու պահանջով: 1988թ. մայիսից մինչև 1992թ. հունվար գումարվեց միության նախագահության 27 նիստ, կազմակերպվեց 6 հանրահավաք Գետաշենում, Երևանում և Աբովյանում²:

1988թ. Շահումյանի շրջանում քանիցս հարց էր բարձրացվել ԼՂԻՄ-ին միանալու մասին: Շահումյանի հայ ազգաբնակչությունը, անկախ Արցախի հետագա ճակատագրից, համոզված էր, որ միասնաբար գոյատևելն ավելի հեշտ կլինի: Այդ մասին բազմաթիվ նամակներ են հղվել կենտրոն, ինչպես նաև Հայկական ԽՍՀ և Ադրբեջանական ԽՍՀ իշխանություններին: Նախաձեռնող խմբի կազմակերպիչներից էր Շահումյանի կուսընկերուհի 3-րդ քարտուղար Էլմիրա Դանիելյանը: Նա ոչ միայն ակտիվ մասնակցություն էր ցուցաբերում ընդհատակյա աշխատանքներին, այլ նաև նամակ-հեռագրեր ուղարկում մարզային ատյաններին, Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական

¹ Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ., նշվ. աշխ., էջ 306-308:

² Նույն տեղում, էջ 311:

ԽՍՀ, ԽՍՀՄ բարձրագույն ղեկավար մարմիններին¹ : Հյուսիսային Արցախի հայ ազգաբնակչությանը սթափեցրեց 1988թ. աշնանը Ադրբեջանում հայերի նկատմամբ իրագործված համատարած ջարդերն ու բռնությունները: Հայության այս հատվածի վճռական դիմադրության անհրաժեշտությունն ակնհայտ էր, հատկապես, երբ հայակործան հեղեղը կանգ առավ Գետաշենի մատույցներում: Այդ օրերին Գետաշենի ենթաշրջանին մեծապես օգնում էին Հայաստանի կոոպերատիվների միությունը: Ստեփանակերտում գործող մասնաճյուղի անդամներ էին Արաքսյա Հայրապետյանը և Վալյա Մեհրաբյանը: Միությունն իրականացում էր մարդասիրական օգնություն, ինչպես նաև աջակցություն ցուցաբերում Հյուսիսային Արցախում ինքնապաշտպանության կազմակերպմանը²: Նրանց ուղեկցությամբ ուղղաթիռների միջոցով միությունն օգնություն էր կազմակերպում Հյուսիսային Արցախի հայ բնակչությանը: Այդ աշխատանքներին մասնակցում էին ոչ քիչ թվով կանայք:

Այսպիսով, չնայած, որ Մոսկվան և Ադրբեջանը սաստկացնում էին բռնությունները շարժման կազմակերպիչների և, առհասարակ, հայ ազգաբնակչության նկատմամբ, այնուամենայնիվ, 1988թ. վերջին Արցախում, Հայաստանում շարունակվում էին հանրահավաքները, ցույցերը, գործադուլները, դասադուլները: Այս ամենի կազմակերպման գործում կանայք ունեցան իրենց շոշափելի ավանդը: Նրանց մասնակցության ու զուսպ պահվածքի շնորհիվ էր, որ հարյուր հազարավոր մարդկանց հուզումներն ու հոգեկան ալեկոծումները հանրահավաքների ժամանակ մնում էին կարգ ու կանոնի, սթափ ու խոհուն վարվելակերպի հունի մեջ:

Որքան էլ հայ ժողովրդի համար ծանր էր 1988թ., այնուամենայնիվ, այն պատմության մեջ մտավ որպես զարթոնքի տարի, համազգային զարթոնք, որի ակունքներում և առաջնագծում, որպես ազգային ինքնության և ազատության արթուն պահապաններ, տղամարդկանց հետ համահավասար աներեր ու հերոսաբար կանգնած էին նաև կանայք:

¹ Պետրոսյան Ռ., Արցախի պաշտպանության դիրքերում, էջ 45:

² «Ազատ Արցախ», 2003, 20 հունիսի:

1.3 Կանայք ժողովրդական պայքարի վերելքի շրջանում (1989թ. հունվար - 1991թ. դեկտեմբեր)

Հաշվի առնելով ստեղծված բարդ իրադրությունը, կենտրոնի որոշմամբ 1989թ. հունվարի 12-ին ԼՂԻՄ-ում ստեղծվեց Հատուկ կառավարման կոմիտե՝ ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ա. Վոլսկու գլխավորությամբ¹: Կենտրոնը կատարեց ոչ ստանդարտ քայլ՝ ԽՍՀՄ ԳԽ նախագահության 1989թ. հունվարի 12-ի որոշմամբ դադարեցվեց ԼՂԻՄ մարզխորհրդի և մարզկոմի գործունեությունը, ինչը ԽՍՀՄ Սահմանադրության և ԽՄԿԿ կանոնադրության կոպիտ խախտում էր: Հատուկ կառավարման կոմիտեին վերապահվեցին մարզի պետական իշխանության լիազորությունները:

1989թ. հունվարի 13-ին, ԽՍՀՄ նախարարների խորհուրդն ընդունեց «Ադրբեջանական ԽՍՀ ԼՂԻՄ-ում կառավարման նոր ձև մտցնելու հետ կապված միջոցառումների մասին» որոշում, որտեղ ԽՍՀՄ պետպլանին և ֆինանսների նախարարությանը հանձնարարվում էր ԽՍՀՄ պետական բյուջեի մեջ, սկսած 1989թ., հատուկ տողով նախատեսել ԼՂԻՄ-ի սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն ցուցանիշները²:

Փաստորեն, ԽՍՀՄ ղեկավարները ԼՂԻՄ-ն տարածքային տեսանկյունից ճանաչել էին որպես Ադրբեջանի մաս, իսկ կառավարման առումով մարզին տրվել էր ինքնուրույն վարչական միավորի կարգավիճակ: Նոր վարչակարգի ստեղծումը հայ ժողովրդի մեջ արցախյան խնդրի լուծման աղուտ հույս արթնացրեց: Կոմիտեն որոշակի միջոցառումներ ձեռնարկեց ԼՂԻՄ-ի, Հայաստանի և կենտրոնի հետ ուղղագիծ տնտեսական կապեր ստեղծելու ուղղությամբ, սակայն՝ իրավական անորոշ կարգավիճակով: Մարզային կուսակցական ու պետական մարմինների լիազորությունների կասեցումը, աշխատանքային կոլեկտիվների իրավունքների սահմանափակումը վերջնականապես խլեցին մարզի և նրա բնակչության՝ առանց այն էլ խիստ սահմանափակ իրավունքները: Կոմիտեն երբեք էլ լիազորված չէր բավարարելու արցախահայության պահանջը, ինչն էլ նպաստեց մարզում լարվածության սրմանը:

¹ «Սովետական Ղարաբաղ», 1989, 15 հունվարի:

² "Известия", 1989, 21 января.

Հայերի ձեռնարկումներն ամեն կերպ խափանվում էին Ադրբեջանի կողմից, և իրականացվող բռնություններն արցախահայությանը ստիպում էին նորանոր քայլերի գնալ: Այդ օրերին կանանց նախաձեռնությամբ մի շարք աշխատանքներ իրականացվեցին Լեռնային Ղարաբաղում և Հայաստանում, հատկապես հանրագրերի նախաձեռնումը՝ ուղղված ոչ միայն Հատուկ կառավարման կոմիտեին, այլ նաև ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանն և ԽՍՀՄ վերադաս իշխանություններին:

Արցախցիների ոտնահարված իրավունքները պաշտպանելու նպատակով Ստեփանակերտի կանանց խորհուրդը նամակով դիմեց Հատուկ կառավարման կոմիտեի նախագահ Ա. Վոլսկուն՝ խնդրելով արգելել Ադրբեջանի հակահայկական գործունեությունը¹: Այնուհետև 1989թ. մայիսի 19-ին տեղի ունեցավ ժողպատգամավորների Մարտունու 20-րդ գումարման շրջանային խորհրդի 6-րդ նստաշրջանը, որտեղ անընդունելի համարվեց ԼՂԻՄ-ի կառավարման հատուկ ձևը: Նիստին ներկա 23 կին պատգամավորներից 3-ը՝ Անգելինա Հովսեփյանը, Անժելա Խաչատրյանը, Մելանյա Ադամյանը, իրենց խոսքում կարևորեցին այն հանգամանքը, որ կոմիտեի քողի տակ Ադրբեջանի ղեկավարությունը շարունակում է անպատիժ միջամտել ինքնավար մարզի գործերին, ոտնահարում նրա իրավունքներն ու շահերը: Նստաշրջանն ընդունեց որոշում, որտեղ, մասնավորապես, ասվում է. «Հաշվի առնելով, որ ԽՍՀՄ Գերագույն խորհրդի կողմից քննության չեն առնվել ժողովրդական պատգամավորների ԼՂԻՄ մարզխորհրդի որոշումները, դիմել խորհուրդների համամիութենական համագումարին՝ լրիվ իշխանությունն օգտագործելու, ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային խորհրդի, Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի նստաշրջանների որոշումները քննարկելու և Հայկական ԽՍՀ-ի հետ ԼՂԻՄ-ը վերամիավորելու խնդրանքով»²:

Եթե շարժման առաջին ամիսներին Մոսկվայի քայլերում դեռ կարելի էր տեսնել որոշակի տրամաբանություն, այն է՝ քաղաքական խնդիրը տեղափոխել սոցիալ-տնտեսական հարթություն և լրացուցիչ ներդրումների խոստումներ տալ, ապա արդեն 1989թ. ԼՂ Հատուկ կոմիտեի ստեղծմամբ և կարճ ժամանակ անց դրա լուծարմամբ՝

¹ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 59, թ. 12:

² ԼՂՀ, ՄՇԱ, ֆ. 1, ց. 1, գ. 5, թ. 5-6:

կենտրոնական իշխանությունն ակնհայտորեն հեռացավ ժողովրդավարության՝ նույնիսկ իր կողմից պատկերացվող ուղեգծից:

Ամենուրեք հնչող դժգոհությունները՝ ուղղված Հատուկ կառավարման կոմիտեին, հետապնդում էր մեկ նպատակ՝ վերջ դնել առկա անօրինականություններին: Այդ նպատակով ապրիլի 28-29-ին տեղի ունեցավ Ասկերանի շրջանի Հարավ և Ակնաղբյուր գյուղերի հասարակության ընդհանուր ժողովները, որտեղ Անիկ Ասատրյանը, Սվետլանա Պետրոսյանը, Աիդա Համբարձումյանը, Էլեոնորա Ավանեսյանը Հատուկ կոմիտեի գործունեությունը համարեցին անարդյունավետ, ավելին, նրանց հավաստմամբ՝ այն նպաստում էր հակահայկական տրամադրությանը¹: Հայ ժողովրդի բազում դիմումները շարունակ մնում էին անպատասխան:

Հարկ է նկատել, որ այդ օրերին Մարտակերտի շրջանի մի շարք գյուղերում տեղի ունեցան հասարակության ընդհանուր ժողովներ, որտեղ կանայք ևս քննադատեցին գործող համակարգը²:

Հատկանշական է որ հայ ազգաբնակչության քննադատությունները՝ ուղղված Հատուկ կառավարման կոմիտեին, տեղին էին, հատկապես, որ հատուկ շրջանի պարետը բարձիթող էր արել տեղի հայության ճակատագիրը և բացահայտ համագործակցում էր ադրբեջանցիների հետ: Այդ ամենն առիթ հանդիսացավ, որպեսզի մարզի աշխատավորությունը 1989թ. մայիսից գործադուլ սկսի, որը տևեց երեք ու կես ամիս:

Ստեղծված ճգնաժամից մարզը դուրս բերելու նպատակով, 1989թ. մայիսի 16-ին «Հայ կանանց միաբանություն»-ը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահությանը ներկայացրեց վեց կետից բաղկացած կոնկրետ միջոցառումներ, որտեղ նույնիսկ կառավարությունից պահանջվում էր հրաժարական տալ³:

Կանայք իրենց մտահոգությունները, բողոքները՝ կապված առաջացած լարված իրավիճակի հետ, արտահայտեցին ԽՍՀՄ Գերագույն խորհրդի անդամների հետ ունեցած հանդիպումների ժամանակ:

¹ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 2 , ց. 1, գ. 3, թ. 22-29:

² ՀԱԱ, ֆ.207, ց. 44, գ. 41, թ. 2-5, գ. 8, թ.110, ԼՂՀ պետարխիվ, ֆ.2, ց. 1, գ. 60, թ. 10:

³ ՀԱԱ, ֆ. 207, ց. 44, գ. 118, թ. 10:

1989թ. հուլիսին Արցախ ժամանեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդի հանձնաժողովը: Այն այցելեց նաև ղարմետաքսկոմբինատ, որտեղ տեղի ունեցած հանդիպման ընթացքում ելույթով հանդես եկավ Ժաննա Գալստյանը: Հատկանշական է, որ նման նախաձեռնությունների ժամանակ կանայք փորձում էին օգտագործել ստեղծված հնարավորությունները՝ նպատակ ունենալով ազդել իրավիճակի վրա: Ներկայացնելով առկա իրավիճակը, Ժ. Գալստյանը հատկապես կարևորեց. «Ես եղել եմ Մոսկվա մեկնած պատվիրակություններից մեկի կազմում: Բոլոր բարձրագույն մարմինների ներկայացուցիչներն ասում էին, որ հասկանում են մեր արդար պահանջը և հիանալի գիտեն, որ Լեռնային Ղարաբաղը պատմական հայկական հող է: Նույնիսկ ընկեր Գորբաչովը Ջորի Բալայանի և Սիլվա Կապուտիկյանի հետ ունեցած զրույցի ժամանակ փայլել է պատմության իմացության գիտելիքներով, ասել. «Այո, ես գիտեմ, որ դա Արցախն է, հինավուրց հայկական հող Արցախը»: Ուրեմն՝ ոչ ոքի համար դա գաղտնիք չէ: Մենք խնդրում ենք Գերագույն խորհրդին հասցնեք, որ հիմա, համենայն դեպս առաջիկա մեկ դարում, այդ երկու ժողովուրդների համատեղ կյանքն անհնար է: Ես դա հենց այնպես չեմ ասում. այդ մասին ասվել է մարզխորհրդի նստաշրջանի մակարդակով՝ 1988թ. փետրվարի 20-ին...»¹:

Հանձնաժողովի անդամները խոստացան նպաստել հարցի շտապ լուծմանը: Բայց և այնպես, ինչպես բազմիցս, այս անգամ ևս Կրեմլի դիրքորոշման մեջ ոչինչ չփոխվեց:

ԼՂԻՄ-ում հիմնահարցի շուրջ լարվածությունը մի քանի ամսում այնքան աճեց, որ Արցախի հայությունը ստիպեց արտակարգ քայլի դիմել. ժողովրդի բախտը տնօրինելու նպատակով 1989թ. օգոստոսի 16-ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեռնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումար, որն ընտրեց Ազգային խորհուրդ²: Սա կարևոր, միաժամանակ նաև հարկադիր քայլ էր, որի նպատակն էր ներկայացուցչական մարմիններից ապօրինի զրկված արցախահայությանը վերադարձնել ընտրելու և ընտրվելու նրա անքակտելի իրավունքը, որը կարտահայտեր ԼՂ-ի հայության միասնական կամքը:

¹ Բաղդյան Վ., Ֆենոմեն, էջ 19:

² «Խորհրդային Ղարաբաղ», 1989, 17 օգոստոսի:

Խորհրդի մեջ ընդգրկված էին նաև Նորա Ավագիմյանը (ղարմետաքսկոմբինատից), Նախշուն Ավանեսյանը (Սոսի կոլտնտեսության նախագահ), Սիլվա Բալայանը (Մարտունու կոմերիտըջկոմի քարտուղար), Էլմիրա Վահանյանը (Մարտակերտի կոմերիտըջկոմի քարտուղար), Լյուդմիլա Գրիգորյանը (բժշկուհի), Զոյա Պետրոսյանը (Մարտակերտի թիվ 1 դպրոցի ուսուցչուհի), Գրետա Սահակյանը (մարզային կինխորհրդի նախագահ) և Լիդիա Սարգսյանը (Ստեփանակերտի թիվ 8 դպրոցի ուսուցչուհի): Խորհրդի համագումարում ընդունվեց որոշում, համաձայն որի մինչև ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի ու կուսակցության մարզկոմի գործունեության վերականգնումը՝ երկրամասի բարձրագույն գործադիր իշխանության լիազորությունները հանձնվում են Ազգային խորհրդին: Համագումարն ընդունեց Հռչակագիր, որի մեջ նշվում էր, որ Լեռնային Ղարաբաղի հնքնավար Մարզի գործերին Ադրբեջանական ԽՍՀ-ի միջամտությունը գնահատվելու է որպես ագրեսիայի ակտ և կստանա համարժեք պատասխան¹:

Փաստորեն ժողովրդաընտիր իշխանությունը Ադրբեջանին պարզ դարձրեց ուժի դիրքերից արցախահայության հետ խոսելու անհեռանկարայնության մասին: Այդ ամենով հանդերձ, խորհրդի կազմում ընդգրկված կանայք, նիստերի ժամանակ առաջարկություններով և նախաձեռնություններով հանդես գալուց բացի, նաև զանգվածային կազմակերպչական աշխատանքներ էին տանում մարզի բնակչության շրջանում:

Ադրբեջանի և Մոսկվայի իշխանությունների կողմից Ազգային խորհուրդն անօրինական համարվեց, որի հետևանքը հանդիսացավ Արցախի դեմ հայահալած քաղաքականության ուժեղացումը: Նույնիսկ 1989թ. սեպտեմբերին Ստեփանակերտում ԽՍՀՄ ներքին գործերի նախարարության ներքին զորքերի ստորաբաժանումները զենք գործադրեցին խաղաղ բնակչության նկատմամբ, եղան զոհեր և վիրավորներ: Բացի այդ զորքից, հայկական գյուղերի վրա հարձակումներ էին գործում ադրբեջանական զինված հրոսակախմբերը: Հայ կամավորականների առաջնահերթ խնդիրն էր պաշտպանել խաղաղ բնակչությանը, իսկ կանայք իրենց հերթին, համագործակցելով ինքնապաշտպանության կամավորական ջոկատների հետ,

¹ Նույն տեղում:

կատարում էին մի շարք առաջադրանքներ: Այդ օրերի մասին Վերա Զուլիակյանը նշում է. «Ամենուր լուրեր էինք ստանում մարզի տարբեր տեղերում կատարվող դեպքերի մասին: Հերթական լուրը հասավ Կրկժանից, որտեղ վտանգված է խաղաղ բնակչության կյանքը և ամեն պահ հնարավոր էր հարձակում ադրբեջանցի հրոսակների կողմից: Արտակարգ դրության շրջանի պարետ, գեներալ-մայոր Վ. Ն. Սաֆոնովի հրամանով Ներքին գործերի նախարարության ներքին զորքերը փակել էին Կրկժան տանող ճանապարհը: Ստեղծված օրհասական վիճակն ստիպեց վճռական քայլի դիմել՝ օգնության գնալ հարազատներին: Խիստ վերահսկողության պայմաններում 8-10 նռնակ անձրևանոցի մեջ թաքցրած մեծ դժվարությամբ անցանք երկու պահակակետ և Կրկժանի մոտ միացանք Արմենավանից օգնության եկած 15 կամավորականների: Տեղի ադրբեջանցիները ծպտվել էին, կարծելով, թե հայկական ուժեր են կուտակվում Կրկժանում, իսկ հայ բնակչությունը ոգևորված էր. կարող էին պաշտպանվել»¹: Վ. Զուլիակյանի վկայությամբ շարունակվել է իր համագործակցությունը Կրկժանի ինքնապաշտպանական ուժերի հետ, որին մասնակցել է նաև համագյուղացի Թամարա Բալայանը:

1989թ. հուլիսի 21-ից Ադրբեջանի կողմից Հայաստանը և Լեռնային Ղարաբաղը ենթարկվեցին տնտեսական շրջափակման: Այդ օրերի համապատկերում առանձնացվում է շահումյանցիների քայլը: Հուլիսի 26-ին Շահումյանի շրջանային խորհրդի նստաշրջանում որոշում ընդունվեց շրջանը ԼՂԻՄ-ին միավորելու մասին²: Այսպիսով, Հյուսիսային Արցախը, որն ընդգրկված էր ազգային ազատագրական պայքարի մեջ, առաջ քաշեց կենսական նշանակություն ունեցող հարց:

Ադրբեջանի Գերագույն խորհուրդը թշնամանքով ընդունեց ԼՂԻՄ-ի հետ միավորվելու մասին շահումյանցիների և գետաշենցիների որոշումը: Հյուսիսային Արցախի համար փակվեց Ադրբեջանի տարածքով ԼՂԻՄ-ին կապող միակ մայրուղին, դադարեցվեցին բոլոր կարգի մատակարարումները, ընդհատվեցին կապի միջոցները, ինչը ստիպեց հայերին քայլեր ձեռնարկել ինքնապաշտպանության համար:

¹ Հեղինակի անձնական արխիվ, Վարյա Զուլիակյան պատմածից: Վերջինս 1989 թ. եղել է Մարզկոմի նախագահի քարտուղար:

² «Մոռվի դղանջներ», 1995, 30 հունիսի:

Դրանցից մեկը ռազմավարական կարևոր նշանակության Կարաչինար-Թալիշ ճանապարհի վերանորոգումն էր, որով ապահովվեց շրջանի ցամաքային կապը մարզի հետ: Մյուս կարևոր միջոցառումը ռադիոկապի ստեղծումն էր Գետաշենի և Շահումյանի ու Հայաստանի միջև: Այդ օրերին Գետաշենից արտաքին աշխարհի հետ միակ կապն ապահովում էր կապավոր, ազատամարտիկ Սվետլանա (Լենա) Ավագյան¹: Նա ռադիոկապի միջոցով Հայաստանի ղեկավարությանը տեղեկություններ էր հաղորդում Գետաշենում տիրող իրավիճակի մասին: Դրա հետ միասին, մինչև Գետաշենի անկումը, նա միաժամանակ կազմակերպչական աշխատանքներ էր տանում Գետաշենի ենթաշրջանի ինքնապաշտպանության համար: Սվետլանա(Լենա) Ավագյանը հայտին էր «Կամա-2» նշանաբանով:

Ադրբեջանի ղեկավարությունը, որպես հերթական քայլ, փորձում է հայաթափել Գետաշենի ենթաշրջանը: Այդ նպատակով՝ հայ ազգաբնակչությանը համոզելու մտադրությամբ, Գետաշեն են ժամանում Խանլարի պետավտոտեսչության և քրեական հետախուզության պետերը: Բնակչությունը թույլ չի տալիս նրանց գյուղ մտնել: Այստեղ էին նաև կանայք, որոնց ներկայությունը սկզբում ադրբեջանցի պաշտոնյաներն անլուրջ են ընդունում: Սակայն, հանդիպելով նրանց դիմադրությանը, ադրբեջանցիները հանրությանը դիմում են «քույրեր և եղբայրներ» խոսքով, ինչը, իհարկե, չի մեղմացնում իրավիճակը: Պատվիրակները ենթարկվում են հարձակման, ջարդվում են նրանց մեքենաները, որից հետո, նրանք փախուստի են դիմում²:

Ընդհանուր առմամբ, հաշվի առնելով ականատեսների վկայությունները, կարող ենք ասել, որ Հյուսիսային Արցախում ևս ազգային-ազատագրական պայքարի մեջ ընդգրկված կանայք քիչ թիվ չէին կազմում՝ սկսած ընդհատակյա փուլից և հատկապես ինքնապաշտպանության ժամանակ:

Մարզի հայ բնակչությունն ուժերի գերլարումով փորձում էր պաշտպանել իր ֆիզիկական գոյությունը, իսկ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները շարունակում էին վարել հակահայկական քաղաքականություն: Դրա մասին է վկայում նոյեմբերի 28-ի որոշումը, ըստ որի Լեռնային Ղարաբաղը նորից բռնակցվում է Ադրբեջանին³:

¹ Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. Հողը կանչում է, գիրք Բ, էջ 538:

² Վարդումյան Հ., Աստվածների կանչը, էջ 45:

³ «Խորհրդային Ղարաբաղ», 1989, 30 հոկտեմբերի:

Սույն որոշմամբ մարզը պետք է տնօրիներ հանրապետական Կազմկոմիտեն, որը գլխավորում էր Ադրբեջանի Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոն: Նրա առջև ադրբեջանական իշխանությունները խնդիր էին դրել երկրամասում հոգուտ ադրբեջանցիների փոխել ժողովրդագրական իրավիճակը: Ելնելով դեպքերի զարգացման նման ընթացքից՝ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը 1989թ. դեկտեմբերի 1-ին համատեղ որոշում են ընդունում Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին¹: Այդ որոշումը ոչ միայն արտահայտում էր մարզի հայ բնակչության իղձերն ու ցանկությունները, այլև որոշակորեն ապահովում նրա անվտանգությունը:

1990թ. հունվարի վերջին Ստեփանակերտում կանանց մասնակցությամբ հերթական բողոքի ցույցն է տեղի ունենում, որտեղ դատապարտվում է Բաքվում կազմակերպված ջարդերը: Հակահայկական հիստերիայի մոլուցքով բռնկված Ադրբեջանի ժողովրդական ճակատ կուսակցությունը (ԱԺՃԿ), հանրապետության իշխանությունների հետ միասին, 1990թ. հունվարի 13-ին Բաքվում կազմակերպում է հայ բնակչության ջարդեր, որոնք տևում են մեկ շաբաթ և դադարեցվում միայն զանգվածային ջարդերի յոթերորդ օրը՝ քաղաքը խորհրդային զորքեր մտցվելուց հետո: Այդ օրերին Բաքվի փողոցներում վխտում էին ազգայնական ակտիվիստները²: Հայտնի ճշմարտություն է, որ անպատժելիությունը ծնում է նոր հանցագործություններ: Մարդկանց նետում էին վերին հարկերի իրենց բնակարանների պատշգամբներից, ամբոխը հարձակվում և երկաթյա ձողերով, դանակներով սպանում էր հայերին, բռնաբարում կանանց, զավթում նրանց բնակարանները, ունեցվածքը³: Մի քանի օրվա ընթացքում Բաքվում փաստորեն հայ չմնաց, թեև 80-ականների վերջերին ավելի քան 250 հազար հայ էր բնակվում այնտեղ: Ջարդերից նրանք մազապուրծ էին լինում: Թողնելով ամեն ինչ, ապաստան էին գտնում Հայաստանում, Արցախում, ինչպես նաև այլ երկրներում: Դեպքերի ականատես Նելլի Ղուկասյանը վկայում է. «Ես իմ տան պատուհանից թաքուն նայում և տեսնում էի, թե ինչ է կատարվում փողոցում. խարույկներ էին վառում, թալանում հայերի ունեցվածքով բեռնված մեքենաները...

¹ «Խորհրդային Հայաստան», 1989, 3 դեկտեմբերի:

² Томас Де Ваал, Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, ст. 142.

³ «Խորհրդային Հայաստան», 1990, 23 հունվարի թիվ 19:

Մարդկանց և նրանց կահկարասին նետում էին բարձրահարկ շենքերից, դա սարսափելի տեսարան էր: Երբ մենք խնդրում էինք զինվորների օգնությունը, նրանք ասում էին, որ հրաման չունեն...Ես և ամուսինս մեր ռուս հարսի օգնությամբ հասանք Բաքվի նավահանգիստ, այնտեղից՝ Կրասնովոդսկ»¹: Այդ ողբերգական իրադարձությունների հորձանուտում հայտնված կանանց վկայություններում բազմաթիվ են ջարդարարների վայրագությունների մասին փաստերը: Բաքվի հունվարյան դեպքերից փրկված Ռայա Հարությունյանը, խոսելով կատարվածի մասին, վկայում է, թե ինչպես հունվարի 14-ին իր տուն ներխուժեցին 25-30 հոգի: Դանակներով զինված՝ փող պահանջեցին: Մերժում ստանալով, սկսեցին քաշքշել, ծաղրել և սպառնալ: Բարբարոսների ձեռքից նրան փրկեցին ռազմական ուսումնարանի ռուս սաները²:

Բաքվի «սև հունվարը» դատապարտեց Ելենա Բոները, ով դեպքերի կապակցությամբ տված իր հայտարարության մեջ ասաց. «Ինչո՞ւ երկիրը կենտրոնական հեռուստատեսությամբ չտեսանք Սումգայիթի մասին ֆիլմը: Ինչո՞ւ մենք չիմացանք՝ դատապարտվեցի՞ն, արդյոք, Սումգայիթի, Բաքվի և այլուր կազմակերպված ջարդերի մասնակիցները: Ովքե՞ր և որտե՞ղ նրանց դատեցին: Ինչո՞ւ երկրաշարժից հետո կալանվեցին «Ղարաբաղ» կոմիտեի անդամները, հանրապետության եզակի մարդիկ, որոնց հավատում էր ժողովուրդը: Ինչո՞ւ, երբ գրեթե միլիոնանոց հակահայկական հանրահավաքներ էին անցկացնում Բաքվում, իբր թե հայերը կտրում են Թոփխանայի սուրբ անտառակը, երկրում և Ադրբեջանում ցույց չտվեցին այդ վայրը: Բոլորն էլ կտեսնեին, որ ոչ մի անտառակ էլ չկա»³: Խորհրդային մտավորականության ներկայացուցիչները իրար ետևից բողոքի ձայն էին բարձրացնում կատարվածի և առկա իրավիճակի վերաբերյալ ու բազմաթիվ հարցեր առաջ քաշում, ինչը, իհարկե, մնում էր անպատասխան ոչ միայն Ադրբեջանի, այլև կենտրոնի կողմից: Ավելին, շարունակվում էին բռնությունները:

1990թ. ապրիլի 24-ի Հայոց ցեղասպանության 75-ամյա տարելիցին Ստեփանակերտի եղբայրական գերեզմանոցում սգո հանրահավաք կազմակերպվեց, որի պատճառով բոլոր ելույթ ունեցողները ձերբակալվեցին: Նրանց թվում էր

¹ Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 93:

² Մովսեսովա Ի., Հովնանյան Ա., նշվ. աշխ., էջ 219:

³ “Коммунист”, 1990, 18 августа.

Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի դասախոս Ռոնա Բալայանը¹: Այս իրադարձությունն իր հերթին խոր վրդովմունք առաջացրեց Ստեփանակերտում, հատկապես աշխատավորության շրջանում, որն արտահայտվեց գործադուլով:

Դեպքերին հաջորդեց հայ մտավորականության հացադուլը Մոսկվայում: Մարզի մի խումբ կանայք արձագանքեցին 1990թ. սեպտեմբերի 9-ին Մոսկվայում Ջորի Բալայանի, ակադեմիկոս Վիկտոր Համբարձումյանի, ԽՍՀՄ ժողովրդական արտիստ Սոս Սարգսյանի, ԼՂԻՄ մարզխորհրդի գործկոմի նախագահ Սեմյոն Բաբայանի և ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Վաչագան Գրիգորյանի մասնակցությամբ ձեռնարկված հացադուլին: Դա բողոքի ակցիա էր ընդդեմ Լեռնային Ղարաբաղում տեղի ունեցող անօրինականությունների: Արցախցի մի խումբ կանայք՝ «Մայրության» հիմնադրամի գլխավորությամբ որոշեցին հետևել նրանց օրինակին և միանալ հացադուլավորներին: Այդ կապակցությամբ նրանք Մոսկվայի հացադուլավորներից ստացան հետևյալ հեռագիրը. «Մենք շնորհակալ ենք Արցախի կանանց՝ մայրերին, քույրերին զորավիզ լինելու համար: Այդ դժվարին ժամանակներում Արցախի ժողովուրդը պետք է համախմբի իր բոլոր ուժերն ու կամքը, որպեսզի տոկա մեր ծանր ու տևական պայքարում: Մենք դիմում ենք կանանց. դուք՝ որպես մայրեր, չպետք է ձեր կյանքը վտանգի ենթարկեք և հացադուլ անեք: Դուք հարկավոր եք Արցախին: Դուք հարկավոր եք մեր երեխաներին»²:

Այս հայտարարությունը չխանգարեց նրանց, որպեսզի միանան հացադուլին: Մոսկվա մեկնող կանանց խմբի անդամ Գալյա Առստամյանի (ղարմետաքսկոմբինատից) վկայություններում կարդում ենք, որ նախքան մեկնելը, արցախցի կանայք հեռագիր ուղղեցին Մ. Գորբաչովին, Միության խորհրդարանին և կանանց կոմիտեին, որտեղ պահանջվում էր վերականգնել ԼՂԻՄ-ի իրավական-վարչական մարմինները, նրա սահմանադրական իրավունքները³: Ինչպես նաև որոշ աշխատանքներ կատարվեց. թեկուզ հեռագրերի, նամակների միջոցով պարզաբանվեց հիմնախնդրի էությունը, արցախցիների պահանջը՝ ուղղված Մոսկվայի պետական կառույցներին և կազմակերպություններին: Մոսկվայում, նրանց հաջողվեց ունենալ մի

¹ «Մարտիկ», 1995, 29 ապրիլի:

² « Խորհրդային Ղարաբաղ» , 1990, 23 սեպտեմբերի:

³ Առստամյան Գ., Իմ պատիվ, իմ ցավ Ղարմետաքսկոմբինատ, էջ 46:

շարք հանդիպումներ տարբեր կազմակերպություններում և ներկայացնել Ղարաբաղում տիրող իրավիճակը: Հարկ է նկատել, որ այդ օրերին միության լրատվամիջոցները շարունակ կեղծ լուրեր էին տարածում Լեռնային Ղարաբաղի մասին: Պատվիրակությունը հնարավորություն ունեցավ մասնակցելու «Մայրերի համերաշխության կոմիտե»-ում տեղի ունեցած մամլո ասուլիսին, որին ներկա էին մի շարք երկրների լրատվամիջոցների ներկայացուցիչներ: Այստեղ հայ կանայք մանրամասն ներկայացնելով Արցախում տիրող իրավիճակը, հայտարարեցին, որ Ադրբեջանի իշխանություններն սկսել են դիմել ծայրահեղ միջոցների, որոնց նպատակը, փաստորեն, մարզի լուծարումն է, բայց արցախահայությունը երբեք ծնկի չի գա, կպայքարի մինչև վերջ¹: Նրանց զեկույցները տպավորիչ ու միաժամանակ համոզիչ համոզիչ էին՝ իրական փաստեր Արցախում տիրող իրավիճակի մասին, ինչը հանրությանն այլ կերպ էր ներկայացված: Այդ օրերին կանանց գործունեությունը Մոսկվայում հիմնականում ավարտվեցին հաջողությամբ, նրանք փորձեցին ստեղծված հնարավորություններն օգտագործել ի շահ նպատակի:

Մոսկվայում Արցախից ժամանած կանանց միացան նաև Հայաստանի ներկայացուցիչները, ինչպես նաև ռուս անվանի գրող, հրապարակախոս Ինեսա Բուրկովան, ով այցելել էր Արցախ և Ղարաբաղյան հարցի վերաբերյալ բազմիցս հավաստի տեղեկություններով հանդես եկել Ռուսաստանի մամուլում: Գայլա Առստամյանը վկայում է. «...Հանդիպումներ ունեցանք կանանց միջազգային կազմակերպության աշխատակիցների, «Օգոնյոկ» հանդեսի, «Րաբոչիյ կլաս ի Սովրեմենիյ միր», «Լիտերատուրնայա գազետա», ամերիկյան «Բոլտիմորսանդ» և այլ ամսագրերի ու թերթերի աշխատակիցների, պատգամավորներ հետ: Զրուցեցինք «Կանանց միջազգային ասոցիացիայի» ներկայացուցիչ տիկին Եվայի հետ, որը նկարահանում էր մեր ամբողջ հանդիպումները՝ Բոստոնում ցուցադրելու համար: Մեր ձեռքի տակ եղած բազմաթիվ փաստաթղթեր և գրքեր՝ Արցախի մասին, հանձնեցինք Սախարովի ֆոնդի անդամներին: Այնուհետև այցելեցինք «Վահան» զինվորական կազմակերպություն, երկար զրույց ունեցանք Ի. Բուրկովայի հետ, որն Արցախի մասին

¹ Առստամյան Գ., Սպասում, էջ 42:

գիրք էր գրում»¹: Կարևոր է նշել, որ Մոսկվայում նրանց կատարած աշխատանքները մեծ նշանակություն ունեցան, հատկապես, այն դեպքում, երբ տարածաշրջանում և հայ-ռուսական հարաբերություններում, մթնոլորտի շիկացման գործում իրենց մշտական դերն էին խաղում կենտրոնական մամուլը և հեռուստատեսությունը: Դրանք խեղաթյուրում էին իրականությունը և երկրի բնակչությանը իրադարձությունները ներկայացնում մոսկովյան իշխանություններին հարմար ձևով:

Սեպտեմբերի 29-ին հացադուլավորները դադարեցրին իրենց քաղաքական ակցիան: Չնայած Կրեմլի անտարբերությանը, մոսկովյան հացադուլն ունեցավ իր դերակատարությունը:

Երկրամասում տիրող լարվածությունը՝ կենտրոնի հակահայ կողմնորոշումը, ադրբեջանական իշխանավորների սադրիչ քայլերը ևս մեկ անգամ ստիպեցին Արցախի մի խումբ կանանց 1990 թ. հոկտեմբերին հերթական կոչով դիմել աշխարհի կանանց: Դիմումում մասնավորապես, ասվում էր, որ Արցախի կանայք այսօր զինվորյալ են ու ոտքի են ելել հանուն ազատության և խաղաղության, մարդու բնական իրավունքի և կնոջ սուրբ կոչման, որը կյանքեր ծնելու հատկությամբ հակադրվում է խորհրդային բանակի և ադրբեջանցի գրոհայիններին: Աշխարհի կանանց պատմելով արցախահայության ձգտումների և անզիջում պայքարի մասին, նրանք կոչ էին անում Արցախից հանել Ադրբեջանի ապօրինի կազմկոմիտեն, բացել Արցախը Հայաստանի հետ կապող ճանապարհները և ապահովել ռադիոհեռուստատեսության նորմալ աշխատանքը²:

Արցախի տարբեր վայրերում մեկը մյուսի ետևից կատարվող ոճրագործությունները անհանգստություն և զայրույթ էին առաջացնում հանրության մեջ: Նման մի ոճրագործության՝ 1990 թ. ապրիլին Մարտակերտի շրջանի Չայլու գյուղում 12-ամյա Արմեն Մկրտչյանի գնդակահարության պատճառով, արցախաբնակ ռուս ուսուցչուհի Ելենա Բադյակինան դիմում է արտակարգ դրության շրջանի պարետ Վ. Սաֆոնովին: Նամակում պաշտպանելով արցախահայության պատմական իրավունքները, նա հայտնում էր, որ հուսալ, թե այդ հպարտ ու խիզախ ժողովրդին կարելի է սպառնալիքներով կամ շրջափակումներով ծնկի բերել, առնվազն միամտություն է:

¹ Նույն տեղում, էջ 45:

² «Ուրբաթ», 1990, 19 հոկտեմբերի:

Ավելի լավ կլինի, եթե կառավարությունը վերջ ի վերջո լսի ժողովրդի ձայնը և ճանաչի նրա օրինական իրավունքը¹:

Շարունակվող հանրագրերից արժե անդրադառնալ կանանց ստորագրությամբ Հյուսիսային Արցախի հայ ազգաբնակչության դիմում-բողոքներին՝ կապված (70 հոգու մասնակցությամբ) 1990թ. մարտի 1-8-ը Ազատ և Կամո գյուղերի բնակչության բռնագաղթի հետ²: Փաստաթուղթը քննարկվել է 1990թ. մարտի 2-ին «Գետաշեն» ՀԲՄ նիստում, այնուհետև ներկայացվել ԽՍՀՄ Գլխավոր դատախազությանը, ՀՀ ԳԽ-ին ու Հայաստանի Գլխավոր դատախազությանը: Այն հանգամանորեն տեղեկություններ էր հաղորդում հայերի նկատմամբ գործադրված ճնշումների մասին և միաժամանակ խնդրում նրանց համար հնարավորություն ստեղծել վերադառնալու հայրենի օջախներ: Սակայն ԽՍՀՄ Գլխավոր դատախազությունը, անպատասխան թողնելով այդ դիմում-բողոքները, ակամա հաստատեց բռնագաղթի ծրագրավորված և համաձայնեցված լինելը Մոսկվայի հետ: Գետաշենի և Մարտունաշենի բնակչությունը, համոզվելով, որ ԽՍՀՄ ներքին զորքերը ոչ միայն մտադիր չեն իրենց պաշտպանել, այլև հաճախ իրենք են մասնակցում հայկական գյուղերի ջարդերին ու թալանին, ավելի հաստատական դարձան իրենց գործողությունների մեջ՝ դրանով իսկ ուժեղացնելով և ընդլայնելով ինքնապաշտպանության ջոկատների շարքերը³:

Գետաշենի ինքնապաշտպանությունը աջակցություն էր ստանում Հայաստանում և Լեռնային Ղարաբաղում կազմավորված կամավորական ջոկատներից, որոնց շարքերը համալրել էին նաև կանայք: Վերջիններս արձագանքեցին կամավորական ջոկատներին զինվորագրվելու մասին դեռևս 1988-1989թթ. հանրահավաքների ժամանակ հնչած կոչին՝ համարելով, որ այդ ճակատագրական պահին պարտավոր են կատարել իրենց պարտքը հայրենիքի առջև: Համազգային պայքարին միացած կանանց կազմակերպչական աշխատանքների մասին տեղեկություններ են հաղորդում նաև օտարերկրացի ականատեսները:

1990-1991թթ. ԼՂԻՄ-ում ԽՍՀՄ ՆԳՆ օպերատիվ-քննչական խմբի շտաբի պետ աշխատած Վիկտոր Կրիվոպուսկովը, հետագայում իր գրքում անդրադառնալով

¹ "Бакинский рабочий", 1990, 22 апреля.

² «Հայաստանի Հանրապետություն», 1993, 9 մարտի:

³ Նույն տեղում:

արցախյան գոյապայքարին, վկայում է, որ գործուղման վերջին օրերին ԼՂԻՄ Կազմկոմիտեի նախագահ Վ. Պ. Պոլյանիչկոն ազերական հատուկ ծառայությունների կողմից խլված մի նամակ կարդաց, որը Շուշիի Կիրով գյուղից մի կին էր ուղարկել ԼՂԻՄ մարզկոմին¹: Նամակը բովանդակում էր խնդրանք՝ մթերք և դեղամիջոցներով շտապ օգնություն հասցնել հայկական ենթաշրջանում ապրող գյուղերի բնակչությանը: Նամակի հեղինակը միևնույն ժամանակ հայտնում է, որ չնայած մշտական գնդակոծություններին, սպանություններին, մարդիկ տոկուն են բոլոր տեսակի արգելքների դեմ հանդիման և ոչ մի դեպքում չեն լքի իրենց դարավոր հայրենիքը: Կինը մի բան էր խնդրում. թույլ չտալ, որ այդ գյուղերից հանվեն ներքին զորքերի բոլոր պոստերը, որոնք թեև սակավաթիվ են, բայց, լավ թե վատ, բնակչությանը պաշտպանում են ադրբեջանական ագրեսիայից: Ըստ գրքի հեղինակի՝ Պոլյանիչկոն այդ նամակը համարեց ժաննա Գալստյանի ակտիվ գործունեության արդյունք և սպառնաց, որ եթե նա հոժարական չդադարեցնի իր գործունեությունն այդ գյուղերում և չվերադառնա տուն, ապա իրենք կօգնեն անելու դա: Պատահական չէր, որ 1990թ. դեկտեմբերի 16-ին, Բերձորում, անձնագրային ռեժիմի ստուգման ժամանակ ձերբակալեցին Ժ. Գալստյանին ու տեղափոխեցին Ստեփանակերտ: Նրա փրկության համար պայքարում էին շարժման առաջնորդները, ինչպես նաև ինքը՝ Վ. Կրիվոպուսկովը: Ապացուցվեց, որ ձերբակալության համար հիմնավորում չկա, որից հետո ազատ արձակեցին, և նա մինչև պատերազմի վերջ մնաց մարտական դիրքերում: Այդ օրերին Բերդաձորի ենթաշրջանի ռադիոհեռախոսկապն ապահովում էր Գայանե Առստամյանը²: Դեռևս 1989թ. դեկտեմբերին ընդգրկվելով շարժումը կոորդինացնող կապավորների խումբ, նա մեկնել էր Բերդաձորի ենթաշրջան՝ քաջ գիտակցելով Շուշիի բանտում հայտնվելու վտանգը: Սակայն բոլոր վտանգները մղվեցին երկրորդ պլան, քանի որ կար Բերդաձորի ռազմավարական նշանակություն հասկացությունը: Նրա աշխատանքի շնորհիվ անխափան գործում էր կապը Ստեփանակերտի և Երևանի հետ: Այդ օրերի մասին Գայանե Առստամյանը վկայում է. «1991թ. սկզբներից զգացվում էր, որ Բերդաձորի շուրջ սեղմվում է օղակը. հաճախակի

¹ Кривопусков В., նշվ. աշխ., стр. 21.

² «Հայրենյաց պաշտպան», 2008, 8 մայիսի, թիվ 79:

էին դառնում ամենատարբեր ստուգումները անձնագրային ռեժիմի անվան տակ... Թուրքերին պարզ է դառնում շարժման տեղական գործիչների անունները, և Բերդաձորը նորից շրջապատվում է: Պահանջում են առաջնորդներից Ժ. Գալստյանին: Մտածելով, որ իր պատճառով կարող են բնակչությանը վնասել, նա ինքնակամ հանձնվում է: Երբ պատրաստվում են գրահամեքենայով նրան տանել գյուղից, ես միանում եմ և նրանց հետ հասնում մինչև Ստեփանակերտ: Հաջողվում է ազատվել և առաջին խնդիրը լինում է լուրը հասցնել շարժման ղեկավարներին ու նորից վերադառնալ Բերդաձոր»¹: Գայանե Առստամյանը Բերդաձորի ենթաշրջանում մնաց մինչև վերջ: Բերդաձորցիների տեղահանման օրերին նա աշխատում էր օմօնի քթի տակ, ուղղաթիռներով կանանց, երեխաներին տեղափոխում Ստեփանակերտ:

Շուտով թշնամին կրակի տակ առավ հեռախոսակայանը. առջևում ուրվագծվում էին գերության տանջալի օրերը: Սակայն նրան հաջողվեց վերջին ուղղաթիռով դուրս գալ այդ դժոխքից՝ իբր երեխայի մայր²: Երկար ժամանակ ստիպված էր թաքնվել հետապնդումներից: Իսկ երբ սկսվեցին լայնածավալ ռազմագործողությունները, նա ծառայության անցավ նոր կազմավորվող Պաշտպանության բանակի կապի բաժնում, այնուհետև՝ կանանց վաշտում:

Նշենք, որ Կրիվոպուսկովը անդրադարձել է նաև 1989թ. էջմիածնի կամավորական ջոկատի շարքերը համալրած Նազիկ Ամիրյանի անձին, ով ինքնապաշտպանական ջոկատի հետ մեկնել էր Հադրութի շրջան՝ իբր Դուդուկչի գյուղում կոոպերատիվ կազմակերպելու և գյուղմթերքներ գնելու համար: Սակայն իրականում ջոկատի անդամները, այդ թվում Նազիկ Ամիրյանը, գյուղը պաշտպանում էին ադրբեջանցիների անընդհատ հարձակումներից:

1990թ. նոյեմբերի 17-ին խորհրդային ՆԳՆ ներքին զորքերի կողմից «անձնագրային ստուգման» ժամանակ ձեռքակալվում է Նազիկ Ամիրյանը (ևս ջոկատի 24 անդամներ) և մեկ ամիս մնում բանտարկված, այն էլ՝ Շուշիի բանտում: Դեռ նախորդ օրը պարզ դարձավ, որ Նազիկ Ամիրյանը բոլորովին էլ պատահական չի հայտնվել հայրական օջախից հեռու: Նրա գլխավոր առաքելությունը

¹ Նույն տեղում:

² «Ազատ Արցախ», 2009, 9 մայիսի, թիվ 52:

գյուղատնտեսական մթերքներ գնելն ու մշակելը չի եղել և ոչ էլ անասնապահական ֆերմայի տանիքները կարկատելը: Սահմանամերձ շրջանի մարտական ընդհատակյա բազայի կազմակերպիչ էր նա: Վ. Կրիվոպուսկովը նշում է, որ դա էր պատճառը, որ ընդհատակի ղեկավարները խիստ անհանգստացած էին նրա ձերբակալությամբ¹: Նույն թվականի դեկտեմբերին նա փրկագնով ազատվեց և ջոկատի կազմում շարունակեց պայքարը: Այս դրվագը խոսում է այն մասին, որ այդ դժվարին օրերին Արցախի ինքնապաշտպանությանը միացած Հայաստանի կամավորական ջոկատների շարքերը համալրած կանայք մեծ նվիրումով էին կատարում սկսած գործը՝ Արցախի ազատագրումը:

Արցախում ծավալված զանգվածային բռնությունների ալիքը նոր թափով շարունակվեց 1991թ. հունվարին: Մարզի հայ բնակչության համառ կամքից ու անհնազանդությունից գազազած, ԽՍՀՄ ղեկավարների հետ միական, Ադրբեջանի իշխանությունները նոր թափով սկսեցին դավեր նյութել ինքնորոշման սահմանադրական ուղու վրա կանգնած արցախահայության նկատմամբ: Ստեղծված իրավիճակից ելնելով, կանանց Հայաստանի հանրապետական խորհրդի նախագահությունը 1991թ. հունվարի 11-ին նամակով դիմեց ԽՍՀՄ նախագահ Մ. Գորբաչովին և ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի: Նամակում հատկապես նշվում էր, որ Հայաստանի կանայք տոկունությամբ դիմակայում են ցրտին, կիսաքաղց վիճակին, սակայն անհանդուրժելի են համարում հայ ժողովրդի դեմ մշտապես կիրառվող բռնությունները, ինչպես նաև ձեռնարկվող լրատվական կեղծ հրապարակումները: Այդ նամակ-բողոքում ցասումով էր խոսվում Ադրբեջանի ղեկավար մարմինների կողմից Լեռնային Ղարաբաղում կազմակերպվող հանցագործությունների մասին և պահանջվում արդարացի որոշում կայացնել Լեռնային Ղարաբաղի վերաբերյալ²:

Փետրվարի 4-ին նաև կանանց ստորագրությամբ ԼՂ ժողովրդական բոլոր մակարդակների պատգամավորները և բազմաթիվ հիմնարկ-ձեռնարկությունների տնօրեններ դիմում են Մ. Գորբաչովին՝ հաղորդելով Ադրբեջանի ՆԳ նախարար Մ.

¹ Кривописков В., նշվ. աշխ., стр.97-114.

² «Խորհրդային Ղարաբաղ», 1991, 12 հունվարի :

Ասադովի գլխավորությամբ մարզի հայկական գյուղերի վրա ադրբեջանցի հրոսակների հարձակումների, ինչպես նաև Ստեփանակերտի ջրմուղի պայթեցման ու բազմաթիվ խաղաղ բնակիչների սպանությունների մասին: Սակայն, ինչպես հետագա դեպքերն են վկայում, դիմումը ոչ միայն դրական պատասխան չստացավ, այլև հետզհետե ավելի վատթարացավ երկրի դրությունը: Ընդհանրապես կենտրոնը խուսափում էր հարցերի քաղաքական լուծումներից:

Արցախում տիրող ծանր իրավիճակի, սանձազերծված բռնությունների առիթով իր վրդովմունքն արտահայտեց նաև ռուս գրող Գալինա Նույկինան, ով փետրվարի 8-ին մի խումբ գրողների¹ հետ Երևանից Ստեփանակերտ ժամանեց՝ մարզի վիճակին ծանոթանալու և Միության հասարակայնությանը ճշգրիտ և հավաստի տեղեկություններ տանելու համար: Սակայն Ստեփանակերտի օդանավակայանում նրանց հետ ուղարկեցին և միայն երկու հոգու (Յուրի Չեռնենկո, Թիմուր Գայդար) ճանապարհը շարունակելու իրավունք տրվեց: Գ. Նույկինան իր բողոքում հատկապես նշում է. «Ես Ղարաբաղում, ավելի ճիշտ՝ նրա շեմին տեսել եմ մարդկանց, որոնք անհուսության մեջ են, այն էլ՝ մի կացության մեջ, ասես իրենց թիկունքում տարածված է տառապանքի ու ողբերգության մի գոտի... Մեզ թույլ չտվեցին մտնել Ղարաբաղ: Սակայն օդանավակայանում, ուր մեզ հետ էր երկրի Գերագույն խորհրդի պատգամավորը, չարիքի հեղինակները գիտեին, թե ովքեր ենք մենք, որտեղից եկած, նույնիսկ այս պայմաններում նրանք մեզ հետ վարվեցին ամենավայրագ ձևով... Եվ բացի այդ, մենք ականատես եղանք ուղևորների հետ կատարվող այնպիսի բռնությունների, որոնց նմանակը երևի թե չկա ու չի կարող լինել աշխարհի ուրիշ ոչ մի անկյունում: Ես չեմ կարող իմ կարեկցանքը չարտահայտել Ղարաբաղի հայերին, երեք տարի շարունակ անմարդկային զրկանքների դեմ պայքարող այդ խիզախ և արդար ժողովրդին...»²:

Արցախում ստեղծված իրավիճակով մտահոգված, ԽՍՀՄ մի շարք կին մտավորականներ, որոնք առանձին, թե հասարակական կազմակերպությունների կազմում, փորձում էին նպաստել իրավիճակին՝ հանդես գալով հայտարարություններով

¹ Գրողների թվում էին ԽՍՀՄ մտավորականներ Թիմուր Գայդարը, Վալենտին Օսկոցկին, Անդրեյ Նույկինը:

² Ուլուբաբյան Բ., նշվ.աշխ., էջ194:

և նախաձեռնություններով: Հատկապես առանձնանում է «Մոսկովսկայա տրիբունա» հասարակական կազմակերպությունը, որի շարքերը համալրել էր Գալինա Ստարովոյտովան¹: Ոչ կառավարական այդ կառույցն աչքի էր ընկնում Հայաստանին, մասնավորապես Արցախին վերաբերող հարցերի նկատմամբ իր անաչառ սկզբունքային դիրքորոշմամբ: Կազմակերպությունը քննարկելով Արցախ-Հայաստանում ստեղծված ծանր վիճակը, 1991թ. մարտի 3-ին ընդունեց դիմում՝ ուղղված ՀՀ ԳԽ-ին, ինչպես նաև հայտարարություն՝ նախագահ Մ. Գորբաչովին և ԽՍՀՄ Գերագույն խորհրդին: Այդ փաստաթղթերում պաշտպանվում էր Արցախի բնակչության շահերը և դատապարտվում Ադրբեջանի բռնությունները: Պահանջվում էր նաև դատի տալ, պատժել հանցագործներին, վերականգնել ԼՂԻՄ իշխանությունների պետական կառուցվածքը, ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերը ենթարկել կենտրոնին ու նրանց հանձնարարել խաղաղարարություն և ոչ թե պատժիչ գործառույթներ²:

Այդ օրերին ակտիվ գործունեություն էին ծավալել հայկական մի շարք հասարակական կազմակերպություններ, միություններ, որոնք միջազգային ասպարեզում տեսակետ ձևավորելու նպատակով, նախապատրաստում և տարբեր երկրների ատյանների էին ուղղում բազմաթիվ դիմումներ, բողոք-նամակներ, պատմական արդարությունն ապացուցող փաստարկներ, ինչպես նաև նախաձեռնում, կատարում մի շարք ներքին աշխատանքներ: Ինչպես արդեն հայտնի է, դրանց թվում էր «Գետաշեն» հայրենակցական-բարեգործական միությունը, որը սոցիալ-տնտեսական ոլորտում բարեփոխումներ կազմակերպելուց բացի, զբաղվում էր նաև երկրի ինքնապաշտպանության հարցերով, ինչպես նաև անդրադառնում կանանց նախաձեռնություններին:

Այսպես, 1991թ. փետրվարի 10-ին Երևանում տեղի ունեցած «Գետաշեն» հայրենակցական-բարեգործական միության ընդլայնված նիստում քննարկվեց նաև Գետաշենի կանանց կողմից Հայաստանին ուղղված դիմումների հարցը: Հատկապես

¹ Հասարակական միությունը ստեղծվել է 1988 թվականին, որը միավորել է Մոսկվայի ժողովրդական մտավորականության լավագույն ուժերը: Դրա գաղափարախոսը մինչև կյանքի վերջ հանդիսանում էր Անդրեյ Սախարովը: Կազմակերպության անդամներից էին նաև Վիկտոր Շեյնիսը, Անդրեյ Նույկինը, Լեոնիդ Գուլմանը և մի շարք հայտնի մտավորականներ:

² «Հայաստանի Հանրապետություն», 1991, 6 մարտի:

նիստի որոշման 7-րդ կետում ասվում է. «Հետևել Գետաշենի կանանց կողմից Հայաստանի իշխանություններին ուղղված դիմումների ընթացքին»¹:

Առանձնանում է նաև 1991թ. Գրետա Միրզոյանի նախաձեռնությամբ հիմնադրված «Զինվորի մայր» հասարակական կազմակերպությունը, որը գործում է առայսօր²: Անդրադառնալով 1992-1994թթ. կազմակերպության գործունեությանը, հարկ է նշել, որ դրա շարքերը համալրված կանայք մի շարք աշխատանքներ էին իրականացնում՝ օգնություններ կազմակերպում, խնամում մարտադաշտերում վիրավորված զինվորներին:

Հասարակական կազմակերպությունների շարքերը համալրելուց բացի, կանայք գործում էին նաև առանձին, հատկապես բարեգործական, մարդասիրական աշխատանքների շրջանակներում: Նրանց թվում էր բարերար Քերոլայն Նաջարյանը, ով 1988թ. ավերիչ երկրաշարժից տուժած հայրենակիցներին և արցախահայությանը մարդասիրական օգնություն ցուցաբերելու նպատակով (դեղորայք, բժշկական սարքավորումներ, շտապօգնության մեքենաներ) 1989թ. ԱՄՆ Բոստոն քաղաքում հիմնում է «Հայկական առողջապահական միություն» բարեգործական կազմակերպությունը: Դրա մասնաճյուղերը բացվում են նաև Երևանում և Ստեփանակերտում: Կազմակերպությունը Սպիտակի երկրաշարժից անմիջապես հետո՝ աղետի գոտում համագործակցում էր Գյումրիի թիվ 1 պոլիկլինիկայի հետ, իսկ արդեն 1994թ. այստեղ հիմնում Առողջապահության պահպանման կենտրոն: Բարերար հայուհու հովանավորությամբ Ստեփանակերտում հիմնվում է (1995թ) մոր և մանկան «Արփեն» բժշկական կենտրոնը, Արցախի տարբեր գյուղերում կազմակերպվում և իրականացվում վերակառուցման աշխատանքներ, ինչպես նաև նյութական օգնություն ցուցաբերվում զոհված ազատամարտիկների ընտանիքներին³:

1991թ. փետրվարի 20-ին՝ ԼՂԻՄ մարզխորհրդի պատմական որոշման երեք տարին լրանալու կապակցությամբ Ստեփանակերտի Հաղթանակի հրապարակում կայացավ բազմահազարանոց հանրահավաքում: Ելույթներով հանդես եկան Սվետլանա Պետրոսյանը (ղարմետաքսկոմբինատից), Տամարա Շվեդովան (ԼՂԻՄ

¹ Սիսյան Բ., Զիլինգարյան Ռ., նշվ. աշխ., էջ 338-339:

² «Հայուհիներ», հանրագիտարան, հատոր 1, էջ 102:

³ Նույն տեղում, էջ 110:

ձեռնարկության գլխավոր հաշվապահ), Եկատերինա Դուբնինան (թիվ 3 մսուր-մանկապարտեզի դաստիարակչուհի), Էլզա Բաղդասարյանը (կոշկի ֆաբրիկայի բանվորուհի): Նրանք դատապարտելով Ադրբեջանի իշխանությունների հակահայկական քաղաքականությունը, մեկ անգամ ևս հաստատեցին ողջ արցախահայության անհողդողդ վճռականությունը՝ համախմբված ու միասնական ուժերով շարունակել պայքարը: Իհարկե, կանանց ոգևորիչ ելույթներն իրենց հերթին հավատ և ուժ էին ներշնչում ժողովրդին, որը ստեղծված օրհասական վիճակից դուրս գալու միակ փրկությունն իր ձեռքերում էր տեսնում:

Ադրբեջանի հետ կենտրոնի շարունակական համագործակցությունը վաղուց արդեն հուսախաբություն ու հիասթափություն էր առաջացրել հայ ժողովրդի շրջանում: Կարելի է ասել, որ արդեն հավատ չկար, որ Մոսկվայի միջնորդությամբ Ղարաբաղյան հարցն օբյեկտիվ լուծում կստանա, բայց և այնպես, շարունակվում էր դիմումների հոսքը: Գոհար Սարինյանի և Ռոզա Ավանեսյանի նախաձեռնությամբ 1991թ. մարտին կանայք, նամակով դիմելով ԽՍՀՄ տարբեր ատյանների, առաջարկում են վերականգնել մարզային իշխանությունները, վերացնել ճանապարհների շրջափակումը, բեկանել Ադրբեջանի բարձրագույն իշխանության բոլոր այն միջոցառումները, որոնք ուղղված էին մարզում ժողովրդագրական իրավիճակի բռնի փոփոխությանը և մարզի տարածքից դուրս բերել ադրբեջանական ոստիկանության հատուկ ջոկատայինների անվան տակ գործող անօրինական զինված խմբավորումները²: Կանանց կողմից հաջորդ քայլը 1991թ. մարտի 8-ին Ստեփանակերտում կազմակերպված բողոքի ցույցն էր՝ ընդդեմ Ադրբեջանի իշխանությունների՝ այդ օրերին ձերբակալված և Շուշիի բանտ նետված երեք անմեղ հայորդիների համար: Նրանց բողոքի երթին միացած քաղաքի բոլոր բնակիչները վճռականորեն պահանջում էին առհասարակ Ադրբեջանի բանտերից ազատել անմեղ հայ բանտարկյալներին և պատանդներին³: Կանանց նախաձեռնությունները և տարբեր միջոցառումներին նրանց մասնակցությունը նպատակ էին հետապնդում դադարեցնել երկրում տիրող

¹ «Խորհրդային Ղարաբաղ», 1991, 21 փետրվարի:

² Նույն տեղում, 1991, 30 մարտի:

³ "Голос Армении", 1991, 10 марта.

անօրինականությունները, ինչպես նաև միջոցներ ձեռնարկել երկիրը ծանր վիճակից դուրս բերելու համար:

1991թ. հունվարի 14-ին Ադրբեջանի ԽՍՀ Գերագույն խորհուրդը որոշում ընդունեց Շահումյանի շրջանը լուծարելու մասին՝ այն «կցելով» Կասում-Իսմայլովի (Գերանբոյի) շրջանին¹: Սակայն Հյուսիսային Արցախի հայ ազգաբնակչության կողմից մերժվեց այդ կամայական որոշումը: Դրան հաջորդեցին հաճախակի ավազակային հարձակումները, որոնց զոհ դարձան ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք ու երեխաներ: Սովորաբար ավազակային հարձակումներն իրականացվում էին օմօնականների կողմից՝ ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ստորաբաժանումների աջակցությամբ: Բնակչության բողոքների դեպքում մեղքը բարդվում էր, իբր, Հայաստանից եկած «գրոհայինների» վրա, որը երբեք չէր համապատասխանում իրականությանը:

ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի և Ադրբեջանի ՆԳՆ օմօնական ջոկատների 1991թ. ապրիլի 30-ին սկսած համատեղ լայնածավալ գործողությունների հետևանքով հայաթափվեց Գետաշենի ենթաշրջանը: Այդ գործողություններն իրականացվեց «Օղակ» («Կոլցո») ընդհանուր ծածկանվան ներքո, որի հիմնական նպատակն էր հայերին տեղահանել հնարավորինս շատ բնակավայրերից, միաժամանակ նաև վախ առաջացնել և ճնշել ազգային-ազատագրական պայքարը, կոտրել դիմադրության ոգին: Գետաշենի ենթաշրջանի ճակատագրին արժանացավ նաև ԼՂԻՄ և Շահումյանի շրջանի մի շարք բնակավայրեր:

Այսպես, զինված հակամարտությունը հայ կանանց տոկոսության, քաջության, անլուր տառապանքների, զրկանքների ու, մանավանդ, նրանց նկատմամբ գործադրված վայրագ բռնությունների նորանոր էջերով լցրեց հայոց պատմությունը: Եվ այդ սարսափների ու տառապանքների մեջ թերևս ամենացնցողն այն էր, որ ադրբեջանցի ասպատակիչ հրոսակներին միացել էին Խորհրդային Միության ներքին զորքերի զինվորները: Բազմաթիվ փաստաթղթեր և առանձին մարդկանց, հատկապես կանանց հուշագրություններ են պահպանվել այդ ողբերգական օրերի մասին: Գետաշենցի կանայք սարսափով են հիշում, թե ինչպես էին թալանում, ավերում տները, սպանում,

¹ Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. Հողը կանչում է, գիրք Բ, էջ 64:

բոնություն գործադրում խաղաղ բնակիչների նկատմամբ՝ անկախ սեռից ու տարիքից: Էլմիրա Ֆարաշյանը վկայում է. «Գյուղացիները մտածում էին, թե խորհրդային բանակն օգնության է եկել, սակայն երբ տանկերը շրջապատեցին գյուղը, արգելափակեցին գյուղից դուրս տանող բոլոր ճանապարհները և փողերն ուղղեցին տների վրա, մենք հասկացանք, որ մի վատ բան է պատրաստվում: Տուն մտան մի ռուս կապիտան և մոտավորապես 20 օմօնական: Կապիտանը պահանջեց անձնագրերը, հետո սկսեց գոռալ. «Ենթարկվում եք Ադրբեջանի սահմանադրությանը, թե՞ ոչ... Հետո սկսեցին տունը կողոպտել, ծեծեցին մորս ու որդուս, ջարդուփշուր արեցին ամեն ինչ»¹: Այդ դժվարին օրերին Գետաշենից Հայաստան ռադիոկապը շարունակում էր ապահովել Սվետլանան, նույն ինքը՝ Լենա Ավագյանը: Համագործակցելով Թաթուլ Կրպեյանի գլխավորած ջոկատի հետ, ոչ միայն սնունդ էր մատակարարում նրանց, այլ նաև իր տունը դարձրել էր ջոկատի զինանոցը: Կապավորն աշխատում էր գիշեր-ցերեկ և «Կամա-2» ազդանշանն անընդհատ հնչում էր եթերում²: Նույնիսկ Գետաշենի անկման վերջին օրերին, նա շարունակում էր անհնարին պայմաններում պահել կապը, միաժամանակ կանանց մասնակցությամբ կազմակերպում ինքնապաշտպանական միջոցառումներ՝ օմօնականներին գյուղից դուրս հանելու համար:

1991թ. մայիսի 6-ին արդեն օմօնականները գյուղում վխտում էին: Այտնեղ մնացած պաշտպանները, թաքնվելով՝ վերջին գործողություններն էին կատարում: Ազերիները փնտրում էին Լենա Ավագյանին, նրա համար գումար խոստանում: Հարկ է նշել, որ ադրբեջանցիները բազմիցս փորձել են ձերբակալել նրան, սակայն այդպես էլ դա նրանց չի հաջողվել: Լ. Ավագյանիը ներկայանում էր որպես Սվետլանա և համոզում, որ տարբեր մարդկանց մասին է խոսքը: Նման ճկունության շնորհիվ նա կարողացավ պայքարել մինչև վերջ և, իր սեփական տունը վառելով, Գետաշենից հեռացավ ազատամարտիկների վերջին խմբի հետ: 1991թ. մայիսի 3-ին Գետաշենի ռադիոկապից հղվում է նրա վերջին հեռագիրը. «Մենք՝ Ադրբեջանի Գետաշեն և Մարտունաշեն հայկական երկու գյուղերի բնակիչներս, թախանձագին խնդրում ենք փրկել մեր կյանքը: Խորհրդային բանակը ոչնչացնում է մեզ՝ խորհրդային

¹ «Հայաստանի Հանրապետություն», 1991, 15 մայիսի:

² Վարդումյան Հ., Աստվածների կանչը, էջ 45:

քաղաքացիներիս: Մեզ վրա կրակում են թնդանոթներից, գնդացիրներից և ավտոմատներից, գնդակոծում են օդից: Տանկերով տորոում են մեզ՝ մեր իսկ տներում և բակերում: ...Զորքը ոչնչացնում է մեզ և ստիպում ճանաչել Ադրբեջանի իշխանությունը, հակառակ դեպքում՝ թողնել հայրենի գյուղերը: Սակայն փախչել չեն թողնում, կրակում են: Մենք պատսպարվելու տեղ չունենք. աշխարհի մարդիկ, փրկե՛ք, գոնե երեխաներին փրկեք: Մենք զոհվում ենք տանկերի շրջապատման մեջ և արտաքին աշխարհից կտրված: Փրկեք մեզ»¹:

Ահա այսպիսի սոսկալի վիճակ էր տիրում Գետաշենի անկման նախօրեին, որի ընթացքում մեծ կորուստներ ունեցավ Հյուսիսային Արցախի հայ բնակչությունը: Այդ բռնությունների առթիվ «Մեմորիալ» իրավապաշտպան կազմակերպության նախաձեռնությամբ բողոքի ցույց կազմակերպվեց Մոսկվայում: Հանդես գալով հանրահավաքում՝ գրող-հրապարակախոս Ինեսա Բուրկովան դիմեց երկրի ղեկավարությանը, կոչ անելով վերջ տալ Արցախի հայ ազգաբնակչության նկատմամբ իրականացվող սպանդին: Նա մարդկության թշնամիներ հայտարարեց ԽՍՀՄ պաշտպանության նախարար Դմիտրի Յագովին, ներքին գործերի նախարար Բորիս Պուգոյին և այլ միութենական ղեկավարների²: Դեռևս ապրիլի վերջերին Ի. Բուրկովան Շահումյանից «Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագրությանը հաղորդել էր այն մասին, որ 1991թ. ապրիլի 25-26-ը երկու գյուղերից դուրս են բերվել ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի այն ստորաբաժանումները, որոնք ապահովում էին տեղի հայ բնակչության անվտանգությունը, և ապրիլի 29-ին ու 30-ին լայնածավալ հարձակում է սկսվել Գետաշեն ու Մարտունաշեն գյուղերի վրա: Սկզբում ռազմական ուղղաթիռներից գնդակոծվել են գյուղերը, ապա սկսվել է հրետակոծությունը: Այդ արյունալի արշավանքի ժամանակ զոհվել է 35, վիրավորվել հարյուրից ավելի հայ³:

«Օղակ» գործողության մասին հայ և օտարազգի կին գործիչների, մտավորականների վկայությունները փաստում են Ադրբեջանի նենգ քայլերի մասին, որի հետևանքով արցախահայությունն ունեցավ զոհեր, վիրավորներ, ընդ որում՝ խաղաղ

¹ «Մոսկի ղողանջներ», 1992, 3 մայիսի:

² «Հայաստան», 1991, 11 մայիսի:

³ Буркова И., նշվ. աշխ., стр.17.

բնակչության շրջանում՝ կանայք, երեխաներ, ծերեր: Գետաշենցի զոհվածների, անհայտ կորածների, բռնագաղթի հետևանքով մահացածների մեջ քիչ չէին կանայք, որոնց թվում էին Հասմիկ Ասլանյանը, Նորա Երիցյանը, Հռիփսիմե Մինասյանը, Մարո Չիլինգարյանը և շատ ուրիշներ¹:

Անտարակույս, հակամարտության ընթացքում բռնությունների ենթարկված կանանց շարքերում ամենադաժան ճակատագիրը բաժին հասավ նրանց, ովքեր պատանդ էին մնացել հակառակ կողմում: Գրեթե ոչինչ պարզ չէ նրանց կրած տառապանքների մասին, քանի որ մեծ մասը, չդիմանալով խոշտանգումներին ու նվաստացումներին, նահատակվել է, իսկ ով էլ վերադարձել է, անկարող է վերարտադրել ու վերապրել այդ տառապանքը:

Գետաշենի բռնագաղթն ավարտվեց 1991թ. մայիսի 7-ին: Գետաշենի և Մարտունաշենի ինքնապաշտպանական ուժերի շնորհիվ բնակիչներին հաջողվեց տեղափոխվել առանց մեծաթիվ զոհերի: Դեպքերի առիթով ցույցեր և ժողովներ կազմակերպվեցին Երևանում, հանրապետության մյուս բնկավայրերում, որտեղ ելույթ ունեցող կանայք, դատապարտելով տեղի ունեցածը, պահանջեցին կանխել Հյուսիսային Արցախում կատարվող բռնությունները: ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների, այդ թվում կին-պատգամավորների 1991թ. մայիսի 27-ի նամակը՝ ուղղված ԽՍՀՄ իշխանություններին, բողոք էր ապրիլ-մայիս ամիսներին ադրբեջանական հատուկ նշանակության զինված ջոկատների և խորհրդային բանակի զինվորների կողմից համատեղ իրականացված բռնությունների, տեղահանությունների դեմ, ինչպես նաև խնդրանք՝ նպաստելու իրավիճակի կարգավորմանը²: Նշենք, որ այդ օրերին Արցախից ոչ միայն ժողովրդական պատգամավորների, նաև հասարակական մի շարք կազմակերպությունների կողմից դիմում-բողոքներ ուղղվեցին կենտրոն, որոնցում դատապարտվում էին շարունակվող բռնությունները Լեռնային Ղարաբաղում և պահանջում դադարեցնել այն:

¹ Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ. Գոյության պայքար, գիրք Բ., էջ 89:

² ԼՂՀ ՊԱ, ֆ. 1, ց. 1, գ. 46, թ. 36:

1991թ. մայիսին ԽՄԿԿ Կենտկոմի պլենումում ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Լյուդմիլա Հարությունյանն դիմեց Միության ղեկավարությանը. «Հենց այս րոպեներին հայկական Գետաշեն և Մարտունաշեն գյուղերում մղվում են արյունահեղ մարտեր: Պլենումի դահլիճում նստած են մարդիկ, որոնք իրենց ձեռքերում են պահում դրանց կառավարման լծակները: Հենց այս պահին բռնագաղթի է ենթարկվում հայկական երկու գյուղերի բնակչությունը: Այդ գործընթացի լծակները նույնպես գտնվում են այս դահլիճում նստած մարդկանց ձեռքերում: ԽՄԿԿ Կենտկոմի պլենումը կարող է լիակատար իրավունքով նրանց հարցնել. «Ե՞րբ վերջապես կավարտվի պատերազմը և խաղաղություն կհաստատվի այդ տարածքում»: Այդ հարցն այլևս չի կարող անպատասխան մնալ: Սակայն կուսակցությունը նույնպես չի ուզում այդ հարցը տալ, բայց ես չեմ կարող չհարցնել դարաբաղյան դրամայի հերոսներին. «Ի՞նչքան կյանքեր են անհրաժեշտ դեռևս, որպեսզի կշտացնեք պատերազմի մողորին ԼՂԻՄ-ում»¹: Ուշագրավ է այն հանգամանքը, որ Լյուդմիլա Հարությունյանի արտասանածն այն ելույթներից էր, որտեղ դեմ առ դեմ խորհրդային ղեկավարության հետ քննարկելով հիմնախնդիրը, նրանք մեղադրվում էին կատարված դեպքերի և պատերազմ հրահրելու մեջ: Հետագա իրադարձությունը՝ պարտադրված պատերազմը, ևս փաստեց այն, որ կենտրոնի համաձայնությամբ նախօրոք պատրաստված էր հրեշավոր ծրագիր, ինչը ձախողվեց հայ ժողովրդի համառ կամքի շնորհիվ, այն էլ՝ մեծ զոհողություններով:

Մայիսյան առաջին օրերին հայ բնակիչներից դատարկվել էին Գետաշենը և Մարտունաշենը, և տագնապը պաշարել էր ամբողջ հայ ժողովրդին: Բողոքի ու դատապարտումի, օգնության ու պաշտպանության կանգնելու կոչեր, դիմումներ, ուղերձներ ու հայտարարություններ էին հղվում ԽՍՀՄ ղեկավարությանը, աշխարհի տարբեր երկրներին և միջազգային կազմակերպություններին: 1991թ. մայիսի 9-ին հայ կանանց խորհրդի նախագահության ընդլայնված նիստը, քննարկելով Գետաշենի և Մարտունաշենի հայ ազգաբնակչության բռնի տեղահանման փաստը, ինչպես նաև

¹ Ուլուբաբյան Բ., նշվ. աշխ., էջ 223:

Հայաստանի սահմանամերձ շրջաններում խորհրդային բանակի կողմից սանձազերծված բռնությունների հետ առնչվող հարցերը, ընդունեց բողոքի դիմում՝ ուղղված ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղար Պերես դե Կուելյարին, Մարդու իրավունքների հանձնաժողովին, կանանց, երեխաների և ընտանիքի հարցերով զբաղվող փորձագետների խմբին, Միության հանրապետությունների կանանց կազմակերպություններին, զանգվածային լրատվության միջոցներին: Դիմումի մեջ, մասամբ, նշված էր, որ Լեռնային Ղարաբաղի շուրջ հայ-ադրբեջանական հակասությունները վերջին երեք տարիների ընթացքում կենտրոնի կողմից ոչ միայն չստացան խելամիտ, քաղաքական լուծում, այլև արհեստականորեն փոխադրվեցին ռազմական գործողությունների ոլորտ: Ադրբեջանի ենթակայության հայկական, իսկ այժմ արդեն հենց Հայաստանի գյուղերը դարձել են հարձակումների, թալանի, բռնության օջախներ, որոնք խորհրդային բանակի և ներքին զորքերի ստորաբաժանումների լայնածավալ աջակցությամբ կատարում են ադրբեջանական օմոնականները: Ռազմական գործողությունների ժամանակ օգտագործվում են զրահամեքենաներ, հրետանի, գյուղերը ենթարկվում են տևական շրջափակումների, տուժում են կանայք, երեխաներ և ծերունիներ¹:

Կատարվող դեպքերի վերաբերյալ, հեռագրով դիմում ուղարկվեց Մոսկվա նաև ԼՂԻՄ «Մայրություն» հիմնադրամի կողմից: Հեռագրով մասնավորապես հաղորդվում է, որ ադրբեջանական օմոնականների լկտիացած հրոսակախմբերը ԽՍՀՄ ղեկավարության թողտվությամբ և ներքին զորքերի օժանդակությամբ իրականացնում են հայերի բռնի տեղահանություն: «Մայրության» հիմնադրամը կոչ է անում ռուս մտավորականությանը, Մոսկվայի հասարակությանը, բարի կամքի տեր բոլոր մարդկանց՝ բողոքի ձայն բարձրացնելու, կասեցնելու մարդկային իրավունքների ոտնահարման բոլոր փորձերն ու պահանջել խորհրդային երկրի նախագահից անհետաձգելի միջոցներ ձեռնարկել անմեղ մարդկանց սպանությունները դադարեցնելու համար և օգնություն խնդրում, հիշեցնելով, որ ամեն թույլ մեռնում են երեխա, կին, ծերունի²:

¹ «Հայաստանի Հանրապետություն», 1991, 11 մայիսի:

² “Голос Армении”, 1991, 15 мая.

«Օղակ» կոչվող ռազմական գործողության առաջին փուլով Գետաշենի ենթաշրջանի գյուղերից հետո սկսվեց Շահումյանի, Շուշիի, Հադրութի և ԼՂԻՄ-ի այլ շրջանների բնակիչների բռնի տեղահանության, հայրենազրկման, սպանությունների, վայրագությունների, թալանի, խոշտանգումների գրեթե 4 ամիս տևած գործողությունը, որը կատարվեց մի քանի փուլով¹:

Հիշյալ գյուղերի գրեթե բոլոր չափահաս տղամարդկանց նետեցին Շուշիի, Լաչինի, Ֆիզուլու բանտերը, որոնց մի մասին պիտի հոշոտեին, մյուսներին հաշմեին ու մեծ փրկագներով ազատ արձակեին:

Ի պաշտպանություն արցախահայությանը՝ Մոսկվայից իր վրդովմունքն արտահայտեց «ԿՐԻԿ»-ը՝ Ռուսաստանի մտավորականության «Ղարաբաղ» կոմիտեն, որը ստեղծվել էր 1991թ. մարտի 20-ին՝ Ռուսաստանի գրողների «Ապրիլ» ընկերության անդամների կողմից: Նրա հիմնադիր 22 անդամների թվում էին նաև Գալինա Նույկինան, Գալինա Ստարովոյտովան, Ինեսա Բուրկովան, Սեդա Վերմիշևան, Անահիդա Բեստալաշվիլին²: Հարկ է նշել, որ նրանցից ոմանք գոյապայքարի տարիներին բազմաթիվ անգամ այցելել են Արցախ, տեղում ուսումնասիրել իրավիճակը, իրենց հրապարակային ելույթներում ներկայացրել իրական պատկերը՝ ահազանգելով կատարվող անօրինությունների մասին: Ուշագրավ է «ԿՐԻԿ»-ի հիմնադիր ժողովի հայտարարության մեջ, ԽՍՀՄ իշխանություններին ներկայացվող մի շարք պահանջներից հետևյալը. «ԼՂԻՄ-ի, Շահումյանի շրջանի և Գետաշենի ենթաշրջանի սահմաններում ժողովրդագրական իրավիճակի կանխամտածված փոփոխման հանգեցնող քաղաքականության կասեցում»³: Կոմիտեի առաջին իսկ միջոցառումների մեջ ծրագրվեց նախատեսել բժշկական օգնություն Արցախի բնակչությանը, իրականացնել մարզի գյուղերի տնտեսության բազմակողմանի ուսումնասիրություն և օգնություն, ինչպես նաև բոլոր պաշտոնական շրջանակներում

¹ Դանիելյան Կ., նշվ. աշխ., էջ 124:

² "Правда", 1991, 20 августа. «ԿՐԻԿ»-ի (Комитет российской интеллигенции Карабах) հիմնադիր անդամներն էին Անդրեյ Նույկին, Թիմուր Գայդար, Վալենտին Օսկոցկի, Յուրի Չեռնիչենկո, Գալինա Նույկինա:

³ Թադևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 496:

բարձրացնել մարզի խնդիրները: Ապա «ԿՐԻԿ»-ը հայտնեց արդարացի քննություն անցկացնելու ու վճիռներ կայացնելու, իր անկախության համար մարտնչող արցախահայությանն օգնելու և իրավունքներն ամենուրեք պաշտպանելու պատրաստակամություն:

Այսպես, ռուս մտավորականության կոմիտեն, ի պաշտպանություն արցախահայության՝ ելույթներով, հողվածներով, հրապարակախոսությամբ հեղեղում էր մամուլը, հեռագրեր հղում մի շարք երկրներ, որոնցում մանրամասն ներկայացված էր Ղարաբաղում տիրող իրավիճակը: Հյուսիսային Արցախում կատարվող անմարդկային գործողությունների կապակցությամբ «ԿՐԻԿ»-ը դիմում է Ռուսաստանի խորհրդարանի անդամներին, որում ասվում է. «Կոմիտեն պահանջում է, որ Կենտրոնը դադարեցնի անազնիվ խաղը և անհապաղ հրաժարվի հակամարտության մեջ գտնվող կողմերից մեկի օգտին կանոնավոր բանակն օգտագործելուց: Ձեռնարկվող ահաբեկչության անմիջական պատասխանատվությունը կրում է Կենտրոնը... Եթե նմանօրինակ գործելակերպը չդադարեցվի, Կոմիտեն կենտրոնի գործողությունները կգնահատի որպես չհայտարարված պատերազմ հայ ժողովրդի դեմ»¹:

Արցախում առկա իրավիճակը շարունակում էր մտահոգել խորհրդային որոշ իրավական-հասարակական կազմակերպություններին, ու պատահական չէր, որ հիմնահարցը քննարկվում էր տարբեր միջոցառումների շրջանակներում: 1991թ. մայիսի 2-ին «Մեմորիալ»-ի մոսկովյան բաժանմունքի նիստին մասնակցում էին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավոր Լյուդմիլա Հարությունյանը, «ԿՐԻԿ» կամ «Ղարաբաղ» կոմիտեի համակարգող Սեդա Վերմիշևան և Ելենա Բոները: Ներկայացնելով վերջին շրջանի իրադարձությունները, նրանք այդ ամենը գնահատում են որպես ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի և ադրբեջանցի հատուկ ջոկատայինների համատեղ լայնածավալ ձեռնարկումներ՝ ընդդեմ Հյուսիսային Արցախի: «Մեմորիալ»-ի անդամներն այն համոզմունքին էին, որ կենտրոնը ԼՂԻՄ-ում, Շահումյանի շրջանում և Գետաշենի

¹ Հակոբյան Թ., նշվ. աշխ., էջ 95-96:

ենթաշրջանում հետևողականորեն հայերի ցեղասպանության և տեղահանության քաղաքականություն է իրականացնում¹:

Բռնություններից զերծ չմնացին նաև կին լրագրողները: Հայտնի է «Կոմսոմոլսկայա պրավդա» թերթի թղթակից Դարյա Ասլամովայի դեպքը, որը տեղի ունեցավ «Օղակ» գործողության ժամանակ: Այդ օրերին Օլեգ Ստարուխինի (օպերատոր) և երկու հայ ինքնապաշտպանների հետ նա գերի է ընկնում Հադրութի շրջանի Տող գյուղից Ստեփանակերտ վերադարձի ճանապարհին: Դարյա Ասլամովայի վկայությամբ օմօնականները կտտանքի ենթարկելով իրեն, ստիպում էին կրակել իր ընկերների վրա՝ դրա փոխարեն խոստանալով կյանք և ազատություն²: Իհարկե, դա չի արվում, որի մասին հետագայում վկայում է Դարյա Ասլամովան:

Ադրբեջանական օմօնականների կողմից թեկուզ և օտարազգի լրագրողների հետ նման վերաբերմունքի ցուցաբերումն ուներ իր պատճառը՝ թույլ չտալ լուսաբանել Արցախում տիրող վիճակը, հատկապես նրանց կողմից հայերի հանդեպ իրականացվող զանգվածային բռնությունները:

Շահումյանում 1991թ. բռնի տեղահանությունն այլ ձևով իրականացվեց: ԽՍՀՄ նախագահի 1991թ. հուլիսի 4-ի հրամանով Շահումյանի շրջանում վերացվեցին պարետային ժամն ու արտակարգ դրությունը: Հուլիսի 6-ի առավոտյան, երբ զինվորները պետք է հեռանային շրջանից, հատուկ գրոհայինները սկսեցին հարձակումը հայկական երեք գյուղերի վրա, որը հետ մղվեց հայ ինքնապաշտպանական ուժերի կողմից: Այնուամենայնիվ, 1991թ. հակառակորդի ճնշման տակ Հյուսիսային Արցախի գյուղերը սկսեցին դատարկվել: Մարդիկ հեռանում էին մեքենայով կամ տրակտորով, սայլով, ձիով, բայց հիմնական մասը՝ ոտքով: Կին, երեխա թե՛ ծեր, հիվանդ ու հաշմանդամ, օգնում էին մեկմեկու:

Պահպանված հուշագրություններում կանայք, խոսելով Շահումյանի բռնագաղթի մասին, վկայում են, որ շատերը զոհ գնացին կամ անհայտ կորան բռնի տեղահանության ճանապարհին: Տեղահանվածների շարանը, մեծ դժվարությամբ

¹ «Հայաստանի Հանրապետություն», 1991, 4 մայիսի:

² «Комсомольская правда», 1991, 11 мая.

հասնելով Հաթերք, շարունակեց գաղթի ճանապարհը դեպի Ստեփանակերտ, որտեղից էլ՝ Երևան¹:

Լսելով Շահումյանի ողբերգության մասին, օգնություն կազմակերպվեց: Ընդառաջ գնալով բռնի տեղահանվածներին, կանայք իրենց հետ տարած սննդամթերքը, հագուստը, բաժանեցին շահումյանցիներին: Փորձեցին նրանց տեղավորել Ստեփանակերտում, սակայն հատուկենտ մարդիկ միայն մնացին: Մարդկային չկարգավորված այդ հեղեղը հասավ Երևան, հետո տարածվեց տարբեր շրջաններ ու քաղաքներ, իսկ շատերն էլ հեռացան նախկին ԽՍՀՄ ամենատարբեր վայրեր և այլ երկրներ²:

1991թ. շրջափակման, բռնատեղահանումների, Արցախի համար ճակատագրական պահին բուլղարացի հայտնի հեռուստալրագրող, ռեժիսոր-վավերագիր Յվետանա Պասկալևան ինքնական ժամանելով տարածաշրջան՝ հեռուստառեպորտաժներ պատրաստելու համար, դարձավ Ադրբեջանի օմօնականների և խորհրդային զորքերի կողմից իրականացվող «Օղակ» գործողության ականատեսը: Նկարահանելով 1991թ. Հյուսիսային Արցախում կատարվող վայրագությունները, նա իր ռեպորտաժներով ոչ միայն խորհրդային իշխանություններին, այլ նաև ամբողջ աշխարհին հայտնի դարձրեց Գետաշենի և Շահումյանի տեղահանությունների, ինքնապաշտպանական մարտերի, նաև արցախահայության ազգային-ազատագրական պայքարի մասին: «Ես սեփական աչքերով տեսա Շահումյանի շրջանի բռնի տեղահանումը, «Օղակ» ռազմագործողությունը, ես այդ ամենը նկարահանել էի և ռուսական իշխանություններին, ամբողջ աշխարհին ցույց տվել ճշմարտությունն այն մասին, թե խորհրդային բանակի ձեռքով ինչպես է բռնատեղահանվում Հյուսիսային Արցախը և որ դա արվում է ըստ ազգային պատկանելության», - վկայում է Յվետանա Պասկալևան³: Ղարաբաղյան պատերազմի ժամանակ նա հանուն ճշմարտության որոշեց մնալ Արցախում և որպես լրագրող լուսաբանել հերոսամարտը: Այդ ընթացքում երկու անգամ վիրավորվեց, բայց շարունակեց իր գործը: Նա իր ռեպորտաժներն

¹ «Մոռվի դողանջներ», 1994, 9 մայիսի:

² Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. հողը կանչում է, էջ 590:

³ «Ազատ Արցախ», 2012, 10 մայիսի, թիվ 56:

ամփոփեց 7-մասանոց փաստավավերագրական կինոնկարում՝ վեց լեզվով, որը կրում է «Ղարաբաղի վերքերը» խորագիրը և ներկայացրեց միջազգային հանրությանը¹:

Այդ ողբերգական իրադարձությունների հորձանուտում հայտնված կանանցից ոմանք Շահումյանի անկումից հետո չհեռացան իրենց տներից, և այդպես էլ անհայտ մնաց նրանց ճակատագիրը, իսկ ոմանք էլ մահացան բռնագաղթի ճանապարհին:

Միջազգային ասպարեզում հայկական կողմին սատարող քաղաքական գործիչների առաջին շարքերում էր Մեծ Բրիտանիայի և Հյուսիսային Իռլանդիայի Միացյալ Թագավորության Լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսը: 1991թ. մայիսի 21-ին Մոսկվայում, ակադեմիկոս Անդրեյ Սախարովի 70-ամյակին նվիրված միջազգային կոնֆերանսին, նա տեղեկանալով Արցախում կատարվող դեպքերի մասին, համախոհների հետ ժամանեց Երևան, ապա՝ Արցախ²: Այն, ինչ տեսան բարոնուհին և պատվիրակության անդամները Շահումյանում, վեր էր բոլոր պատկերացումներից: Բարոնուհին³ խոստացավ այդ մասին տեղյակ պահել աշխարհի բոլոր կառավարություններին և այդպես էլ արեց: Հարկ է նշել, որ նա դրանով չավարտեց իր գործունեությունն Արցախի համար, ավելին, պատերազմի թեժ օրերին հաճախակի դարձան այցելությունները՝ տարբեր խմբերի ուղեկցությամբ, ինչպես նաև մարդասիրական օգնություններն արցախաբնակների համար:

Յուրաքանչյուր այցելության ժամանակ նոր թիմ էր ուղեկցում նրան և հաճախ դրանք տարբեր երկրներից բժիշկներ, քաղաքական գործիչներ, լրագրողներ էին: Հարկ է նշել, որ նրա կողմից 1992թ. փետրվարի սկզբից մինչև ապրիլի կեսերը կազմակերպվեց մարդասիրական օգնության հինգ չվերթ: Օդային ծառայությունների միջոցով Արցախ հասցվեցին մեծ քանակությամբ սննդամթերք, դեղորայք և այլ

¹ Ռեժիսոր-վավերագրի համար Հյուսիսային Արցախում կատարվածը վճռորոշ դեր խաղաց նրա կյանքում: Նա թողեց ուսումը և կրկին վերադարձավ Շահումյանի շրջան, որտեղ իրական պատերազմ էր: Նա ականատես եղավ Հյուսիսային Արցախում կատարվող սարսափելի իրադարձություններին՝ մարդկանց բռնատեղահանում իրենց տներից, սպանություն, խոշտանգում, որոնց շարքերում քիչ չէին ծերեր, կանայք ու երեխաներ: Նա իր պարտքը համարեց դրա մասին տեղյակ պահել աշխարհին:

² Арцах-Карабах, Энциклопедия, А-Е, стр.380.

³ Քերոլայն Քոքսը ծնվել է 1937թ. Լոնդոնում: Ղարաբաղյան հիմնահարցին ծանոթանալուց հետո նա հանդիպումներ էր կազմակերպում ԱՄՆ-ի, Կանադայի, ԳՖՀ-ի, Ֆրանսիայի և Անգլիայի դեսպանների հետ, որի ընթացքում ներկայացնում փաստեր Արցախում տիրող ծանր վիճակի մասին:

անհրաժեշտ պարագաներ, իսկ 1992թ. նրա նախաձեռնությամբ Արցախ բերվեցին («ԻԼ-76» բեռնատարով) անգլիական ռազմական շտապօգնության մեքենաներ¹:

Բարոնուհին² միջազգային ասպարեզում այն քաղաքական գործիչներից է, ով անգնահատելի գործունեություն ծավալեց հայ ժողովրդին օգնելու, սատարելու և նրա ձայնը միջազգային հանրությանը հասցնելու գործում:

«Միջազգային քրիստոնեական համերաշխության» ներկայացուցիչների և լրագրողների հետ, Բ. Քոքսի հերթական այցը Արցախ տեղի ունեցավ 1992թ. ապրիլին՝ Մարաղայի ողբերգական իրադարձությունների նախօրեին: Լորդերի պալատի փոխխոսնակը, ով գյուղ էր ժամանել ողբերգությունից երկու օր անց, Մարաղան կոչեց ժամանակակից Գողգոթա, միայն շատ ավելի սարսափելի:

1992թ. ապրիլի 10-ին Ադրբեջանի կանոնավոր բանակի կողմից Մարտակերտի շրջանի Մարաղա գյուղում հայ բնակչության հանդեպ իրականացվեց ցեղասպանություն, որի ժամանակ գյուղը հիմնովին ավերվեց: 1992թ. մայիսի 1-ի դրությամբ պատանդության մեջ գտնվող անձանց թիվը հասնում էր 57-ի, որոնցից 9-ը՝ երեխաներ, 29-ը՝ կին: Սպանվածների թիվը հասնում էր 59-ի, իսկ 19 բնակիչ համարվում էին անհայտ կորած³:

Բարոնուհու հավաստմամբ, այն, ինչ նրանք տեսան՝ նկարագրության ենթակա չէր: Գյուղն ամբողջովին ավերված էր: Մարդիկ թաղում էին զոհվածներին, ավելի ճիշտ այն, ինչ հնարավոր էր թաղել՝ տանջամահ արված, կենդանի այրված, կտրտված կամ սղոցված դիակի մասեր: Մի ամբողջ օր Բ. Քոքսը և Լոնդոնից ժամանած հեռուստալրագրող Վանյա Քուլին նկարահանեցին Մարաղայում կատարվածը: «Նրանք մարդկային ցեղից չեն», - այսպես արտահայտեց նա ադրբեջանցի զինվորականների

¹ Բալայան Զ., նշվ. աշխ., էջ 223 : Տե՛ս նաև «Մարտիկ», 2011, 15 փետրվարի, թիվ 22:

² 1992թ. հունվարին եղանակի անբարենպաստ պայմանները ստիպեցին Քոքսի պատվիրակությանը վայրեջք կատարել Մարտակերտի շրջանի Հոռաթաղ գյուղում: Ստեփանակերտ հասնելու համար նրանք ստիպված էին ճանապարհի մի մասը՝ բարձունքը, անցնել ոտքով: 1994թ. այդ բարձունքում տեղադրեցին բազալտե քար՝ երեք լեզուներով գրված «Քոքսի արահետ»: Տեղեկանալով այն մասին, որ ազատագրված տարածքներում ականների վրա հաճախ տեղի էին ունենում պայթյուններ, բարոնուհին աշխարհի տարբեր երկրներից Արցախ հրավիրեց ականագերծող մասնագետների: Նրա ջանքերով (1995թ.) Ստեփանակերտում հիմնվեց կլինիկա՝ «Միջազգային քրիստոնեական համերաշխություն» անունով: Ավելի ուշ այն դարձավ վերականգնողական կենտրոն՝ Բ. Քոքսի անունով: Պարգևատրվել է ԼՂՀ «Երախտագիտություն» մեդալով: Նրա 80-րդ հոբելյանական այցը Արցախ տեղի ունեցավ 2013թ. սեպտեմբերին: Նա Ստեփանակերտի պատվավոր քաղաքացի է:

³ «Հայաստանի հանրապետություն», 1992, 4 մայիսի:

մասին, որոնք սպանդ են իրականացրել Մարադայում: Բարոնուհին ոչ միայն նկարահանել և լուսանկարել է այդ ոճրագործությունը, այլև նկարագրել իր բազմաթիվ հարցազրույցներում և «Էթնիկ զտումները շարունակվում են» աշխատանքում¹:

Դեպքերից երկու շաբաթ անց, ապրիլի 22-23-ին Մարադան ենթարկվեց կրկնակի հարձակման, մոխրացած հայրենի գյուղ վերադարձած մարդիկ ստիպված եղան ընդմիջտ հեռանալ այնտեղից: Ականատեսների վկայություններով՝ ադրբեջանական ջոկատներում յուրաքանչյուր տասներորդը զինված էր ոչ միայն հրազենով, այլև յաթաղանով՝ 20-րդ դարասկզբին հայերի ցեղասպանությունն իրագործած թուրք դահիճների հիմնական զենքով:

1991թ. հակառակորդի հարձակումները լայնածավալ բնույթ էին ստացել ոչ միայն Շահումյանի, այլև Մարտակերտի շրջանում: 1991թ. մայիսի 15-ին օմօնականներն «անձնագրային ստուգման» պատրվակով ներխուժեցին Չլդրան գյուղ: Այդ օրերին շարժման ակտիվիստ Արևիկ Սարգսյանն աշխատում էր գյուղի կապի հանգույցում: Նրան հաջողվում է դեռևս գիշերը համագյուղացիներին նախապես տեղյակ պահել օմօնականների մասին, ինչի արդյունքում գյուղի տղամարդիկ փրկվում են ձերբակալությունից²: Գյուղն ուներ ինքնապաշտպանական ջոկատ, որի անդամները գիշերները գյուղը պաշտպանում էին թալանի եկող ադրբեջանցի ելուզակներից: Արևիկ Սարգսյանը ջոկատի հետ շատ հաճախ պահակակետերում էր գտնվում, միաժամանակ մասնակցում զենք ու զինամթերքի հայթայթմանը: Դեռևս 1988թ. հայրենի Չլդրան գյուղում աշխատանքի անցավ որպես հեռախոսավարուհի ու միևնույն ժամանակ շարունակեց մասնակցել Ստեփանակերտի ցույցերին, գաղտնի ստորագրահավաքին և թռուցիկների տարածմանը: 1988թ. մայիսին՝ Հայաստանի առաջին Հանրապետության տարեդարձին, նրա կազմակերպմամբ Չլդրանի գյուղխորհրդի շենքին ամրացվեց եռագույնը: Դրա համար նրան ձերբակալեցին և մեղադրեցին ազգամիջյան տարածայնություններ հրահրելու մեջ ու որպես պատիժ՝ նրան տնային կալանքի ենթարկեցին: 1989թ. փախչելով տնային կալանքից, իր հայրենանպաստ գործունեու-

¹ Кокс К. , Айбнер Д., նշվ. աշխ., стр. 42.

² Վարդումյան Հ., Աստվածների կանչը, էջ 69:

թյունը շարունակեց Ստեփանակերտում, որտեղ օգնություն հավաքելով, տեղափոխում էր Գետաշեն և Շահումյան: Հետագայում իր գործը շարունակեց ինքնապաշտպանական ուժերի շարքերում՝ մասնակից դառնալով մի շարք մարտական գործողությունների¹:

Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղում ստեղծված «Փառանձեմ»² ջոկատը, որի շարքերում կային նաև կանայք (Սիրանուշ Առուշանյանը (Սիրանուշ աքան), Քնարիկ Սիմոնյանը և այլոք) մասնակից դարձավ այն նշանավոր իրադարձությանը, որը տեղի ունեցավ 1991թ. օգոստոսի 13-ին: Ի՞նչն էր հաթերքցիներին ստիպել դիմելու հանդուգն ու միաժամանակ վտանգավոր քայլի: Անմիջական մղիչն այն էր, որ այդ օրը ռուս զինվորականները պատանդ էին վերցրել Հաթերքի բնակիչ Գեորգի Պետրոսյանին՝ ադրբեջանցի օմոնականներին հանձնելու նպատակով: Բացի այդ նախօրեին մերձակա գյուղերում խորհրդային զինվորական ստորաբաժանումները և ադրբեջանցի ավազակախմբերը դիմել էին վայրագությունների, ինչը վրդովմունք է առաջացրել հանրության մեջ: Այդ նպատակով հաթերքցիները՝ տղամարդ թե կին, միանալով ինքնապաշտպանական ուժերին, շրջապատեցին և զինաթափեցին գյուղ մտած խորհրդային բանակի զրահամեքենաները: Զինվորականների կողմից զենք ու զինամթերքի հանձնումը կատարվեց առանց դիմադրության: Այդ օրը հայ ինքնապաշտպանական ուժերը պատանդ վերցրին 32 զինվորների՝ նրանց հրամանատարների հետ միասին: Պատանդներին, Վերին Հոռաթաղի ջոկատի կողմից գերված 12 զինվորների հետ միասին (ընդհամենը 44 հոգի) տեղափոխեցին «Մեսիս» կոչված տեղամասի անտառ³: Որոշվեց նրանց ազատ չարձակել, մինչև չազատեն Գ. Պետրոսյանին և Շուշիի բանտում գտնվող 15 հայ բանտարկյալներին: Իր հերթին ռուս հրամանատարությունը որոշեց սկզբում պատժել հաթերքցիներին, այնուհետև ազատել ռուս զինվորներին: Այդ նպատակով գյուղը շրջափակվեց 600 զինվորներով, 100-ավոր զրահատեխնիկայով: Գյուղում ստեղծված օրհասական վիճակը ստիպեց կանանց

¹ Նույն տեղում:

² «Փառանձեմ»-ը կանանց ջոկատ էր ներկայանում Մոսկվայի իշխանություններին հայ կամավորականների դեմ չտրամադրելու, արդեն իսկ լարված իրավիճակը չարելու համար:

³ “ Республика Армения”, 1991, 29 сентября.

համապատասխան քայլեր ձեռնարկել: Օգոստոսի 15-ին հաթերքցի կանայք (Քնարիկ Սիմոնյան, Թամարա Պետրոսյան, Էլեոնորա Առստամյան) հեռագիր հղելով Մ. Գորբաչովին և Բ. Ելցինին, առաջարկեցին զինվորներին հետ պահել ռազմական գործողություններից, հակառակ դեպքում՝ կոչնչանան գերվածների հետ միասին: Այդ դիմումն Արցախյան գոյապայքարի մասին բազում փաստաթղթերի մեջ հայ կանանց ոգին բնորոշող մի փաստաթուղթ է, որը պետք է մնա գալիք բոլոր դարերի համար: Հեռագրում, մասնավորապես, նշվում էր, որ Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղի մի խումբ կանայք ստիպված եղան, իբրև ծայրահեղ միջոց, պատանդ վերցնել ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի զինվորների և սպաների: Ադրբեջանական ավազակախմբերը, օգտագործելով ԽՍՀՄ ՆԳՆ ներքին զորքերի ներուժը, երկար ժամանակ պատանդ են վերցնում հայերին, հանձնում ադրբեջանական իշխանություններին: Վերջին երեք ամսվա ընթացքում օժոնականները ներքին զորքերի աջակցությամբ բռնագաղթի են ենթարկել տասնյակ հայկական գյուղերի բնակիչների, կալանքի տակ առել 500 մարդու: Արցախի մայրերը մեկ պայման են դնում՝ վերադարձնել իրենց զավակներին, որոնք գտնվում են ադրբեջանական կալանատներում, խոստանալով, որ մի մազ անգամ չի պակասի խորհրդային զինվորներից, ովքեր զենք են դարձել ադրբեջանական ղեկավարության ձեռքին՝ նրա հակահայկական անմարդկային քաղաքականության համար: Նրանք նշում են, որ եթե զինվորները պատանդներին փրկելու պատրվակով ուժ գործադրեն, ապա կանանց խումբը կպայթեցնի իրեն՝ պատանդների հետ միասին¹:

Այդ հիշարժան իրադարձությունների մասին տասնյակ հոդվածներ տպագրվեցին կենտրոնական «Պրավդա», «Իզվեստիա», «Կոմսոմոլսկայա պրավդա», «Կոմերսանտ», «Մոսկովսկայա պրավդա» թերթերում: Հաղորդումներ եղան նաև ռադիոյով և հեռուստատեսությամբ: «Ինֆորմ կուրանտի» թերթում «Հայ կանայք պատրաստ են մահվան» վերնագիրը կրող հոդվածում ընթերցում ենք. «ԼՂԻՄ Մարտակերտի շրջանի Հաթերք-Ջագիկ ճանապարհին գրահամեքենայից կրակ է բացվել «Ժիգուլի» ավտոմեքենայի վրա, մեկ մարդ սպանվել է, մյուսը՝ վիրավորվել, ինքնապաշտպանական ուժերը հակահարված են տվել՝ գրավելով 8 գրահամեքենա, 34

¹ “Голос Армении”, 1991, 17 августа.

զինվոր գերի է վերցվել: Ինքնապաշտպանական ուժերի ներկայացուցիչներն առաջարկում են գերիներին փոխանակել պատանդների հետ: Զինվորականները մերժել են այդ առաջարկը և պահանջել անհապաղ ազատել գերիներին՝ սպառնալով լայնածավալ գործողություններով»¹: Հարկ է նշել, որ ոչ թե գրավել էին 8 գրահամքենա, այլ մեկ իսկ պատանդ վերցված զինվորների թիվը ոչ թե 34 էր, այլ 44²:

Հաթերքում պատանդ վերցված խորհրդային զինվորներին ազատ արձակելու համար, բանակցություններ վարելու նպատակով, Մոսկվայից Հաթերք ժամանեցին բարձրաստիճան պաշտոնյաներ, կանանց խորհրդի անդամներ, լրագրողներ, ինչպես նաև Երևանի և Ստեփանակերտի ներկայացուցիչներ: Նախքան բանակցությունների սկսելը, Հաթերքում կազմակերպվեց հանրահավաք՝ թվով 600-700 մարդու մասնակցությամբ: Նրանցից շատերը ելույթ ունեցան և իրենց բողոքներն ուղղեցին կենտրոնից ժամանածներին: Հանրահավաքում խոսվեց շարժման պատճառների, նպատակների և խորհրդային զինվորների ու Ադրբեջանի ՆԳՆ օմօնական ջոկատների բռնությունների մասին: Իր ելույթում ուսուցչուհի, ազգությամբ ռուս Թամարա Պետրոսյանը, մասնավորապես, ասաց. «...Երեխաներին դաստիարակում են եղբայրության ու բարեկամության ոգով, մինչդեռ իմ ռուս եղբայրները բռնություններ են գործում ինչպես մեր գյուղում, այնպես էլ ամբողջ Ղարաբաղում, ուր հայերի հետ համերաշխ ապրում են նաև ռուսներ: Ժողովրդի ծոցից ծնված զինվորները պետք է պաշտպանեն իրենց ծնող ժողովրդին և ոչ թե բռնություն գործեն նրա նկատմամբ: Ես նրանց՝ իմ ռուս եղբայր զինվորների փոխարեն ամաչում եմ: Իմ ռուս եղբայրներ, մի նեղե՛ք հայերին, նրանք այլ նպատակ չունեն, քան մարզի միավորումը Հայաստանի հետ: Հայերի շարժումն արդար է, և արդարությունը կհաղթի: Եկեք այնպես անենք, որ մենք ամոթով չմնանք հայերի մոտ, միևնույն է՝ Ղարաբաղն անկախ կլինի: Արցախահայությունը որքան համբերող և տանող է, այնքան էլ անողորք է բռնակալի, ոսոխի հանդեպ, նրա օրինական իրավունքները ոտնահարողի նկատմամբ, իսկ ադրբեջանցին իսկական բռնակալ է: Լավ իմացեք և հաստատ համոզված եղեք, որ ղարաբաղցիները չեն ցանկանում սպանել ռուս զինվորներին: Միայն ձեզ մի խնդրանք՝

¹ “Информкурранты” , 1991, 18 августа.

² Հեղինակի անձնական արխիվ, Սիրանուշ Առուշանյանի պատմածից:

այստեղից տարեք ռուս զինվորներին, շատ եմ խնդրում՝ տարեք նրանց այստեղից: Հայերը չեն ցանկանում սպանել խորհրդային բանակի ռազմիկին...»¹:

Բնակչության հետ հանդիպումից և հավաքից հետո, ինքնապաշտպանական ջոկատի և պատվիրակության միջև կայացած բանակցությունների արդյունքում զինվորներն ազատ արձակվեցին: Պատվիրակության կազմում էին նաև Զինծառայողների ծնողների միութենական խորհրդի անդամ Ելենա Լունինան, գրող Ինեսա Բուրկովան: Ծանոթանալով գործին, նրանք իրենց պարտքը համարեցին յուրաքանչյուրն իր գծով կենտրոնին հաղորդել ճշմարիտ, սպառիչ տեղեկություններ և պահանջել, որպեսզի քայլեր ձեռնարկվեն արցախահայության դեմ կատարվող բարբարոսություններին վերջ տալու համար: Ելենա Լունինան մամուլում հրապարակելու համար հետևյալ հայտարարությունն արեց. «Բոլորովին անտեղյակ մարդը ծանր կտանի այս բոլորը... Ես եղել եմ Շահումյանի շրջանի Վերինշենում: Չէի ենթադրում, որ կհանդիպեմ այս տղաներին: Հենց սրանք են վերջինը դուրս եկել Շահումյանից: Հուլիսի 22-ն էր: Դուք տեսնեիք, թե ինչի էր վերածվել այն դպրոցը, որտեղ իրենք էին տեղակայված եղել: Պատուհաններին ապակի չկար այլևս, ապակու տեղը ավազով լի պարկեր էին շարված: Վերև զինատեսակներ՝ փողերն ուղղված խաղաղ մարդկանց տների վրա... Ես ուզում եմ նրանց անունները հրապարակել, կապ ստեղծել նրանց ծնողների հետ: Որ իրենք չեն կարող պաշտպանել ու աջակցել դահիճներին: Ոչ ոք չի կարող պաշտպանել նրանց, որոնք բանակ են գնում կողոպտելու, բռնանալու, սպանելու համար...»²: Ե. Լունինայի վկայությունները հավաստում են, որ արցախցիները գործ ունեին բռնարարների հետ, որոնց սաստելու և պատժելու համար կամավորական ջոկատն արեց ամեն ինչ:

Օգոստոսյան իրադարձություններին անդրադարձած «Կրասնայա զվեզդա» թերթը օգոստոսի 21-ի համարում հայտարարում է, որ շուտով ամբողջ երկիրը ճանաչելու է Լեռնային Ղարաբաղի բոլոր բնակավայրերի մասին, քանի որ նրանցում իրար հետևից տեղի էին ունենում մեկ շատ տագնապալի և վտանգավոր, մեկ բացարձակ ողբերգական իրադարձություններ: Ահա հիմա էլ ևս մեկ գյուղ՝

¹ «Արտիկ», 1995, 20 օգոստոսի, թիվ 23:

² "Голос Армении", 1991, 22 августа.

Մարտակերտի շրջանի Հաթերք գյուղը: Այստեղ զինված հայկական կազմավորումները շարունակում են պահել նախկինում գերված ԽՍՀՄ ներքին զորքերի սպաներին ու զինվորներին: Վերջին տեղեկություններով հայտնի է դարձել, որ նրանք 44 հոգի են եղել: Հայտնի է դարձել նաև, որ նրանցից երեքն ազատ են արձակված: Բանակցությունները զինված կազմավորումների միջև շարունակվում են: Կանայք և երեխաները դարձել են մարտական զինանոցի միջոցներից մեկը: Ահա և հիմա հայ կանանցից մի խումբ սպառնում է պայթեցնել իրենց պատանդների հետ միասին, վերջիններիս ազատելու նպատակով ուժի գործադրման դեպքում¹:

Հարկ է նկատել, որ օգոստոսի 13-ի դեպքերը լավ դասեր էին ռուս զինվորների համար: Դա Խորհրդային Միության պատմության մեջ առաջին աննախադեպ դեպքն էր, այն էլ՝ կանանց մասնակցությամբ, որն իր վրա բևեռեց ողջ երկրի ուշադրությունը: Հակառակորդը համոզվեց, որ գործ ունի անընկճելի ժողովրդի հետ:

Արժե հիշատակել այդ դեպքերին Հաթերք գյուղում հաջորդած ևս մի իրադարձության մասին, որը նույնպես կանանց մասնակցությամբ նոր դաս եղավ օմոնականների կողմից ուղեկցվող մի խումբ խորհրդային զինվորների համար: Օգոստոսի 28-ին «անձնագրային ստուգման» պատրվակով նրանք մտան Հաթերք գյուղի «Կյոք» թաղամաս և սկսեցին խուզարկել բնակարաններն ու թալանել: Գյուղից դուրս գալու ժամանակ կանայք շրջապատեցին նրանց՝ քարերով, փայտերով, ով ինչով կարող էր և հերթական դասը տվեցին²:

Ինչպես բոլոր ժամանակներում, այնպես էլ Արցախի ազգային-ազատագրական պայքարի տարիներին՝ հայ ժողովրդի համար բախտորոշ պահին, հայ կինը հիացմունքի արժանի ձեռներեցություն ու խիզախություն ցուցաբերեց՝ մշտապես հանդես գալով հայ տղամարդու կողքին կամ թիկունքին: Այդ հիշարժան դեպքերից հետո, շատ կանայք շարունակեցին հայրենիքի պաշտպանության գործը՝ մասնակցելով մի շարք ռազմական գործողությունների:

¹ "Красная звезда", 1991, 21 августа.

² Աղաջանյան Մ., նշվ. աշխ., էջ 412: Հաթերքի հայտնի իրադարձությունների օրերին Թալինի շրջանի Ներքին Սասնաշեն գյուղի կանայք գլխաշոր ուղարկեցին հաթերքցի կանանց հետևյալ մակագրությամբ. «Ընդունեք ձեռագործ այս շալը և խնդրում ենք տալ այն ֆիդայուհուն, որը կովել գիտի սասունցիաբար»:

1991թ. աշնանը հակառակորդի անօրինությունները շարունակվեցին, և հակամարտությունն սկսեց օրեցօր ավելի սուր բնույթ կրել: Նման իրավիճակում հարյուրավոր կանայք կատարում էին նաև հասարակական-քաղաքական լայն աշխատանք՝ նվիրված երկրի պաշտպանությանը: Արցախի համար դժվարին օրերին ծնվեցին «Գթություն», «Հիշատակ», «Մայրություն» հիմնադրամներն ու մարդասիրական կազմակերպությունները, որոնց նախաձեռնողները հիմնականում կանայք էին: Այդ կազմակերպություններն օգնություն էին ցուցաբերում հաշմանդամներին, որբ երեխաներին, կարիքավոր ընտանիքներին, փախստականներին: Կինխորհրդի նախաձեռնությամբ «Գթություն» բարեգործական միությունը և «Մայրություն» հիմնադրամը կազմակերպում էին կանանց խմբեր, որոնք գուլպաներ էին գործում և ուղարկում ազատամարտիկներին, ինչպես նաև կատարում մի շարք հասարակական աշխատանքներ:

«Մայրություն» հիմնադրամը, որը ստեղծվել էր 1988թ. մայիսի 25-ին Արցախյան շարժման ու պայքարի տարիներին ձեռնամուխ եղավ բարեգործական աշխատանքների իրականացման և կանանց համախմբման գործին, հատկապես ազատագրական պայքարին նվիրված քարոզչական աշխատանքներին¹: Հիմնադրամի ստեղծմամբ Արցախում ձևավորվեց կանանց շարժում: Կազմակերպության նշանաբանն էր՝ «Գթասրտություն առանց սահմանի»²: Ազատագրական շարժման հենց առաջին օրվանից կազմակերպությունը դարձել էր քաղաքական շտաբ՝ ազգային ինքնորոշման իրավունքի, մարդու, մոր և մանկան համար մղվող պայքարում: Հիմնադրամը ինքնապաշտպանական ջոկատներին օգնում էր ոչ միայն սննդամթերքով, դեղամիջոցներով, դոնորական միջոցներով, այլև խնամք էր իրականացնում հոսպիտալներում: Հաշմանդամներին, որբ երեխաներին, անապահով ընտանիքներին օգնություն ցուցաբերելուց բացի, հիմնադրամն Արցախի կանանցից պատգամավորական խմբեր էր գործուղում տարբեր երկրներ՝ տեղերում հավաքներ կազմակերպելու նպատակով, ինչպես նաև ակտիվորեն մասնակցում Ադրբեջանից բռնագաղթածների ընդունման աշխատանքներին:

¹ «Մայրություն» կազմակերպությունը հիմնադիրն էր բանաստեղծուհի Մարո Մարգարյանը:

² «Հայաստանի Հանրապետություն», 1993, 15 մայիսի:

«Մայրություն» հիմնադրամի պատվիրակները 1992թ. հոկտեմբերին Երևանում տեղի ունեցած կանանց միջազգային հանձնաժողովի նիստում հանգամանալի ներկայացնելով Արցախում տիրող ծանր իրավիճակը, աշխարհի կանանց միջազգային կազմակերպությունից պահանջեցին կոնկրետ գործնական մասնակցություն ցուցաբերել հիմնախնդրի խաղաղ կարգավորմանը: Հանձնաժողովը դատապարտեց Ադրբեջանի գործողությունները, արգելված զենքի օգտագործումը խաղաղ բնակչության դեմ և ընդունեց հռչակագիր, որով աշխարհի կանանց կոչ արեց համախմբել ժողովրդավարական ուժերին՝ հանուն մարդու իրավունքների հաստատման և խաղաղության, ընդդեմ բռնության և պատերազմի¹: Հետագայում «Մայրություն» բարեգործական կազմակերպությունն ստեղծեց «Մարտական երախտագիտության Արցախի քաջորդիներին» մեդալը, որի առաջին հանձնումը տեղի ունեցավ 1993թ. մայիսի 9-ին՝ Շուշիի ազատագրության առաջին տարեդարձի օրը²:

1990-ականներին՝ դժվարին օրերին շարունակվում էր «Արցախ» հայրենակցական միության ակտիվ գործունեությունը: Միության համաժողովներում հաճախ էին լսվում կազմակերպության կին-անդամների ելույթները, որոնցում նրանք հանդես էին գալիս կոնկրետ առաջարկություններով՝ հօգուտ Արցախի սոցիալ-տնտեսական կյանքի բարելավման, ինչպես նաև իրենց մասնակցությունն ցուցաբերում ազգային-ազատագրական պայքարում: Հարկ է նկատել, որ միության քարտուղար Լարիսա Ալավերդյանը գործուն մասնակցություն ուներ փախստականների տեղաբաշխման, օրենսդրական, կազմակերպչական, տեխնիկական և մարդասիրական խնդիրների ապահովման, հակամարտության իրավական և քաղաքական լուծումների վերաբերյալ փաստաթղթերի պատրաստման ու տարածման, պատանդների, ռազմագերիների փոխանակման աշխատանքներին³: Միության կողմից 1991թ. հունիսի 18-ին Երևանի կամերային թատրոնում կազմակերպված ասուլիսում՝ «Մարդու իրավունքների խախտումն Ադրբեջանում» թեմայով, քաղաքական գործիչները, ՋԼՄ

¹ «Արցախ», 1992, 23 հոկտեմբերի:

² «Հայաստանի Հանրապետություն», 1993, 15 մայիսի:

³ Խաչատրյան Հ., նշվ. աշխ., էջ 26:

ներկայացուցիչները, Գետաշենի, Մարտունաշենի և ԼՂՀ-ում տեղի ունեցած իրադարձությունների ականատեսները մերկացրին Ադրբեջանի բարբարոսական գործողությունները հայ ժողովրդի նկատմամբ և պահանջեցին նոր «Նյուրնբերգ» կազմակերպել Ադրբեջանի իշխանությունների նկատմամբ¹: Ելույթ ունեցան նաև Մոսկվայում գործող զինվորական մայրերի խորհրդի անդամ Լյուբով Կուզնեցովան, Հայաստանի «Զինվորի մայր» հասարակական կազմակերպության կոմիտեի նախագահ Գրետա Միրզոյանը, Հայաստանի բարեկամների ընկերության համանախագահ Գալինա Կուլիկովան:

Կանայք հերթական քաղաքական նախաձեռնությամբ հանդես եկան 1991թ. օգոստոսի 14-18-ին Մոսկվայում կայացած «Եվրոպայի միջուկային զինաթափման միջազգային հասարակական շարժման» 10-րդ կոնֆերանսում: Միջոցառման մասնակից կազմակերպությունները՝ «Հայ կանանց միություն», «Զինվորի մայր», «Արցախ» ՀԲԿ, ներկաների շրջանում տարածեցին տեղեկատվական նյութերի ծրարներ՝ ռուսերեն, անգլերեն և գերմաներեն լեզուներով, որոնցում մերկացվում էին «Օղակ» հանցավոր ռազմագործողությունը և հատկապես խորհրդային զինված ուժերի հանցագործությունները: Ցուցադրվեցին լուսանկարներ, որոնք ստույգ տեղեկություններ էին պարունակում Լեռնային Ղարաբաղի բնակչության ազատագրական պայքարի մասին: Հենց այդ օրերին՝ Մոսկվայում, կոնֆերանսի նիստերի ժամանակ, Հաթերք գյուղում տեղի էին ունենում «Փառանձեմ» ջոկատի գործողությունները:

«Արցախ» հայրենակցական միության հետ համագործակցում էին Ելենա Բոները, Գալինա Ստարովոյտովան, Քերոլայն Քոքսը, Ցվետանա Պասկալևան: Վերջինս հաճախ հայրենակցականի աջակցությամբ նկարահանումներ էր կատարում Արցախում²:

Կանանց կողմից շնորհակալական խոսք էր հնչում նաև ԽՍՀՄ այն մտավորականների հասցեին, ովքեր աշխարհին ներկայացնելով հիմնախնդիրը, Արցախում կատարվող բռնությունները, պահանջում էին արդարացի լուծում տալ դրան: 1991թ. հոկտեմբերի 24-ին Ստեփանակերտի կանանց կողմից (Համեստ Դանիելյան, Նինա Դավթյան, Արինա Հակոբյան) շնորհակալական նամակ հղվեց «Իզվեստիա» թերթի

¹ Աբրահամյան Հ., Երբ հայրենիքը վտանգի մեջ է, էջ62:

² “Зов Арцаха”, 1993 март, N 1.

խմբագրությանը՝ Անդրեյ Նույկինի հեղինակությամբ «Ղարաբաղյան օրագիր» վերնագրով հոդվածի տպագրության համար: Հոդվածում, մասնավորապես, ներկայացված էր «Օղակ» ռազմագործողությունը և դրա հետևանքով Լեռնային Ղարաբաղի ունեցած կորուստները¹:

1991թ. իրադարձությունները շատ արագ էին ընթանում: ԽՍՀՄ տարածքում գտնվող ազգային միավորները ձգտում էին անկախության:

1991թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի Գերագույն Խորհուրդը հռչակագիր ընդունեց 1918-1920թթ. մուսավաթական հանրապետության սահմաններում անկախ պետության վերականգնման և ԽՍՀՄ կազմից դուրս գալու մասին²: Սույն ակտը փաստորեն նշանակում էր հրաժարում ԽՍՀՄ սահմանադրությունից և միութենական պայմանագրից: Դա նաև նշանակում էր, որ Ադրբեջանը կամավոր հրաժարվում է ԽՍՀՄ սահմանադրության իրավական ուժով Լեռնային Ղարաբաղի հանդեպ պետական իշխանություն իրականացնելու իրավունքից: Հիմք ընդունելով այդ իրողությունը, 1991թ. սեպտեմբերի 2-ին ժողովրդական պատգամավորների Լեռնային Ղարաբաղի մարզային և Շահումյանի շրջանային խորհուրդների համատեղ նստաշրջանը ընդունեց ԼՂՀ անկախության մասին հռչակագիր (դեկլարացիա): Այսպիսով իրականացվեց մի իրավունք, որն արտացոլված էր այն ժամանակ գործող օրենսդրության մեջ, մասնավորապես 1990թ. ապրիլի 3-ի «ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու հետ կապված հարցերի որոշման կարգի մասին» ԽՍՀՄ օրենքում, որը նախատեսում էր ազգային ինքնավարություններին իրավունք տրամադրել ինքնրոյն կերպով որոշելու սեփական պետահրավական կարգավիճակը ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալու դեպքում³:

Նշենք, որ նստաշրջանին մասնակցեցին մարզային խորհրդի 147 պատգամավորներից՝ 102-ը: Ներկա էին նաև ԽՍՀՄ և Հայաստանի (90 հոգի),

¹ ԼՂՀ, պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 46, թ. 125:

² Ազիզբեկյան Ռ., Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», Երևան, 2005, թիվ 1, էջ 25:

³ ԼՂՀ պետարխիվ, ֆ. 1, ց. 1, գ. 46, թ. 8-10:

Լեռնային Ղարաբաղի քաղաքային և շրջանային խորհուրդների պատգամավորներ, մարզխորհրդի տարբեր բաժինների վարիչներ, ձեռնարկությունների, կազմակերպությունների ղեկավարներ:

Նստաշրջանում ելույթ ունեցողների թվում էին Տատյանա Սոբոլեվան և Լիդիա Սարգսյանը: Վերջինս, մասնավորապես, կարևորեց. «Այստեղ պատգամավորները ճիշտ ասացին, որ մեզ անընդհատ ներկայացնում էին սահմանադրական պահանջներ: Այժմ մենք ենք ներկայացնելու... Պետք է ԼՂԻՄ-ի անունից խնդրենք ժողպատգամավորների համագումարին՝ որոշել մեր կարգավիճակը, իսկ մենք ուզում ենք լինել ինքնուրույն...»¹:

Փաստորեն, նստաշրջանը արտահայտելով ժողովրդի կամքը, (որն ամրագրվեց հետագայում՝ 1991 թվականի դեկտեմբերի 10-ին անցկացված հանրաքվեում) որոշեց.

«Ընդունել ներկայիս Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի և սահմանակից Շահումյանի շրջանի սահմաններում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հոչակման մասին հոչակագիր»²:

ԼՂՀ հոչակմամբ արցախահայությունը նորից հաստատեց ազատության համար մինչև վերջ պայքարելու իր վճռականությունը և պատահական չէր, որ այդ օրերին կանանց կողմից հնչում էին հայտարարություններ ի պաշտպանություն պետականության կերտման և միաժամանակ դատապարտվում 1991թ. գարնանը և ամռանն Արցախում իրականացված բռնությունները: Այդ առթիվ 1991թ. սեպտեմբերի 19-ին կենտրոնական հեռուստատեսության «Վեստի» լրատվական ծրագրի թողարկմանն Իրինա Բուրկովան Անդրեյ Նույկինի հետ քննարկելով Ղարաբաղյան հիմնախնդիրը, նույնպես դատապարտեց Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության հանդեպ գործադրվող անօրինությունները: Դրանց համարժեք օրինակ բերելով Նախիջևանի վիճակը, նա պահանջեց պատժել դրանց կազմակերպիչներին ու հետ վերադարձնել բռնագաղթածներին³:

¹ Բաղդյան Վ., Տեսադաշտ 1988-1994, էջ 85-87:

² Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն (1991թ. օգոստոս-1992թ. հունվար) փաստաթղթեր, էջ 92:

³ ԼՂՀ պետարխիվ, ֆ.1, ց.1, գ.46, թ.66:

Ի դեպ, նկատենք, որ ԽՍՀՄ բարձրագույն իշխանության մարմինները լռելյայն ընդունեցին ԼՂՀ հռչակման մասին արցախահայության որոշումը, մինչդեռ ԼՂԻՄ-ի մասին Ադրբեջանի և Հայաստանի Գերագույն խորհուրդների մինչ այդ ընդունված որոշումները համարյա թե միշտ հակասահմանադրական էին որակվում և անվավեր համարվում: Դա պատահական չէր, որովհետև սեպտեմբերի 2-ի որոշումը իրավական տեսանկյունից անթերի էր և սահմանադրական: Իրողությունը սրերով ընդունեց Ադրբեջանի ղեկավարությունը և արցախցիների այդ քայլը որակեց դավաճանություն՝ ուղղված «Ադրբեջանի ամբողջատիրության և անկախության դեմ»:

Անկախ այդ ամենից, արցախահայությունը շարունակում էր իր պետականաշինությունը, և պետականության վերականգնման ճանապարհին կարևոր քայլ հանդիսացավ 1991թ. դեկտեմբերի 10-ին կազմակերպված հանրաքվեն: Հարցման ենթարկվածների 99.89 տոկոսն արտահայտվեց ԼՂՀ հռչակման օգտին¹:

ԼՂՀ անկախության հանրաքվեին ներկա գտնվելու համար աշխարհի մի շարք երկրներից Արցախ ժամանեցին 40 անկախ դիտորդներ, այդ թվում՝ Մեծ Բրիտանիայի Լորդերի պալատի փոխխոսնակ, բարոնուհի Քերոլայն Քոքսը: Դիտորդների կողմից արձանագրվեց, որ ԼՂՀ-ում անկախության հանրաքվեն անց է կացվել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան ու առանց խախտումների: Նրանք հատուկ դիմում հղեցին մի շարք երկրների խորհրդարաններին, որտեղ նշվում էր Ադրբեջանի կողմից հանրաքվեի անցկացումը խոչընդոտելու մասին:

1991 թվականի դեկտեմբերի 28-ին տեղի ունեցան ԼՂՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի ընտրությունները, ապա՝ 1992թ. հունվարի 6-8-ին, նորընտիր խորհրդարանի անդրանիկ լիագումար նիստը, որին ներկա էր նաև Քերոլայն Քոքսը: Ելույթ ունենալով նիստում, բարոնուհին դատապարտեց ադրբեջանական իշխանությունների կողմից արցախահայության դեմ կազմակերպված վայրագությունները:

¹ О некоторых политико-правовых аспектах проблемы Нагорного-Карабаха, стр.15-16.

Չնայած առկա ռազմական իրավիճակին, արցախցիների համար լուծվեց ևս մեկ կարևոր հարց. դա Գերագույն խորհրդի ձևավորումն էր:

Այսպիսով, իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակաշրջանում ծավալված զանգվածային բռնությունների ալիքը չկարողացավ կոտրել հայ ժողովրդի համառ կամքը: Պատժիչ նպատակների համար օգտվելով խորհրդային բանակի ստորաբաժանումների աջակցությունից և Մոսկվայի լուռ համաձայնությունից, Ադրբեյջանը դիմեց Լեռնային Ղարաբաղի բնիկ բնակչության՝ հայերի տեղահանման գործողություններին: Ստեղծված իրավիճակից ելնելով, կին քաղաքական, հասարակական գործիչները, քննադատեցին Արցախում կատարվող բռնարարքները և պահանջեցին արդարացի լուծում տալ հիմնախնդրին: Այդ պայքարում նրանք աննահանջ էին: Չնայած հակառակորդի ճնշումներին, կանայք հերոսաբար դիմակայեցին նրանց բոլոր մարտահրավերներին և իրենց նշանակալի տեղն ու դերն ունեցան հայ ժողովրդի համար խիստ կարևոր իրողությանը՝ ԼՂՀ կազմավորման գործընթացին:

Անգնահատելի էր նաև միջազգային ասպարեզում հայկական կողմին սատարող կին գործիչների և մտավորականների գործունեությունը, որոնց ջանքերի շնորհիվ հիմնահարցը բազմիցս ներկայացվեց աշխարհի տարբեր երկրների ամբիոններից, ինչպես նաև հաճախակի դարձան նրանց բարեգործական այցելությունները:

ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ

ԿԱՆԱՆՑ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ (1991 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐ- 1994 Թ. ՄԱՅԻՍ)

2.1 Արցախի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան շրջանների պաշտպանական մարտերում

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ստեղծմամբ արցախահայության ազգային-ազատագրական պայքարը թևակոխեց պատմական նոր փուլ: Իրական անկախության ճանապարհին ԼՂՀ ստեղծումը հերթական վճռորոշ գործնական քայլն էր, որին հաջորդեցին իրավական, քաղաքական, ռազմական և դիվանագիտական ինքնահաստատման գործողությունները:

1991թ. դեկտեմբերից Լեռնային Ղարաբաղի Հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած ագրեսիան արտահայտվում էր բացահայտ զինված ներխուժումներով՝ տարածքները զավթելու, հայ ազգաբնակչության բռնի տեղահանմանը նպատակադրված գործողություններով: Ազատագրական պայքարի խորացմանը զուգահեռ, օրեցօր ավելի ու ավելի էին ծավալվում ռազմական գործողությունները, որոնց ընթացքում էլ ստեղծվեց ինքնապաշտպանության համակարգը: Այդ ուղղությամբ ձեռնարկված կազմակերպական միջոցները նպատակասլաց, հետևողականորեն իրականացվում էին Հայաստանում և Արցախում համաժամանակ: Արդյունքում՝ մարտական գործողություններին զուգահեռ սկսեցին կազմավորվել ՀՀ Ձինված ուժերը և ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը (հետագայում՝ ԼՂՀ Պաշտպանության բանակ)¹:

1991թ. վերջերին և 1992թ. սկզբներին ԼՂՀ տարածքում կազմավորվեցին 10-ից ավելի վաշտեր ու դասակներ, որոնց մեջ ընդգրկված էին շուրջ հազար կամավորականներ²: Դա հնարավորություն տվեց հակամարտ ուժերի անհավասարության պայմաններում համեմատաբար կազմակերպված իրականացնել Արցախի ինքնապաշտպանական մարտերը: Ինքնապաշտպանական մարտերին միացան հարյուրավոր կին-կամավորականներ:

¹ «Հայրենյաց պաշտպան», Ստեփանակերտ, 5 օգոստոսի, 2004:

² Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, էջ 27:

Հարկ է նշել, որ ինչպես հայոց բազմադարյա պատմության բոլոր բեկումնային, բախտորոշ փուլերում, նորագույն ժամանակաշրջանում ևս, հայ կնոջ ավանդական և հեզ կերպարն ակներև զուգակցվեց մեկ այլ՝ խիզախ ու քաջ կերպարի հետ:

Հատկանշական է, որ դեռևս 1988-1989թթ. հանրահավաքների ժամանակ, կանայք արձագանքեցին կամավորական ջոկատներին զինվորագրվելու և ճակատ մեկնելու կոչերին, պարտավորվելով կատարել իրենց պարտքը հայրենիքի հանդեպ:

1989թ. ԼՂԻՄ-ում անցկացված մարդահամարի համաձայն Մարտակերտի շրջանում բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 46870 մարդ, որից 24167-ը կանացի սեռի էին¹: Նրանց մի մասը կամավոր միացավ ազատամարտին, մնացածը, մնալով թիկունքում, նույնպես իրենց ներդրումն ունեցան ազատագրական պատերազմում՝ դիմակայելով 1992-1994թթ. զրկանքներին: Նշենք, որ ռազմագործողությունների մասնակից կանանց հիմնական մասն առաջին գծում զբաղվում էր բուժօգնությամբ: Սակայն շատ հաճախ օրհասական պահերին առաջին բուժօգնությունը ցուցաբերելուց բացի, նրանք նաև զենք էին վերցնում և մասնակցում մարտական գործողություններին: Իսկ նրանք, ովքեր մարտի դաշտ էին մեկնում զենքը ձեռքներին՝ որպես կամավոր ազատամարտիկ, ապա առաջին գծում մարտնչելուց զատ, մասնակցում էին մի շարք աշխատանքների՝ սկսած բուժօգնությունից, սննդի մատակարարումից, ճաշի պատրաստումից:

Երևանի Սովետական շրջանի կուսշրջկոմի երկրորդ քարտուղար Ռուդիկ Գևորգյանը հետագայում գրած իր «Հավաքական ուժ» հուշագրում պատմում է. «Շրջանի պատվիրակությունը, մեկնելով Լեռնային Ղարաբաղի Մարտակերտի շրջան, շրջագայեց սահմանամերձ գրեթե բոլոր գյուղերը: Տեսանք, որ շուրջօրյա հերթապահություն էր սահմանված այդ գյուղերում, որտեղ կանայք հերթապահում էին ցերեկային ժամերին: Սակայն նկատեցինք, որ բոլոր գյուղերում, գիշերվա բոլոր ժամերին տղամարդկանց հետ հավասար հերթապահում էին նաև կանայք: Բոլորը զինված էին մեծ մահակներով: Տեղեկացանք, որ կացիներն ու եղանները կազմ ու պատրաստ էին դիմադրության համար: Գյուղերից երկուսում մենք լավ «պրծանք»

¹ Итоги всесоюзной переписи населения 1989г. Численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2, Москва, 1989г. стр. 17-18.

կանանց ձեռքից: Մութ գիշեր էր, մեքենայի ձայնից մոտ կանգնած կանանց հրամայական «կանգնիր» բառը չլսեցինք: Տասնյակ կանայք, մահակներով զինված, հարձակվեցին մեր մեքենաների վրա, մեկից-մեկուկես մետր հեռավորության վրա մեքենաները արգելակեցինք: Իսկ ինչպիսի՞ ուրախություն, ոգևորություն, որ Մայր Հայաստանը իրենց հետ է: Բոլորն էլ պատրաստ էին կռվելու»¹:

Հեղինակի վկայությունները փաստում են, որ նախքան լայնամասշտաբ ռազմագործողություններ սկսելը, Մարտակերտի շրջանի գյուղերում առկա ինքնապաշտպանական ուժերում քիչ թիվ չէին կազմում կանայք:

Ստեղծված կամավորական ջոկատներին անհրաժեշտ էին միջոցներ՝ զենք, զինամթերք հայթայթելու համար: Մարտակերտի կամավորական ուժերը Վլադիմիր Բալայանի և Լեոնիդ Ազգալոյանի գլխավորությամբ դիմեցին բոլոր մարտակերտցիներին՝ դրամահավաք կազմակերպելու նպատակով: Մարդիկ «սև օրվա» համար պահած իրենց վերջին գումարների մի մասը որոշեցին հանձնել ջոկատին, այն համոզմամբ, որ միայն զենքով կլինի Արցախի փրկությունը: Դրամահավաքին մասնակից կանանց թվում էր Արևհատ Օհանջանյանը, ով բացի դրամական միջոցներից, մեծ քանակությամբ ոսկյա զարդեր տրամադրեց Մարտակերտի ինքնապաշտպանական ջոկատին: ԼՂՀ զոհված ազատամարտիկների թանգարանում Արևհատ Օհանջանյանի լուսանկարին կից տեղեկանքում կարդում ենք. «Տրվում է Մարտակերտ քաղաքի բնակչուհի Արևհատ Շամիրի Օհանջանյանին, որ նա իսկապես իր ոսկյա զարդերը և իրերը (շղթա, ականջօղեր, ժամացույց, մատանիներ, ոսկյա դրամներ) նվիրել է Արցախի ազատագրական բանակին (հրամանատար՝ Վլադիմիր Բալայան) և այդ միջոցներով ձեռք է բերվել մեկ «ԲՄՊ-1» զրահամեքենա: ԼՂՀ Պաշտպանության պետական կոմիտեի Մարտակերտի շրջանի լիազոր ներկայացուցիչ՝ Ս. Աբրահամյան»:

1992թ. փետրվարի կեսերին լայնածավալ նոր հարձակում սկսվեց Հյուսիսային Արցախի վրա: Հարձակվելով Մանաշիդ հայկական գյուղի ուղղությամբ, հակառակորդը գործի դրեց զանգվածային բնաջնջման «Գրադ» և «Ուրագան» տիպի՝

¹ Գևորգյան Ռ., նշվ. աշխ., էջ 427:

միջազգային նորմերով արգելված զենքեր¹ : Ստեղծված ծանր վիճակում հայ պաշտպանական ուժերը համառ դիմադրություն ցույց տվեցին:

Ինքնապաշտպանության մեջ ներգրավված էին ոչ միայն ջոկատները համալրած կանայք, այլև ամբողջ բնակչությունը՝ ով ինչով կարող էր: Իսկ Մանասին Շեն գյուղում գործում էր նույնիսկ կանանց առանձին ջոկատ²:

Ընդգրկվելով ինքնապաշտպանական ջոկատներում, շահումյանցի կանայք այն համոզման էին, որ այդ ճակատագրական պահին պարտավոր են կատարել իրենց պարտքը հայրենի երկրի, հարազատ գյուղի առջև: Նրանց մեջ քիչ չէին երիտասարդ մայրերը, ովքեր մահվան վտանգի էին գնում՝ տանը թողնելով երկու, երեք երեխա: Թերևս գործում էր նաև այն հոգեբանությունը, թե լավ է իրենց ամուսինների, եղբայրների կողքին լինեն, նրանց օգնեն, քան թիկունքում մնան մշտական սպասումի ու տագնապի մեջ:

Շրջափակման պայմաններում անգնահատելի դեր կատարեցին նաև բուժաշխատողները, այդ թվում Շահումյանի շրջանային հիվանդանոցի բուժքույրերը (Անիչկա Պետրոսյանը, Անգին Արդուխանյանը, Թամարա Շեգյանը, Նելլի Առստամյանը, Օֆիկ Մակարյանը, Լյուդմիլա Բաղմանյանը): Նրանց աշխատանքի մեջ մտնում էին հետևյալ պարտականությունները՝ օգնել բժիշկներին վիրահատությունների ժամանակ, օրերով հերթապահել, անհրաժեշտության դեպքում անգամ դոնոր լինել: Մինչև վերջին օրը մնալով գյուղում, բարեհաջող աշխատեցին նաև բուժքույրեր Շուշիկ Հակոբյանը, Լորա Սիմոնյանը, Ասլիմ Բաշրաթյանը, Էլվիրա Շախյանը: Բուժքույրերից Իրա (Գալինա) Զարգարյանը և Կամելլա Սարգրոսյանը շրջանային ծննդատան կողմից ամրակցված էին Մանաշիդի տեղամասին³ : Դժվար է պատկերացնել նրանց աշխատանքի ամբողջ բարդությունը: Պետք է նկատի ունենալ, որ շահումյանցի բուժաշխատողները ոչ միայն վիրավոր ազատամարտիկներին էին խնամում կամ վիրակապ դնում, այլ նաև օգնում ադրբեջանցիների դաժանություններից փրկված

¹ Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի մարտական ուղին. 1991-1994թթ., թեկնածուական ատենախոսություն, Երևան, 2001, էջ 41:

² «Մոռվի դողանջներ», 1992, 11 ապրիլի:

³ Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. Հողը կանչում է, գիրք Բ, էջ 575:

խաղաղ բնակիչներին: Ադրբեջանցիները հաճախ պարզապես հոշոտում, դաժանորեն խոշտանգում էին ոչ միայն գերիներին ու պատանդներին, այլ նաև նրանց դիակները, որոնց մեջ քիչ չէին կանայք: Եվ եթե հաջողվում էր գերությունից փրկել այդ տանջահար մարմինները, բուժքույրերը մեծ խնամքով «մշակում» էին, որպեսզի հարազատների կսկիծը կրկնակի չդառնա: Դրա հետ մեկտեղ նրանցից յուրաքանչյուրն ուներ իր անձնական վիշտն ու տագնապները: Հուշերից մեկի մեջ կարդում ենք, որ 1992թ., երբ բուժքույր Էմմա Անանյանը լարված աշխատանքի մեջ էր, Շահումյանի շրջանի հիվանդանոց են բերում նրա վիրավորված աղջկան և փոքր որդուն, իսկ նա շարունակում էր իր անձնական ցավի հետ միասին կիսել նաև իր հայրենակիցների ցավերը¹:

Շրջանի համար դժվարին օրերին Շահումյանին օգնության էին գալիս Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի կամավորական ջոկատները, որոնց շարքերը համալրել էին նաև կանայք: Ընդ որում՝ Հյուսիսային Արցախին նրանք օգնության էին հասնում նաև այն դեպքում, երբ լարված վիճակ էր նաև Հայաստանի սահմանամերձ շրջաններում:

Կամավորական ջոկատները, մեկնելով Արցախի հյուսիս-արևելյան շրջան, փայլուն կերպով կատարում էին իրենց առջև դրված խնդիրները: Ընդհանրապես, ջոկատների մեծ մասը գտնվում էր գյուղերում, որոնցում ընդգրկված էին 14-60 տարեկան կամավորականներ²:

Համալրվելով «Գարեգին Նժդեհ» (Զարուհի Բադալյան), «Մայիս» (Գայա Գյուրջյան, Լորենտա Գյուրջյան), «Կարս» (Նվարդ Դուդուկյան), «Ադանա» (Ավարդ Կոստանդյան), «Սիսակ» (Մարիետա Խաչատրյան), «Տոռոզյան» և «Նաիրի» (Սուսաննա Կոստանդյան), «Անահիտ» (Անահիտ Մարտիրոսյան), «Աղբյուր Սերոբ» (Նաիրա Սահակյան), «Եղնիկներ» (Արմինե Նալբանդյան), «Խաչակիրներ» (Անժելա Զալյան), «Զորավար Անդրանիկ» (Մարիետա Սարգսյան) կամավորական ուժերը,

¹ «Մոռվի դղանջներ», 1992, 11 ապրիլի:

² Աբրահամյան Հ., Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը, «Լրաբեր հասարակական գիտությունների», թիվ 3, Երևան, 2006, էջ 117:

ինչպես նաև «Արծիվ 24» գումարտակի (Նունե Աբրահամյան, Անահիտ Լուսինյան), Ղազանչիի (Ալվարդ Շեկյան), Մանաշիդի (Զոյա Մարտիրոսյան), Խրամորթի (Լենա Շամիրյան), Մաղավուզի(Անժելա Նանագյուլյան), Արմավիրի (Լուիտա Վարդանովա), Սևանի (Անժելա Հակոբյան) ջոկատները, կանայք պատերազմի ողջ ընթացքում մասնակցեցին Արցախի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան շրջաններում տեղի ունեցող ռազմագործողություններին, մարտադաշտից վիրավորների տարհանման և բուժսպասարկման աշխատանքներին¹, Ռազմի դաշտում նրանցից ոմանք զոհվեցին և վիրավորվեցին՝ անձնական օրինակով ապացուցելով, որ հայ կինը կարող է լինել նաև հայրենիքի զինվոր:

1990թ. անդամագրվելով «Մեծն Տիգրան» կամավորական ջոկատին, Շահումյան մեկնեց Մարիետա Սարգսյանը: Նրա մարտական ուղին շարունակվեց «Զորավոր Անդրանիկ» ջոկատի հետ, որը 1991թ. մարտ ամսից մասնակցում էր Շահումյանի շրջանի ինքնապաշտպանությանը, ապա՝ Արծվաշենի, Շամշադինի (Տավուշ) մարտական գործողություններին: Այնուհետև, 1992թ. Մասիսի շրջանի կամավորական ջոկատի կազմում մեկնեց Լաչինի շրջան, որտեղ զինակիցների հետ միասին շրջափակման մեջ ընկավ: Այստեղ, օգտագործելով իր փորձն ու մարտական կոփվածությունը, անձնազոհություն ցուցաբերելով, նա կարողացավ մնացած զինվորների հետ դուրս գալ թշնամական օղակից: Երկու ամիս անց ջոկատը տեղափոխվեց Մարտակերտի շրջան՝ Մոլլալար, որտեղից պետք է շարժվեին դեպի Քարվաճառ: Հակառակորդ կողմը զգում էր, որ հայերի ռազմական ճնշումն օրեցօր ուժեղանում է, որի ընթացքում էլ, նա նոր ուժեր ու տեխնիկա էր կենտրոնացնում: Այդ օրերին հանկարծակի սկսված ուժեղ հրետակոծությունների ժամանակ՝ մարտական ծառայությունների կատարման ընթացքում Մարիետա Սարգսյանը ծանր վիրավորվեց և մահացավ հիվանդանոցում²:

¹ ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 1, պմ. 1, թ. 1-3, «Մարտիկ», 1995, 26 հունվարի-1 փետրվարի, թիվ 7:

² Վարդումյան Հ., Կին ազատամարտիկները, էջ 40:

Ստեղծված իրադարձությունները և իրավիճակները կանանց դրդում էին հրաժարվելու կանացիության և նրբության դոգմաներից, կոտրելու խաղաղ կյանքի կարծրատիպերը և դեմ գնալու ընդունված նորմերին: Նրանցից շատերը դեռևս 1988թ. շարժման ակտիվիստներ էին: Շարժման փոխակերպումից անմիջապես հետո կանայք ինքնըստինքյան մտան նաև մարտադաշտ՝ որպես զինակից ընկերների աջակից:

«Մեծն Տիգրան» ջոկատի¹ շարքերում Շահումյանի շրջանի ինքնապաշտպանությանը միացան նաև կամավորականներ Կարինե Հովսեփյանը և Մելսիդա Հարությունյանը²: Կ. Հովսեփյանը Ղարաբաղյան շարժմանը կամավորագրվել էր դեռևս 1988թ.: Առաջին իսկ օրերից ակտիվորեն մասնակցում էր ցույցերին, իսկ հետո միացավ կամավորական ուժերին:

1991թ. գարնանը «Մեծն Տիգրան» ջոկատը պաշտպանական մարտերի նոր գրանցում ստացավ՝ Շահումյանի շրջանի էրթեջ գյուղում: Ջոկատի հետ մեկնելով Շահումյանի շրջան, Կարինե Հովսեփյանն այնտեղ մնաց մինչև մեծ նահանջը: Նա զենքը ձեռքին, որպես մարտիկ, մասնակցում էր բոլոր կռիվներին, իսկ ընդմիջումներին օգնում էր գյուղական աշխատանքներին: Մինչև 1994թ. մայիսյան զինադադարը շարունակվեց նրա մարտական ուղին, որի ընթացքում էլ, ծանր վիրավորվելով, դարձավ երկրորդ կարգի հաշմանդամ³: Գնդի հրամանատար Կ. Ղումաշյանն իր օրագրում հետևյալ կերպ է ներկայացնում Կարինե Հովսեփյանին. «Նա մեր ջոկատի տղաների համար իսկական գթության քույր էր: Տղաները Սոսե մայրիկի պատվին նրան Սոսե էին ասում: Կովի առաջին օրվանից մինչև հրադադարի օրը մեզ հետ էր՝ զենքը ձեռքին, առաջին գծում: Նա թշնամու վրա կրակող հայուհի էր: Հիշողությունիցս չի ջնջվում նրա հետևյալ խոսքը, որ մեզ համար թևավոր խոսք էր դարձել. «Ես հայրենիքին տվեցի կնոջ համար ամենաթանկը՝ մայր կոչվելու իրավունքը»: Նա դեռևս կենդանության օրոք պարզևատրվել է «Արիության» և

¹ «Մեծն Տիգրան» ջոկատը կազմավորվել էր 1989թ. Երևանում, որի հրամանատարն էր Կորյուն Ղումաշյանը: Լինելով առաջին կամավորական ջոկատներից մեկը, 1989-1994թթ. մասնակցեց ՀՀ Գորիսի (Կոռնիձոր), Արարատի (Երասխ), Վայքի (Բարձունի), Սիսիանի (Սոֆլու) և ԼՂՀ Շահումյանի (Էրթեջ), Մարտակերտի, Լաչինի, Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

² «Հայ զինվոր», 2010, 10 մայիսի:

³ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994., հանրագիտարան, էջ285:

«Մարտական ծառայության համար» մեդալներով... «Տիգրան Մեծ» վարժարանի ռազմական ամբիոնի հայոց պատմության լսարանը անվանակոչել ենք այդ հերոս հայուհու անունով»¹:

Գրեթե նույն մարտական ուղին ունեցավ նաև Մելսիդա Հարությունյանը, ով 1990թ. ընդգրկվելով աշխարհազորային գնդի կազմ, ապա՝ «Եղնիկներ» պարտիզանական ջոկատում, մասնակցեց Շահումյանի շրջանի ինքնապաշտպանական, իսկ մեծ նահանջից հետո՝ Մարտակերտի, Շուշիի շրջանների ազատագրական մարտերին: 1992թ. հունվարին ջոկատը վերադարձավ Երևան՝ հանգստի, իսկ երկու ամիս անց մեկնեց Ստեփանակերտ՝ Արկադի Տեր-Թադևոսյանի հրամանատարության ներքո գործող 26-րդ գումարտակ, որը պաշտպանում էր Ստեփանակերտը: Մարտակերտում ստեղծված ծանր կացության պատճառով 1992թ. հունիսի 14-ին Մելսիդա Հարությունյանը ջոկատի կազմում մեկնեց այնտեղ՝ առաջին գիծ: Ընթացող ծանր մարտերի ընթացքում վիրավորվեց ձեռքից և ոտքից, ինչպես նաև ցնցակաթված ստացավ: Այդ վիճակը նրան չստիպեց հեռանալ մարտի դաշտից: Հուլիսի 4-ին հայկական ուժերը, պայթեցնելով զորանոցն ու շտաբը, լքեցին Մարտակերտը: Քաղաքից վերջին հեռացողներն էին՝ Արկադի Տեր-Թադևոսյանը, 26-ի Յուրան, Մորուք Վանիկը, Կարինե Գևորգյանը, Աղավնի Սահակյանը և Մելսիդա Հարությունյանը: Նահանջից հետո վերջինս ստիպված էր վերադառնալ Երևան՝ ապաքինվելու: Իսկ արդեն 1993թ. «Մեծն Տիգրան» աշխարհազորային գնդի շարքերում մասնակից դարձավ Գորիսի շրջանի Խնձորեսկ և Մարտակերտի շրջանի Մոխրաթաղ գյուղերի ինքնապաշտպանական մարտերին: Մարտական ծառայության ընթացքում զենքը ձեռքին մարտնչելուց բացի, մասնակցում էր նաև հետախուզական աշխատանքներին: 1993թ. ամռանը մեկնելով Շահումյան, շուրջ մեկ տարի և չորս ամիս նա մնաց թշնամու թիկունքում՝ մասնակցելով հետախուզական բոլոր աշխատանքներին, մարտերին, իսկ ազատ ժամանակ՝ խնամելով վիրավորներին:

Օգտագործելով Կիրովաբադ (պատմական Գանձակ) քաղաքում տեղակայված նախկին խորհրդային 4-րդ բանակի աջակցությունից՝ 1992թ. հունիսի 12-ին ադրբեջանական զորամիավորումները լայնածավալ հարձակման անցան ԼՂՀ հյուսիս-

¹ <http://www.hayzinvor.am/19863.html>

արևելյան, արևելյան և հարավ-արևելյան սահմանների ամբողջ երկայնքով՝ Հադրութից մինչև Շահումյան¹: Թշնամուն հաջողվեց զավթել ամբողջ Շահումյանի շրջանը, Մարտակերտի շրջանի մեծ մասը, Ասկերանի շրջանի մի շարք գյուղեր: Հյուսիսային Արցախում հակառակորդի լայնածավալ հարձակման հետևանքով բռնագաղթի ճանապարհը բռնեցին հանրապետության ավելի քան 40 հազար բնակիչներ, ավերվեցին և հրկիզվեցին տասնյակ բնակավայրեր²: Շահումյանի անկումից հետո, ինքնապաշտպանական մի ջոկատ Շահեն Մեղրյանի գլխավորությամբ այդպես էլ չհեռացավ հայրենի շրջանի տարածքից, շարունակելով պայքարը պարտիզանական եղանակով, որն աջակցություն գտավ Արցախի իշխանությունների կողմից³:

1992թ. հունիսի 18-ին ԼՂՀ ԳԽ նախագահությունը և Նախարարների խորհուրդը համատեղ որոշում կայացրին, իսկ հունիսի 19-ին պաշտպանության խորհուրդը հանդես եկավ կոչով՝ ուղղված շահումյանցիներին. «Բոլոր նրանց, ովքեր ի վիճակի են զենք կրելու, ում համար թանկ են հայրենիքը և ազատությունը, պարտիզանական պայքար ծավալել զավթված ամբողջ տարածքում: Ում համար թանկ են նախնիների գերեզմանները, մեր եկեղեցիներն ու սրբությունները, պետք է սարսափ տարածեն թշնամու վրա: Պետք է օր ու գիշեր ոչնչացվեն նրանք, ովքեր զենքով ոտք են դրել մեր հողի վրա»⁴: Կոչը տարածվեց շահումյանցիների շրջանում, որին, իհարկե, արձագանքեցին նաև կանայք: Սկսեցին պարտիզանների շարքերը մտնել նույնիսկ տարեցներ, թոշակառուներ: Պարտիզանական ջոկատն ադրբեջանցիներին թույլ չէր տալիս հաստատվելու նվաճված գյուղերում: Այդ դժվարին օրերին պարտիզանական ջոկատին միացավ բժշկուհի Արմինե Նալբանդյանը և մինչև հրադադար մնաց մարտական ընկերների կողքին: Դիմելով բոլոր կազմակերպություններին, նա

¹ Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները դարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, էջ 19:

² Նույն տեղում, էջ 20:

³ Շահումյանի պաշտպանականը կամ վեցերորդ պաշտպանական շրջանը կազմավորվել է դարաբաղա-ադրբեջանական հակամարտության գոտում ծավալված ակտիվ մարտական գործողությունների ավարտական փուլում: Զորամասի ստեղծման համար հիմք են ծառայել «Եղնիկներ» պարտիզանական ջոկատը, որը ձևավորվել է 1992 թ. հունիսի 25-ին Հաթերք գյուղում՝ Շահումյանի անկումից անմիջապես հետո:

⁴ Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Բ, էջ 82:

պաշտպանության նախարարության աջակցությամբ «Եղնիկների» բազայում կազմակերպեց դաշտային հոսպիտալ¹:

1993թ. դեկտեմբերի 23-ին ադրբեջանցիները մեծ ուժերով հարձակվեցին Գյոյթափա տեղանքի ուղղությամբ: Ուժերն անհավասար էին, և հայ ինքնապաշտպանական ուժերը ստիպված էին նահանջել: Վիրավորների, զենքի և զինամթերքի հետ միասին հոսպիտալը տարհանել հնարավոր չէր, ուստի հարկավոր էր ոչնչացնել: Այսպես, դաշտային հոսպիտալը գործեց մինչև 1993թ. դեկտեմբերի 27-ը, իսկ նահանջը տևեց մինչև Մաղավուզ: Արտատափ կոչվող անտառոտ տեղանքում բազավորվելով, «Եղնիկները» նորից անցան իրենց պարտականությունների կատարմանը: Իսկ բժշկուհին ստիպված էր ամեն ինչ սկսել սկզբից ու նորից կազմակերպել դաշտային հոսպիտալ, որի ծառայություններից օգտվում էին ոչ միայն «Եղնիկներ» ջոկատը, այլ նաև շրջակա բնակավայրերի և զորամիավորումների կարիքավորները²: Ա. Նալբանդյանը, ենթարկվելով պատերազմի փորձությանը, գերազանց քննություն բռնեց: Նրա շնորհիվ փրկվեցին բազմաթիվ վիրավոր ազատամարտիկների կյանքեր: Ծառայությունը շարունակեց մինչև հրադադար, որից հետո վերադարձավ իր նախկին աշխատանքին:

Արժե է նկատել, որ գոյամարտում նշանակալի դեր ունեցան կին-բուժաշխատողների աշխատանքները, հատկապես ռազմի դաշտ:

Հայ կնոջ ռազմական կարողություններն առավել ակներև դարձան Արցախյան գոյամարտում: Ազգային-ազատագրական պայքարի խոսուն կերպարներից է Սիրանուշ Առուշանյանը, ով շարժման առաջին իսկ օրվանից հայտնվեց ռազմագործողությունների կիզակետում:

1992թ. ամռանն ադրբեջանական ուժերի լայնածավալ հարձակման արդյունքում հուլիսի 4-ին գրավվեց Մարտակերտ քաղաքը, այնուհետև՝ շրջանի մի մասը: Մարտերն ընթանում էին փոփոխական հաջողություններով: Հայկական ուժերը, Հաթերքը կորցնելուց հետո, ստիպված էին ամրանալ Կիչանում: Այդ օրերին Սիրանուշ Առուշանյանը Հաթերքի ջոկատի հիմքի վրա կազմավորված ստորաբաժանման հետ

¹ Վարդումյան Հ., Աստվածների կանչը., էջ 144:

² «Մարտիկ», 1998, 10 հուլիսի:

եր, որի շարքերում էլ մասնակից դարձավ Իմերեթ-Քերեվենդ, Աղդաբան, Ումուխլու գյուղերի թշնամական հենակետերի վերացմանը, իսկ 1993թ. փետրվարին՝ Մարտակերտի վերին ձորակի՝ Դրմբոն, Վերին Հոռաթաղ, Հարությունագոմեր, Վաղուհաս, Չլդրան, Զարդախաս, Հաթերք, Զագլիկ, Ումուխլու գյուղերի ազատագրմանը: Որպես մարտիկ նա ակտիվորեն մասնակցում էր բոլոր ռազմագործողություններին, իր համառությամբ, նվիրվածությամբ ոգեշնչում մարտական ընկերներին: Պատերազմի ընթացքում երեք անգամ վիրավորվեց, սակայն երկամսյա բուժումից հետո կրկին շարք վերադարձավ և ծառայությունն արդեն շարունակեց Մաղավուզում՝ 2-րդ գումարտակի կազմում, որի շարքերում էլ մասնակցեց Մաղավուզի, Լյուլասագի, Լևոնարխի, Մատաղիսի, 3-րդ սովխոզի և Օմարի բարձունքների ազատագրմանը: Ս. Առուշանյանը հրադադարից հետո շարունակեց ծառայությունը, և միայն 1996թ. զորացրվեց՝ ավագ լեյտենանտի կոչումով: Գեներալ-մայոր Գեորգի Գասպարյանը հիշում է. «Հաթերքից Սիրանուշ անունով մի ճերմակահեր կին միշտ մարտի դաշտում էր՝ ավտոմատն ուսած, պատահել է թեժ մարտերին հարցրել եմ՝ Հաթերքից քանի՞ հոգի կան, միայն այդ կինն է եղել...»²:

Երկրի համար ծանր օրերին Մարտակերտի գումարտակը հետզհետե համալրում էին կանայք, ովքեր կամավորագրվելով ինքնապաշտպանության ուժերին՝ պատվով էին կատարում բոլոր մարտական առաջադրանքները: Արցախի համար օրհասական պահին անդամադրվելով Հաթերքի ինքնապաշտպանական ջոկատին, Աիդա Սերոբյանը 1992թ. մասնակցեց Հաթերքի և շրջակա գյուղերի ազատագրման մարտերին, որից հետո ծառայությունը շարունակեց Մարտակերտի գնդի շարքերում: 1993թ. հունվարից միացավ «Արցախ» փրկարարական ծառայությանը, որի կազմում մասնակցեց Մարտակերտի շրջանում ընթացող թեժ մարտերին՝ Չլդրան, Դրմբոն, Վաղուհաս, Խունկութալա, Զարդախաս, Հաթերք, Զագլիկ, Կուսապատ գյուղերի ու Քարվաճառի շրջանի տարածքի ազատագրմանը: Ադրբեջանցիների խուճապը մեծ էր՝ գլխակորույս փախչում էին: Այդ օրերին մեծ էր հայի, որպես հաղթողի, մեծահոգի

¹ Աղաջանյան Մ., նշվ. աշխ., էջ 452:

² «Ազատ Արցախ», 2000, 20 փետրվարի, թիվ 12:

գթառատությունը: Ի տարբերություն ադրբեջանցիների, ովքեր կոտորում, բռնաբարում ու ծաղրի էին ենթարկում նահանջող խաղաղ բնակչությանն ու վիրավորներին, հայերն օգնում էին խաղաղ բնակչությանը: Հայ կինը ռազմի դաշտում անգամ չկորցրեց իր մարդկային հատկանիշները՝ կարեկցանք, խղճահարություն, թեկուզ՝ թշնամու հանդեպ: Նման վերաբերմունք ցուցաբերեց Աիդա Սերոբյանը Քարվաճառում՝ փրկելով ադրբեջանցի հղի կնոջ, ում հետո տեղափոխեցին Ստեփանակերտի ծննդատուն¹:

Միաժամանակ վիճակը ծանրացել էր Մաղավուղի ուղղությամբ, և Աիդա Սերոբյանը գործուղվեց այնտեղ: Իսկ երբ հուլիսից սկսվեց Ադրամի ազատագրման ռազմագործողությունը, նա ևս միացավ և անցավ հետագա բոլոր ռազմական գործողությունների ճանապարհներով: Արդեն 1994թ. հունվարի 1-ից՝ Շուշիի գնդի հրամանատարության պահանջով նա համալրեց գնդի շարքերը՝ 52-րդ գումարտակի կազմում, որտեղ մնաց մինչև հրադադար՝ անցնելով Ջինլի, Բոյահմեդի, Փափրավենդ, Սեյսուլան, Մարտակերտ, Կարմիրավան տարածքները²:

Արցախի հյուսիս-արևելյան շրջանի ազատագրական պայքարին մասնակցելու համար 1993թ. սեպտեմբերի 15-ին Արցախ մեկնեց Գայանե Մարգարյանը և, համալրելով Մարտակերտի գումարտակը, 1993-1994թթ. մասնակցեց շրջանի մի շարք բնակավայրերի ինքնապաշտպանական մարտերին:

1994թ. առաջին օրերին ադրբեջանցիները նորից խորացան Մարտակերտի շրջանի տարածքում: Գումարտակը պաշտպանական մարտեր սկսեց Մաղավուղ գյուղի մատույցներում: Հունվարի 9-ին հակառակորդը հանկարծակի գրոհի նետվեց: Մինչև հիմնական ուժերի տեղ հասնելը՝ Գայանե Մարգարյանը երեք ազատամարտիկի հետ միասին անհավասար պայքարի մտավ հակառակորդի հետ՝ թույլ չտալով վերջինիս գյուղ թափանցել: Այդ ժամանակ Մաղավուղ գյուղի մատույցներում մարտական ծառայության ընթացքում զոհվեցին 4 ազատամարտիկներ, այդ թվում՝ Գայանե Մարգարյանը³:

¹ Կինը և զինված հակամարտությունը: Պատերազմ Ղարաբաղում, էջ 28:

² Նույն տեղում, էջ 29:

³ Հ. Վարդումյան, Կին ազատամարտիկները, էջ 29-30:

Հայրենիքի պաշտպանության համար կյանքի գնով մարտնչեց նաև ազատամարտիկ Կարինե Գևորգյանը, ով 1992թ. Արցախ մեկնելով, միացավ Մարտակերտի ինքնապաշտպանական ուժերին: Նա սկզբում՝ 1992թ. նոյեմբերից, զինճառայության անցավ ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերում՝ Արկադի Տեր-Թադևոսյանի (Կոմանդոս) հրամանատարությամբ, ապա հետագայում համալրեց Մարտակերտի գումարտակի շարքերը և 1992-1993թթ. մասնակցեց Մարտակերտի Գետավան, Հաթերք, Սարսանգի ջրամբար, Մեծշեն, Մաղավուզ գյուղերի, Օմարի պաշտպանական և ազատագրական գործողություններին: Օրհասական պահերին Կարինե Գևորգյանը կատարում էր հնարավորինս և հանուն նպատակի մասնակից դառնում ամենաթեժ մարտերին, որի ընթացքում՝ 1993թ. հունիսի 13-ին Մաղավուզ գյուղի համար մղվող մարտում զոհվում է¹:

Չնայած վտանգը մեծ էր, այնուամենայնիվ, կանայք շարունակում էին արձագանքել զինված ուժերի կոչերին և մեկնում առաջին գիծ: 1992թ. նվիրյալների շարքերը համալրեց Նունե Աբրահամյանը: 1992թ. Արծվաշենում ստանալով առաջին մարտական մկրտությունը, նա «Արծիվ 24» գումարտակի² կազմում մասնակցեց մի շարք ռազմական գործողությունների: Նա հաղթական երթերի ընթացքում մշտապես եղել է առաջին գծում և մարտնչել անձնվիրաբար: Մարտական ընկերները վկայում են, որ տասն ամիս տուն չի վերադարձել, չի հանել սանիտարական պայուսակը և այդ ընթացքում փրկել է տասնյակ ազատամարտիկների: 1993թ. թեժ մարտեր էին ընթանում Օմարի լեռնանցքում, որտեղ էր նաև «Արծիվ» գումարտակը: Այն ժամանակ, երբ հայկական կողմը Յանշաղ գյուղի մոտ շրջապատման մեջ հայտնվեց, սկսվեցին թեժ մարտեր, որոնց ընթացքում՝ 1994թ. հունվարի 31-ին, Նունե Աբրահամյանը ծանր վիրավորվեց և մահացավ Դրմբոնի զինվորական հիվանդանոցում³: 1992-1993թթ. գումարտակի կազմում մասնակցել է Առաջաձորի, Դրմբոնի, Հաթերքի, Սարսանգի

¹ Նանագուլյան Ս., նշվ. աշխ., էջ 25, «Հայրենյաց պաշտպան», 2013, 1 մարտի, թիվ 7:

² Գումարտակը կազմավորվել էր 1992թ. օգոստոսի 16-ին՝ Երևանում, Վ. Սարգսյանի նախաձեռնությամբ, որում ընդգրկված էին ՀՀ տարբեր շրջանների ազատամարտիկներ:

³ «Մարտիկ», 1998, 30 հունվարի:

ջրամբարի, Կուսապատի, Օմարի լեռնանցքի, ինչպես նաև Աղդամի, Հորադիզի, Ղուբաթլուի, Զանգելանի ազատագրմանը:

Պատերազմի թեժ օրերին հայկական ուժերը համալրող կանայք շատ լավ էին գիտակցում իրավիճակը և յուրաքանչյուրը փորձում էր իր ներդրումը ունենալ ազգանպաստ գործում:

1992թ. անդամագրվելով մահապարտների «Արծիվ-1» գումարտակին, Արցախ մեկնեց նաև Անահիտ Հովհաննիսյանը, ով մասնակցեց գումարտակի մի շարք մարտական առաջադրանքներին՝ Մարտակերտի շրջանի Չլդրան, Վաղուհաս, Հարությունագոմեր, Վանք գյուղերի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին և զինադադարը դիմավորեց մարտի դաշտում¹:

Զինվորական գործում կանայք թեև թվով քիչ էին, սակայն նրանց ներկայությունը մեծ ներգործություն էր ունենում մարտիկների հոգեբանության և գործի վրա: Անշուշտ, ռազմական գործողություններին մասնակից կանանց առաջ էր մղում հայրենիքին օգտակար լինելու գաղափարը: Ահա թե ինչը ստիպեց Անժելա Զայյանին 1992թ. հասնել Արցախ և մասնակցել հյուսիս-արևելյան շրջանի ինքնապաշտպանական մարտերին: Հուլիսին «Խաչակիրներ» ջոկատի կազմում 2-րդ անգամ Արցախ ժամանելով, նա ջոկատի շարքերում կատարեց առաջին մարտական առաջադրանքը՝ Հարությունագոմեր և Պողոսագոմեր գյուղերի տարածքով, ինքնապաշտպանական ուժերի հետ անցավ հակառակորդի թիկունք՝ հետախուզական և դիվերսիոն գործողություններ իրականացնելու նպատակով: Հետախուզությունից վերադառնալիս, ջոկատն անսպասելիորեն թիկունքից հարձակվելով, թշնամուն կորուստներ պատճառեց՝ ձեռք բերելով մեծ քանակությամբ զենք ու զինամթերք: Զոկատի շարքերում նա հետախուզական գործողությունները շարունակեց Քարվաճառում: Այնուհետև 1993թ. մասնակցեց Մարտակերտի ազատագրման գործողություններին, որից հետո «Խաչակիրներ»-ի հետ մեկնեց Շահումյանի շրջան և «Եղնիկներ» պարտիզանական ջոկատի հետ պայքարը շարունակեց մինչև

¹ Զանիկյան Գ., նշվ. աշխ., էջ 39:

հրադադար: 1992-1994թթ. մասնակցեց ԼՂՀ Շահումյանի, Մարտակերտի (Մաղավուզ, Մեգրեխ, «Պուշկինյալ»), Քելբաջարի, Լաչինի (Թիգիկ-1, Թիգիկ-2) շրջանների ազատագրական մարտերին¹:

Արցախյան ազատամարտում հաճախակի երևոյթ էր կռվող ազատամարտիկների կողքին տեսնել նրանց կողակիցներին, ովքեր, տանը թողնելով անչափահաս երեխաներին, իրենց ամուսինների հետ միասին մեկնում էին ռազմի դաշտ: 1992թ. Գայանե Մեջլումյանը, ամուսնու՝ Ս. Տոնոյանի հետ էջմիածնից Արցախ մեկնելով, մտավ Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ինքնապաշտպանական ջոկատի կազմ: Առաջին օրերին գյուղում բուժքույր աշխատող Սվետլանա Մկրտչյանի հետ բուժօգնություն էր ցուցաբերում ազատամարտիկներին: Ամուսնու զոհվելուց հետո շարունակեց ծառայությունը, և 1992-1994թթ. գյուղի ջոկատի ու ՊԲ ականանետային վաշտի կազմերում մասնակցեց Մարտակերտի, Ղազարահողի, Մաղավուզի, Մատաղիսի, Չլդրանի, Գետավանի, Կուսապատի, Թալիշի ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին, որի ընթացքում էլ մի քանի անգամ վիրավորվեց, սակայն ապաքինվելուց հետո դարձյալ վերադարձավ մարտադաշտ և մնաց մինչև հրադադար²:

1993թ. սկզբին Մարտակերտի շրջանի զգալի մասը բռնագրավված էր հակառակորդի կողմից: Մինչև ամառ ծանր մարտերը հաջորդում էին միմյանց: 1993թ. հունվարի 25-ին մեկնելով Արցախ և մտնելով Մարտակերտի շրջանի Վանք գյուղի ջոկատի հիմքի վրա կազմավորված 44-րդ գումարտակի կազմ, Սվետլանա Աբրահամյանը մասնակից դարձավ Մարտակերտի մի շարք բնակավայրերի ազատագրման մարտերին: Նրա մարտական ուղին շարունակվեց 42-րդ գումարտակում, որը տեղակայված էր Մաղավուզ գյուղում: Օգոստոսին, գումարտակի 26 հոգուց բաղկացած մի խմբի հետ մեկնելով Ղուբաթլուի շրջան, մասնակցեց ազատագրական գործողություններին և, 10 օրվա ընթացքում շրջանը ամբողջովին ազատագրվելուց հետո, ջոկատի հետ վերադարձավ հարազատ գումարտակ:

¹ Վարդումյան Հ., Աստվածների կանչը, էջ 89-90:

² «Մարտիկ», 1999, 18 հունվարի, թիվ 2:

Դեկտեմբերի 24-ին ռազմական գործողություններ սկսվեցին Լյուլասազ և Հակոբ Կամարի գյուղերի ուղղությամբ: Միաժամանակ իրադրությունը բարդացավ Օմարի լեռնանցքում: Գումարտակի հետ, նա լեռնային դժվար պայմաններում մասնակցեց ընթացող մարտերին, որոնց արդյունքում փետրվարի 18-ին ազատագրվեց Օմարի լեռնանցքը: Մի շարք մարտական առաջադրանքներ կատարելուց հետո՝ ապրիլի 20-ին, Երրորդ սովխոզի ուղղությամբ գրոհի ժամանակ Ս. Աբրահամյանը ծանր վիրավորվեց: Չնայած դրան, վիրահատությունից 20 օր անց մասնակցեց մայիսի 9-ի արցախյան զինվորական շքահանդեսին և հրադադարը դիմավորեց Ստեփանակերտի զինվորական հիվանդանոցում: Մայիսի 25-ին վերադառնալով պաշտպանական շրջանի երկրորդ գումարտակ, նա ստացավ ենթասպայի կոչում և շարունակեց ծառայել ՊԲ-ում¹:

Կանայք ռազմի դաշտում ոչ միայն զենք էին կրում, իրականացնում մարտական գործողություններ, ապահովում վիրավորների տարհանումն ու առաջին բուժօգնությունը, այլ նաև հանդես էին գալիս այսպես կոչված «խնամակալի» դերում: Որպես այդպիսին, կանայք սննդի, մաքրության և այլ առօրյա հոգսերի պատասխանատուներ էին: Սա իր հերթին նշանակում է, որ կնոջ վերագրված դերը՝ որպես խնամք ապահովողի, շարունակվում էր կարևոր նշանակություն ունենալ նույնիսկ այնպիսի արտակարգ իրավիճակներում, երբ ըստ էության կնոջ և տղամարդու գործառույթները չեն տարբերվում:

Մարտակերտի շրջանի ազատագրմանը մասնակցած Սուսաննա Կոստանդյանը, դեռևս 1990թ. համալրելով Նոր Հաճնի «Տորոզյան» ջոկատի կազմը, մեկնեց Բերդաձոր: Մեկ ամիս մնալով և պայքարելով ռուս-ադրբեջանական միացյալ ուժերի ոտնձգությունների դեմ, նա կամավորականների հետ միասին վերադարձավ և սկսեց զբաղվել Արզնիի օդանավակայանում զենքի և զինամթերքի տեղափոխմամբ: 1993թ. ջոկատի առաջադրանքով Սուսաննա Կոստանդյանը մեկնեց Մարտակերտի շրջան, որտեղ և մասնակցեց Հակոբ Կամարի ու Մատաղիս գյուղերի ազատագրման ռազմագործողություններին²: Նա փորձված բուժքույր էր և մարտիկ: Այդ տեղանքում,

¹ Նույն տեղում, 2001, 10 մայիսի, թիվ 17:

² Վարդումյան Հ., նշվ. աշխ., էջ 103:

որտեղ կողք-կողքի մարտնչում էին Հայաստանից, Արցախից ջոկատներ, բուժքույրերի կարիք էր զգացվում և հասնել բոլորին՝ նրա համար շատ դժվար ու ծանր էր: Նման պայմաններում, նա մեծ պատասխանատվությամբ կատարում էր իր պարտականությունները, իսկ անհրաժեշտության դեպքում՝ զենք վերցնում: 1994թ. Նոր Հաճընի «Նաիրի» վաշտի հետ միասին տեղափոխվեց Օմարի լեռնանցք, որտեղ անտանելի ծանր պայմաններում մարտեր էին ընթանում: Թշնամու օղակի մեջ հայտնված վաշտն այդ մարտերում ունեցավ 12 զոհ և 23 վիրավոր: Նահանջի ճանապարհին Սուսաննա Կոստանդյանը վիրավորվեց, սակայն դա պատճառ չհանդիսացավ, որպեսզի նա լքի մարտադաշտը: Ղամիշլի գյուղի ազատագրումից հետո փետրվարի 15-ին վերադարձավ Երևան՝ հանգստի, որտեղ և դիմավորեց հրադարարը¹: Զինադարարից հետո շատերը վերադարձան իրենց նախկին մասնագիտություններին, իսկ նա չլքեց զինված ուժերը

Հատկանշական է, որ կանանց ներկայությունը ռազմի դաշտում, հատկապես հրամանատարական կազմում, ստիպում էր տղամարդկանց ցանկացած պարագայում դիմակայել վտանգն ու դժվարությունները և մնալ իրենց վերագրած տղամարդկային դերի մեջ:

1991թ. ՀԱԲ-ի մի ջոկատի հետ Արցախ մեկնեց Անահիտ Մարտիրոսյանը և միացավ Մարտակերտի շրջանի ազատագրման ռազմագործողություններին, որոնց ընթացքում մի քանի անգամ վիրավորվեց: 1992թ. ապրիլին Չլդրանի թեժ մարտերի ընթացքում գերի ընկած 14 թուրքերի մեջ էր Ա. Մարտիրոսյանի դպրոցական ընկերը, որի մասին տեղեկանալով, հրամանատարը նրան հանձնեց Անահիտի կամքին: Վերջինիս վրեժը մեծ էր՝ աչքի առաջ էր Սումգայիթում տանջամահ արված ընկերուհին: Առանց վարանելու, նա իր ձեռքով սպանեց «դավաճանին»: Այս դեպքերից հետո ստեղծվեց «Անահիտ» ջոկատը՝ 28 հոգուց կազմված՝ Անահիտ Մարտիրոսյանի հրամանատարությամբ: Նրա գլխավորությամբ ջոկատը, որի կազմում արցախցիների կողքին կռվում էին ռուս կամավորականներ, փառավոր մարտական ուղի անցավ՝ ապրեց և նահանջեց սարսափն ու ամոթը, և հարձակման ու գերված տարածքների ազատագրման երջանկությունը: 1993թ. Ալըշան գյուղի դիրքերում նա հերթական

¹ Նույն տեղում, էջ105:

անգամ վիրավորվեց՝ ոտքից և ձեռքից: Այս անգամ արդեն առողջական վիճակի կտրուկ վատթարացման պատճառով ստիպված էր հեռանալ պատերազմի դաշտից¹: Նրա երկարատև ապաքինման պատճառով ջոկատը լուծարվեց՝ ընդգրկվելով ԼՂՀ ՊԲ-ի կազմում: Անահիտ Մարտիրոսյանին տրված բնութագրի մեջ Արցախի հերոս, գեներալ-մայոր Արկադի Տեր-Թադևոսյանը գրում է. «Անահիտ Մարտիրոսյանը 1991թ. հոկտեմբերից զինվորագրվել է Արցախի ինքնապաշտպանական ուժերին և ծառայել Մարաղայի ջոկատում: 1992-ին նշանակվել է «Անահիտ» ջոկատի հրամանատար: 1992թ. հունիսի 26-ին Մաղավուզ գյուղի մերձակայքում ընթացող մարտական գործողությունների ժամանակ վիրավորվել է և դեռ լրիվ չապաքինված (առանց բժիշկների թույլտվության)՝ շարք է վերադարձել»²:

Հայրենիքի ազատագրման համար իր կյանքը նվիրաբերեց նաև Լուիտա Վարդանովան: Իրադարձությունների ամենաեռուն շրջանում՝ 1992թ. Վեդիի պայմանագրային գումարտակի կազմում մեկնելով Արցախ, նա մասնակցեց Հորադիզի, Դրմբոնի, Մեծշենի, Հաթերքի, Սարսանգի ջրամբարի, Հակոբ Կամարիի մարտերին: 1994թ. դեկտեմբերի 28-ին գումարտակը հերթական առաջադրանքն ստացավ Մարտակերտում: Ադրբեջանցիները, կարծես հաշտվելով պարտության մտքի հետ, անընդհատ նահանջում էին: Թշնամին ամրացել էր Հակոբ Կամարի գյուղի տարածքում և համառ դիմադրություն էր ցույց տալիս: 1994թ. հունվարին հայկական զորամիավորումները, համակարգելով իրենց գործողությունները, ձեռնամուխ եղան գյուղի ազատագրմանը, որի ընթացքում էլ Լուիտա Վարդանովան զոհվեց³:

Ամեն գյուղ, ամեն բնակավայր արդարացիորեն հպարտանում էր իր հերոս զավակներով և դուստրերով, որոնց թվում էր նաև Լիանա Մկրտումյանը: 1992թ. մտնելով Մարտակերտի պաշտպանական շրջան, նա անդամագրվեց Վլադիմիր Բալայանի ջոկատին: Սկզբնական շրջանում մասնակցեց մարտական պատրաստության պարապմունքներին, իսկ արդեն հունիս-հուլիս ամիսներին կատարեց առաջին մարտական առաջադրանքը՝ ջոկատի մշտական տեղակայման վայրից դուրս

¹ «Ազատ Արցախ», 2007, 11 փետրվարի:

² «Մարտիկ», 2004, 8-13 մարտի, թիվ 11:

³ «Մարտիկ», 2004, 15 մարտի:

բերեց զենքն ու կապի միջոցները: Մարտակերտի անկումից հետո ջոկատը հանգրվանեց «Ձառին բաղ» կոչվող տեղամասում: Լավ սերտելով զրահատեխնիկայի «լեզուն», նա դարձավ մարտական մեքենայի հրամանատար և մասնակցեց Մարտակերտի, Աղաբեկալինջի, Մոխրաթաղի, Մեծ Շենի, Սրխավենդի, Կիչանի, Դրմբոնի, Օմարի լեռնանցքի, Քարվաճառի ազատագրման մարտերին: Ահա թե ինչ է հաղորդում «Արցախ» թերթը 1992թ. դեկտեմբերի 26-ի համարում. «Լիանան ութ ամիս է՝ զենքը ձեռքին... 20 տարեկան՝ 40-ամյա տղամարդու կամք ու արիություն ունի: Կրակում է բազում զենքերից... ԲՄՊ հրամանատար էր, երբ ողջ անձնակազմով Մոխրաթաղի ուղղությամբ գրոհելիս առաջ անցան, նա գյուղ մտավ մենակ, իսկ թուրքերն այնտեղ մեծ բազա ունեին: Երբ հարկավոր չափով անցել էին գյուղի մյուս կողմը, շրջեցին մեքենան և ուղիղ նշանառությամբ կրակ տեղացին արքանի մեջ հայտնված թշնամու վրա, գերվեց թուրք կապիտան և բավականին զինտեխնիկա»¹: Ռազմի դաշտում երիտասարդ աղջկա նման համարձակ ու անձնվեր դրսևորումն ավելի էր մեծացնում նրա կողքին մարտնչող տղամարդ ազատամարտիկների պատասխանատվությունը: 1993թ. սկզբներին տեղափոխվելով Վարդենիս՝ նա անդամագրվեց տեղի ջոկատին (հրամանատար Հովսեփ Հովսեփյան): Իսկ հունիսին նշանակվեց գումարտակի ուսումնական դասակի հրամանատար: Զինադադարից հետո, որոշ ժամանակ անց, նորից վերադարձավ և շարունակեց ծառայությունը ԼՂՀ ՊԲ-ում²: Ազատամարտին մասնակցած կանանց մարտական ուղին անցնում էր Արցախի համարյա բոլոր շրջաններով: Առաջադրանքները ու գործողությունները տարբեր էին, նվիրումը՝ նույնը:

Մարտակերտի շրջանի պաշտպանությանը միացած կանանց թվում էր նաև Անժելա Հակոբյանը, ով իր մարտական ուղին սկսեց Սևանի կամավորական ջոկատի հետ: Սկզբնական շրջանում միացավ Ասկերանի և Հադրութի ինքնապաշտպանական գործողություններին, այնուհետև մասնակից դարձավ Մարտակերտի շրջանում ընթացող ծանր մարտերին:

¹ «Արցախ», 1992, 26 դեկտեմբերի:

² «Ազատ Արցախ», 2012, 7 հուլիսի, թիվ 29:

Խոջալուի կրակակետերի վնասագերծման նպատակով Սևան քաղաքի կամավորական ջոկատը տեղակայվեց Մեհթիշեն գյուղում: Անժելա Հակոբյանն սկսեց օգնել ջոկատին, իսկ 1992թ. վերջնականապես դարձավ նրա անդամ: Նույն թվականի հունիսի 25-ին մեկնելով Հադրութի շրջան, մասնակցեց Տող գյուղի ազատագրմանը և Սարիշեն գյուղի պաշտպանական մարտերին: 1992թ. հուլիսին ջոկատի շարքերում արդեն Մարտակերտի շրջանում էր, որտեղ ծանր մարտեր էին մղվում Սարսանգի ջրամբարի ազատագրման համար: Օգոստոսին ջոկատը միացավ «Մահապարտների» մարտական գործողություններին: Վաղուհաս տեղափոխվելու ընթացքում Անժելա Հակոբյանին թիկունքում թողեցին, գիտակցելով, որ կենաց-մահու կռիվ է լինելու: Երկու օրվա մեջ ջոկատն ունցավ զոհ և ծանր վիրավորներ, ինչը ստիպեց նրան առանց թույլտվության շտապել օգնության և փրկել վիրավորված մարտական ընկերներին: Նա ծառայությունը շարունակեց թիվ 5 մոտոհրաձգային բրիգադում և մինչև հրադադար մասնակցեց մի շարք ռազմագործողությունների¹:

Հայրենիքում տիրող ծանր վիճակից մտահոգված, շատ հայորդիներ տարբեր տեղերից շտապում էին ծննդավայր, նրանց թվում էր նաև Պոլինա Գրիգորյանը²:

Նա Արցախ վերադարձավ և որպես կամավորական ծառայության անցավ Մարտակերտի գումարտակում ու նրա կազմում մասնակցեց Թալիշի, Մատաղիսի, Տոնաշենի, Հակոբ Կամարիի, Մաղավուզի, Մեծ Շենի, Կուսապատի, Հոռաթաղի ազատագրմանը, Քարվաճառի մարտական գործողություններին: Պատերազմի տարիներին ստանձնելով ՊԲ ՀԴՆ 3-րդ մարտկոցի սանհրահանգչի պարտականությունը, շարունակեց ծառայությունը խառը հրետանայինի գնդում: Ապա՝ անցնելով բուժծառայության պետի պարտականությանը, ստացավ ԼՂՀ բանակի ենթասպայի կոչում: Հրադադարից հետո Պոլինա Գրիգորյանը շատերի նման չհեռացավ ՊԲ շարքերից, նա ծառայությունը շարունակեց թիվ 49971 զորամասում՝ որպես դեղատան պետ և բուժակ³:

¹ Հայուհիներ, հանրագիտարան, հատոր 1, էջ 182:

² «Մարտիկ», 2005, 8 փետրվարի, թիվ 4:

³ Նույն տեղում:

1993թ. մարտի վերջին իրավիճակը կտրուկ սրվեց հյուսիս-արևմտյան ռազմաճակատում: Ադրբեջանական բանակի հրամանատարությունը հյուսիս-արևելյան մարտազոնում հայկական ուժերի ուշադրությունը շեղելու նպատակով Քարվաճառի ուղղությամբ կազմակերպեց հանկարծակի հարձակում, որի պատճառով ՊԲ հրամանատարությունը ստիպված եղավ առժամանակ հետաձգել «Պուշկեն յալ» բարձունքի գրոհը և հոգալ Լեռնային Ղարաբաղի հյուսիս-արևմտյան դարպասների պաշտպանության մասին: Կարճ ժամանակահատվածում ավարտելով զինուժի ու տեխնիկական միջոցների վերախմբավորումը՝ ռազմաճակատի հյուսիս-արևմտյան հատվածում ստեղծվեց պաշտպանական ուժեղ պատնեշ, ինչը ոչ միայն կանխեց ադրբեջանական ուժերի խորանալու փորձը, այլ նաև մինչև ապրիլի 5-ն ազատագրեց շրջանը: Հայ ինքնապաշտպանական ուժերի շարքերում այդ ամենին մասնակցեց նաև Շուշանիկ Թահմիզյանը: Նա շարժմանը միացել էր դեռևս 1988թ. սկզբներին: Այնուհետև անդամագրվելով Էդիկ Կարապետյանի կազմած ջոկատին, մեկեց Շուշի, որտեղ էլ ջոկատը ընդգրկվեց Վաչագան Իշխանյանի գնդի կազմում: Կարճատև պատրաստությունից հետո, Շուշանիկ Թահմիզյանը գործուղվեց Խրամանլար գյուղի պաշտպանական դիրքեր: Խիզախ հայուհուն մարտական ընկերները նրան կնքել էին «Գայլի սիրտ» անունով: 1993թ. մասնակցեց Քարվաճառի, Աղդամի ազատագրական գործողություններին և Ֆիզուլու խաչմերուկի մարտերին: Անցնելով պատերազմի թոհուրոհով՝ Ֆիզուլի, Հորադիզ, Ղուբաթլու, Զանգելան, Մինջևան, 1994թ. նորից վերադարձավ Քարվաճառ, իսկ հրադադարը դիմավորեց Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղի մոտակայքում: 1994թ. նրան շնորհվեց լեյտենանտի կոչում¹:

Ազատամարտում բազմաթիվ են կանանց սխրագործությունները, ովքեր իրենց կյանքը դնելով գոյության նժարին՝ ուսն ի ուս կանգնեցին հայ տղամարդու կողքին: Այս տեսակետից հիշողության արժանի է Հեղինե (Զեմմա) Հովհաննիսյանը: Նրա մարտական ուղին սկսվեց Երասխավանից ու Տիգրանաշենից և անցավ պատերազմի ողջ ուղին, որի ընթացքում էլ երեք անգամ վիրավորվեց, սակայն ամեն անգամ

¹ «Ազատ Արցախ», 2000, 16 մայիսի, թիվ 20 :

ապաքինվելուց հետո շարք վերադարձավ և ռազմի դաշտում դիմավորեց հրադարձարը¹:

1992թ. նա արդեն գտնվում էր Մարտակերտի ինքնապաշտպանական ուժերի շարքերում: Այդ ժամանակ՝ օգոստոսին, Գետավանի մոտ, Վաղուհասի ճանապարհին, իր ջոկատի հետ շրջափակման մեջ հայտնվեց և երեք օր մնաց մահվան օղակի մեջ, սակայն ջոկատը չհանձնվեց: Այդ օրհասական պահին արիասիրտ հայուհին հակատանկային նոնակով պայթեցրեց թշնամու գրահամեքենան, որի ժամանակ էլ վիրավորվեց և կորցրեց գիտակցությունը: Սակայն գիտակցության գալով, ստացավ անհրաժեշտ բուժօգնություն և վերադարձավ ռազմի դաշտ: Մարտական ընկերների վկայությամբ, նա զորամասի ոգին էր՝ միշտ անվախ, թշնամու համար՝ անկանխատեսելի: Արդեն 1994թ. հունվարի 6-ին, 5-րդ կամավորական բրիգադի կազմում, որպես վաշտի հրամանատար, հրաման ստացավ Մարտակերտի ճակատից տեղափոխվել Հորադիզ: Իսկ ադրբեջանական ուժերն անցել էին լայնածավալ հարձակման: Հակոբ Կամարի գյուղի մոտակայքում հայկական ուժերը ստիպված էին նահանջել նախկին դիրքերը, իսկ գյուղն արդեն թշնամու ձեռքում էր: Հեղինե Հովհաննիսյանի վաշտը տեղ հասնելուն պես անմիջապես մարտի բռնվեց: Համալրումն ուշանում էր, իսկ թշնամին 40-50 մետր հեռավորության վրա էր: Խրամատից դուրս գալով՝ սկսեց երգել թուրքերեն, փորձելով շեղել հակառակորդի ուշադրությունը, մինչև մոտակա դիրքերից ջոկատին զինամթերք հասցնեն, ինչն էլ նրան հաջողվեց և հայկական կողմը կարողացավ հակառակորդին ստիպել հետ քաշվել: Այս դեպքերից հետո նա նշանակվեց անձնակազմի գծով հրամանատարի տեղակալ, ստանալով լեյտենանտի կոչում²:

Բանաստեղծ-ազատամարտիկ Հ. Վարդումյանը հետևյալ կերպ է ներկայացրել Հեղինե Հովհաննիսյանին. «1988-ին Ջեմման քուն ու դադար չունեիր... երբ զգաց, որ եկել է զենք վերցնելու ժամանակը, նրա «խենթությունը» հասավ գագաթնակետին՝ վաճառեց ունեցած զարդերը, տան արժեքավոր իրերը և հավաքված գումարով մի

¹ Նույն տեղում, 2002, 8 ապրիլի, թիվ 9:

² «Մարտիկ», 2005, 10 մայիսի: Հ. Հովհաննիսյանին մարտական ընկերները արագաշարժության և ճարպկության համար «Մաուզի» էին անվանել:

ջոկատ զինեց, ինքն էլ դարձավ այդ ջոկատի հրամանատար: Ջոկատի տղաները սկզբից անհարմար էին զգում կին հրամանատար ունենալու համար, բայց տեսնելով ու համոզվելով, որ իրենց կին հրամանատարը շատ տղամարդկանցից առյուծ է, սկսեցին հպարտանալ նրանով»¹:

Ինքնապաշտպանական ուժերի շարքեր մտնող կանայք շատ լավ էին գիտակցում, որ շոշափելի հաղթանակի հասնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է լինել հայրենիքի զինվոր ու այդ վեհ գաղափարն էր նրանց տանում ուժովի դաշտ:

Արցախի համար ծանր օրերին նվիրյալների շարքերը համալրեց Աղավնի Սահակյանը, ով 1992թ. մեկնելով Արցախ, «Զորավար Անդրանիկ» ընկերության, «Կանաչներ», «Մաշտոց» միավորումների շարքերում մինչև զինադադար մասնակցեց ազատագրական պայքարին: Շուշիի ազատագրումից հետո, տեղափոխվելով Մարտակերտ՝ Յուրա Հովհաննիսյանի ջոկատը, նա մասնակից դարձավ Մարտակերտի շրջանի համարյա բոլոր գյուղերի ինքնապաշտպանական մարտերին, որի ընթացքում՝ հունիսի 17-ին Ալաղալիում (ներկայումս՝ Հովտաշեն) վիրավորվեց, սակայն չլքեց ուժովի դաշտը²:

1993թ. դեկտեմբերին Աղավնի Սահակյանը տեղափոխվեց Մարտակերտի շրջանի հրետանային դիվիզիոն, որտեղ ծառայեց մինչև 1996թ. դեկտեմբերի վերջը: Նրա մարտական ուղին անցավ Շուշի, Աղդամի, Մարտակերտի, Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերում³: Հրադադար հայտարարվելուց հետո, իր ձեռքով կարած Եռագույնն, որը պատերազմի ողջ ընթացքում նրա հետ էր, ամրացրեց ազատագրված Շուշիի տներից մեկի տանիքին՝ որպես ազատության, անկախության և պետականության հավերժական խորհրդանիշ:

Արցախյան գոյամարտի բովոլ անցած մարդկանց վկայությունները մեր առջև բացում են արյունալի, օրհասական կռիվների տեսարաններ, որտեղ տեսնում ենք նաև

¹ Վարդումյան Հ., նշվ. աշխ., էջ 121:

² «Մարտիկ», 2001, 22 մայիսի, թիվ 40:

³ Նույն տեղում:

հայ կնոջը, ով վեր բարձրանալով իր կերպարից՝ նվիրվել է հայրենիքի փրկության գաղափարին, զենք վերցրել և համալրել հայոց բանակի շարքերը:

1991թ. զինվորագրվելով «Աղբյուր Սերոբ» ջոկատին, Նաիրա Սահակյանը մեկնեց Արցախ և մասնակցեց Ասկերանի, Լաչինի շրջաններում ընթացող թեժ մարտերին: Այնուհետև, տեղափոխվելով Մարտակերտի շրջան, շարունակեց ծառայությունն այնտեղ: Մարտերում նա ոչ միայն գթության քույր էր, այլև զինվոր, ով հեշտությամբ տիրապետելով զենքի տարբեր տեսակների, դարձավ անվրեպ նշանառու: Բացի գերազանց հրաձիգ լինելուց, նա նաև հմուտ հետախույզի էր: Ջոկատի հետախույզների հետ միասին մեկնում էր թշնամու թիկունք, կատարում հրամանատարության առաջադրանքները, և պատահական չէր, որ իր ճարակության, անվախության, թշնամուն հմտորեն մոլորեցնելու կարողության համար ստացել էր «Սպիտակ աղվես» մականունը: 1993թ. Նաիրա Սահակյանը Ոսկան Գյուլումյանի գումարտակի կազմում գտնվում էր Մարտակերտի շրջանի Կուսապատ գյուղում: Շտաբը և պահեստայինները մնացել էին Կուսապատում, մնացածը գիշերով առաջացել և դիրքավորվել էին ջրամբարի մերձակա բարձունքների վրա: Հակառակորդը, նկատելով գումարտակի տեղաշարժը, մարտի 9-ի լուսաբացին, վնասագերծելով ձախակողմյա պահակակետը, թափանցեց թիկունք՝ շրջափակման մեջ գցելով դիրքավորված զորամիավորմանը: Ահեղ մարտեր սկսվեցին, որոնց ընթացքում նահատակվեց Նաիրա Սահակյանը¹:

Արցախի համար ճակատագրական օրերին կամավորական ջոկատների շարքերը համալրեց նաև հայրենիք վերադարձած Թամարա Աբրահամյանը: Նախքան ռազմական գործողություններին միանալը, նա 1990թվականից զենք ու զինամթերք էր հայթայում և հասցնում Ստեփանակերտ: 1992թ. մեկնելով Արցախ՝ սկզբում ծառայեց Մ. Մելքոնյանի հրամանատարությամբ գործող պաշտպանական շրջանում, այնուհետև հոկտեմբերից՝ Ի. Բաղդյանի երրորդ գումարտակում, որը գտնվում էր Մարտակերտում: Առաջին մարտական մկրտությունը ստացավ Չլդրան գյուղի ճանապարհին: Կարճ ժամանակ պահանջվեց, որպեսզի նրա մեջ կազմավորվի ոչ միայն զինվորական բուժքույրը, այլև՝ զինվորը: 1992թ., երբ դաշտային հոսպիտալն Առաջածոր գյուղում էր, ադրբեջանական մի զորախումբ, ճեղքելով պաշտպանությունը, հանկարծակի

¹ Հայուհիներ, հանրագիտարան, հատոր 1, էջ 206:

հարձակում կատարեց բազայի վրա: Ստեղծված օրհասական վիճակը Թամարա Աբրահամյանին ստիպեց փոքր զորախմբով պաշտպանություն կազմակերպել: Այդ ընթացքում օգնություն ստանալով, շրջապատման մեջ առան ու ոչնչացրին գրոհայիններին, որի ժամանակ էլ նա վիրավորվեց, սակայն հրաժարվեց հոսպիտալում բուժվելուց: Առաջածորի իրավիճակը կրկնվեց 1993թ. դեկտեմբերին Մատաղիս գյուղում: Ադրբեջանցիները անսպասելի խուճապ առաջացրեցին: Մասնակցելով խուճապի կանխման և վիրավոր ազատամարտիկների կազմակերպված դուրսբերմանը, փորձված բուժքույրը ևս մեկ անգամ ապացուցեց իր նվիրվածությունը մարտական ընկերներին: Պատահական չէր, որ նա արդեն իր հաստատուն տեղն ուներ գումարտակում: 1993թ. ընթացքում Մարտակերտի գնդում արցախյան մյուս զորամիավորումների հետ միասին մասնակցեց Մարտակերտի, Քարվաճառի, Կուբաթլուի, Ֆիզուլիի, Ջաբրայիլի շրջանների ազատագրման մարտերին: Մինչև 1994թ. երեք անգամ վիրավորվեց, սակայն չհեռացավ մարտի դաշտից: Մշտապես սանիտարական պայուսակով, իսկ հարկ եղած դեպքում՝ զենքով, մնաց մարտընկերների կողքին: Հունվարին Չլդրանի մոտակայքում նորից վիրավորվելով, տեղափոխվեց հոսպիտալ, որտեղ և դիմավորեց զինադադարը¹: Բուժումն ավարտելուց հետո Թամարա Աբրահամյանն իր մարտական ընկերներից շատերին գտավ Լաչինում և ինքն էլ բնակություն հաստատեց այնտեղ՝ շենացնելու ազատագրված բնաշխարհի մի մասնիկը:

Հայրենասիրական մղումներով կամավոր ռազմաճակատ մեկնող կանայք կատարում էին ամենատարբեր առաջադրանքները: Նրանք ժամապահ էին, հետախույզ և կռվում էին առաջին գծում:

1993թ. գարնանը «Կարս» ջոկատի շարքերում Մարտակերտի շրջան մեկնեց Նվարդ (Նոնա) Դուդուրյանը: Վահան գյուղի դիրքերում ցնցակաթված ստանալով, դեռ չապաքինված, նա միացավ «Պուշկեն յալ» բարձունքի համար մղվող մարտերին, որտեղ և նորից վիրավորվեց: Սակայն անկոտրում կամքի և վճռականության շնորհիվ շարունակեց պայքարը՝ որպես ջոկատի ավագ մարտիկ: 1994թ. 3-րդ պաշտպանական շրջանի 2-րդ գումարտակի շտաբի պետ Ա. Առստամյանը հետևյալ կերպ է բնութագրել

¹ «Մարտիկ», 2003, 11 մարտի, թիվ 23:

Ն. Դուդուրյանին. «Ծառայության ընթացքում իրեն դրսևորել է որպես քաջարի զինվոր ու մեծ հայրենասեր: Ունի մեծ պատասխանատվություն և պահանջկոտություն իրեն վստահված գործի նկատմամբ...»¹: Ջոկատի շարքերում 1989-1994թթ. մասնակցեց ՀՀ Արարատի (Երասխ), Իջևանի, Եղեգնաձորի (Խաչիկ), Սիսիանի (Սոֆլու), Ճամբարակի (Վահան, Արծվաշեն), Գորիսի (Կոռնիձոր), Նոյեմբերյանի, ապա ԼՂՀ Մարտակերտի, Լաչինի, Քարվաճառի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին²:

Ազատագրական պայքարին միացած կանայք ենթարկվելով պատերազմի փորձությանը, շարունակում էին սատար կանգնել մարտական ընկերներին և փրկում բազմաթիվ վիրավոր ազատամարտիկների:

Պատերազմի առաջին օրերին մտնելով ՊԲ, Նունե Աթայանը 1992թ. զինվորագրվեց նորաստեղծ Կենտրոնական պաշտպանական շրջանին: Ծառայության անցավ Ս. Հարությունյանի հրամանատարությամբ գործող 3-րդ գումարտակում և մարտական մկրտությունը ստացավ Մարտակերտի շրջանի Վաղուհաս գյուղի դիրքերում, որից հետո շուրջ երեք ամիս մասնակցեց շրջանի ինքնապաշտպանական մարտերին, հատկապես՝ Դրմբոն, Չլդրան, Հարությունագոմեր, Պողոսագոմեր, Մեծ Շեն, Մաղավուզ և մի շարք գյուղերի համար մղվող մարտերին: 1992թ. ձմռանը նա գումարտակի հետ տեղափոխվեց Շուշիի շրջան, որտեղ գումարտակը տեղակայվեց Փինգյայում՝ մասնակցելով Հախնձար գյուղի ազատագրմանը³: 1993թ. ճնշելով հակառակորդի դիմադրությունը, գումարտակն անցավ լայնածավալ հարձակողական գործողությունների: Հաջորդ ռազմագործողություններն ընթացան Քարվաճառի շրջանի Յանշաղ գյուղի ազատագրման համար, որտեղ էր նաև Նունե Աթայանը: Անձնվեր ծառայության համար 1994թ. հունվարի 1-ին նա ստացավ ենթասպայի կոչում: Նրա վերջին մարտերն ընթացան Արծվաշեն (Սեյսուլան) և Գյուլուջա գյուղերի մերձակայքում, իսկ հրադադարը դիմավորեց Կարմիրավան գյուղի մատուցներում⁴:

¹ «Արցախ», 1994, 18 հոկտեմբերի:

² Նույն տեղում:

³ «Մարտիկ», 1997, 15-30 ապրիլի, թիվ 12:

⁴ Նույն տեղում:

Մինչև ԼՂՀ ՊԲ-ում ռազմաբժշկական ծառայության ստեղծումը, Շահումյանի, Մարտակերտի շրջաններում վիրավոր ազատամարտիկների բժշկական սպասարկումն իրականացվում էր ինքնօգնությամբ և փոխօգնությամբ՝ բուժօգնության անհատական միջոցներով, կամավոր մեկնած բժիշկների, բուժքույրերի, տեղական հիվանդանոցների, բժշկական կետերի քաղաքացիական բուժանձնակազմի օգնությամբ: Ընդհուպ մինչև զինադադար ՀՀ-ից կամավոր և գործուղումով Արցախի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան շրջաններ մեկնած վնասվածքաբաններ, օրթոպեդներ, վիրաբույժներ, անեսթեզիոլոգներ, համաճարակաբաններ կատարեցին բացառապես բարդ և լրացուցիչ խնդիրներ՝ անհրաժեշտ բուժօգնություն ցուցաբերեցին ազատամարտիկներին՝ ապահովվել նրանց վերադարձը մարտադաշտ, կանխել համաճարակները և վարակիչ հիվանդությունները: Նրանց շարքերում էին Արմենուի Քաբաբյանը, Ալվարդ Գասպարյանը, Թամարա Հարությունյանը, Անահիտ Հովհաննիսյանը և շատ ուրիշներ, ովքեր, կամավոր մեկնելով Շահումյանի և Մարտակերտի շրջաններ, բժշկական օգնություն ցուցաբերեցին ոչ միայն վիրավոր ազատամարտիկներին, այլ նաև խաղաղ բնակչությանը¹:

Այսպիսով, Արցախն էլ ունեցավ իր հերոսուհիները, որոնց մի մասն իրենց մարտական ուղին անցան Արցախի հյուսիս-արևելյան և հյուսիս-արևմտյան շրջանների ինքնապաշտպանության մարտերում:

Շարժման սկզբնափուլում Հայաստանում և Արցախում տարերայնորեն կազմավորված առաջին կամավորական և աշխարհագրային ինքնապաշտպանական ջոկատների շարքերը համալրած կանայք հետագա ամբողջ պատերազմի ընթացքում ցույց տվեցին, որ նրանց մասնակցությամբ կամավորական ջոկատներն Արցախում և Հայաստանում փայլուն կերպով կատարեցին իրենց առջև իրենց իսկ կողմից դրված խնդիրները: Նրանք իրենց գործունեությամբ ապացուցեցին, որ հանուն հայրենիքի պաշտպանության պատրաստ են իրենց ուսերին տանել ողջ ծանրության բեռի մի մասը: Նրանցից ոմանք իրենց կյանքը զոհաբերեցին, ոմանք էլ մարտերի ընթացքում թեկուզ վիրավորվեցին, սակայն ապաքինվելուց հետո վերադարձան մարտադաշտ և շարունակեցին պայքարը մինչև զինադադար: Կանանց մի մասն էլ, մնալով թիկունքում՝

¹ Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994 թթ., հանրագիտարան, էջ 120-149:

ոչ պակաս կարևոր դեր ունեցավ. նրանց ուսերին էր դրված ընտանիքի հոգսը, ինքնապաշտպանական ուժերին սննդամթերք մատակարարումը, մարտնչողներին հույս ու հավատի ներշնչումը:

2.2 Ստեփանակերտի ինքնապաշտպանական, Շուշիի և Քաջաթաղի ազատագրական մարտերում

1992թ. շարունակվում էր ԼՂՀ մայրաքաղաքի և հայկական գյուղերի ինտենսիվ հրետանային ոմբակոծությունը: Ինչպես հայտնի է, հունվարին Ադրբեջանը հարձակում սկսեց ճակատի ամբողջ երկայնքով: Ռազմական գործողությունների ծավալումը երիտասարդ հանրապետությանը դրեց պաշտպանության կազմակերպման ու կատարելագործման անհրաժեշտության առջև: Այս նպատակով ուժերի կենտրոնացման և գործողությունների համակարգման համար ստեղծված ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերի շտաբը խնդիր դրեց վերացնել Ստեփանակերտը շրջապատող կրակակետերը և հունվարի 21-22-ին ծանր մարտերից հետո ոչնչացվեց Ստեփանակերտ քաղաքի Կրկժան (նախկին՝ Քարքարաշեն) թաղամասում տեղակայված ադրբեջանական հրոսակների հենակետը: Այնուհետև, փետրվարի 10-ին ոչնչացվեց մայրաքաղաքին հարակից Մալիբեկլու և Ղուշչիլար գյուղերի կրակակետերը: Այնուամենայնիվ, իրավիճակը շարունակում էր մնալ ծայրահեղ լարված: Նույնիսկ Խոջալուի ուղղակայանի ոչնչացումից հետո Ստեփանակերտի հենակետային ոմբակոծություններն էսպես չկրճատվեցին¹:

Մինչև 1992թ. գարնան սկիզբը մարտական գործողություններն ունեին ընթացքային բնույթ և բխում էին իրավիճակից: Շատ դեպքերում դրանք մանրակրկիտ պլանավորված և մշակված չէին: Չնայած դրան՝ հայ կամավորականների և ինքնուս հրամանատարների հնարամտությամբ, կամքի, անձնազոհության շնորհիվ դրանք հաջողությամբ էին պսակվում, որից անմասն չէին նաև կանայք:

Յուրաքանչյուր պատերազմում ի հայտ են գալիս վառ անհատականություններ և Արցախյան պատերազմն այդ առումով բացառություն չէր: Այդպիսի

¹ Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն. Պետականության կայացումը դարերի սահմանագծում, էջ 20:

անհատականություն դարձավ նաև Ղարաբաղյան շարժման գործիչ ժաննա Գալստյանը¹: Լինելով ազգային-ազատագրական շարժման նվիրյալներից մեկը, մասնակցեց գոյամարտի գրեթե բոլոր կարևոր ռազմագործողություններին:

Դեռևս 1988թ. Բերդաձորի ենթաշրջանը վերածվել էր պատերազմական թատերաբեմի: Բոլոր կողմերից շրջապատված լինելով ադրբեջանական գյուղերով՝ ենթաշրջանի բնակավայրերը մնացել էին առանց հաղորդակցության ուղիների, կապի միջոցների, չէին գործում վարչական ենթակառուցվածքները: Հակառակորդը տարբեր գյուղերում տեղակայել էր ռազմական հենակետեր և զորախմբեր ու պարբերաբար հարձակումներ էր գործում ենթաշրջանի հայկական գյուղերի վրա, թալանում, հրկիզում, ահաբեկում տեղի հայերին: Թշնամու ոտնձգությունները կանխելու համար Բերդաձորի ինքնապաշտպանությանը միացած ժաննա Գալստյանն առաջին խնդիրը համարեց կազմակերպել տեղի ինքնապաշտպանությունը և բարձրացնել ջոկատների մարտունակությունը: 1988-1990թթ. ԼՂ կամավորական ջոկատների ընդհանուր շտաբի պետ Ռազմիկ Պետրոսյանը վկայում է. «Բերդաձորը վտանգված էր... Նրա պաշտպանությունը կազմակերպելու համար այնտեղ էր գնացել նաև շարժման անձնվեր գործիչներից մեկը՝ ժաննա Գալստյանը... Տարել էր զենք և զինամթերք... Միայն նրա ներկայությունը բավական էր մարդկանց ոգևորելու, արիությունը բարձրացնելու, հույս ու հավատ ներարկելու նրանց մեջ: Ժաննան մեծապես նպաստեց Բերդաձորի պաշտպանությունն ամրապնդելու գործին: Այդպես եղավ նա պատերազմի ողջ տևողության ընթացքում: Եվ ի վերջո կատարվեց նրա

¹ Արցախի ազգային հերոս ժաննա Գալստյանը ծնվել է 1948թ. ապրիլի 15-ին, Ստեփանակերտում: 1956-1967 սովորել է ավարտել է Ստեփանակերտի թիվ 8 դպրոցը: Ուսումը շարունակել է Բաքու քաղաքի Ախունդովի անվան լեզուների ինստիտուտում: 14 տարեկանից աշխատել է Ստեփանակերտի Վ. Փափագյանի անվան պետական դրամատիկական թատրոնում: 1988-ին պայքարի հորձանուտում էր: Մասնակցել է մի շարք ռազմական գործողությունների, որի ընթացքում ստացել է մայրի կոչում: 2000, 2005, 2010 և 2015թթ. ընտրվել է ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր: 2007թվականից ԼՂՀ ԱԺ Պաշտպանության, անվտանգության և օրինապահականության հարցերի մշտական հանձնաժողովի նախագահն է: 2004թ. նրան շնորհվել է ՀՀ ժողովրդական արտիստի կոչում: Պարգևատրվել է ԼՂՀ մի շարք շքանշաններով:

ինձը. գրոհող զորքերի հետ նա հասավ Հորադիզ, եղեգնուտների միջով մոտեցավ Արաքսին և լվացվեց նրա սառնորակ ու պղտոր ջրերով»¹:

Ժամանակը և հանգամանքները ցույց տվեցին, որ ջրկատների, թեկուզ համակարգված կռիվներով, զգալի հաջողությունների հասնելն անհնարին է: Հարկավոր է ստեղծել կանոնավոր բանակ, և Ժ. Գալստյանը դարձավ այս գործի առաջամարտիկներից մեկը: Համակարգող խմբի մի քանի անդամների հետ նա շրջում էր շրջանները, հանդիպումներ ունենում կամավորական ջրկատների հրամանատարների հետ, աշխատում ուժերը միավորել մեկ բանակային կառույցի մեջ և զորակոչ կազմակերպում: Հաթերքից ազատամարտիկ Սիրանուշ Առուշանյանը հիշում է. «1991-ի նոյեմբերի 21-ին գյուղ եկավ Ժաննա Գալստյանը Ստեփանակերտից և հայտնեց, որ ստեղծվում է կանոնավոր բանակ, ցանկացողները կարող են զինվորագրվել: Սուրեն Հարությունյանի գլխավորությամբ՝ մեծ մասը մտավ բանակի կազմի մեջ... Մարտակերտի վերին ձորակում արդեն զորակոչվում էին զինապարտերիտասարդներ: Ստեղծվում էր կանոնավոր բանակ...»²:

ԼՂՀ ՊԲ կազմավորումից հետո Ժաննա Գալստյանը նշանակվեց ՊԲ Կենտրոնական պաշտպանական շրջանի³ հրամանատարի տեղակալ:

Վերադասավորելով ուժերը, հայկական բանակն անցավ հակահարձակման և մեկը մյուսի ետևից ազատագրեց թշնամու բռնազավթած տարածքների զգալի մասը, որում էլ դարձյալ մեծ ավանդ ունեցավ Ժաննա Գալստյանը, ով սկսած Ստեփանակերտի հրապարակից, Շուշիից, Ջաբրայիլից մինչև Հորադիզ ու Մարտակերտի շրջանի ազատագրումը, քայլեց առաջին շարքերում:

1991թ. օրհասական վիճակում էր գտնվում Արցախի միջնաբերդը՝ Ստեփանակերտը: Քաղաքի դրությունը ծանրանում էր նրանով, որ նրա հարևանությամբ էր գտնվում Շուշին՝ Արցախում ադրբեջանական ագրեսիայի գլխավոր հենակետը: Շուշին գտնվում էր Ստեփանակերտից ուղիղ գծով 5-6 կմ դեպի հարավ, բարձրադիր

¹ Պետրոսյան Ռ., Արցախի պաշտպանության դիրքերում, էջ 143:

² «Մարտիկ», 2009, 12 ապրիլի, թիվ 22:

³ Կենտրոնական պաշտպանական շրջանը ստեղծվել է Ստեփանակերտում կազմավորված կամավորական ջրկատների ու խմբերի հիմքի վրա և բացառիկ դերակատարություն է ունեցել Արցախյան ազատամարտի առանցքային ռազմագործողություններում:

ժայռեղեն սարահարթի վրա և հիանալի գերիշխող դիրք էր գրավում նրա նկատմամբ. Շուշիից Ստեփանակերտը երևում է՝ ինչպես ձեռքի ասի մեջ: 1991թ. նոյեմբերից «Ալազան» տիպի հրթիռներով, իսկ 1992թ. փետրվարի կեսերից արդեն՝ «Գրադ» ռեակտիվ կայանքներով հրետակոծություններից Ստեփանակերտը և մի շարք հայկական գյուղեր ենթարկվում էին ավերածությունների: Թիկունքում մնացած կանայք ստիպված էին Ստեփանակերտում մնալ այդ վտանգավոր վիճակում, ապրել նկուղներում, հոգալ երեխաների, ծերերի մասին՝ ունենալով բազմաթիվ զոհեր և վիրավորներ: Ստեփանակերտը ոչ միայն ավերվում էր, այլև տառապում սովի ճիրաններում: 1991թ. աշնանից մեկ շնչին տրվում էր ամսական մեկ կիլոգրամ ալյուր¹: 1992թ. փետրվարից փաստորեն դա էլ չէր տրվում: 1991թ. դեկտեմբերից քաղաքը զրկվեց կենտրոնացված ջրամատակարարումից: Ընտանիքի մասին հոգացողները՝ կանայք, ստիպված էին ջրի համար հերթեր կանգնել: Ստեղծված իրավիճակում ոչինչ չէր մնում անել, քան ճիգերի գերագույն լարումով ոչնչացնել ադրբեջանցի հրոսակների որջը:

Պատերազմը հաղթական ավարտին հասցնելու և նորաստեղծ հանրապետության կայացման գործում առանձնահատուկ նշանակություն ունեցան Շուշիի ազատագրումը և շրջափակման ճեղքումը: 1992թ. մայիսի 7-ի գիշերը սկսվեց Շուշիի ազատագրման ռազմագործողությունը: Երկու օրվա մեջ հայ ռազմարվեստի փայլուն դրսևորման և ազատամարտիկների անկոտրում կամքի շնորհիվ ազատագրվեց Շուշի բերդաքաղաքը ու մայիսի 9-ը համահայկական վերածննդի նախերգանքը դարձավ: Այդ կարևոր իրադարձությունների բովում էին Անուշ Ավագյանը, Հասմիկ Բաղդասարյանը, Մանուշակ Սարգսյանը, Ֆլորա Հակոբջանյանը, Զուֆրա Հայրապետյանը, Սվետլանա Աբրահամյանը, Տանյա Առստամյանը, Մելսիդա Հարությունյանը, Աղավնի Սահակյանը, Համեստ Օհանյանը, Մարինե Դուլյանը, Շուշանիկ Աբրահամյանը և շատ ուրիշներ², որոնց մի մասը, որպես ազատամարտիկ, միացան ինքնապաշտպանական ուժերին, իսկ մի մասը կամավոր համալրեց բժշկական ջոկատը, որն ուներ մի նպատակ՝ վիրավորներին ցուցաբերել առաջին բժշկական օգնություն հենց մարտի դաշտում:

¹ Թաղևոսյան Ռ., նշվ. աշխ., էջ 543:

² «Մարտիկ», 2004, 10 մայիսի, թիվ 12:

Անուշ Ավագյանը դեռևս 1991թ. ծնունդը միացավ Ստեփանակերտում Կարո Բաբայանի հրամանատարությամբ գործող ջոկատին և անմիջապես մասնակցեց Մարտունու շրջանի Ղարադաղլու (Վարանդա) գյուղի ազատագրման համար մղվող մարտերին: Հաղթահարելով առաջին փորձությունները, նա դարձավ իսկական զինվոր՝ կոփված, ամուր, միևնույն ժամանակ՝ գթասրտությամբ լեցուն: Շուշիի ազատագրմանը մասնակցելուց հետո, վաշտի հետ, նա փառավոր ուղի անցավ՝ Լաչինի միջանցքի, Բերդաձորի ենթաշրջանի, Մարտակերտի և Ասկերանի շրջանների, Նախիջևանի և Փրջամալ գյուղերի ազատագրական մարտեր, որտեղ և ծանր վիրավորվեց: Չնայած դրան, ապաքինվելուց հետո նորից վերադարձավ մարտի դաշտ, և արդեն 1992թ. նշանակվեց ԲՄՊ-ի անձնակազմի հրամանատար: Մարտական մեքենայի անձնակազմն անմիջապես աչքի ընկավ իր հմուտ գործունեությամբ: 1993թ. հունվարի 15-ից համալրեց Շուշիի գումարտակի կազմը և, միանալով հարձակողական գործողություններին, հակառակորդին մեծ կորուստներ պատճառեց՝ վերջիններիս ստիպելով նահանջել դեպի հյուսիս-արևելք: Այնուհետև փետրվարին գումարտակը տեղափոխվեց Մարտակերտի շրջանի Վանք գյուղի մոտակայք և, գրավելով ճանապարհին տեղակայված ամրություններն ու բարձունքները, հասավ Վաղուհաս գյուղի մատույցները: Նախքան Վաղուհասի վրա գրոհելը, հանկարծակի հրետակոծություն սկսվեց հակառակորդի կողմից, որի ժամանակ էլ Անուշ Ավագյանը զոհվեց¹: Նույն ճակատագրին արժանացավ նաև Շուշիի ազատագրմանը մասնակից Հասմիկ Բաղդասարյանը: Երբ հայկական միացյալ ուժերը պատրաստվում էին Շուշիի ազատագրմանը, այդ ժամանակ նա գտնվում էր երեք հարյուր հոգուց կազմված միավորման մեջ, որն ապրիլի 28-ից տեղավորվել էր Սղնախ գյուղում: Հինգ բուժքույրերի հետ ապրում էին ծղոտից պատրաստված տնակի մեջ, և բոլորը սպասում էին վճռական գրոհին՝ նպատակ ունենալով ազատագրված տեսնել Շուշին: Քաղաքի ազատագրումից հետո Հասմիկ Բաղդասարյանը շարունակեց մարտական ուղին և մասնակցեց Ասկերանի, Մարտակերտի շրջանների ազատագրական պայքարին:

¹ Վարդումյան Հ., Կին ազատամարտիկները, էջ 3-4:

Բազում վտանգներից փրկվելով և ողջ մնալով, նա զոհվեց Ստեփանակերտում, հերթական ոմբակոծության ժամանակ՝ 1992թ. օգոստոսի 22-ին¹:

Մարտի դաշտում կանանց պահվածքը հիացմունք ու պաշտամունքի հասնող պատկառանք էր առաջ բերում, ինչը բարձրացնում էր նրանց բարոյական ոգին: Նրանց ներկայության շնորհիվ ստեղծվում էին զինվորական կոլեկտիվներ՝ ընդունակ կատարելու ամենադժվար մարտական առաջադրանքները:

Շուշիի ազատագրմանը մասնակից Մարինե Դուլյանը մարտական ընկերների շրջանում հայտնի էր «Ղարաբաղի կոբրա» մականունով: Միանալով տարբեր կամավորական ջոկատներին, մասնակից դարձավ Շուշիի, Հադրութի, Մարտակերտի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին՝ հիմնականում կատարելով հետախուզական առաջադրանքներ²:

Նշենք, որ Սվետլանա Աբրահամյանի, Մելսիդա Հարությունյանի և Աղավնի Սահակյանի մարտական ուղին անցել էր հիմնականում Արցախի հյուսիս-արևելյան շրջանում: Նրանք ներդրում ունեցան նաև Շուշիի ազատագրմանը: Նույնը կարող ենք ասել Տանյա Առստամյանի և Շուշանիկ Աբրահամյանի մասին, ովքեր հիմնականում մասնակցեցին Արցախի հարավ-արևելյան շրջանների ինքնապաշտպանությանը:

Շուշիի ազատագրմանը մասնակից Զուխրա Հայրապետյանը³ Ստեփանակերտում ճանաչված էր դեռևս 1988թ.-ից, երբ Արցախի ծովացած ոգևորությունը բոլորին հավաքեց Լենինի՝ ներկայիս Վերածննդի հրապարակ: Այստեղ նա բուժօգնություն էր ցույց տալիս հանրահավաքի մասնակիցներին: Իսկ երբ սկսվեց պատերազմը, առանց վարանելու իր տեղը զբաղեցրեց ազատության համար մարտնչող ազատամարտիկների շարքերում: Առաջին մարտական մկրտությունը ստացավ 1991թ. Կրկժանի ինքնապաշտպանական մարտերի ժամանակ: Այնուհետև մասնակցեց Շուշիի, Մալիբեկլուի, ապա Խոջալուի ազատագրման գործողություններին: 1992թ. սկզբին Ստեփանակերտում ստեղծվեց փրկարար ծառայություն, որի պարտականությունների

¹ «Մարտիկ», 1999, 5 մայիսի, թիվ 8:

² <http://hayeli.am/article/581254>, Մարինե Դուլյանը վկայում է, որ մականունը ստացել է հետախուզական առաջադրանքները կատարելու ժամանակ:

³ 1967թ. ավարտել է բժշկական ուսումնարանը, և աշխատանքի անցել շտապօգնության կայանում՝ որպես բուժքույր: Պարգևատրվել է ԼՂՀ «Շուշիի ազատագրման համար» և «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին» մեդալներով, «Հայաստանի երկրապահ» հուշամեդալով:

մեջ էին մտնում վիրավորներին առաջին բուժօգնություն ցուցաբերելը և հիվանդանոց հասցնելը, զոհվածներին մարտի դաշտից դուրս հանելը, քաղաքում հրետակոծությունից տուժածներին օգնելը և այլն: Զուխրա Հայրապետյանն ընդգրկվեց փրկարար վաշտի առաջին դասակի կազմի մեջ: Նրա ջանքերի գնով բազմաթիվ ազատամարտիկների կյանք փրկվեց: Իսկ արդեն 1993թ. հունվարին, նշանակվելով Կենտրոնական պաշտպանական շրջանի գումարտակի բուժկետի պետ, դրա կազմում մասնակցեց Հադրութի, Աղդամի, Զաբրայիլի, Ղուբաթլուի, այնուհետև՝ Գյուլուջա և Արծվաշեն գյուղերի ազատագրմանը¹: Գումարտակի անձնակազմը մեծ հարգանք էր տաժում նրա նկատմամբ և յուրաքանչյուր վիրավորված մարտիկ իրեն ապահովված էր զգում, եթե բուժօգնությունը Զուխրա Հայրապետյանի կողմից է: Հրադադարից հետո նա վերադարձավ Ստեփանակերտ՝ իր նախկին աշխատանքին:

Շուշիի ազատագրման մարտերին միացած Մանուշակ Սարգսյանը, Ֆլորա Հակոբջանյանը և Համեստ Օհանյանը, մասնակցելով տարբեր շրջանների ինքնապաշտպանական մարտերին, իրենց ներդրումն ունեցան հայրենի հողի ազատագրման գործում: Միանալով Աշոտ Ղուլյանի (Բեկոր) ջոկատին, մասնակցեցին Շուշիի ազատագրմանը և առաջիններից էին, ովքեր ոտք դրեցին ազատագրված քաղաք: Այդ ընթացքում Մանուշակ Սարգսյանը վիրավորվեց ողնաշարից, սակայն, ապաքինվելուց հետո, վերադարձավ մարտի դաշտ, ավելին՝ 1993թ. Հադրութի շրջանի Տող գյուղի, Աղբուրունի, Ահմեդբեյլիի ռազմական գործողություններին մասնակցելու համար արժանացավ հրամանատարության շնորհակալությանը (հրամանատար՝ գնդապետ Հ. Հարոյան): Լինելով մարտական գործողությունների (Կրկժան, Խոջալու, Շուշի, Հադրութ, Մարտունի) թեժ կետերում, նրանց պայքարը շարունակվեց մինչև հրադադար²:

Շուշիի և նրան մերձակա ԼՂՀ այլ տարածքների կրակակետերի ոչնչացումից հետո ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերի առջև խնդիր դրվեց բացել կենսականորեն կարևոր Շուշի-Լաչին-Զաբուխ ճանապարհը, որը հնարավորություն կստեղծեր վերաց-

¹ Բալայան Ռ., Կանայք Արցախյան պատերազմի հերոսամարտում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», թիվ 1, Ստեփանակերտ, 2001, էջ 104:

² «Ազատ Արցախ», 2013, 30 մայիսի, թիվ 56: Տե՛ս նաև «Մարտիկ», 2012, 13-20 հոկտեմբերի, թիվ 41:

նել հանրապետության շրջափակումը և ապահովել բնականոն կենսագործունեությունը: Այդ իրադարձությունների հորձանուտում հայտնվեց նաև Մարինե Աղաջանյանը, ով դեռևս 1989թ. անդամագրվելով Բերդաձորի ինքնապաշտպանական ջոկատին, կատարում էր ԲԻԽ-ի (Բերդաձորի ինքնապաշտպանության խորհուրդ) կողմից տրված մարտական առաջադրանքները: Բերդաձորի ենթաշրջանի ազգաբնակչությանը տեղում պահելու համար ԲԻԽ-ի առաջարկությամբ և ԼՂԻՄ ժողկրթության բաժնի համապատասխան հրամանագրով (05.09.1990), նա նշանակվեց Բերդաձորի նորաստեղծ մանկապարտեզի վարիչ: Իսկ 1991թ. ենթաշրջանն ադրբեջանցիների կողմից բռնի տեղահանելուց հետո, Մարինե Աղաջանյանը 1992թ.-ից ծառայությունը շարունակեց ՊԲ հրետանային դիվիզիոնում՝ սկզբում որպես ռադիոհեռախոսավար, այնուհետև՝ սանհրահանգիչ¹: Մայիսի 18-ին հայ հայ ինքնապաշտպանական միավորումները մտան Լաչին (Քաշաթաղ)՝ դրանով իսկ ճեղքելով եռամյա շրջափակման օղակը: Արդեն մայիսի 20-ին Գորիս-Ստեփանակերտ ճանապարհով ԼՂՀ մայրաքաղաք հասցվեցին հարյուրավոր տոննա մարդասիրական բեռներ՝ սննդամթերք, դեղորայք և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ: Դրան հաջորդեցին հակառակորդի կրկին լայնածավալ ռազմագործողությունները, որոնց ընթացքում զոհվեցին Աղավնի Տեր-Ստեփանյանը և Ալվարդ Վարդանյանը: Նշենք, որ վերջինս, միանալով Սյունիքի աշխարհազոր ստեղծելու և Գորիսի սահմանամերձ գոտում ռազմականացված բնակավայրեր հիմնելու ԱԻՄ-ի նախաձեռնությանը, ազատագրված բնակավայրերում մասնակցեց աիմավանների ստեղծմանը, ինչպես նաև զորավարժություններին: Այնուհետև՝ 1990թ. համալրելով ինքնապաշտպանական ուժերի շարքերը, մասնակցեց Լաչինի ազատագրման մարտերին, որոնց ժամանակ, մարտական ծառայությունների կատարման ընթացքում՝ հուլիսի 29-ին, Աիմավան-6-ում (Լաչինի շրջանի Հոչազ գյուղ) զոհվեց²:

Արցախյան ազատամարտի մարտիկների նվիրվածությանը չէին զիջում կանայք, ովքեր կամավոր իրենց փխրուն ուսերին վերցրին պատերազմի ծանր բեռի իրենց բաժինը:

¹ Հայուհիներ, հանրագիտարան, հատոր 1, էջ 146:

² «Մարտիկ», 1995, 1 փետրվարի, թիվ 3:

Հակառակորդի կողմից սկսված լայնածավալ գործողություններին դիմակայելու և հետ շարտելու համար ԼՂՀ ինքնապաշտպանական ուժերը դիմեցին համակարգված ռազմագործողությունների, որին միացավ նաև կանանց վաշտը:

Կանանց վաշտի զինվորները (նրանց այդպես էին կոչում) իրենց նպատակաուղղվածությամբ և արիությամբ աչքի էին ընկնում ազատամարտիկների շրջանում: Այսպես, 1992թ. ամռանը Ժաննա Գալստյանի առաջարկով և Արկադի Տեր-Թադևոսյանի աջակցությամբ «Սպիտակ» փրկարարների խմբի բժիշկների ուժերով կազմակերպվեցին առաջին բուժօգնության դասընթացներ, որոնց ավարտից հետո 24 հոգուց բաղկացած խումբն ուղարկվեց Շուշիի ուսումնական կենտրոն՝ նախնական զինվորական պատրաստություն անցանելու համար, սակայն կանանց գումարտակ չկազմավորվեց: Արդեն 1992թ. դեկտեմբերին կանանց խումբը՝ Մարգարիտա Սարգսյանի, Կարինե Դանիելյանի, Եվգենյա Առստամյանի, Գայանե Առստամյանի, Անահիտ Պետրոսյանի, Անահիտ Թամրազյանի, Վարդուհի Գևորգյանի, Մարգարիտա Թառանյանի և Արեգա Սարգսյանի մասնակցությամբ մտավ 8-րդ վաշտի կազմ, որի հրամանատարն էր Մարտիկ Գասպարյանը¹: Այդ պահից մինչև պատերազմի վերջ նրանք գտնվում էին ռազմաճակատի առաջնային գծում: Կարինե Դանիելյանը պատմում է. «Երբ Շուշիի պաշտպանության համար ստեղծվեցին կամավորական ջոկատներ, որոշեցի կամավորագրվել: Եթե իմ մեջ կար այդ խիզախությունը, ինչո՞ւ չպայքարեի, չկռվեի հայրենակիցներիս հետ մեկտեղ... Կռվի թեժ պահերին ջոկատի տղաները փորձում էին մեզ հետ պահել՝ իրենք առաջ ընկնելով: Բայց, միևնույն է, մենք մեր բաժին պատերազմը ունեինք... Ջոկատը մասնակցեց թշնամու բազմաթիվ կրակակետերի վերացման գործողություններին, ինչպես նաև Լաչինի շրջանի ազատագրման մարտերին»²:

Ինչպես նրանք են վկայում, արդեն մի քանի մարտերից հետո ռազմի դաշտում հմտացել էին և առաջին օգնությունը ցույց տալուց բացի, զենքը ձեռքներին մասնակցում էին հարձակողական գործողություններին: Նրանք դարձան հմուտ զինվորներ՝ իրենց մեջ դրսևորելով հայուհու առաքինի բնավորությունն ու վեհ

¹ «Ազատ Արցախ», 2009, 9 մայիսի, թիվ 52:

² «Մարտիկ» 2011, 4 փետրվարի, թիվ 4:

գաղափարները: Կանանց վաշտի համար առաջին լուրջ փորձությունը եղավ 80-րդ և 81-րդ պահակակետերի՝ Լաչինի (Բերձոր) լեռների պաշտպանության ժամանակ, երբ ցրտաշունչ ձմռան այդ օրերին մեծ դժվարություններով կատարում էին իրենց պարտքը: Նրանց հիշողության մեջ հատկապես խոր հետք են թողել 1993թ. օգոստոսյան դեպքերը: Շուշիի գնդի կազմում նրանք տեղափոխվեցին Ղուբաթլուի շրջանի Բաշարաթ գյուղ, որտեղ ծանր մարտեր էին ընթանում: Օգոստոսի 11-ին գլխից վիրավորվեց Կարինե Դանիելյանը, ով դիպուկահար էր ու սանհրահանգիչ: Մեկ շաբաթ անց՝ օգոստոսի 18-ին, Ղուբաթլուի շրջանի Բաշարաթ գյուղի համար մղվող մարտերում զոհվեց Մարգարիտա Սարգսյանը, որը հայտնի էր իր անվեհեր քաջությամբ և հմտավարժ դիպուկահարի անունով: Նրա վերջին մարտն արյունալի էր, որ տևեց մեկ ժամ՝ 14 հայ մարտիկների հետ: Շրջափակման մեջ հայտնվելով, Մարգարիտա Սարգսյանը նռնակ պայթեցրեց և ոչնչացրեց հակառակորդի յոթ զինվորի: Այդ մարտում տասնհինգ ազատամարտիկներից փրկվեցին միայն երեքը¹: Մարգարիտա Սարգսյանի զոհվելուց մեկ օր անց վիրավորվեց նշանառու Եվգենյա Առստամյանը: Չնայած ունեցած կորուստներին, կանանց վաշտը շարունակեց իր հայրենանվեր գործը: Նրանք հմտացան նաև հետախուզական գործողություններում, որոնցում աչքի ընկավ Անահիտ Թամրազյանը: Վերջինս հետախուզական գործողություններին մասնակցելու համար ստացավ լեյտենանտի սպայական կոչում: Արժե հիշատակել, որ վաշտի կանանց մի մասն իր պայքարը սկսել էր դեռևս 1988-1989թթ., հատկապես՝ Գայանե Առստամյանը, Վարդուհի Գևորգյանը և Արեգա Սարգսյանը, ովքեր շարժմանը միանալով հենց առաջին օրերից, իրենց անձնվեր գործը շարունակեցին ինքնապաշտպանական ջոկատներում, այնուհետև՝ Պաշտպանության բանակում: Կանանց վաշտը Շուշիի գնդի կազմում շարունակեց պայքարը և անցավ ողջ պատերազմը: Հետագայում այդ վաշտի հիման վրա ստեղծվեց 5-րդ գումարտակը: Նույնիսկ զինադադարի հաստատումից հետո նրանք մասնակցեցին Կարմիրավանի համար մղվող վերջին մարտերին²: Նրանք մշտապես լինելով առաջնագծում, ինքնապաշտպանության ուժերի մյուս ստորաբաժանումների հետ, 1992-

¹ Նույն տեղում, 2004, 25 մարտի, թիվ 31:

² Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 թթ., հանրագիտարան, էջ277-290:

1994թթ. մասնակցեց Շուշիի, Լաչինի, ինչպես նաև Մարտակերտի շրջանների, Ադդամի, Ղուբաթլուի ազատագրման մարտերին:

Արցախյան ազատամարտը հերոսական փայլուն օրինակներ շատ ունի: Դրանց մեջ, այնուամենայնիվ, առանձնանում է Քարին տակի հերոսամարտը: Այն մշտական գրանցմամբ մտավ ազգային-ազատագրական պայքարի պատմության մեջ, որին մասնակից կանանց շարքերում նույնպես զոհեր եղան, այդ թվում Ադելա Աբրահամյանը, Կամելա Պետրոսյանը և Նարինե Առաքելյանը¹:

1992 թ. 16-ամյա Նարինե Առաքելյանը (Նանո) ջոկատի շարքերում կապավորի աշխատանք էր կատարում, միաժամանակ մարտական գործողությունների ընթացքում ազատամարտիկներին զենք, զինամթերք հասցնում: Մարտական ընկերների վկայությամբ, երբ անհնար էր դարձել դիրքերին մոտենալը, Նարինե Առաքելյանն իր շան վրա էր կապում, տեղափոխում զինամթերք, իսկ շան սպանվելուց հետո, արհամարհելով վտանգը, ինքն էր զենք տեղափոխում, որի ընթացքում էլ, 1992թ. հունվարի 26-ին, զոհվում է²:

Քարին տակի հերոսամարտը ճակատագրական եղավ նաև Ադելա Աբրահամյանի և Կամելա Պետրոսյանի համար, ովքեր հրետակոծությունից, գնդակոծությունից փրկվելուց հետո, զոհվեցին հունվարի 26-ին: Հավելենք, որ այդ օրը Ադրբեջանի պատմության մեջ մտավ «Արյունոտ ձոր» անվանումով, իսկ հայ նորագույն պատմության մեջ՝ որպես «Քարին տակի հերոսամարտ»:

Քարին տակի ինքնապաշտպանությանը մասնակցեց նաև Շոշ գյուղի կամավորական ջոկատը, որտեղ Ալվինա Խաչատրյանը ծառայում էր որպես կապավոր: Նրա մարտական ուղին սկսվեց գյուղի ինքնապաշտպանական մարտերից: Ջոկատի շարքերում մասնակցեց նաև Շուշիի, Լաչինի շրջանների ազատագրման մարտերին: Այնուհետև ծառայությունը շարունակեց Կենտրոնական պաշտպանական շրջանի հետևակային գումարտակում, մասնակցելով գումարտակի վարած մի շարք մարտական գործողությունների³:

¹ Արցախապատում, գիրք 3, Քարինտակի հերոսամարտը, էջ 39:

² Նույն տեղում:

³ «Ազգ», 1999, 17 փետրվարի:

Պատերազմի տարիներին օր-օրի ավելանում էր կանանց թիվը Կենտրոնական պաշտպանական շրջանի կազմում: Նրանց զինվորագրումը բանակ, իհարկե, տվեց իր դրական արդյունքը՝ իրենց անսպառ եռանդով ու անսասան նվիրվածությամբ կանայք մասնակցեցին Արցախյան հերոսական պայքարին: Համալրելով Կենտրոնական պաշտպանական շրջանի տարբեր ստորաբաժանումներ՝ կանայք (Լյուդմիլա Գրիգորյանը, Անյա Հակոբյան, Փերի Ղազարյան, Վալյա Մեհրաբյան, Արինա Գրիգորյան, Ալվարդ Բաղդասարյան, Էլյա Աղաջանյան, Լյուդմիլա Սարինյան, Էլմիրա Աղայան, Սվետլանա Գրիգորյան, Էլմիրա Առաքելյան, Ժենյա Հարությունյան, Գայանե Պողոսյան, Վալյա Հակոբյան, Ժաննա Նասիբյան, Մարինա Մարտիրոսյան, Գայանե Ավետիսյան, Աիդա Բադալովա, Մանյա Պետրոսյան, Մարինե Պետրոսյան, Կարինե Պետրոսյան, Անժելա Գալստյան, Լյուդմիլա Օվչարենկո, Լիանա Աբրահամյան, Հասմիկ Առաքելյան, Նաիրա Գևորգյան, Ելենա Թարխանյան, Օլսաննա Մելյան, Էմմա Սարգսյան, Ռայա Գրիգորյան, Վերա Թևոսյան, Անաիդա Աբրահամյան, Ստելա Բադասյան, Սոնյա Մարտիրոսյան, Գոհար Դոնոմայան և շատ ուրիշներ)¹ ոչ միայն մասնակցեցին Ստեփանակերտի, Շուշիի, Լաչինի ռազմագործողություններին, այլև հյուսիսային ուղղությամբ կազմակերպված հակահարձակողական, Քելբաջարի շրջանի հենակետերի վնասազերծման, Մարտակերտի, Աղդամի, Հորադիզի, Զանգեղանի, Օմարի լեռնանցքի ազատագրման ռազմական գործողություններին²:

1992թ. Կենտրոնական պաշտպանական շրջանի 3-րդ գումարտակը համալրեց Ստալինա Ասրյանը, ով կարճ ժամանակ անց կարողացավ իրեն դրսևորել ու մասնակից դառնալ գումարտակի մարտական գործողություններին³: Դրա շարքերում մասնակցեց Մարտակերտի, Քարվաճառի, Շուշիի, Քաշաթաղի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Զինակիցների խոսքերով ռազմական ժամանակների դաժան առօրյան նա տանում էր աննկուն և շատերն ձգտում էին նմանվել նրան: Երկու անգամ վիրավորվեց, սակայն ամեն անգամ էլ մինչև վերջ չապաքինվելով, վերադարձավ շարք և մասնակցեց գումարտակի վարած

¹ ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 1, պմ. 1, թ. 1-3: Տե՛ս նաև Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 թթ., հանրագիտարան, էջ 277-290:

² ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 1, պմ. 1, թ. 1-3

³ «Մարտիկ» 2010, 11 մարտի, թիվ 8:

մարտական առաջադրանքների կատարմանը: Սակայն նրա մարտական ուղին նույնպես ընդհատվեց. 1993թ. մարտի 20-ին Ստալինա Ասրյանը զոհվեց Հակոբ Կամարի գյուղի մոտակայքում՝ ականի պայթյունից¹:

Արցախյան ազատամարտում իրենց արժանի ավանդը ներդրեցին նաև քաղաքացիական բժշկությունից միանգամից ռազմական բժշկության անցած շատ բժիշկներ, բուժքույրեր, սանիտարներ, ովքեր ծանր ու դժվարին պայմաններում փրկեցին բազմաթիվ կյանքեր, շարք վերադարձրին հազարավոր ազատամարտիկների: Կին բուժաշխատողները, առհասարակ բուժանձնակազմը Ղարաբաղյան պատերազմի պատմության մեջ ունեցան իրենց ուրույն տեղը: Նրանցից շատերը կանգնած էին Արցախի ռազմաբժշկության ստեղծման ակունքներում:

Ժամանակի թելադրանքով 1992թ. հունվարին ստեղծվեց կամավոր բուժաշխատողների խումբ (հիմնադիր՝ Վ. Մարության)², այնուհետև ստեղծվեցին ռազմադաշտային շարժական հոսպիտալներ, որոնք հետևում էին ինքնապաշտպանական ուժերին, իրագործում բուժօգնությունը դաշտային պայմաններում: Սկզբում Կենտրոնական և շարժական հոսպիտալները համալրեցին Անժելա Հարությունյանը, Լիդա Աղաբեկյանը, Արևիկ Անդրյանը, Արմիդա Ավանեսյանը, Ալվարդ Բաղդասարյանը, Անժելա Գրիգորյանը, Անյուտա Թադևոսյանը, Ջուլիետա Խաչատրյանը, Գայանե Հայրապետյանը, Աիդա Ղուլյանը, Սուսաննա Մարգարյանը, Նաիրա Իսրայելյանը: Նրանք պատերազմի տարիներին անհնարինը դարձնում էին հնարավոր՝ փրկելով հարյուրավոր զինվորների կյանք:

Պատերազմի թեժ օրերին կենտրոնական և շարժական հոսպիտալների բուժաշխատողների շարքերը ընդլայնվում էին կանանց (Ռոզա Դադայան, Օֆելյա Սարգսյան, Հերմինե Հայրապետյան, Ֆլորա Հակոբջանյան, Ժենյա Առստամյան, Թամարա Դանիելյան, Էմմա Աբրահամյան, Ջուլիետա Հայրիյան, Գայանե Տոնյան, Գյուլչորա Գևորգյան, Ռայա Գրիգորյան, Ռայա Դանիելյան, Վեհանուշ Այվազյան, Գայանե Հայրապետյան, Արևիկ Անդրյան)³ շնորհիվ: Մարտական գործողությունների

¹ Նույն տեղում:

² Նույն տեղում, 2012, 13-20 հոկտեմբերի, թիվ 41:

³ Նույն տեղում, 1998, 5-20 սեպտեմբերի, թիվ 10:

ամենավճռական ու թեժ պահերին նրանց մասնակցությամբ դաշտային հոսպիտալներում կատարվում էին բարդ վիրահատություններ: Նրանց անմիջական մասնակցությամբ ստեղծվեցին երեք բաժանմունքներ՝ վերակենդանացման, վիրահատման, վիրակապման: Ընդ որում, այդ բաժանմունքները կենտրոնական զինվորական հոսպիտալի կայացման գործում առանցքային նշանակություն ունեցան¹: Վերակենդանացման բաժանմունքի ավագ քույր Անժելա Հարությունյանը վիրավորվեց 1992թ. օգոստոսին, Չլիբան գյուղում տեղակայված ռազմադաշտային հոսպիտալի հրթիռակոծման ժամանակ: Անգամ այս հանգամանքը նրան հետ չպահեց իր ընտրած ուղուց, շարունակեց մնալ շարքերում, սպեղանի դրեց շատ ազատամարտիկների վերքերին և, անցնելով պատերազմի հորձանուտով, հաղթանակի բերկրանքը վայելեց ռազմադաշտային հոսպիտալում: Վերհիշելով այդ օրերի իրադարձությունները, նա վկայում է. «Օրեր էին լինում, որ վիրահատարանում դրված վիրահատական սեղանները չէին հերիքում, առավել ևս՝ խոշոր ռազմագործողությունների ժամանակ...Բուժանձնակազմն այնպես էր աշխատում, որ ոչ մի վիրավոր անօգնական չմնա...Տասնյակ հազարավոր մարդիկ՝ տղամարդ թե կին, գալիս էին արյուն տալու հայրենիքի ազատագրության համար արյուն թափած մարտիկներին»² :

1992-1994թթ. ռազմաճակատի առաջին գծում՝ Շուշի-Լաչին ուղղությամբ, ռազմադաշտային շարժական հոսպիտալներում աշխատող կին-բուժաշխատողներն իրականացրեցին հարյուրավոր վիրավոր ազատամարտիկների առաջին բուժօգնության և վիրահատական գործողություններ, որի շնորհիվ ապաքինված ազատամարտիկները կարողացան նորից վերադառնալ մարտի դաշտ:

Նվիրական գործ կատարեցին նաև թիկունքի կանայք, ովքեր վիրավոր ազատամարտիկներին խնամելուց բացի, բազմիցս հանդես էին գալիս որպես դոնորներ: Նրանց թվում էր Անյա Ավանեսյանը³, ով կենտրոնական հոսպիտալում աշխատելով որպես տնտեսվար, պատերազմի օրերին խնամում էր վիրավոր ազատամարտիկներին, հարկ եղած դեպքում նրանց կյանքը փրկում՝ արյուն տալով:

¹ Նույն տեղում, 2006, 7-15 հունվարի, թիվ 2:

² Նույն տեղում, 2012, 13-20 հոկտեմբերի, թիվ 41:

³ Նույն տեղում, 2000, 12 ապրիլի, թիվ 7:

Նա չհասցրեց վայելել հաղթանակի բերկրանքը, սակայն նրա շնորհիվ բազմաթիվ փրկված ազատամարտիկներ իրենց սուրբ գործը շարունակեցին մինչև հրադադար:

Այսպես, եթե մարտի դաշտում հայտնված կանայք հանդես էին գալիս որպես դիպուկահարներ, հետախույզներ, կապավորներ, գթության քույրեր՝ անտեսելով մահացու վտանգը, ապա թիկունքի կանայք, հաղթահարելով հանդիպող բոլոր դժվարությունները, զբաղվում էին հողագործությամբ, հացաթխմամբ, խոհարարությամբ, նկուղներում երեխաների խնամքով ու դաստիարակությամբ:

Հայտնվելով ռազմական իրավիճակում, կին ազատամարտիկները, ինչպես նաև թիկունքում գործող հազարավոր կանայք, իրենց ուսերի վրա տարան պատերազմի ողջ ծանրությունը:

1.3 Հարավ-արևելյան շրջանների մարտական գործողություններին

1992թ. հունիսի առաջին տասնօրյակում ԼՂՀ սահմանագծի երկայնքով մեկ նկատելիորեն ակտիվացան ադրբեջանական զինված ուժերի ռազմագործողությունները. բնակավայրերի հրթիռակոծություններին զուգահեռ ուժեր և միջոցներ կենտրոնացվեցին ճակատային գծում: Ճնշման ծանրության կենտրոնը հատկապես նկատելի էր Ասկերանի, Մարտակերտի, Շահումյանի շրջանների ուղղությամբ: Ասկերանի ճակատում հակառակորդի հարձակումն ուղղված էր Ասկերան ավանի, Խանապատի և Նախիջևանիկի ուղղություններով: Մարտունու շրջանում թշնամին ընդհուպ մոտեցել էր Ճարտար և Մաճկալաշեն գյուղերին, գրեթե ներխուժել Կարմիր շուկա: Դրան զուգահեռ, ադրբեջանական ուժերը, Հադրութի շրջանում գրավելով Հողեր և Տող գյուղերի պահակակետերը, ներխուժել էին Տողի գինեգործարան և 4 կմ խորացել գյուղի տարածքում:

1992թ. ստեղծված Պաշտպանության պետական կոմիտեն առաջին իսկ օրվանից սկսեց եռանդուն միջոցներ ձեռնարկել բանակը կազմակերպական տեսանկյունից կուռ համակարգի վերածելու ուղղությամբ: Կոմիտեի նախագահի՝ 1992թ. օգոստոսի 14-ի N2 հրամանագրով ԼՂՀ-ն բաժանվեց վեց պաշտպանական

շրջանների¹: Ապա հոկտեմբերի 10-ի N57 հրամանով ձևավորվեցին Արցախի զինված ուժերի համապատասխան բաժիններն ու ծառայությունները²: Օրվա պահանջներին համապատասխանեցվեցին պաշտպանական շրջանների մարտական կազմն ու կառուցվածքը, որն ընդգրկեց նաև հարավ-արևելյան շրջանը: Օգոստոսի 14-ի հրամանով՝ սեպտեմբերին ինքնապաշտպանական ուժերի ստորաբաժանումների հիմքի վրա կազմավորվեցին նաև 4-րդ պաշտպանականը կամ Ասկերանի պաշտպանական շրջանը՝ Վ. Բալասանյանի հրամանատարությամբ, 1-ին պաշտպանականը կամ Հադրութի պաշտպանական շրջանը՝ Ա. Աղաբեկյանի հրամանատարությամբ և 2-րդ պաշտպանականը կամ Մարտունու պաշտպանական շրջանը, որի հրամանատարն էր Մ. Մելքոնյանը: Նշյալ պաշտպանական ուժերը ՀՀ-ից տարբեր կամավորական ուժերի հետ միասին կարողացան ոչ միայն կասեցնել հակառակորդի առաջխաղացումը, այլև սրընթաց հակահարձակմամբ ազատագրեցին հայկական բնակավայրերը: Պաշտպանական ուժերը մեծ աջակցություն էր ստանում թիկունքից: Այդ աշխատանքներին միացած կանայք անտեսելով վտանգը, զբաղվում էին տնտեսությամբ, սնունդ մատակարարում, ինչպես նաև նյութական աջակցություն ցուցաբերում նորաստեղծ բանակին³:

Կորուստները, անկասկած, ավելի մեծ կլինեին, եթե իրենց բարձրության վրա չլինեին հայկական գյուղերի ինքնապաշտպանական ուժերը: Ասկերանի ինքնապաշտպանության շարքերը համալրած Շուշանիկ Աբրահամյանը, հենց առաջին օրվանից միանալով համազգային շարժմանը, նպաստեց «Միացում» կազմակերպության ձևավորմանը և կազմակերպության գործունեությունը կարգավորելու նպատակով տեղափոխվեց Արցախ: Բնակություն հաստատելով Ասկերանի շրջանի Դահիրավ գյուղում, դարձավ գյուղի ինքնապաշտպանական ջոկատի անդամ⁴:

¹ ԼՂՀ Պաշտպանության նախարարության արխիվ, գ. 31, թ. 3-5:

² Նույն տեղում, թ. 9-11:

³ Արցախում անցկացված մարդահամարի համաձայն՝ հարավ-արևելյան տարածաշրջանում այսպիսին էր կանանց թվաքանակը. Ասկերանի շրջանում 18930 հոգուց 9652-ը կազմում էին կանայք, Հադրութի շրջանում 11073-ից՝ 6205-ը, իսկ Մարտունու շրջանում 20143-ից 10331-ը կանայք էին (Տես՝ Итоги всесоюзной переписи населения 1989г. Численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2, с. 3-23. 1989г.):

⁴ «Ազատ Արցախ», 2003, 11 հոկտեմբերի, թիվ 54:

1992թ. Շուշիի ազատագրման նախօրյակին ջոկատը տեղակայված էր Կարյազյաֆ-Ջանհասան ուղղության վրա՝ պաշտպանելու գրոհողների թիկունքը:

Եվ այստեղ էլ կարտարվեց նվիրյալ մարտիկի երազանքներից մեկը՝ Ղազանչեցոց եկեղեցում վառել 1988թ.-ից այդ օրվա համար պահած մոմերը: Նրա գործունեության շրջանակն ավելի ընդլայնվեց՝ մասնակից դառնալով Հայաստանից Արցախ գնալու զինամթերքի տեղափոխմանը, այնուհետև մինչև սեպտեմբեր մնաց Արկադի Կարապետյանի հրամանատարությամբ գործող ջոկատում: Արդեն 1993թ. սեպտեմբերին նա գտնվում էր Մարտակերտում, որտեղ էլ սկսվեց մեծ նահանջը: Նահանջեցին մինչև Դրմբոն, որից հետո նա վերադարձավ Ստեփանակերտ և պատասպարվեց նկուղներում: Ուխտել էր՝ քանի դեռ չեն ազատագրվել հայկական գրավված հողերը, այլևս չի վերադառնա ծննդավայր: Նրա մարտական ուղին ընթացավ Ասկերանի, Մարտակերտի, Շուշիի շրջանների ազատագրման համար մղված մարտերում¹:

Ասկերանի գյուղերի ինքնապաշտպանական ջոկատների մեջ ընդգրկված կանայք ոչ միայն օգնում, այլև մասնակցում էին կամավորական ուժերի նախաձեռնություններին, հատկապես տեղանքին լավ ծանոթ լինելը նրանց օգնում էր ուղեկցել օգնության եկած ուժերին:

1991թ. հոկտեմբերին հակառակորդը ներխուժեց Ասկերանի շրջանի Արանզամին գյուղ: Տեղի ինքնապաշտպանական ջոկատում էր Թամարա Նազարյանը²: Այդ օրերին ընթացող ծանր մարտերում նա վիրավորվեց քունքից, սակայն, չնայած դրան, մարտի դաշտից չհեռացավ և ազատամարտիկների հետ մասնակցեց գյուղի պաշտպանությանը: Սահմանամերձ գյուղերի մոտ, հարմար բարձունքներում պահակակետեր և ամրություններ էին ստեղծվել: Ջոկատները հերթափոխում էին միմյանց, իսկ Թամարա Նազարյանը համարյա միշտ դիրքերում էր:

1992թ. մայիսի 10-ին հակառակորդի կողմից հարձակում սկսվեց: Աղդամի կողմից թշնամին ցանկանում էր ճեղքել հայկական կամավորական ջոկատների պաշտպանությունը և մոտենալ Ստեփանակերտին: «Գորշ գայլեր» ստորաբաժանումները, 18 տանկերի աջակցությամբ, մասնակցում էին հարձակողական գործողություններին:

¹ «Բերդ», Ասկերան, 2008, 13 փետրվարի:

² Նույն տեղում, 2010, 8 մայիսի:

Նման պայմաններում հայկական կողմին հաջողվեց մի քանի տանկ վնասագերծել, սակայն ուժերի անհավասարության պատճառով ջոկատն ընկավ շրջապատման մեջ: Օղակը ճեղքելու և դուրս գալու համար ստիպված էին մարտով նահանջել: Թամարա Նազարյանը լավ ծանոթ էր տեղանքին, գիտեր յուրաքանչյուր արահետ, և նրա շնորհիվ ջոկատը փրկվեց, իսկ նա այս մարտերում ցնցակաթված ստացավ: Մինչև 1992թ. տարբեր ջոկատների կազմում մասնակցեց Գյուլափիլու, Կուրոպատկինո, Մուղանլու և այլ բնակավայրերի ազատագրման մարտերին և իր հայրենանվեր գործունեության շնորհիվ, ինչպես նրա մարտական ընկերներն են վկայում, արժանացավ Մարտունու պաշտպանական շրջանի հրամանատար Մ. Մելքոնյանի գովեստին: 1992թ. սեպտեմբերից Թամարա Նազարյանը մարտական ուղին շարունակեց Ասկերանի պաշտպանական շրջանի կազմում և մասնակցեց Արանզամինի, Նախիջևանիկի, Աղդամի, Շելլիի, Աթափիլուի և մի շարք այլ բնակավայրերի ազատագրման մարտերին: Նորից վիրավորվեց 1994թ. հունվարի 13-ին՝ Աթափիլու գյուղի համար մղվող մարտերում, այնուամենայնիվ հրադադարը դիմավորեց ռազմի դաշտում¹:

Քանաքարա Ղարայանը, ով համարվում է ազատամարտում առաջին կին զոհը², Խնձրիստան գյուղի ինքնապաշտպանական ջոկատին միացավ 1992թ.: Կատարում էր բուժքրոջ պարտականություն և միաժամանակ հերթապահում պահակակետերում: Չնայած նրա մարտական ուղին կարճ տևեց, սակայն կամավորական ջոկատի կազմում հասցրեց մասնակցել Ասկերանի (Քարագլուխ, Խոջալու, Քյաթուկ և այլ) շրջանի ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին: Զոհվեց 1992թ. հունիսի 13-ին՝ Քարագլուխ գյուղի պաշտպանության մարտերում՝ հրետակոծության հետևանքով³:

Ադրբեջանցիներով բնակեցված բնակավայրերին հարակից հայկական գյուղերը հաճախակի էին ենթարկվում ավազակային հարձակումների, ինչը գյուղերի բնակիչներին ստիպում էր դիմել ինքնապաշտպանության: Նման իրավիճակում էր նաև Ասկերանի շրջանի Սառնաղբյուր (Աղբուլաղ) գյուղը, որը գտնվում էր Ավդալ եւ Գյուլափիլու գյուղերի հարևանությամբ: Գյուղը հաճախակի էր ենթարկվում

¹ «Ազատ Արցախ», 2004, 30 հունվարի:

² Առստամյան Գ., Սպասում, էջ 208:

³ Նույն տեղում:

հարձակումների, իսկ օրեցօր ուժեղացող ընդհարումներին դիմակայելու համար ջոկատին անհրաժեշտ էր զենք ու զինամթերք: Ջոկատի մեջ ընդգրկված էին նաև կանայք (Ժենյա Գաբրիելյան, Ծովիկ Սիմոնյան, Ռոզիկ Գաբրիելյան), ովքեր ջոկատին սննդամթերք, զինամթերք մատակարարելուց, վիրավորներին օգնություն ցուցաբերելուց, հեռախոսակապը շրջկենտրոնի՝ Ասկերանի և Ստեփանակերտի հետ ապահովելուց բացի, մասնակցում էին նաև հերթապահությանը, կատարում մարտական առաջադրանքները: Ընդգրկվելով ջոկատի շարքերը, նրանք մինչև վերջին պահը, մինչև վերջին տանկերի մուտքը, չլքեցին գյուղը:

Ջոկատի շարքում էր նաև Զինախոյա Գրիգորյանը՝ իր ամուսնու և չորս որդիների հետ միասին¹: 1992թ. թեժ մարտերի ընթացքում նա վիրավորվեց, սակայն ապաքինվելուց հետո նորից միացավ գյուղի ինքնապաշտպաններին: Հերթական հարձակումը գյուղի վրա տեղի ունեցավ Շուշիի ազատագրման հաջորդ օրը: Ադրբեջանցիներն ամբողջ կատաղությամբ հարձակվեցին Սառնաղբյուր գյուղի վրա, որը հայտնվեց կրակե օղակի մեջ: Չնայած ուժերի անհավասարությանը, գյուղը դիմադրեց 3-5 ժամ, այնուհետև գյուղ մտած զինտեխնիկական սկսեց հրդեհել տները, ինչը ստիպեց գյուղացիներին հեռանալ: Զինախոյա Գրիգորյանի ամուսինը և որդիները դիրքերում էին, զենքը ձեռքին շտապեց օգնության հասնել, սակայն ճանապարհին անհետացավ: Այդ օրերին հարևան Արանզամին գյուղից 11 կին գերի տարվեց: Նրանցից մեկին ազատեցին՝ գերիների փոխանակման հարցում բանակցություններ վարելու նպատակով, սակայն այն տեղի չունեցավ: Գերությունից ազատված կինը վկայում էր, որ ադրբեջանցիներից լսել է, թե կանանցից մեկը դիմադրել է իրենց, և որ նա զինված էր ու նույնիսկ ադրբեջանցի է սպանել²:

Հայրենիքին նվիրված զինվոր էր Տանյա Առստամյանը: Նա առաջիններից մեկն էր, որ զինվորագրվեց արցախյան գոյամարտին և հասկացավ, որ հենց իր սերնդին է վիճակված գրելու հայ ժողովրդի ազատագրական պայքարի այս բախտորոշ էջը:

¹ Զինախոյա Գրիգորյանը մինչև ամուսնանալը զբաղվում էր սպորտով՝ թեթև ատլետիկայով, իսկ արդեն գոյապայքարի տարիներին դարձավ դիպուկ նշանառու:

² «Ազատ Արցախ», 2002, 25 ապրիլի, թիվ 5:

Պատերազմը նրան «գտավ» Ստեփանակերտի հանրապետական հիվանդանոցի վիրաբուժական բաժանմունքում:

1991թ. Ստեփանակերտը գտնվում էր կրակե օղակի մեջ, իսկ Կրկժանի հարակից թաղամասերում արդեն մարտեր էին ընթանում: Անհրաժեշտ էր ծանր վիրավորներին ուղղաթիռներով տեղափոխել Երևան, և Տանյա Առստամյանն առաջադրանքը հանձն առավ առանց երկմտելու: Այսպես՝ 6-7 ամիս շարունակ նա կատարում էր ուղեկցող-բուժքրոջ պարտականությունը: 1992թ. նոյեմբերին նա գտնվում էր «Ցեխ ձոր»-ի զինվորական հոսպիտալի վրանային վիրահատարաններում՝ բժիշկներ Պ. Աթայանի և Ա. Բունիաթյանի օգնականի դերում: Իսկ արդեն 1993թ. ծառայում էր Ասկերանի պաշտպանական շրջանում, որի շարքերում էլ մասնակից դարձավ Շուշիի, Լաչինի, Աղդամի, Մարտակերտի, Ասկերանի շրջանների ազատագրական մարտերին՝ վիրավոր ազատամարտիկների բուժսպասարկման ու տարահանման աշխատանքներին¹:

Ասկերանում ծնված Լյուդմիլա Մելքոնյանը Արցախի գոյապայքարին միացել էր 1991թվականից: Մտնելով 4-րդ պաշտպանական շրջան, մասնակցություն ունեցավ բազմաթիվ մարտական գործողությունների. 1993թ.՝ «Ուղտի մեջք» կրակակետի ոչնչացմանը, հունիս–հուլիս ամիսներին՝ Աղդամի (Շելլի, Գյոռուտ, Աթեմազլի) հատվածում, 1994թ.՝ Աղդամի հարակից գյուղերի (Շիրվանլու, Կարակաշլի), 1994թ. ապրիլին՝ Սումայլի, Գյուլուջայի կրակակետերի ոչնչացմանը:

Պաշտպանական շրջանների ստեղծման իսկ առաջին օրվանից անհրաժեշտություն առաջացավ լուծել բուժկետեր ստեղծելու հարցը: 4-րդ Պաշտպանական շրջանի բուժճառայությունը ստեղծվեց գնդի կազմավորմանը զուգընթաց (1992թ. սեպտեմբեր): Այն տեղակայված էր ռազմաճակատային գծից 5 կմ հեռավորության՝ ստրատեգիական կարևոր նշանակություն ունեցող ուղու վրա, որտեղ ծառայող բուժքույրերը մասնակցում էին գնդի վարած բոլոր ռազմագործողություններին: Նրանց շարքերում էր նաև Ասկերանի շրջանի Խանաբադ գյուղում ծնված Սվետլանա Հովսեփյանը, ով 1992թ. զինվորագրվելով ՊԲ-ին, մասնակցեց Ասկերանի շրջանում մղված բոլոր մարտերին, հատկապես Քարագլուխ, Ալի-Աղալու, Զիննի, Խրամորթ,

¹ «Ազատ Արցախ», 2003, 9 մայիսի, թիվ 54:

Ուղտի մեջք, Շելլի, ապա Աղդամ-Գյոռուտի ուղղությամբ տեղի ունեցած կռիվներին (1993թ.), Աղդամի հարակից գյուղերի կրակակետերի ոչնչացմանը (1994թ. ապրիլ), ինչպես նաև գնդի մարտիկների հետ եղավ նաև Քարվաճառում, որի ընթացքում էլ փրկեց բազմաթիվ վիրավոր ազատամարտիկների կյանք:

1992թ. շարունակվում էր 4-րդ պաշտպանականի համալրումը կանանցով, որոնց թվում էին Կարինե Գրիգորյանը, Ռիտա Հարությունյանը, Հասմիկ Հայրապետյանը, Ջոյա Միրզոյանը, Գայանե Գաբրիելյանը, Ալլա Արզումանյանը, Սրբուհի Աղաջանյանը և շատ ուրիշներ¹:

Ասկերանի շրջանի ինքնապաշտպանությանը միացել էին նաև Հայաստանի տարբեր կամավորական ուժերի շարքեր մտած կանայք, որոնց մեջ էր Արևհատ Մարտիրոսյանը (Մորթուր): Սկզբում մտնելով Հայոց ազգային բանակ (ՀԱԲ), նա ծառայությունը շարունակեց «Մխիթար սպարապետ», ապա՝ Երևանի Արաբկիրի շրջանի կամավորական ջոկատների շարքերում: 1988-1994թթ. մասնակցեց ՀՀ Գորիսի, ապա ԼՂՀ Ասկերանի, Լաչինի և այլ ինքնապաշտպանական ու ազատագրական մարտերին²:

4-րդ Պաշտպանական շրջանի շարքերը համալրեցին նաև Ասկերանի կամավորական ուժերի՝ «Մայիս» (Գալյա Գյուրջյան, Լորետա Գյուրջյան), Բալուջայի (Վալյա Վանեսյան, Ջոյա Դանիելյան), Փրջամալի (Նոյեմզար Սարաջյան), Խրամորթի (Լենա Շամիրյան) ջոկատների կանայք, որոնք պատերազմի ողջ ընթացքում մասնակցեցին Ասկերանի շրջանի ռազմագործողություններին³:

Արցախյան պատերազմը նորից և նորովի բացեց հայ կնոջ «կեղևը», ու նա աննախադեպ հերոսականության վառ օրինակներ ցուցաբերեց: Ինքնադրսևորումի, ինքնաբացահայտումի բազմաթիվ վառ օրինակներ կան, որ պատմվում են մարտնչած կանանց շրջանում, բացահայտում նրանց, հիրավի, բարոյական մեծ նկարագիրն ու հայեցի կերպը՝ հայ կնոջ տեսակը: Նրանք իրենց դրսևորեցին նաև Մարտունու և Հադրութի ինքնապաշտպանության ժամանակ: Պատերազմի հենց առաջին օրերին Մարտունու շրջանի Սոս գյուղում ծնված բժշկուհի Իրինա Գրիգորյանը հայտնվեց

¹ ԱրՊՀ հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 1, պմ. 1, թ. 1-3:

² Ղարաբաղյան ազատագրական պատերազմ 1988-1994 թթ., հանրագիտարան, էջ286:

³ ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 1, պմ1, թ. 1-3:

առաջին գծում: Արդեն 1992թ. ապրիլից միանալով Արմեն Մելքունյանի գումարտակի կազմին, մասնակցեց մի շարք ռազմական գործողությունների¹:

1992թ. հունիսի 28-ին թշնամին մեծ թվաքանակով և տեխնիկայով հարձակում կատարեց Ամարասի ձորակի վրա՝ Կարմիր Շուկա, Պուլուր խուտ, Դավալու խուտ, Ուրյան սար, իսկ մի շարք գյուղեր՝ Սոս, Մաճկալաշեն, Ճարտար, Կարմիր Շուկա տարհանվել էին: Ուժեղ հրետակոծությունից տուժել էին նաև Սոս և Մաճկալաշեն գյուղերի բնակիչները: Այդ ծանր օրերին Իրինա Գրիգորյանն օգնություն էր ցուցաբերում ոչ միայն ազատամարտիկներին, այլ նաև խաղաղ բնակիչներին:

Պատերազմի օրերին ինքնապաշտպանական ուժերը համալրած կանայք ստիպված էին ջոկատների հետ ժամանակ առ ժամանակ տեղից տեղ շարժվել, հատկապես այնտեղ, ուր թեժ մարտեր էին ընթանում:

Հոկտեմբերի 23-ին Մովսես Հակոբյանի հրամանատարությամբ գործող զորախմբի հետ, Իրինա Գրիգորյանը, որպես փորձառու բժշկուհի, ևս մասնակցեց Հորադիզի համար մղվող ծանր մարտերին, որի ժամանակ նույնիսկ փրկեց թուրք գերու կյանքը: Հոկտեմբերի 28-ին միացավ Զանգեզուրի շրջանի ազատագրմանը, որի ժամանակ ականի վրա պայթել էր հրամանատարական մեքենան: Բժշկուհին, անտեսելով սեփական անվտանգությունը, ականապատված դաշտով օգնության հասավ վիրավորներին և առաջին օգնությունը ցուցաբերեց ու փրկեց բոլորին: 1993թ. ձմռանը նա միացավ Մարտունու շրջանի Գևորգավանի տեղամասի մարտերին, իսկ արդեն 1994թ. հունվարին նշանակվեց 3-րդ պաշտպանական շրջանի թերապևտ և շարունակեց ծառայել մինչև հրադադար, ավելին՝ մայիսի 9-14-ը մասնակցեց Մարտակերտի շրջանի Կարմիրավան գյուղի համար մղվող մարտերին: Նա միակ բժշկուհին էր, որ մասնակցեց ազատամարտին՝ առաջին գծում ստանձնելով և բժշկի, և բուժքրոջ, և զինվորի դժվարին պարտականությունը: Հրադադարից հետո չլքեց հարազատ գունդը և դարձավ նրա բուժօժանայության պետը²:

¹ Հայուհիներ, հանրագիտարան, հատոր 1, էջ166:

² Նույն տեղում:

Մեծ թիվ էին կազմում պաշտպանական ուժերի թիկունքում գործող կանայք, որոնց մի մասը, անհրաժեշտության դեպքում, գնում էր մարտի¹: Նրանցից էր Մարտունու շրջանի Մաճկալաշենի կամավորական ջոկատի անդամ Սեդա Սողոմոնյանը: Ջոկատի շարքերում էր նաև նրա ամուսինը՝ Վ. Ծատրյանը: 1991թ. Սեդա Սողոմոնյանի մուտքը զինջոկատ ոգեշնչեց շատ երիտասարդ տղաների ու աղջիկների՝ աներեր ներգրավվելու ազատագրական պայքարին: 1992թ. սեպտեմբերի 2-ից նա նորից Մաճկալաշենի գումարտակում էր՝ որպես խոհարար, որի շարքերում մասնակցեց Ամարասի ձորակի, Մաճկալաշենից մինչև Ալխանլի, Ներքին Դիվանլար, Դիլիդարդա, Ներքին Դիլիդարդա, Ներքին Վեյսալու, իսկ 1993թ. հուլիսից՝ Մարտակերտի բնակավայրերի ազատագրմանը: Ամուսնուն կորցնելուց հետո նա շարունակեց ծառայությունը մինչև 1995թ. դեկտեմբերի վերջ²: Սեդա Սողոմոնյանը մարտերի կարճ դադարների ընթացքում նաև օրագրային գրառումներ էր կատարել. «...Թուրքերը հարձակվել էին Կարմիր շուկայի վրա և հասել մինչև գինեգործարանի տարածք, ուզեցին շրջափակել գյուղը, բայց չկարողացան: Մեր տղաները, մեծ քաջություն ցուցաբերելով՝ հետ շարտեցին թուրքերին: Այդ օրը գրադից զոհվեցին 18-ամյա Նարինեն, Աստեգը, Բագրատը, Սոսի Կարենը, Վարուժանը, Անգինը, Հայկանուշը»³: Նրա վկայությունները փաստում են, որ չնայած թիկունքի կանանց ունեցած զոհերին, այնուամենայնիվ, նրանք շարունակում էին մեծ պատասխանատվությամբ կատարել իրենց աշխատանքը, հաց թխել, սննդամթերք մատակարարել ինքնապաշտպանության ուժերին, ինչպես նաև նրանց շարքերում տեղից տեղ գնալ: Թիկունքի աշխատանքների մասնակիցներից էր նաև Մաճկալաշենում ծնված Նարինե Ավանեսյանը, ով 1991թ. դեկտեմբերից կատարում էր ջոկատի, ապա վաշտի հացաթխման աշխատանքները, ինչպես նաև սնունդ հասցնում: Դժվարին օրերին, երբ վաշտի հրամանատարը հայտնում էր կանանց և երեխաներին գյուղից դուրս հանելու մասին, Նարինե Ավանեսյանը մերժում էր՝ իրեն համարելով զինվոր: 1992թ. հունիսի 28-ին Արցախի ինքնապաշտպանական ուժերը ստիպված էին հետ քաշվել՝ հրաման

¹ Գրիգորյան Ա., նշվ. աշխ., էջ65:

² Առստամյան Գ., Իմ սերը ձեզ հետ է ողջեր և նահատակներ, էջ 122:

³ Նույն տեղում, էջ 124:

եղավ խաղաղ բնակիչներին թողնել գյուղը: Ահա հենց այդ ժամանակ էլ ընդհատվեց 18-ամյա Նարինե Ավանեսյանի կյանքը. զոհվեց «Գրադ»-ի արկի պայթյունից¹:

Ռազմադաշտ մեկնող կանայք, իհարկե, ունեին իրենց հիմնական և կարևոր պատճառները, որոնք են՝ հայրենասիրական մղում, իրավիճակի թելադրանք և հարազատներին մոտ լինելու պատճառ:

Մոնթե Մելքոնյանի նախաձեռնությամբ Մարտունու շրջանում ստեղծվեց բուժկետ՝ առաջնագծում մարտնչող ջոկատներին օգնություն ցույց տալու նպատակով: Բուժկետի աշխատանքներին ներգրավվեց նաև շրջանի Ճարտար գյուղում ծնված Էլեոնորա Աղաբեկյանը², ով հենց առաջին օրվանից հերթապահության անցավ պաշտպանական դիրքերում՝ «109», Ղարաչուխ, Ավդալ, Մուղանլու: Նա դեռևս 1990թ. համալրել էր Մարտունու կամավորական ուժերը՝ որպես բուժքույր, և ամուսնու ու որդիների հետ միասին մասնակցել մի շարք մարտական գործողությունների: Այդ օրերին՝ «Գրադ» կայանքների սաստիկ կրակի ու գնդակոծության տակ, արհամարհելով վտանգը, անվեհեր բուժքույրը փրկել է տասնյակ վիրավորների: Նման պատասխանատվություն և անձնուրացություն է ցուցաբերել նաև Ամիրանլար, Կուրոպատկինո և Մուղանլու գյուղերի ազատագրման մարտերի ժամանակ:

Արցախյան ազատամարտին արձագանքեցին նաև սփյուռքահայ կանայք, ովքեր պատերազմի շրջանում այցելելով Արցախ, ականատես և մասնակից դարձան ազատամարտին: 1992թ. Մ. Մելքոնյանի հետ Մարտունու շրջան մեկնեց ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգում ծնված Անուշ Տեր-Թալյանը³: Նա որոշեց տեսաֆիլմ նկարահանել, լուսանկարել, աշխարհին ցույց տալ ադրբեջանցիների բարբարոսությունները: Փետրվարին մասնակցեց Մարտունու շրջանի Ղարադաղլու գյուղի մարտերին: Անմիջապես առաջին գծում նկարահանեց մարտական գործողությունները, որից հետո հանդիպեց ինքնապաշտպանական ուժերի մի քանի հրամանատարների հետ: Մի քանի ամիս մնաց Ստեփանակերտում, բնակվում էր նկուղում՝ ինչպես բոլոր ստեփանակերտցիները: Փետրվարի 26-ին, Խոջալուի մարտերի ժամանակ նա 26-ի Յուրայի հետ էր, իսկ Շուշիի ազատագրման ժամանակ՝ Կամո Դանիելյանի ջոկատում:

¹ Մկրտչյան Ա., նշվ. աշխ., էջ 21:

² «Ամարաս», 2005, 10 մայիսի:

³ Վարդումյան Հ., նշվ. աշխ., էջ 195-197:

Լաչինն ազատագրվելուց հետո շտապեց այնտեղ՝ տեսնելու և նկարահանելու ազատագրված հողը: 1992թ. բազմաթիվ հողվածներ տպագրեց միջազգային մամուլում: Նրա տեսաֆիլմերը՝ «Արցախի երեխաները», «Արցախյան ազատամարտը», ցուցադրվեցին աշխարհի բազմաթիվ երկրներում՝ տեղեկացնելով մարտնչող Արցախի շրջափակման մասին, պարզաբանելով պատերազմի բուն պատճառը և իմաստը: Նրա գործունեությունը նպաստեց ազատամարտի և Արցախի խնդրի միջազգայնացմանը: 1993թ. նորից ժամանելով Արցախ, 26-ի Յուրայի զորամասում անցավ Մարտակերտի շրջանի Հոռաթաղ, Դրմբոն, Հարությունագոմեր գյուղերը, իսկ 26-ի Յուրայի զոհվելուց հետո միացավ Վիգեն Ասատրյանի ջոկատին՝ որպես կապավոր և մնաց մինչև դեկտեմբեր ու մասնակցեց Սարսանգի ջրամբարի ազատագրմանը: 1993թ. հարուստ տեսանյութերով նորից ԱՄՆ-ում էր: Ֆիլմերը ցուցադրեց տարբեր քաղաքներում և քարոզչական աշխատանք ծավալեց: 1994թ. վերադառնալով Արցախ, Անուշ Տեր-Թալյանը որոշեց մշտական բնակություն հաստատել Մարտակերտում¹:

Հայ կինը, հիրավի, ուրույն է իր էությանը, քանզի հայոց պատմության մեջ հայ կնոջ դերը կենսական է եղել ազգապահպանման գործում: Հավատարիմ մնալով ի վերուստ սահմանված՝ մայր լինելու առաքելությանը, միաժամանակ ուժ ու կորով է հաղորդել հայ տղամարդուն, պայքարել նրա հետ միասին, նաև՝ պահպանելով ու սերունդներին փոխանցելով ազգային ինքնությունը: Այսպես, մտնելով Մարտունու շրջանի տարբեր կամավորական ջոկատների շարքերը, ապա 1992թ. սեպտեմբերից՝ Մարտունու պաշտպանական շրջանի ստորաբաժանումները, Մելանյա Օհանյանը, Սիլվա Բալայանը, Անժելա Ջամալյանը, Վերա Հարությունյանը, Մարգո Ազարյանը, Մելանյա Սարգսյանը, Հասմիկ Օհանջանյանը, Ռայա Ավագյանը մասնակցեցին շրջանի Ճարտար, Մաճկալաշեն, Մյուրիշեն, Ավդուռ, Հացի, Նորշեն, Բերդաշեն գյուղերի ինքնապաշտպանական, ինպես նաև Շուշիի, Մարտակերտի, Աղդամի Ֆիզուլու, Ջաբրայիլի, Ջանգելանի և այլ շրջանների ու ռազմավարական բարձունքների ազատագրական մարտերին²: Ռոզա Մուսայելյանը, Առլետա Ազիզյանը, Անժելա Արզումանյանը, Ռոմելա Ղուկասյանը, Ռիտա Այդինյանը, Սեդա Բաբայանը, Թամարա Բալայանը, Արեգա Բաբայանը, Արգելա Բալայանը, Լաուրա Խալափյանը միանալով

¹ Նույն տեղում:

² «Ամարաս», 2005, 9 մայիսի:

Մարտունու հոսպիտալի աշխատողներին, մասնակից դարձան մի շարք ռազմագործողությունների և փրկեցին հարյուրավոր զինվորների կյանք¹:

Շարժման հենց սկզբին Հադրութի շրջանի գյուղերը ենթարկվում էին Ֆիզուլու և Ղուբաթլուի կողմից պարբերաբար կրկնվող ավազակային հարձակումների, թալանի, անասնագողության, և շրջափակումը դարձել էր ոչ միայն սովորական երևույթ, այլ նաև ծրագրված ու ամենօրյա: Ադրբեջանցիներն այս գործելաոճը մշակում էին Բաքվում և այն ուներ մեկ նպատակ՝ ամեն ինչ անել, որպեսզի Լեռնային Ղարաբաղի սահմանամերձ գյուղերում բնակչությունը հիասթափվի, հուսալքվի ու հեռանա իր տուն ու տեղից: Յուրաքանչյուր հայկական գյուղում կամավորականների երևալն արդեն ինքնապաշտպանության կազմակերպման քայլ էր: Ջոկատներին մտահոգում էր մարզի բնակչության ինքնապաշտպանության հարցը և դրանում ստանում էին բնակչության բազմակողմանի աջակցությունը: Արցախի բոլոր հայկական բնակավայրերը ունեին ինքնապաշտպանական ջոկատներ, որոնք հիմնականում օգնում էին այն բնակավայրերին, որտեղ վտանգն ավելի մեծ էր:

Անդրադառնալով շրջանի մի շարք կամավորական ուժերին, այդ թվում՝ Ուխտաձորի, Թաղասեռի ջոկատներին, նշենք, որ նրանց կազմում ընդգրկված կանայք (Էլլա Խաչատրյանը՝ Ուխտաձորի, Նաիրա Գալստյանը՝ Թաղասեռի ջոկատների կազմից) նույնպես մի շարք աշխատանքներ էին տանում տեղի բնակավայրերի ինքնապաշտպանությունը կազմակերպելու համար²:

Քանի որ հանրապետության սահմանների երկարությամբ ապրող ադրբեջանցիների հակահայկական գործողություններն ավելի սուր բնույթ էին ստանում, Հայաստանում ձևավորված առաջին ջոկատների հիմնական մասը մեկնում էր այնտեղ:

Էջմիածնի կամավորականները Հադրութ մեկնեցին 1989թ. օգոստոսին և, միանալով տեղի կամավորականներին, ազատագրական շարժման առաջին փուլում անցան ընդհատակյա պարտիզանական ինքնապաշտպանության կազմակերպմանը՝ գիտակցելով, որ այդ փուլի պայքարի ճիշտ ճանապարհը դա է:

¹ ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվ, ֆ. 2, ց. 1, գ. 1, պմ1, թ. 1-3:

² Նույն տեղում:

Կամավորականների կողմից ադրբեջանցիներին անմիջապես ու կտրուկ պատասխան տալը ոգևորեց բնակչությանը և հավատ ներշնչեց նրանց գործունեության հանդեպ¹:

Համալրելով Էջմիածնի կամավորական ջոկատները և զորամիավորումը, Նազիկ Ամիրյանը, Ռուզաննա Եսայանը, Հեղինե Բդոյանը, Անահիտ Վարդանյանը, Մարիետա Քալաշյանը 1989-1994թթ. մասնակցեցին ԼՂՀ Հադրութի Մելիքաշեն, Հախուլու, Խրմնջուղ, Դուդուկչի, Էդիլու, Տող, Հողեր, այնուհետև՝ Շուշիի, Քելբաջարի, Մարտակերտի, Ֆիզուլիի շրջանների ինքնապաշտպանական և ազատագրական մարտերին:

5-րդ գումարտակ կամավորագրված Նազիկ Ամիրյանը² 1992թ. առաջադրվեց գումարտակի թիկունքի պետի տեղակալ: Կամավորական բրիգադի կայացումից հետո՝ 1993թ., երբ Էջմիածնի գումարտակն ընդգրկվեց բրիգադի կազմ, նույն պարտականություններն ստանձնեց բրիգադում և զբաղվեց զորամիավորման նյութատեխնիկական բազայի կազմակերպման և ապահովման գործով, միաժամանակ մասնակցելով մի շարք ռազմագործողությունների :

1992թ. հունիսին Արցախ մեկնելով, Հեղինե Բդոյանն սկզբում ծառայության անցավ Հադրութի շրջանի ջոկատում, ապա՝ Էջմիածնի ջոկատում և որպես կապավոր տեղափոխվեց առաջին գիծ:

1992թ. աշնանը կատաղի մարտեր էին ընթանում Հադրութի շրջանի Ուխտաձոր (Էդիլու) գյուղի համար: Հակառակորդը, ամրանալով գյուղի մերձակա բարձունքներում, հարմար դիրքերից կրակով ճնշում էր հայկական ուժերին, խանգարում նրանց առաջխաղացմանը: Այդ հատվածում կապն ապահովվում էր դաշտային հեռախոսով: Գրոհի ամենավճռական պահին, երբ հրետակոծությունից ընդհատվեց կապը, Հեղինե Բդոյանը ստիպված էր դուրս գալ խրամատից և վերականգնել այն, որի

¹ Զորավարը, էջ 11: 1992թ. սկզբին ջոկատը, որպես առանձին գումարտակ, ընդգրկվեց ԼՂՀ նոր կազմավորվող պաշտպանական բանակի կազմ, որը ոչ միայն մասնակցում էր Հադրութի պաշտպանական մարտերին, այլև ստանում հանձնարարականներ՝ պարտադրված պատերազմի մեջ մտած ԼՂՀ տարբեր ռազմագործողություններին մասնակցելու համար:

² Նազիկ Ամիրյանը ՀՀ ԶՈՒ-ում առաջին կինն է, որ ստացել է գնդապետի կոչում:

ընթացքում էլ ծանր վիրավորվեց ու մահացավ Հադրութի հիվանդանոցի վիրահատարանում¹:

Մարտի դաշտում կռվող ազգակիցների կողքին լինելու Ռուզաննա Եսայանի ձգտումն իրականացավ 1992թ. աշնանը: Անդամագրվելով Հադրութի շրջանում մարտնչող կամավորական ջոկատին, մասնակցեց շրջանի ազատագրման մարտերին: 1992թ. դեկտեմբերին ջոկատն արյունահեղ մարտեր էր մղում Հադրութի շրջանի Ուղտաձոր գյուղի պաշտպանության համար: Վիրավորները շատ էին, օգնություն էր պետք: Ռուզաննա Եսայանը որոշեց բեռնատարներով նրանց տեղափոխել շրջկենտրոն: Սակայն այդպես էլ չկարողացավ հասնել այնտեղ: Երթուղին «Մահվան ճանապարհ» անունն էր ստացել, որտեղ էլ նա զոհվեց թշնամու արկի պայթյունից²:

Դեռևս 1988թ. հրապարակներում ալեկոծվող ժողովրդի հետ էր Անահիտ Վարդանյանը: Իսկ երբ եկավ զենք վերցնելու ժամանակը, նա արդեն հոգեբանորեն պատրաստ էր և առանց վարանելու միացավ կամավորական ուժերին: 1992թ. հուլիսին «Աշոտ Երկաթ» ջոկատի կազմում (հրամանատար՝ Աշոտ Մինասյան) մեկնեց Մարտակերտի ճակատ և մասնակցեց շրջանի մի շարք գյուղերի համար մղվող մարտերին: 1993թ. զինվորագրվելով Երևանի թիվ 2 կամավորական գումարտակին, փետրվարին նորից մեկնեց Արցախ և մասնակցեց Մարտակերտի շրջանի գյուղերի ազատագրման մարտերին: 1993թ. մայիսին գումարտակը ներառվեց Մ. Գրիգորյանի գնդի կազմ և մասնակցեց Ղուբաթլուի, Ջաբրայիլի, Ֆիզուլու շրջանների գյուղերի ազատագրմանը: Անահիտ Վարդանյանը մասնակցում էր նաև հետախուզությանը, ինչպես նաև զինամթերք հասցնում մարտիկներին: 1994թ. ապրիլի 24-ին հակատանկային ականի պայթյունից նա վիրավորվում է, սակայն, չկորցնելով ինքնատիրապետումը, նախ վիրակապում է իր ոտքը, ապա՝ 17 վիրավորների տեղափոխում զինվորական հիվանդանոց: Նույնիսկ վիրավորվելուց հետո նա շարունակեց մնալ ռազմի դաշտում: 1994թ. հոկտեմբերից մինչև 1995թ. սեպտեմբերը

¹ Վարդումյան Հ., Աստվածների կանչը, էջ 60-61:

² Նույնի, Կին ազատամարտիկները, էջ 25-26:

ծառայեց Մատադիսում՝ ստանձնելով սահմանապահի պարտականությունները, որից հետո տեղափոխվեց Հորադիզ՝

Ազատագրական պայքարի ընթացքում կանայք հայտնվում էին այնտեղ, որտեղ հարկավոր էր լարել ողջ ուժերը, գերմարդկային կարողություններ ձեռք բերել՝ հասցնել կատարելու ծանր ու պատասխանատու գործը:

1991թ. միանալով «Գարեգին Նժդեհ» կամավորական ջոկատին, Զարուհի Բադալյանը դեկտեմբերից մինչև 1992թ հունվար մասնակցեց Հադրութի շրջանի Բլուբան(Պլեթանոց), Էդիլու (Ուխտաձոր), Խրմանջուղ (Ծաղկավանք) գյուղերի պաշտպանական ռազմագործողություններին: 1993թ. միացավ Կուբաթլուի շրջանի ազատագրմանը, իսկ 1994թ. ապրիլից մինչև հրադադար ծառայեց Հորադիզում: Ճակատից վերադառնալով, Զարուհի Բադալյանն իր գործունեությունը չավարտեց, ավելին՝ հանգստանալու փոխարեն միացավ «Նիկոլ Դուման», «Կոռնիձոր», «Սուրմալու» և այլ ջոկատների թիկունքային աշխատանքներին՝ դեղորայք, հանդերձանք, զինամթերք հայթայթելով և հասցնելով ճակատ: Միևնույն ժամանակ, նա շարունակում էր զբաղվել բարեգործական գործունեությամբ²:

Հարկ է նշել, որ հայկական ուժերը ռազմական գործողություններ ծավալելով ԼՂԻՄ հարակից շրջաններում, նպատակ ունեին ԼՂՀ համար ստեղծել անվտանգության գոտի: Ռազմական նշանակության շրջաններն ազատագրվելով՝ ապահովվում էր խաղաղ բնակչության անվտանգությունը: Այդ ամենը շատ լավ էին գիտակցում պաշտպանությանը միացած կանայք:

1992թ. նոյեմբերին անդամագրվելով Հադրութի պաշտպանական շրջան, քույրեր Սուսաննա և Վերա Բադալյանները, ինչպես նաև Ժենյա Մովսիսյանը, Էլլա Գասպարյանը, Լյուդմիլա Մայիլյանը, Մանյա Գրիգորյանը, Մարինե Բաղդասարյանը, Ալվարդ Ալիբաբայանը, Մելանյա Սաֆարյանը, Էմմա Թունյանը մասնակից դարձան մի շարք կարևոր ռազմագործողությունների՝ ոչ միայն հարավային ռազմագոտում, այլ

¹ «Մարտիկ », 1999, 20 հունվարի, թիվ 7:

² «Երկիր », 2005, 2 ապրիլի:

նաև Լաչինի մարդասիրական միջանցքի պաշտպանությանը և Քարվաճառի ռազմական հենակետերի վնասազերծմանը¹:

1993թ. նոյեմբերի 29-ից սկսած ռազմական բոլոր հատվածներում՝ Օմարի լեռնանցքից մինչև Արաքսի ափերը, ադրբեջանցիները վերսկսեցին մարտական գործողությունները և մինչև 1994թ. հունվարի կեսերը որոշակի հաջողություններ ունեցան: Սակայն փետրվարի երկրորդ կեսին սկսվեցին հակառակորդի քելբաջարյան խմբավորման ոչնչացման ռազմագործողությունները: Ադրբեջանի ձմեռային արշավանքը ձախողվեց, ինչն էլ ստիպեց հարևան հանրապետության ղեկավարներին նստել բանակցությունների սեղանի շուրջ: Ադրբեջանի համար նոր տարածքներ կորցնելու վտանգն իրական ու շոշափելի էր:

1994թ. մայիսի 5-ին ԱՊՀ միջխորհրդարանական վեհաժողովի միջնորդությամբ Ղրղզստանի մայրաքաղաք Բիշքեքում տեղի ունեցավ ԱՀ, ՀՀ, և ԼՂՀ ներկայացուցիչների հանդիպում: Ավարտին կողմերը ստորագրեցին Բիշքեքյան արձանագրությունը, որով կոչ էր արվում դադարեցնել կրակը 1994թ. մայիսի 9-ի գիշերը²: Բիշքեքյան համաձայնագրի հիման վրա Ռուսաստանի Դաշնության պաշտպանության նախարար Պ. Գրաչովի միջնորդությամբ Մոսկվայում Ադրբեջանի պաշտպանության նախարար Մ. Մամեդովի, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարար Ս. Սարգսյանի և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պաշտպանության բանակի հրամանատար Ս. Բաբայանի միջև բանակցություններն ավարտվեցին զինադադարի հաստատմամբ³: Պատերազմի ավարտի հենց սկզբից ադրբեջանական կողմն առաջ քաշեց իրեն ձեռնտու մի շարք նախապայմաններ, սակայն, հանդիպելով հայկական կողմի միանշանակ դիրքորոշմանը, այդպես էլ չհասավ իր նպատակին և առանց համաձայնագիրը ստորագրելու Մոսկվայից մեկնեց Բաքու: Միայն հուլիսի 27-ին ադրբեջանական կողմն իր ստորագրությունը դրեց հրադադարի համաձայնագրի տակ:

¹ «Դիզակ», 2003, 25 փետրվարի, թիվ 4:

² ԼՂՀ արտաքին գործերի նախարարության (ԱԳԱ) մամուլի ծառայության նյութեր:

³ Барсегов Ю., Нагорного Карабаха в международном праве и мировой политике. Документы и комментарии, том 1, стр. 744-745.

Այսպես, ԽՍՀՄ և միջազգային իրավական նորմերի շրջանակներում հռչակված պետության՝ ԼՂՀ նկատմամբ 1991թ. վերջերից Ադրբեջանի կողմից սանձազերծվեց լայնամասշտաբ զավթողական պատերազմ: Վտանգվեց ոչ միայն ԼՂՀ գոյությունը, այլ նաև դրվեց արցախահայության լինել-չլինելու հարցը: Արցախահայությունը, ի մի բերելով իր ներուժը, Հայաստանի Հանրապետության և սփյուռքահայության աջակցությամբ հաղթանակի հասավ իրեն պարտադրված պատերազմում: Այս ամենին մասնակից դարձած կանայք ևս գիտակցում էին, որ տեսականորեն անհնար էր դիմակայել հակառակորդի ահռելի ուժերին, որի համար էլ դեռևս նախապատերազմյան տարիներին կամավոր զինվորագրվեցին ինքնապաշտպանական ուժերին և դարձան հաղթանակի կերտողներ: Անցնելով ամբողջ ռազմաճակատի երկայնքով, նրանք ևս ունեցան զոհեր ու վիրավորներ և իրենց արիությամբ ցույց տվեցին, որ կինն էլ կարող է իր ուսին զենք կրել և մարտադաշտում հայրենիքի պաշտպան լինել: Առհասարակ, Արցախյան ազատամարտում մեծ դեր ունեցան Հայաստանի և Արցախի կանայք: Արդարև, հերոսություն էր դիմակայել 1992-1994թթ. զրկանքներին՝ ռմբակոծություններին, ճակատից եկող հաղորդագրություններին, նկուղներում ապրելուն, ցուրտ ու մութ գիշերներին, հացի ու ջրի սրտամաշուկ հերթերին: Որքան էլ պատմությանը քաջատեղյակ լինենք, այնուամենայնիվ, առեղծված է մնում հայ կնոջ տոկունությունը, որ թերևս դեռ շատ կզբաղեցնի դարաբաղյան հակամարտության ուսումնասիրությանը լծված մասնագետներին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նպատակ ունենալով գիտական ուսումնասիրության հարթություն բարձրացնել Արցախի ազգային-ազատագրական պայքարին կանանց մասնակցությունը, սույն աշխատանքում փորձել ենք վերլուծել կանանց տեղը և դերը հակամարտության մեջ, բացահայտել նրանց կատարած աշխատանքը: Թեմայի համալիր ուսումնասիրության արդյունքում հանգել ենք հետևյալ հիմնական եզրակացությունների.

- Արցախահայության անցած ժամանակի պատմությունը համոզում է, որ Ադրբեջանի կողմից իրագործված խտրականությունը իրականացվել է հասարակական կյանքի բոլոր բնագավառներում, ինչը հայ ազգաբնակչությանը ստիպել է դիմել վճռական քայլերի, ու խնդիր դրվել վերականգնել պատմական արդարությունը՝ Արցախը վերամիավորել Մայր հայրենիքին:

Գոյապայքարի այս նոր փուլում մարդիկ վերստին ճաշակել են մայրության ու կանացիության կշռադատված ու խոհեմ վարվեցողության պտուղները: Հանապազօրյա կենցաղային հոգնատանջ աշխատանքներում, հաճախ առավել շատ աշխատանքային մասնակցությունը հանրային տնտեսությունում, նրանց մեջ չեն խամրել անձնուրացություն դրսևորելու նրանց կարողությունը՝ հանուն արդարության հաղթանակի, և հայ կինը գնացել է առճակատման:

Պատմական իրողությունը վկայեց, որ Արցախի ժողովրդի ազատության նվիրական փափագն ու վճռական պահանջն իրականություն կդառնան միայն պայքարի ճանապարհով, պայքար, որին ներկա և մասնակից կինն ապացուցեց, որ թե՛ հոգեպես և թե՛ ֆիզիկապես կարող է դիմակայել հակառակորդի վայրագություններին ու մնալ անկոտրում, հանուն հայրենիքի պաշտպանության իր ուսերին տանել ծանրության բեռի մի մասը:

- Համազգային պայքարը ճնշելու նպատակով Ադրբեջանի կողմից սանձազերծեց վայրագ բռնություններ: Այդ առթիվ բողոքի ձայն բարձրացնող կանանց հասարակական կազմակերպությունները, կին քաղաքական, հասարակական գործիչները, դատապարտելով Արցախում տեղի ունեցող անպատիժ բռնարարքները, կոնկրետ քայլերի դիմեցին՝ պահանջելով արդարացի լուծում տալ հիմնախնդրին: Այդ ուղղությամբ նրանց ծավալած գործունեությունը, կատարած հայտարարությունները,

տարբեր ատյաններին ուղղված գրավոր դիմումները նույնպես նպաստեցին հիմնախնդրի միջազգայնացմանը: Այդ պայքարում նրանք աննահանջ էին:

- Միջազգային ասպարեզում արցախահայությանը սատարող օտարազգի կին գործիչների և մտավորականների անգնահատելի գործունեության շնորհիվ Արցախում առկա իրավիճակը հայտնի դարձավ աշխարհի տարբեր երկրներում: Այս իրողությունն ապացուցեց, որ կինն իր պահանջներում սկզբունքային է և կարող է լինել անզիջում: Պատերազմի օրերին և հետագայում նրանք իրենց բարեգործական նախաձեռնություններով կարողացան նպաստել Արցախի սոցիալ-տնտեսական կյանքի առաջընթացին: Առ այսօր էլ շարունակվում է նրանց այցելություններն Արցախ: Այդ կանանցից ոմանք նույնիսկ արժանացել են ԼՂՀ պատվավոր քաղաքացու կոչման:

- Այն, որ կինը կարող է մեծ դեր խաղալ սեփական պետականության ստեղծման գործում՝ ապացուցեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կազմավորման գործընթացը: Պետական շինարարության ու զինված ուժերի կազմավորման գործընթացներում, այն էլ զինված ընդհարումների և տարաբնույթ մարտերի պայմաններում, հայ կինը կանգնած էր իր ամուսնու, եղբոր և որդու թիկունքում ու կողքին: Կանանց անմիջական մասնակցությունը համազգային շարժմանը և ռազմագործողություններին ավելի տեսանելի են դարձել հակառակորդի դեմ մղված պայքարը և տարած հաղթանակը:

- Դեռևս 1988թ. իրադարձությունների հորձանուտում ծնված ինքնապաշտպանության գաղափարը զարգացող դեպքերի ճնշմամբ աստիճանաբար դարձավ առարկայական անհրաժեշտություն: ԼՂՀ սահմանների ու խաղաղ բնակավայրերի վրա մշտական սպառնալիքը, հրթիռահրետակոծությունները և ինքնապաշտպանական ուժերի մարտավարական խնդիրները հրամայաբար պահանջում էին վնասագերծել հակառակորդի կրակակետերը և հանրապետության շուրջ ստեղծել անվտանգության գոտի: Այդ նպատակով պլանավորված ու ձեռնարկված խոշոր ռազմագործողություններին մասնակից կանայք փայլուն կերպով կատարեցին իրենց առջև դրված խնդիրները: Մտնելով Հայաստանում և Արցախում տարերայնորեն կազմավորված առաջին կամավորական և աշխարհազորային ինքնապաշտպանական

ջոկատների շարքերը՝ նրանք ամբողջ պատերազմի ընթացքում ցույց տվեցին, որ կինն էլ կարող է մարտադաշտում լավ զինվոր, հայրենիքի պաշտպան լինել:

- Արցախյան ազատամարտը համոզում է, որ հայ կինն իր արհուրածությամբ կարող է մեծ դեր խաղալ հայրենիքի պաշտպանության և նրա զարգացման գործում: Այսօր էլ «ոչ պատերազմ, ոչ խաղաղություն» իրավիճակում քիչ չէ կնոջ ներդրումը ռազմական ոլորտում: Այդ մասին է փաստում նաև այն հանգամանքը, որ ներկայումս ՀՀ և ԼՂՀ զինված ուժերում ներգրավված են մեծ թվով կին զինծառայողներ: Զինված ուժերում կանայք ստանձնում են ոչ միայն վարչական աշխատանքներ, այլև նրանց շարքերում կան տարբեր ստորաբաժանումների պետեր, հրամանատարներ: Ավելին՝ կան կանայք, ովքեր ծառայում են հատուկ նշանակության գնդերում:

- Բանակցային գործընթացն առայժմ շոշափելի արդյունքներ չի տվել Ադրբեյջանական կողմի ոչ կառուցողական քաղաքականության պատճառով: Ադրբեյջանը, չհամակերպվելով պատերազմի արդյունքում հաստատված իրողության հետ, շոշափում է արյամբ գծված սահմանների հարցը, դա այն դեպքում, երբ թե պատերազմը և թե ԼՂՀ-ի դեմ ագրեսիան նախաձեռնվել են հենց այդ երկրի կողմից: Գտնվելով մի իրավիճակում, որտեղ պատերազմի վերսկսման հավանականությունը բարձր է, շատ կարևոր է ուշադրություն դարձնել ռազմական ոլորտում, հատկապես զինված ուժերում կնոջ դերին ու նշանակությանը: Նպատակահարմար է հայ կանանց ուժը լայնորեն օգտագործել հայկական զինված ուժերում՝ հավատացած լինելով, որ հայ կնոջ պատիվն ու հեղինակությունն աներկբա մեծապես կնպաստեն հայ զինվորի ոգու հարաճուն ամրապնդմանն ու հանուն հայրենիքի անվտանգության նրա աներբե պատրաստակամության ապահովմանը:

1. Արխիվային սկզբնաղբյուրներ

ա) Հայաստանի ազգային արխիվ (ՀԱԱ)

1.1. ֆ. 1, ց. 127, գգ. 678, 735, ց.87, գգ.11, 39, 19:

1.2. ֆ. 207, ց. 44, գգ. 3, 8, 41, 46, 48, 118 :

1.3. ֆ. 1678, ց. 1, գգ. 1, 9:

բ) ԼՂՀ պետական արխիվ

1.4. ֆ.1, ց. 1, գ.46, ց. 2, գ.186:

1.5. ֆ. 2, ց.1, գգ. 3, 5, 60:

գ) ԼՂՀ Ասկերանի շրջանային արխիվ

1.6. ֆ.1, ց. 1, գգ. 43, 46, 53, 55, 57, 58, 59:

դ) ԼՂՀ Մարտունու շրջանային արխիվ

1.7. ֆ. 1, ց. 1, գգ. 3, 5, 10, 59:

ե) ԼՂՀ Հադրութի շրջանային արխիվ

1.8. ֆ. 1, ց. 1, գգ. 39, 40, ց. 3, գգ. 24, 25:

զ) ԼՂՀ Պաշտպանության նախարարության արխիվ (ՊՆԱ)

1.9. գ. 31

է) ԱրՊՀ Հայագիտական կենտրոնի արխիվ

1.10. ֆ. 2, ց. 1, գ. 1, պմ. 1:

ը) Արցախի հանրային հեռուստատեսության արխիվ

1.11. «Թերթելով պատմության էջերը» (սկավառակ, ռեժիսոր՝ Ավետիսյան Հ., հեղինակ՝ Բաղդյան Վ.):

1.12. «88-ի արձագանքները» (սկավառակ, ռեժիսոր՝ Ավետիսյան Հ., հեղինակ՝ Բաղդյան Վ.):

թ) ԼՂՀ ԱԳՆ մամուլի ծառայության նյութեր:

2. ՏՊԱԳԻՐ ՍԿՐԲՆԱՂՔՅՈՒՐՆԵՐ

ա) Հայերեն

2.1. Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն (1991թ. օգոստոս-1992թ. հունվար) փաստաթղթեր (կազմող՝ Աբրահամյան Հ.), Երևան, «Գիտություն», 2011, 195 էջ:

2.2. Հայության կոչերն ու դիմումները ԼՂԻՄ-ը Խորհրդային Հայաստանի հետ վերամիավորելու համար (1988-1989), փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Աբրահամյան Հ., Խաչատրյան Կ.), Երևան, «Գիտություն», 2014, 258 էջ:

2.3. Պատմական նստաշրջան, ԼՂԻՄ ժողովրդական պատգամավորների 20-րդ գումարման արտահերթ նստաշրջանի 1988թ. փետրվարի 20-ի նիստի արձանագրություն, փաստաթղթերի և նյութերի ժողովածու (կազմողներ՝ Բալայան Վ., Հակոբյան Տ.), Ստեփանակերտ, 2008, 107 էջ:

բ) Ռուսերեն

2.4. Итоги всесоюзной переписи населения 1989г. Численность наличного и постоянного населения по каждому сельскому населенному пункту по Нагорно-Карабахской автономной области, таблица 2, Москва, 1989, 45 стр:

2.5. Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах (сост. Товмасын В., Атаджанян В., Нерсесян Ю., Балаян В.), Степанакерт, “Маштоц”, 1991, 176 стр.

3. ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿՈՒԵԿՏԻՎ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԳՐՔԵՐ

ա) Հայերեն

- 3.1. Աբրահամյան Հ., Երբ հայրենիքը վտանգի մեջ է, Երևան, «Լույս», 1997, 96 էջ:
- 3.2. Աբրահամյան Հ., Կռունկ, Ստեփանակերտ, «Վաչագան Բարեպաշտ», 2013, էջ 63:
- 3.3. Աբրահամյան Հ., Մարտ կրակագծի մատուցներում, Երևան, «Ամարաս», 2008, 303 էջ:
- 3.4. Աբրահամյան Հ., Մարտնչող Արցախ, գիրք Գ (1985-2000), Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 2007, 744 էջ:
- 3.5. Ազիզբեկյան Ռ., Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Երևան, «Հայաստանի ԳԱ», 1992, 104 էջ:
- 3.6. Ազիզբեկյան Ռ., Գեղամյան Գ., Հայաստանը 1945-1990-ական թթ., Երևան, 1994, 104 էջ:
- 3.7. Աղաջանյան Մ., Հաթերք, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս» 2012, 687 էջ:
- 3.8. Առստամյան Գ., Իմ պատիվ, իմ ցավ Ղարմետաքսկոմբինատ, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 2010, 183 էջ:
- 3.9. Առստամյան Գ., Սպասում, Ստեփանակերտ. «Պոլիգրաֆ», 1996, 226 էջ:
- 3.10. Առստամյան Գ., Իմ սերը ձեզ հետ է, ողջեր և նահատակներ, Երևան «Զանգակ», 1998, 301 էջ:
- 3.11. Արցախապատում, գիրք 3, Քարինտակի հերոսամարտը (խմբագիրներ՝ Հովհաննիսյան Մ., Բաղդյան Վ.), Ստեփանակերտ, «Սոնա», 2013, 191 էջ:
- 3.12. Արշակյան Ա., Արցախյան գոյապայքարը 1985-1992թթ., Երևան, «Լինգվա», 2004, 246 էջ:
- 3.13. Բալայան Զ., Դժոխք և դրախտ, Երևան, « Զվարթնոց», 1995, 592 էջ:
- 3.14. Բալայան Վ., Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, Ստեփանակերտ, « Սոնա», 2012, 414 էջ:
- 3.15. Բաղդյան Վ., Ֆենոմեն, Ստեփանակերտ, «Սոնա», 1998, 272 էջ:
- 3.16. Բաղդյան Վ., Տեսադաշտ 1988-1994, Ստեփանակերտ, «Սոնա», 2013, 358 էջ:

- 3.17. Բեգլարյան Հ., Արցախ-Նամե, Ղարաբաղյան շարժում, գիրք Գ, Ստեփանակերտ, «Սոնա», 2006, 635 էջ:
- 3.18. Գևորգյան Ռ., Հավաքական ուժ, Երևան, 2005, 498 էջ:
- 3.19. Գրիգորյան Ա., Հաղորտին գոյամարտի բովում, Ստեփանակերտ, «Դիզակ», 2012, 112 էջ:
- 3.20. Դանիելյան Կ., Արցախը չսանձված նժույգ, Երևան, «Ամարաս», 2001, 240 էջ:
- 3.21. Զորավարը (խմբագիր՝ Հակոբյան Հ.), Երևան, «Հ. Խալաթյան և որդի», 2006, 208 էջ:
- 3.22. Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից XIX- XX դարեր, Երևան, 2012, «Զանգակ», 584 էջ:
- 3.23. Լեոնային Ղարաբաղի Հանրապետություն. Պետականության կայացումը դարերի սահմանագծում (կազմողներ՝ Ավետիսյան Հ., Աղաջանյան Մ., Անդրիասյան Լ., Արշակյան Ա., Ասրյան Հ., Բոյախյան Գ., Եղիազարյան Ա., Սարգսյան Վ., Իսաբուլյան Գ., Մելքոնյան Ա, Մինասյան Ս., Փանոսյան Ն., Սաֆրաստյան Ռ.), Երևան «Անտարես» , 2009, 71 էջ:
- 3.24. Խաչատրյան Հ., Հայուհիներ, Երևան, «Զանգակ», 2001, 224 էջ:
- 3.25. Խոջաբեկյան Վ., Արցախը փորձության ժամին, Երևան, «Հայաստան», 1991, 254 էջ:
- 3.26. Կապուտիկյան Ս., Էջեր փակ գզրոցներից, Երևան, «Ապոլոն», 1995, 688 էջ:
- 3.27. Կյանքի էջեր (կազմողներ՝ Գրիգորյան Պ., Գրիգորյան Գ., խմբագիր՝ Աբրահամյան Հ.), Երևան, «Զանգակ -97», 2011, 240 էջ:
- 3.28. Կինը և զինված հակամարտությունը: Պատերազմ Ղարաբաղում, (խմբագիրներ՝ Մխիթարյան Ա., Օհանյան Մ.), Երևան, 2000, 162 էջ:
- 3.29. Հարությունյան Մ., Արցախյան պատերազմը և պաշտպանության բանակի ուղին. 1991-1994թթ., Պատմական գիտությունների թեկնածուականատենախոսություն, Երևան, 2001, 196 էջ (տես՝ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարան):
- 3.30. Հակոբյան Թ., Կանաչ ու Սև Արցախյան օրագիր, Երևան-Ստեփանակերտ, «Ալիք», 2008, 584 էջ:
- 3.31. Հասրաթյան Ս., Ղարաբաղյան պատերազմ, Երևան, «Ամարաս», 2001, 254 էջ:

- 3.32. Հասրաթյան Ս., Պաշտպանության բանակի պաշտպանական շրջանները ղարաբաղյան պատերազմի գլխավոր ռազմագործողություններում, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 2008, 455 էջ:
- 3.33. Հայուհիներ, հանրագիտարան (գլխավոր խմբագիր՝ Բալայան Զ.), հատոր 1, Երևան, «Ամարաս», 2011, 643 էջ:
- 3.34. Հավերժական ջրբաժան, (խմբագիր և կազմող Պետրոսյան Մ.), Երևան, «Տիգրան Մեծ», 2003, 109 էջ:
- 3.35. Ղահրամանյան Կ., Հյուսիսային Արցախ, գիրք Բ, Երևան, «Մ. ՎԱՐԱՆԴԵԱՆ», 1993, 109 էջ:
- 3.36. Ղահրամանյան Կ., Օջախի գիրք. Հողը կանչում է, գիրք Բ, Երևան, «ԴԱԼԼ », 2005, 700 էջ:
- 3.37. Ղարաբաղյան ազատագրական պատերազմ. 1988-1994թթ., հանրագիտարան, Հայկական հանրագիտարան հրատարակչություն (գլխավոր խմբագիր՝ Այվազյան Հ.), Երևան, «Տիգրան Մեծ», 2004, 864 էջ:
- 3.38. Մոսեսովա Ի., Հովնանյան Ա., Բաքվի ջարդերը, Երևան, «Նարեկացի», 1992, 271 էջ:
- 3.39. Մկրտչյան Ա., Մաճկալաշենի քառուղիներով: Հուշապատում, Ստեփանակերտ, «Ազատ Արցախ» թերթի հրատարակչություն, 2002, 48 էջ:
- 3.40. Նանագուլյան Ա., Արժիվները բարձունքներ են տենչում, գիրք Գ, Երևան, «Մանկավարժ», 1993, 146 էջ:
- 3.41. Պետրոսյան Ռ., Արցախ. Պատերազմ. Զինադադար, Երևան, «Ամարաս», 2001, 270 էջ:
- 3.42. Պետրոսյան Ռ., Արցախի պաշտպանության դիրքերում, Երևան, « Ամարաս», 1997, 214 էջ:
- 3.43. Զանիկյան Գ., Մահապարտները, Երևան, « Դալլ», 2002, 344 էջ:
- 3.44. Սիսյան Բ., Չիլինգարյան Ռ., Գետաշեն, Երևան, «ԳԱՍՊՐԻՆՏ» , 2007, 695 էջ:
- 3.45. Վարդումյան Հ., Աստվածների կանչը , Երևան, «Նահապետ», 2004, 208 էջ:
- 3.46. Վարդումյան Հ., Կին ազատամարտիկները, Երևան, «Ամարաս», 2003, 47 էջ:
- 3.47. Վարդումյան Հ., Ճանապարհ անմահության, Երևան, «Ամարաս», 2002, 52 էջ:

3.48. Ուրուարյան Բ., Արցախյան գոյապայքարի տարեգրությունը, Երևան, 1997, 822 էջ:

բ) Ռուսերեն

3.49. Агаджанян М., Нагорно- Карабахский конфликт в свете защиты прав человека: политические и правовые аспекты, Ереван, “ Институт политических исследований”, 2009, стр.201.

3.50. Арцах-Карабах, Энциклопедия, А-Е, Санкт-Петербург, “ Петрополис”, 2007, 622с.

3.51. Барсегов Ю., Нагорного Карабаха в международном праве и мировой политике. Документы и комментарии, том 1, Москва, “Круг”, 2008 944 стр.

3.52. Буркова И., Геноцид карабахских армян, Рязань, “Аракс”, 1995, 24 стр.

3.53. Де Ваал Томас, Черный сад. Армения и Азербайджан между миром и войной, Москва, “Текст”, 2014, 389стр.

3.54. Керолайн К., Айбнер Д., Этническая чистка продолжается. Война в Нагорном Карабахе, Ереван, “ Гитутюн”, 1998, 106стр.

3.55. Кпивопусков В., Мятежный Карабах. Из дневника офицера МВД СССР. Москва, “Голос-Пресс”, 2007, 384стр.

3.56. Мелик-Щахназаров А., Нагорный Карабах факты против лжи, Москва, “Волшебный фонарь”, 2009, 768стр.

3.57. Нагорный Карабах: Историческая справка, Ереван, “АН Арм ССР”, 1988, 94стр.

3.58. Сахров А., О Нагорном Карабахе, Ереван, “Аракс”, 1996.

3.59. О некоторых политико-правовых аспектах проблемы Нагорного-Карабаха, Ереван, “Луйс”, 1991, 97стр.

3.60. Шахмурадян С., Сумгаитская трагедия в свидетельствах очевидцев. Кн. 1, Ереван, “ Амарас”, 1989, 226стр.

3.61. Нагорно-Карабахская республика: путь к вершинам.Степанакерт, "МИД НКР", 2001, 221стр.

ՀՈԴՎԱԾՆԵՐ

3.62. Աբրահամյան Հ., Կամավորական ջոկատներից մինչև պաշտպանության բանակի ստեղծումը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Գիտություն», Երևան, թիվ 2, 2006, էջ 117-129:

3.63. Բալայան Ռ., Կանայք Արցախյան պատերազմի հերոսամարտում, «ԱրՊՀ գիտական տեղեկագիր», Ստեփանակերտ, 2001, թիվ 1, էջ 101-105:

3.64. Ազիզբեկյան Ռ., Հայաստանի անկախության գործընթացի սկիզբը, ՀՀ ԳԱԱ «Լրաբեր հասարակական գիտությունների», «Գիտություն», Երևան, 2005, թիվ 1, էջ 16-28:

4. ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

ա) Հայերեն

4.1. «Արցախ», Ստեփանակերտ, 1992-1994:

4.2. Ազատ Արցախ», Ստեփանակերտ, 2002, 2003, 2004, 2007, 2010, 2012, 2013:

4.3. «Ազգ», Երևան, 1999:

4.4. «Ամարաս», Մարտունի 2000, 2005, 2006, 2008:

4.5. «Արցախի համալսարան», Ստեփանակերտ, թիվ 2, 2008:

4.6. «Բերդ», Ասկերան, 2008, 2010:

4.7. «Դիզակ», Հադրութ, 2005, 2003:

4.8. «Երկիր», Երևան, 2001, 2005:

4.9. «ԼՂ Հանրապետություն», Ստեփանակերտ, 1994, 1996, 1998:

4.10 «Լուսարար», Ստեփանակերտ, 2013:

4.11. «Խորհրդային Հայաստան», Երևան, 1988 - 1990:

4.12. «Խորհրդային Ղարաբաղ», Ստեփանակերտ, 1988 - 1991:

4.13. «Հայաստան», Երևան, 1991:

4.14. «Հայաստանի Հանրապետություն», Երևան, 1991, 1993, 1994, 1998:

4.15. «Հայոց աշխարհ», Երևան, 1998:

4.16. «Հայրենյաց պաշտպան», Ստեփանակերտ, 2003, 2005, 2008:

4.17. «Հայ զինվոր», Երևան, 2010, 2012:

- 4.18. «Մարտիկ», Ստեփանակերտ, 1995, 1997, 1998, 2001, 2003 - 2006, 2009, 2012:
4.19. «Մոսկի դղանջներ», Երևան, 1992-1994:
4.20. «Շարժում 88», Ստեփանակերտ, 2008:
4.21. «Ուրբաթ», Երևան, 1990:

բ) ռուսերեն

- 4.22. “Бакинский рабочий”, Баку, 1990.
4.23. “Голос Армении”, Ереван, 1991, 1998.
4.24. ”Зов Арцаха”, Ереван, 1993.
4.25. “Известия”, Москва, 1988, 1989, 2005.
4.26. “Информкуранты”, Москва, 1991.
4.27. “Коммунист”, Ереван, 1990.
4.28. “Красная звезда”, Москва, 1991.
4.29. “Коммерсант”, Москва, 1991.
4.30. ”Комсомольская правда”, Москва, 1991.
4.31. “Правда”, Ереван, 1988-1991.
4.32. “Республика Армения”, Ереван, 1991.
4.33. “Сельская жизнь”, Москва, 1987.

5. ՎԵՅԲԵՐ

- 5.1. <http://www.hayzinvor.am/19863.html>
5.2. <http://hayeli.am/article/581254>
5.3. <https://hy.wikipedia.org/>